ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՎԱՂԱՐՇՅԱՆ Ա.Գ.

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ-1

(ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

Երևան 2013

§ 5. Պետության առաջացման առանձնահատուկ
օրինաչափությունները 47
§ 6. Պետության առաջացման տեսությունների բազմազանությունը
և դրանց ընդհանուր բնութագիրը 49
§ 7. Պետական և անմիջական հասարակական իշխանության
տարբերիչ հատկանիշները 51
§ 8. Մինչպետական և պետական հասարակության տարբերիչ
հատկանիշների համեմատական աղյուսակ 53
§ 9. Իրավունքի առաջացման պատճառները և իրավական նորմերի
ձևավորման ուղիները 54
§ 10. Իրավունքի նորմերի և նախնադարյան սոցիալական նորմերի
տարբերիչ հատկանիշները 56
ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ 57
ԳԾԱՊԱՏԿԵՐԱՅԻՆ ԵՎ ՈՒՐՎԱԳԾԱՅԻՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 61
ԹԵՄԱ 5. ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ 67
§ 1. Պետություն հասկացության բնորոշումը 68
§ 2. Պետության հատկանիշները 68
§ 3. Բնակչությունը և տարածքը որպես պետության հատկանիշ 71
§ 4. Հանրային իշխանությունը որպես պետության հատկանիշ 72
§ 5. Պետության ինքնիշխանությունը 73
§ 6. Ժողովրդի և պետության ինքնիշխանության հարաբերակցությունը ... 75
§ 7. Ազգի ինքնիշխանությունը և նրա հարաբերակցությունը
պետության ինքնիշխանության հետ 76
§ 8. Հասարակական իշխանություն. հասկացությունը,
անհրաժեշտությունը 77
§ 9. Պետական իշխանությունը որպես հասարակական իշխանության
հատուկ տարատեսակ 78
§ 10. Պետական իշխանության առանձնահատուկ գծերը 79
§ 11. Պետական իշխանության իրականացման եղանակները 81
ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ 83
ԳԾԱՊԱՏԿԵՐԱՅԻՆ ԵՎ ՈՒՐՎԱԳԾԱՅԻՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 85
**ԹԵՄԱ 6. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ** 89
§ 1. Պետության էության և սոցիալական առաքելության
հասկացությունները 89
§ 2. Պետության էության մեկնաբանման դասակարգային և
համասոցիալական մոտեցումները 90
§ 3. Պետության էության և սոցիալական առաքելության
հիմնախնդրի հանգուցալուծումը 91
§ 4. Պետության էության զարգացման արդի օրինաչափությունները ... 92
ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ 94
ԳԾԱՊԱՏԿԵՐԱՅԻՆ ԵՎ ՈՒՐՎԱԳԾԱՅԻՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 96
ԹԵՄԱ 7. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ 97
§ 1. Պետության գործառույթներ հասկացությունը և նշանակությունը .. 98
§ 2. Պետության գործառույթների դասակարգումը 100
§ 3. Պետության ներքին և արտաքին գործառույթները 101

§ 4. Պետության ներքին գործառույթների բովանդակությունը 103
§ 5. Պետության արտաքին գործառույթների բովանդակությունը 105
§ 6. Պետության գործառույթների իրականացման ձևերը 106
§ 7. Պետության գործառույթների իրականացման մեթոդները 109
§ 8. Պետության գործառույթների դինամիկան, փոխպայմանավորվածությունը, փոխգործողությունը 110
ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ 112
ԳԾԱՊԱՏԿԵՐԱՅԻՆ ԵՎ ՈՒՐՎԱԳԾԱՅԻՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 115
ԹԵՄԱ 8. ՊԵՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ 122
§ 1. Պետության ձև. հասկացությունը և տարրերը 122
§ 2. Պետության ձևի կազմավորման օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները 126
§ 3. Պետության կառավարման ձև. հասկացությունը, ... 127
հատկանիշները և տեսակները 127
§ 4. Կառավարման միապետական ձևի տեսակները 128
§ 5. Կառավարման հանրապետական ձևի տեսակները 130
§ 6. Պետական կառավարման ռեժիմները. հասկացությունը և տեսակները 133
§ 7. Պետական կառուցվածքի ձև. հասկացությունը և տեսակները 135
§ 8. «Պետաիրավական ռեժիմ» հասկացության բնորոշումը 136
§ 9. Պետաիրավական ռեժիմի հատկանիշները 139
§ 10. Պետաիրավական ռեժիմի դասակարգման հիմնախնդիրը 141
§ 11. Ժողովրդավարական պետաիրավական ռեժիմի բնութագրերը .. 143
§ 12. Հակաժողովրդավարական պետաիրավական ռեժիմի բնութագրերը 145
§ 13. Պետության էության, տիպի և ձևի հարաբերակցությունը 147
ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ 149
ԳԾԱՊԱՏԿԵՐԱՅԻՆ ԵՎ ՈՒՐՎԱԳԾԱՅԻՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 151
ԹԵՄԱ 9. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԸ (ՄԵԽԱՆԻԶՄԸ) 155
§ 1. Պետությունը որպես հասարակության կառավարման կառուցակարգ 156
§ 2. Պետության կառուցակարգի և ապարատի հարաբերակցության հիմնախնդիրը 156
§ 3. Պետության կառուցակարգը (մեխանիզմը). հասկացությունը և հատկանիշները 157
§ 4. Պետական կառուցակարգի կազմավորման վրա ազդող գործոնները 158
§ 5. Պետական կազմակերպությունները որպես պետական կառուցակարգի բաղադրամաս 159
§ 6. Պետական ապարատի հասկացությունը, հատկանիշները 161
§ 7. Պետական ապարատի կառուցվածքը 162
§ 8. Պետության մարմին. հատկանիշները, հասկացությունը 163
§ 9. Պետական մարմինները և տեղական ինքնակառավարման մարմինները 165
§ 10. Պետական մարմինների դասակարգումը 166
ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ. 169

ԹԵՄԱ 10. ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ 175
§ 1. Պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունքների հասկացությունը և հատկանիշները 175
§ 2. Պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունքների դասակարգումը 176
§ 3. Պետական ապարատի կազմակերպման և գործունեության ընդհանուր սկզբունքների շրջանակը 178
§ 4. Իշխանությունների բաժանման սկզբունքը 179
§ 5. Իրավական օրինականությունը 183
§ 6. Հրապարակայնության և թափանցիկության սկզբունքը 184
§ 7. Պետության հանրային-իրավական պատասխանատվության սկզբունքը 187
§ 8. Պաշտպանունակությունը որպես պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունք 188
§ 9. Հումանիզմի (մարդասիրության) սկզբունքը 192
§ 10. Ժողովրդավարության (ժողովրդաիշխանության) սկզբունքը 193
§ 11. Պետական ապարատում ծառայության մատչելիության և արհեստավարժության սկզբունքը 195
§ 12. Կոլեգիալության և միանձնյա ղեկավարման զուգակցման սկզբունքը 197
ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ 198
ԹԵՄԱ 11. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 204
§ 1. Քաղաքացիական հասարակության հասկացությունը և հատկանիշները 204
§ 2. Քաղաքացիական հասարակության կառուցվածքը և նրա առանձին համակարգերի բնութագիրը 207
§ 3. Քաղաքացիական հասարակության քաղաքական համակարգը և նրա բաղադրատարրերը 211
§ 4. Պետությունը որպես հասարակության քաղաքական համակարգի սուբյեկտ 212
§ 5. Հասարակական-քաղաքական կազմակերպությունները քաղաքացիական հասարակության քաղաքական համակարգում 213
§ 6. Լոբբիականություն 215
§ 7. Եկեղեցին հասարակության քաղաքական համակարգում 216
ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ 218

ԹԵՄԱ 1. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՈՐՊԵՍ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Թեմայի բովանդակությունը

- *Գիտություն. հատկությունները և տարատեսակները: Գիտության տարրերը:*
- *Պետության և իրավունքի տեսություն գիտության բնութագիրը: Պետության և իրավունքի տեսության հետազոտման օբյեկտը և առարկան:*
- *Պետության և իրավունքի տեսության որպես գիտության առարկայի առանձնահատկությունները: Պետության և իրավունքի տեսությունը որպես իրավական, հասարակական, ընդհանուր տեսական և մեթոդաբանական բնույթի գիտություն:*
- *Պետության և իրավունքի տեսության գործառույթները. ճանաչողական, բացահայտողական, կանխատեսող, մեթոդաբանական, գործնական-կիրառական, գաղափարական և այլն:*
- *Պետության և իրավունքի տեսություն գիտության կապը պրակտիկայի հետ:*

§ 1. Գիտություն. հասկացությունը և տարատեսակները

Գիտությունը աշխարհի և մարդու, նրանց ծագման ու զարգացման մասին գիտելիքների համակարգ է, որը ձեռք է բերել որոշակի մեթոդների օգնությամբ և բնութագրվում է օբյեկտիվությամբ, համակարգվածությամբ, զարգացման ընդունակությամբ և ճշգրտությամբ:

Մարդու հազարամյա ձգտումը ճանաչել աշխարհը և իրեն հանգեցրեց գիտության առաջացմանը: Մինչև գիտության ձևավորումը շրջակա աշխարհը մարդը մեկնաբանում էր **առասպելների ու կրոնական պատկերացումների ձևով**: Ճանաչողության այս ձևը հիմնված էր հավատի վրա և համարվում էր անհերքելի ճշմարտություն:

Ճանաչողության հաջորդ ձևը առօրեական ձևն է: **Առօրեական** իմացությունը մարդու և հասարակության կենսական փորձի և առողջ բանականության վրա կառուցված գիտելիքն է: Առօրեական իմացությունը զուրկ է համընդհանրությունից և միակողմանի է: Դրան հակառակ գիտությունը որպես ճանաչողության հատուկ ձև աչքի է ընկնում ***օբյեկտիվությամբ, համակարգվածությամբ և ճշգրտությամբ***:

Գիտությունը որպես համակարգ բաժանվում է մի շարք ոլորտների: Ըստ ճանաչողության առարկայի այդ ոլորտներն են՝ ***բնական, հասարակական, հումանիտար*** գիտությունները:

Բնական (տեխնիկական) գիտությունների հետազոտման առարկան կենդանի և անկենդան բնության ծագման և գոյության օրենքներն ու ձևերն են: Օրինակ՝ ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն և այլն: *Հասարակական* գիտությունների հետազոտման առարկան հասարակության, այդ թվում քաղաքական-իրավական համակարգի ծագման և գործողության օրինաչափություններն ու ձևերն են: Օրինակ՝ իրավագիտությունը, պատմությունը, տնտեսագիտությունը և այլն: *Հումանիտար* գիտությունների հետազոտման առարկան մարդկային հոգեբանությունն է իր բոլոր դրսևորումներով: Օրինակ՝ հոգեբանություն, էթիկա, լինգվիստիկա և այլն:

Ըստ գիտական իմացության արդյունքները պրակտիկայում կիրառելիության աստիճանի գիտությունները բաժանվում են *կիրառական* և *հիմնարարի* (ֆունդամենտալ): Կիրառական գիտությունների ձեռք բերած իմացությունն հնարավոր է անմիջականորեն օգտագործել պրակտիկայում:

§ 2. Գիտության բաղադրատարրերը

Որպեսզի հասկանանք պետության և իրավունքի տեսություն գիտության առանձնահատկությունները, փորձենք վեր հանել ընդհանրապես գիտության՝ որպես ճանաչողության ձևի և սոցիալական գործունեության տեսակի բաղադրատարրերը: Ամեն մի գիտություն ներառում է հետևյալ բաղադրատարրերը.

ա) հետազոտման առարկա, այսինքն՝ օբյեկտիվ իրականության այն կապերը և կողմերը, որոնք ընդգրկված են ճանաչողության գործընթացում,

բ) գիտության մեթոդները, այսինքն՝ ճանաչողության սկզբունքները, հնարքներն ու եղանակները, որոնց օգնությամբ հետազոտվում է առարկան: Եթե գիտության առարկան ցույց է տալիս ինչն է հետազոտվում, ապա մեթոդը՝ ինչպես,

գ) գիտության կատեգորիաները կամ լեզուն, այսինքն՝ այն հասկացությունները և եզրույթները, որոնցում արտահայտվում է ճանաչված առարկայի բովանդակությունը,

դ) գիտելիքի ձևերը, այսինքն՝ օրենքներն ու օրինաչափությունները, տեսությունները, նկարագրություններն ու մեկնաբանությունները, որոնցում արտահայտվում են օբյեկտիվ իրականության (առարկայի) վերաբերյալ դատողությունները,

ե) գիտության գործառույթները, այսինքն՝ մարդու և հասարակության հրատապ պահանջմունքների բավարարմանն ուղղված գոր-

ծունեության հիմնական ուղղությունները, շնորհիվ որոնց գիտությունը դառնում է պետքական և նշանակություն ունեցող:

§ 3. Պետության և իրավունքի տեսությունը որպես գիտություն. հասկացությունը և հետազոտման առարկան 2, 3

Պետության և իրավունքի տեսությունը հիմնարար, համատեսական, մեթոդաբանական իրավական գիտություն է պետության և իրավունքի ծագման, զարգացման և գործառույթավորման ամենից ընդհանուր և հիմնական օրինաչափությունների մասին:

Որպես գիտություն պետության և իրավունքի տեսությունն ունի համալիր և ինտեգրալ բնույթ, քանի որ իրենում միավորում է **վերլուծական իրավագիտությունը** (իրավունքի դոգմատիկան), **իրավունքի փիլիսոփայությունը** և **իրավունքի սոցիոլոգիան**:

Պետության և իրավունքի տեսության որպես գիտության հետազոտության առարկա են համարվում պետության և իրավունքի ծագման, զարգացման և գործառութավորման ամենից ընդհանուր և հիմնական օրինաչափությունները, ինչպես նաև իրավագիտության հիմնական հասկացությունների համակարգը:

Այս գիտության հետազոտման առարկան համարվող օրինաչափություններն արտահայտվում են ընդհանրացված հասկացությունների, կատեգորիաների, սկզբունքների, տեսական կառույցների տեսքով: Պետության և իրավունքի տեսությունը որպես գիտություն կազմում է իրավագիտության գիտատեսական հիմքը և ունի հիմնարար բնույթ:

§ 4. Պետության և իրավունքի տեսության որպես գիտության առարկայի առանձնահատկությունները 4

Պետության և իրավունքի տեսության հետազոտման առարկան աչքի է ընկնում հետևյալ առանձնահատկություններով.

1) **Պետության և իրավունքի տեսությունը հետազոտում է պետության և իրավունքի ծագման, զարգացման և գործառութավորման հիմնական և ընդհանուր օրինաչափությունները**:

Հիմնական և ընդհանուր օրինաչափություններն անհրաժեշտ, պատճառական կապերն ու հարաբերություններն են, որոնք բնորոշ են պետության և իրավունքի պատմական տիպերին: Օրինակ պետության և իրավունքի առաջացման օրինաչափությունները վեր հա-

նելիս գիտությունը կանգ է առնում միայն այն օրինաչափությունների վրա, որոնք ընդհանուր են բոլոր պետությունների և իրավական համակարգերի համար, վերացարկվելով կոնկրետ պետության, օրինակ հայկական, առաջացման և զարգացման մանրամասնություններից, յուրահատկություններից: **Հատուկ օրինաչափությունները** համարվում են այլ իրավական գիտությունների հետազոտման առարկան: Վեր հանելով **հիմնական օրինաչափությունները**, գիտությունը չի անտեսում պատահական կապերը, քանի որ առանց դրանց դժվար է հասկանալ ընդհանուրները: Երբեմն պատահականության տակ թաքնվում է օրինաչափությունը կամ էլ գոյություն ունեն մի քանի մրցակցող օրինաչափություններ:

2) Պետության և իրավունքի տեսությունը հետազոտում է պետությունը և իրավունքը միասնության, օրգանական կապերի և փոխադարձ պայմանավորվածության մեջ: Իհարկե, ունենալով հարաբերական ինքնուրույնություն պետությունը և իրավունքը առաջացել և գոյություն ունեն նույն պատճառների ուժով, սերտորեն փոխկապված և փոխպայմանավորված են, այսինքն՝ մեկն անհիմաստ է առանց մյուսի, ուստի հնարավոր չէ դրանց մեկուսացված ճանաչումը:

3) Պետության և իրավունքի տեսությունը հետազոտում է պետությունը և իրավունքը տեսական-ընդհանրացված տեսքով, հասկացությունների և կատեգորիաների միջոցով, որոնք ունեն բարձրագույն ընդհանրացվածություն և վերացարկվածություն: Օրինակ՝ պետության էություն, պետության ձև և տիպ, պետության գործառույթ, իրավունքի հասկացություն և էություն, իրավունքի ձև և այլն:

4) Պետության և իրավունքի տեսությունը պետահիրավական երևույթների բազմազան կողմերը հետազոտում է համալիր կերպով, մասնավորապես և՛ ձևական-դոգմատիկ (վերլուծական իրավագիտություն), և՛ սոցիալ-փիլիսոփայական, մետաֆիզիկական (իրավունքի փիլիսոփայություն), և՛ սոցիալական գործողության (իրավունքի սոցիոլոգիա) դիրքերից: Այս պատճառով պետության և իրավունքի տեսությունը համարում են ինտեգրացված իրավական գիտություն:

5) Պետության և իրավունքի տեսությունը հետազոտում է իրավագիտության ճանաչողության գործընթացը, իրավագիտության տեսությունը (իրավական էպիստեմոլոգիա), իրավական հերմենևտիկան (իրավաբանի մեկնաբանողական գործունեությունը), իրավաբանական մտածողությունը, վերջինիս տրամաբանական հնարքները և այլն:

§ 5. Պետության և իրավունքի տեսության որպես գիտության հիմնական հատկանիշները

Պետության և իրավունքի տեսությունը հասարակական գիտություն է, քանի որ դրա հետազոտման առարկա են ոչ թե բնական կամ տեխնիկական, այլ հասարակական երևույթները՝ պետությունը և իրավունքը:

Պետության և իրավունքի տեսությունը իրավական գիտություն է, քանի որ հետազոտում է հասարակական կյանքի պետական-իրավական կողմերը և օրինաչափությունները:

Պետության և իրավունքի տեսությունը համատեսական գիտություն է, քանի որ վեր է հանում և մեկնաբանում է պետության և իրավունքի զարգացման հիմնական և ընդհանուր օրինաչափությունները:

Պետության և իրավունքի տեսությունը մեթոդաբանական (փիլիսոփայական) գիտություն է, քանի որ ընդհանուր օրինաչափությունները լուսաբանելիս կոնկրետացնում է փիլիսոփայական կատեգորիաները, մշակում է իրավական երևույթների հետազոտման մեթոդները, հետազոտում է պետությունը և իրավունքը արժեքային դիրքորոշումների համակարգում:

Պետության և իրավունքի տեսությունը սոցիալ-կիրառական գիտություն է, քանի որ հետազոտելով իրական պետությունը և իրավունքը, հասարակական գործընթացների հետ դրանց կապերը, իհարկե, նպատակ ունի կատարելագործել պետաիրավական պրակտիկան:

§ 6. Պետության և իրավունքի տեսության գործառույթները

Պետության և իրավունքի տեսության գործառույթները նրա տեսական և կիրառական նշանակության հիմնական ուղղություններն են, որոնք իրականացվում են հասարակության մեջ՝ վերջինիս առաջադիմական վերափոխման համար:

Պետության և իրավունքի տեսության գործառույթներն են.

1) ճանաչողական (տեղեկատվական, օնթոլոգիական), այսինքն՝ ճանաչել և բացատրել հասարակության պետաիրավական կյանքի երևույթներն ու գործընթացները, հետազոտել պետաիրավական հա-

մակարգի հիմունքները, բացատրել պետության և իրավունքի զարգացման օբյեկտիվ գործընթացները:

2) **Բացահայտողական** (էվրիստիկ), այսինքն՝ խորապես ճանաչելով պետության և իրավունքի ծագման, գործողության և զարգացման հիմնական օրինաչափությունները, բացահայտել, հայտնագործել նոր օրինաչափություններ, հարստացնել գիտությունը նոր իմացությամբ:

3) **Կանխագուշակման** (պրոգնոստիկ), այսինքն՝ պետության և իրավունքի օբյեկտիվ օրինաչափությունների համապատասխան ճանաչողության հիման վրա փորձել կանխագուշակել այդ երևույթների հետագա զարգացումը: Այս գործառույթի իրականացման ձևերն են պետության և իրավական համակարգի ապագայի, դրանց հասնելու ուղիների մոդելավորումը:

4) **Մեթոդաբանական-կողմնորոշիչ**, այսինքն՝ պետության և իրավունքի տեսությունը ինտեգրում է իրավական զանազան գիտությունների ու իրավական պրակտիկայի նվաճումները, ձևավորում է ամբողջ իրավագիտության համար ընդհանուր հասկացությունների ապարատը, աշխարհայացքային, փիլիսոփայական հիմք է ծառայում իրավագիտության համար, մշակում է իրավագիտության մեթոդները:

5) **Գաղափարական**, այսինքն՝ մշակում է քաղաքական իրավական տեսություններ, հայեցակարգեր, գաղափարներ, որոնք հիմնված են ազատության, հավասարության և արդարության համամարդկային սկզբունքների վրա: Միաժամանակ ակտիվորեն ազդում է անհատների ու հասարակության իրավական գիտակցության վրա և արդյունքում ձևավորվում է իրավական մշակույթ:

6) **Կիրառական կամ գործնական-կազմակերպական**, այսինքն՝ իրականացնում է պետաիրավական պրակտիկայի տեսական ընդհանրացում, ընթացիկ պետաիրավական շինարարության գործնական խնդիրների լուծման խորհրդատվություն: Այս դեպքում գիտությունը ծառայում է որպես պետական և իրավական կյանքի վերափոխման գործիք: Գործառույթի իրականացման ձևերն են նորմատիվ ակտերի նախագծերի պատրաստումը, գիտական փորձաքննությունների և խորհրդատվությունների անցկացումը, իրավական փորձարարությունը:

§ 7. Պետության և իրավունքի տեսություն գիտության կապը պրակտիկայի հետ

Պետության և իրավունքի տեսությունը լինելով տեսական գիտություն սերտ կապի մեջ է գտնվում պրակտիկայի հետ, հատկապես պետահիրավական: Այդ կապը դրսևորում է եռակիորեն և կարելի է արտահայտել հետևյալ ձևակերպմամբ՝ «պրակտիկան աղբյուր, նպատակ և միջոց է գիտության համար»:

1) Պետության և իրավունքի տեսության համար պրակտիկան համարվում է գիտական հետազոտության աղբյուր: Պետական ոլորտում և իրավական համակարգում ընթացող գործընթացները հետազոտվում են գիտության կողմից, վերլուծվում, դասակարգվում են և այլն: Այդ հետազոտությունները հիմք են նոր գիտական դրույթների առաջ քաշման, նոր եզրակացությունների հիմնավորման համար: Օրինակ, ֆրանսիացի Մոնտեսքիոյի համար իր տեսական եզրահանգումների աղբյուր էր անցյալի և իր ժամանակի պետությունների գործունեության փորձը, որի վերլուծությունը նրան հիմք տվեց առաջ քաշելու իշխանությունների բաժանման և հակակշռման գաղափարը:

2) Պետության և իրավունքի տեսությունը կատարում է **կիրառական կամ կազմակերպական գործառույթ**: Պետահիրավական պրակտիկայի կատարելագործումը գիտության նպատակն է: Այս գիտությունը գիտական ուսումնասիրությունների արդյունքում փորձում է վերափոխել պետահիրավական երևույթների և գործընթացների կյանքը, կատարելագործել դրանք: Մոնտեսքիոյի առաջ քաշած դրույթներն իշխանությունների տարանջատման վերաբերյալ չմնացին լոկ որպես գաղափարներ, այլ կենսագործվեցին առանձին պետություններում:

3) Պրակտիկան համարվում է պետության և իրավունքի տեսության դրույթների ճշմարտացիության ստուգման չափանիշ, միջոց: Ամեն մի նոր գիտական դրույթի, նոր եզրակացության իրատեսականությունը, ճշգրտությունը, հիմնավորվածությունն ապացուցվում է պրակտիկայում: Արդեն երկու հարյուր ամյակից ավելի է, ինչ իշխանությունների բաժանման սկզբունքը հանդիսանում է պետական մարմինների համակարգի կառուցման և գործունեության հիմնարար սկզբունք և ապացուցել է իր առաջադիմականությունն ու արդյունավետությունը:

© ԲԱՑԱՏՐԵ՛Ք ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԸ

Օբյեկտիվություն, համակարգվածություն, ճշտգրտություն, ֆունդամենտալ գիտություններ, ճանաչողություն, սոցիալական գործունեության տեսակ, օբյեկտիվ իրականություն, հասարակության հրատապ պահանջմունք, գործառութավորում, օրինաչափություն, համալիր, ինտեգրացիա, հիմնական և պատահական օրինաչափություն, ընդհանուր և հատուկ օրինաչափություն, օրգանական կապեր, ընդհանրացում, վերացարկում, իրավական էպիստեմոլոգիա, հերմենևտիկա, մրցակցող ճշմարտություն կամ օրինաչափություն, մեթոդ, էվրիկա, մոդելավորում, պետահիրավական շինարարություն, հետազոտության աղբյուր, ճշմարտացիության չափանիշ, իրատեսական:

? ՊԱՏԱՍԽԱՆԵ՛Ք ՀԱՐՑԵՐԻՆ

1. Ի՞նչ է գիտությունը:
2. Ո՞րոնք են ճանաչողության ձևերը:
3. Ո՞րոնք են առօրեական իմացությամբ ստացված գիտելիքի հատկությունները:
4. Ի՞նչու է գիտական ճանաչողությունը օբյեկտիվ, համակարգված, ճշգրիտ, իսկ առօրեականը՝ ոչ:
5. Ո՞րոնք են գիտության ոլորտները ըստ ճանաչողության առարկայի:
6. Բնութագրեք գիտության երեք ոլորտների հետազոտման առարկաները:
7. Ի՞նչով են տարբերվում կիրառական և հիմնարար գիտությունները: Բերեք օրինակներ:
8. Ո՞րոնք են գիտության բաղադրատարրերը:
9. Ի՞նչ են գիտության հետազոտման առարկան և մեթոդները:
10. Ի՞նչ եք հասկանում գիտության գործառույթ ասելով:
11. Բնորոշեք պետության և իրավունքի տեսությունը որպես գիտություն:
12. Ո՞րն է պետության և իրավունքի տեսության հետազոտման առարկան:
13. Ի՞նչ են հիմնական և ընդհանուր օրինաչափությունները:
14. Ո՞րոնք են պետության և իրավունքի տեսության հետազոտման առարկայի առանձնահատկությունները:

15. Ի՞նչու են պետություն և իրավունքի տեսությունը համարում ինտեգրացված իրավական գիտություն:
16. Ո՞րոնք են պետության և իրավունքի տեսության որպես գիտության հատկանիշները: Ի՞նչու է պետության և իրավունքի տեսությունը համարվում մեթոդաբանական գիտություն:
17. Ի՞նչու է պետության և իրավունքի տեսությունը համարվում սոցիալ-կիրառական գիտություն:
18. Բնորոշեք պետության և իրավունքի տեսության գործառույթները:
19. Ո՞րն է պետության և իրավունքի տեսության ճանաչողական գործառույթի բովանդակությունը:
20. Ո՞րն է պետության և իրավունքի տեսության բացահայտողական գործառույթի բովանդակությունը:
21. Ո՞րն է պետության և իրավունքի տեսության կանխագուշակման գործառույթի բովանդակությունը:
22. Ո՞րն է պետության և իրավունքի տեսության մեթոդաբանական-կողմնորոշիչ գործառույթի բովանդակությունը:
23. Ո՞րն է պետության և իրավունքի տեսության գաղափարական գործառույթի բովանդակությունը: Ո՞րն է պետության և իրավունքի տեսության կիրառական գործառույթի բովանդակությունը:
24. Ի՞նչպես են դրսևորվում պրակտիկայի ու պետության և իրավունքի տեսության կապերը:
25. Ի՞նչու են պետաիրավական պրակտիկան համարում գիտական հետազոտման աղբյուր:
26. Ո՞րն է պետության և իրավունքի տեսության կիրառական գործառույթը:
27. Ի՞նչու են պրակտիկան համարում գիտական դրույթների ստուգման չափանիշ:

ԿԱՏԱՐԵ՛Ք ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Օգտվելով հանրագիտարանից կամ ինտերնետից պատրաստե՛ք զեկուցում Մոնտեսքիոյի մասին:

ԲԱՆԱՎԻՃԵՔ

Բաժանվեք խմբերի և կազմակերպեք բանավեճ հետևյալ թեմայով. «Արդյո՞ք բարերար ազդեցություն է թողնում գիտության զարգացումը մարդու, մարդկային հասարակության և բնության վրա, թե ոչ»:

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԱՏԱՐՐԵՐԸ

Հետազոտման առարկա	Ի՞նչ է ճանաչվում
Հետազոտման մեթոդներ	Ինչպե՞ս է ճանաչվում
Գիտության կատեգորիաները և լեզուն	Ինչպե՞ս է արտացոլում ճանաչվածը
Գիտելիքի ձևերը	օրենքներ, օրինաչափություններ, տեսություններ
Գործառույթները	ո՞րն է գիտության դերը և նշանակությունը


ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ծագման, զարգացման և գործառույթավարման ամենից ընդհանուր և հիմնական օրինաչափությունները, իրավագիտության հիմնական հասկացությունների համակարգը
ԻՐԱՎՈՒՆՔ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԻՐԱՎԱԿԱՆ, ՀԱՄԱՏԵՍԱԿԱՆ, ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ


ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՈՒ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԿԱՊԸ
Պետության և իրավունքի տեսության
նպատակ
աղբյուր
չափանիշ
ՊՐԱԿՏԻԿԱ
ՊՐԱԿՏԻԿԱ
ՊՐԱԿՏԻԿԱ
ՊՐԱԿՏԻԿԱ
ՊՐԱԿՏԻԿԱ
ՊՐԱԿՏԻԿԱ


Ճանաչողական
Կիրառական
Մեթոդաբանա-
կան
Պետության
և իրավունքի
տեսության
գործառույթ-
ները
Բացահայտո-
ղական
Գաղափարա-
կան
Կանխագուշա-
կող

ԹԵՄԱ 2. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Թեմայի բովանդակությունը

- *Պետության և իրավունքի տեսության մեթոդների հասկացությունը և դասակարգումը:*
- *Պետության և իրավունքի տեսության փիլիսոփայական հիմքերը որպես համընդհանուր մեթոդներ: Մետաֆիզիկա, դիալեկտիկա, սիներգետիկա: Մատերիալիստական և իդեալիստական դիալեկտիկա:*
- *Պետության և իրավունքի տեսության համագիտական տրամաբանական հնարքները. անալիզ, սինթեզ, ինդուկցիա, դեդուկցիա և այլն: Պետության և իրավունքի տեսության համագիտական սկզբունքները. պատմականություն, օբյեկտիվություն, կոնկրետություն, բազմակարծություն, համալիրություն:*
- *Պետահիրավական երևույթների ճանաչման մասնակի գիտական մեթոդները (կոնկրետ-սոցիոլոգիական, վիճակագրական և այլն):*
- *Պետահիրավական երևույթների ճանաչման հատուկ իրավական մեթոդները. համեմատական-իրավական, ձևական-իրավական վերլուծության, իրավական մոդելավորման, իրավական փորձարարության:*

§ 1. Պետության և իրավունքի տեսության մեթոդները և դրանց դասակարգումը

Ամեն մի ոլորտում գիտելիքները ձեռք են բերվում որոշակի ճանաչողական սկզբունքների, հնարքների, միջոցների և եղանակների համակարգի օգնությամբ, որոնք և կազմում են գիտության տվյալ ոլորտի **մեթոդները** (հունարեն՝ metodos):

Պետության և իրավունքի տեսության մեթոդները դրանք այն սկզբունքները, հնարքները, եղանակներն են, որոնք օգտագործվում են պետության և իրավունքի ծագման, զարգացման, գործառութավորման հիմնական և ընդհանուր օրինաչափությունները հետազոտելու և վերջինիս վերաբերյալ անկողմնակալ գիտելիքներ ստանալու համար:

Պետության և իրավունքի տեսության որպես գիտության մեթոդների ամբողջությունը կազմում է պետության և իրավունքի տեսության **մեթոդաբանությունը**, որը վերջին հաշվով պայմանավորված է իմացության տվյալ ոլորտի առարկայով:[1] Սակայն մեթոդների համակ-

---

[1] Նոր ժամանակաշրջանի դասական գիտության մեջ ընդունված էր այն տեսակետը, որ գիտական ճանաչողության մեթոդը պետք է համապատասխանի առարկային: Ուստի առարկայի յուրահատկությունը նախորոշում է դրա ճանաչման համար ամենից արդյունավետ մեթոդը: Սակայն այսօր՝ հետդասական գիտության մեջ գերակշռող է այն մոտեցումը, որ մեթոդն առաջնային է առարկայից կամ գոնե դրանք փոխկապված են:

ցությունը որոշելիս կարևոր դեր է խաղում նաև սուբյեկտիվ գործոնը, հետազոտողի անձը, խառնվածքը, կամքը և այլն:

Ժամանակակից իրավագիտության մեթոդները դասակարգվում են առանձին խմբերի՝ ելնելով յուրաքանչյուր մեթոդի յուրահատկությունից ու բնույթից, տարածվածությունից և հետազոտվող նյութը ընդգրկելու չափից: Ըստ այդ չափանիշների առանձնացնում են՝ համընդհանուր (համափիլիսոփայական), համագիտական, մասնակի և հատուկ մեթոդները:[1]

§ 2. Պետության և իրավունքի տեսության փիլիսոփայական հիմքերը որպես համընդհանուր մեթոդներ

Պետության և իրավունքի տեսության համընդհանուր մեթոդները դրանք այն փիլիսոփայական, աշխարհայացքային մոտեցումներն են, որոնք արտահայտում են մտածողության ամենից համընդհանուր սկզբունքները: Համընդհանուր մեթոդներից կարելի է առանձնացնել մետաֆիզիկան, դիալեկտիկան և սիներգետիկան:

Մետաֆիզիկան որպես մեթոդ պետությունը և իրավունքը դիտարկում է որպես քարացած, անփոփոխ երևույթներ: Օրինակ՝ պետության աստվածաբանական տեսությունը կարելի է համարել մետաֆիզիկական մեթոդի վրա կառուցված տեսություն:

Դիալեկտիկան որպես մեթոդ պետությունն և իրավունքը դիտարկում է փոփոխվող, զարգացող երևույթներ: Այն կարող է լինել մատերիալիստական և իդեալիստական:

Մատերիալիստական դիալեկտիկան պետությունը և իրավունքը դիտարկում է որպես պատմական երևույթներ, դրանց ծագումը կապելով հասարակության կրած սոցիալ-տնտեսական փոփոխությունների հետ (մասնավոր սեփականության և դասակարգերի առաջացումը): Այս մեթոդը պետությունը և իրավունքը համարում է զարգացող, հասարակական այլ երևույթների հետ փոխկապված երևույթներ:

Իդեալիստական դիալեկտիկան ունի երկու մոտեցումներ՝ սուբյեկտիվ իդեալիստական և օբյեկտիվ իդեալիստական:

Ըստ **սուբյեկտիվ իդեալիստական դիալեկտիկական մեթոդի** պետության և իրավունքի առաջացումը, գոյությունը և զարգացումը պայմանավորված են մարդու գիտակցությամբ: Օրինակ բանակա-

---

[1] Իրավագիտության մեթոդների այս դասակարգումը որոշակիորեն պայմանական է և ունի ուսումնական նշանակություն: Տեսական գրականության մեջ կան այլ դասակարգումներ:

նությունը մարդկանց հանգեցնում է հասարակական դաշինքի գաղափարին և պետության հիմնադրմանը, դաշինքի պայմանների փոփոխությանը:

Ըստ **օբյեկտիվ իդեալիստական դիալեկտիկայի** պետությունը և իրավունքը առաջացել և զարգանում են մարդու կամքից անկախ: Օրինակ՝ ունեն աստվածային ծագում կամ օբյեկտիվ բանականության դրսևորումն են:

Սիներգետիկական կամ սոցիալական սիներգետիկայի մեթոդը զարգացումը, այդ թվում պետության և իրավունքի, դիտարկում է ոչ թե սահուն անցում մեկ կարգավորված վիճակից մյուսին, այլ՝ կարգավորված և քաոսային վիճակների բազմակի հերթափոխում: Այս մեթոդն օգտագործվում է պետահրավական այն գործընթացների էության բացահայտման համար, որոնք ունեն ծավալման շարունակական ժամկետներ, և որտեղ հատուկ նշանակություն են ձեռք բերում ոչ մեծ (պատահական) ներգործությունները:

Դիալեկտիկական և սիներգետիկական մեթոդների միաժամանակյա օգտագործումը հնարավորություն է տալիս հետազոտել ոչ միայն ընդհանուր օրինաչափությունները, այլև պատահականությունները (այդ թվում ապակազմակերպող), որոնք ևս խաղում են համակարգակազմիչ դեր:

§ 3. Պետության և իրավունքի տեսության համագիտական մեթոդները և սկզբունքները

Համագիտական մեթոդները այն հնարքներն են, որոնք կիրառվում են գրեթե բոլոր գիտություններում գիտական ճանաչողության առանձին փուլերում ինչ որ հիմնախնդրի հետազոտման համար: Համագիտական մեթոդներից են՝ տրամաբանական այնպիսի հնարքները, ինչպես՝ **անալիզը, սինթեզը, ինդուկցիան, դեդուկցիան և այլն:**

Անալիզը կամ վերլուծությունը ենթադրում է պետահրավական երևույթի առանձին կողմերի, հատկությունների վերհանում և հետազոտում: Օրինակ՝ պետության հատկանիշների:

Սինթեզը ենթադրում է պետահրավական երևույթի հետազոտում իր միասնության մեջ, նրա առանձին հատկությունների, մասերի, կողմերի փոխադարձ կապերում: Օրինակ, միավորելով պետության հատկանիշները ստանում ենք պետություն հասկացության բնորոշումը:

Ինդուկցիան որպես պետահրավական երևույթի հետազոտման մեթոդ ենթադրում է մասնավոր փաստերի հիման վրա ընդհանուր եզ-

ռակացության կայացում: Օրինակ, Հայաստանի Հանրապետությունն ունի տարածք և դրա վրա ապրող բնակչություն: Այս մասնավոր փաստի հիման վրա կարելի է ընդհանրացնել, որ տարածքը և բնակչությունը պետության առաջացման և գոյության բնական հիմքերն են:

Դեդուկցիան որպես պետահիրավական երևույթի հետազոտման մեթոդ ենթադրում է ընդհանուր դրույթի հիման վրա մասնավոր եզրակացության կայացում: Օրինակ, պետության անքակտելի հատկանիշն է ինքնիշխանությունը: Ուստի Հայաստանի Հանրապետությունը որպես պետություն ևս օժտված է ինքնիշխանությամբ:

Ճանաչողության ամենից ընդհանուր սկզբունքները, որպես համագիտական մեթոդների մաս, կոչված են նպաստելու պետահիրավական երևույթների բնույթն ու էությունն առավել լրիվ և ճշմարիտ արտացոլելուն: Դրանցից են՝ **պատմականության, օբյեկտիվության, բազմակողմանիության, համալիրության և այլ սկզբունքները**:

Պատմականության սկզբունքի կիրառման արդյունքում երևույթները քննարկվում են իրենց ծագման, գոյության, ներկա վիճակի և ապագայի տեսանկյուններից, ինչը թույլ է տալիս վեր հանել պետահիրավական երևույթների փոփոխությունները տարբեր երկրներում դրանց զարգացման կոնկրետ փուլերում:

Օբյեկտիվության սկզբունքը պահանջում է որպեսզի պետության և իրավունքի տեսությունը որպես գիտություն ձգտի հասնել ճշմարտությանը, պետահիրավական երևույթների օբյեկտիվ և անկողմնակալ արտացոլմանը: Օբյեկտիվության սկզբունքը գիտությունից պահանջում է նաև կառուցողական-քննադատական մոտեցում, այսինքն՝ հետազոտության ընթացքում վեր կանգնել խմբակային, կլանային, դասակարգային շահերից՝ հանուն ճշմարտության:

Բազմակողմանիության սկզբունքը պահանջում է հետազոտվող օբյեկտը դիտարկել տարբեր տեսանկյուններից, հարգել՝այլ տեսակետները: Այս սկզբունքը կոչված է ձևավորել բազմակողմանի պատկերացում պետահիրավական երևույթների մասին, այնպիսի հայացքների համակարգ, որը կմիավորի պետահիրավական տարբեր դպրոցների և մոտեցումների արժանիքները:

Համալիրությունը որպես սկզբունք պահանջում է հետազոտվող օբյեկտը դիտարկել ոչ միայն զուտ իրավաբանական առումով, այլ նաև քաղաքական, տնտեսական, ազգային և այլ դիրքերից, վեր հանել պետության և իրավունքի կախվածությունն ու կապը նշված և այլ գործոնների հետ:

§ 4. Պետության և իրավունքի տեսության մասնակի և հատուկ մեթոդները

Մասնակի գիտական մեթոդները հիմնված են տեխնիկական և հասարակական գիտությունների նվաճումների վրա, սակայն կիրառվում են նաև իրավագիտության ոլորտում: Այդ մեթոդներից են՝ կոնկրետ սոցիոլոգիական, վիճակագրական վերլուծության և այլ մեթոդները:

Կոնկրետ սոցիոլոգիական մեթոդը հնարավորություն է տալիս հատուկ հնարքների (դիտարկում, հարցում, անկետավորում և այլն) կիրառմամբ ստանալ տվյալներ պետահիրավական ոլորտում սուբյեկտների փաստական վարքագծի կամ գործընթացների իրական վիճակի վերաբերյալ:

Վիճակագրական վերլուծության մեթոդի կիրառմամբ պետահիրավական երևույթները հետազոտվում են քանակական ցուցանիշների տեսանկյունից: Այս մեթոդը նախ ենթադրում է վիճակագրական նյութի հավաքում (օրինակ՝ որևէ ոլորտում իրավախախտումների մասին), հավաքված նյութի դասակարգում և խմբավորում, իսկ այնուհետև՝ մշակում: Մեթոդի կիրառումը հնարավորություն է ընձեռում վեր հանել պետահիրավական երևույթների բնութագրական գծերը և օրինաչափությունները:

Հատուկ են կոչվում պետության և իրավունքի տեսության այն մեթոդները, որոնք օգտագործվում են միայն իրավագիտության ոլորտում: Դրանցից են **ձևական-տրամաբանական, համեմատական-իրավական, իրավական մոդելավորման, իրավական փորձարարության մեթոդները:**

Ձևական տրամաբանական (երբեմն անվանում են նաև դոգմատիկ, ձևական-իրավական) մեթոդն օգտագործվում է այսպես կոչված իրավունքի «դոգման», նրա արտաքին և ներքին ձևերն հետազոտելու համար:[1] Շնորհիվ տրամաբանության և լեզվի կանոնների հետ կապի այն օգնում է ձևակերպել իրավաբանական հասկացությունները, կատարել դրանց նկարագրություն, դասակարգում և համակարգում: Այն ապահովում է իրավական նորմերի շարադրման տրամաբանական հստակությունը և անհակասականությունը, հասկացությունների ձևակերպումներից տրամաբանական եզրահանգումների

---

[1] Ձևական տրամաբանական վերլուծության դեպքում լայնորեն օգտագործվում է մեկնաբանման կամ հերմենևտիկայի մեթոդը (հունարեն hermeneutike - մեկնաբանողական արվեստ):

կատարումը: Օրինակ, «իրավաբանական անձը համարվում է ստեղծված գրանցման պահից» օրենսդրական դրույթից բխում է, որ իրավաբանական անձը չի համարվում իրավունքի սուբյեկտ, քանի դեռ չի գրանցված: Ուստի մինչև գրանցումը այն չի կարող ձեռք բերել իրավունքներ և կրել պարտականություններ:

Համեմատական-իրավական մեթոդը (անվանում են նաև համեմատական իրավագիտության կամ համեմատական իրավագիտության և պետականագիտության կամ իրավական կոմպարատիվային) կիրառելիս համեմատվում են զանազան պատմական դարաշրջանների, երկների, միևնույն երկրի տարբեր ժամանակների պետաիրավական համակարգերը: Համեմատության արդյունքում ստացվում է նոր գիտելիք երևույթների դասակարգման, դրանց պատմական հերթականության, կապերի, զարգացման ընդհանուր և մասնավոր օրինաչափությունների մասին:

Իրավական մոդելավորման մեթոդը հատկապես կարևորվում է բարեփոխումների գործընթացում: Մի դեպքում հետազոտվող օբյեկտը՝ պետաիրավական ինստիտուտը որպես իրական մոդել իդեալապես վերարտադրվում է որոշակի իրադրության մեջ: Վերարտադրման ձևը կարող է լինել գծապատկեր, ուրվագիծ, նկարագրություն: Իրական և իդեալական մոդելների համեմատությունը աղբյուր է ճանաչողության համար:

Իրավական փորձարարության մեթոդը հնարավորություն է տալիս իրավական բարեփոխումների նախագծերը կյանքի կոչել որոշակի սահմանափակ տարածքում դրանց կատարելագործման և արդյունավետության բարձրացման նպատակով:

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

© ԲԱՑԱՏՐԵ՛Ք ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԸ

Մեթոդ, սուբյեկտիվ գործոն, մատերիալիզմ և իդեալիզմ, հնարք, մասնավոր փաստ, ընդհանուր եզրակացություն, բազմակողմանիություն, պետաիրավական դպրոց, սոցիոլոգիա, դիտարկում, հարցում, անկետավորում, վիճակագրական նյութ, դոգմատիկ, իրական և իդեալական մոդել, հերմենևտիկա, արդյունավետություն, կոմպարտիվ, փորձարարություն:

ՊԱՏԱՍԽԱՆԵ՛Ք ՀԱՐՑԵՐԻՆ

1. Ի՞նչ են գիտության մեթոդները:
2. Բնորոշե՛ք պետության և իրավունքի տեսության մեթոդները:
3. Ո՞րն է մեթոդ և մեթոդաբանություն հասկացությունների հարաբերակցությունը:
4. Ինչո՞վ է պայմանավորված կոնկրետ գիտության մեթոդների համակարգը:
5. Ի՞նչ չափանիշներով են դասակարգվում պետության և իրավունքի տեսության մեթոդները:
6. Ի՞նչ են պետության համընդհանուր մեթոդները:
7. Ինչպի՞սի համընդհանուր մեթոդներ կան:
8. Ո՞րն է մետաֆիզիկայի որպես մեթոդի էությունը:
9. Ո՞րն է դիալեկտիկայի որպես մեթոդի էությունը:
10. Ինչո՞վ են տարբերվում մատերիալիստական և իդեալիստական դիալեկտիկայի մեթոդները:
11. Որո՞նք են իդեալիստական դիալեկտիկայի վարկածները:
12. Բնութագրե՛ք սիներգետիկան որպես համընդհանուր մեթոդ:
13. Բնորոշե՛ք պետության և իրավունքի տեսության համագիտական մեթոդները:
14. Կոնկրետ օրինակով ցուցադրե՛ք անալիզի, սինթեզի, ինդուկցիայի, դեդուկցիայի մեթոդների կիրառումը:
15. Ի՞նչ դեր է խաղում պատմականության սկզբունքի կիրառումը պետության և իրավունքի տեսության մեջ:
16. Ի՞նչ դեր է խաղում օբյեկտիվության սկզբունքի կիրառումը պետության և իրավունքի տեսության մեջ:
17. Ի՞նչ դեր է խաղում բազմակողմանիության սկզբունքի կիրառումը իրավագիտության մեջ:
18. Ի՞նչ դեր է խաղում համալիրության սկզբունքի կիրառումը պետության և իրավունքի տեսության մեջ:
19. Բնորոշե՛ք և թվարկե՛ք պետության և իրավուքնի տեսության մասնակի մեթոդները:
20. Ի՞նչ հնարավորություն է տալիս կոնկրետ սոցիալական մեթոդի կիրառումը և ո՞րոնք են դրա ձևերը:
21. Բնութագրե՛ք վիճակագրական վերլուծության մեթոդը:
22. Բնորոշե՛ք և թվարկե՛ք պետության և իրավունքի տեսության հատուկ մեթոդները:
23. Բնութագրե՛ք ձևական-տրամաբանական մեթոդը: Ի՞նչու են այն անվանում դոգմատիկ մեթոդ:

24. Բացատրե՛ք համեմատական-իրավական մեթոդի էությունը և նշանակությունը:
25. Ո՞րն է իրավական մոդելավորման մեթոդի բովանդակությունը:
26. Ի՞նչ է իրավական փորձարարության մեթոդը:

ԿԱՏԱՐԵ՛Ք ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Օգտվելով հանրագիտարանից, փիլիսոփայական բառարանից կամ ինտերնետից պատրաստե՛ք զեկուցում դիալեկտիկայի և նրա երեք օրենքների մասի:

ԲԱՆԱՎԻՃԵՔ

1. Նոր ժամանակաշրջանի դասական գիտության մեջ ընդունված էր այն տեսակետը, որ գիտական ճանաչողության մեթոդը պետք է համապատասխանի առարկային: Ուստի առարկայի յուրահատկությունը նախորոշում է դրա ճանաչման համար ամենից արդյունավետ մեթոդը: Սակայն մեթոդների համակցությունը որոշելիս կարևոր դեր է խաղում նաև սուբյեկտիվ գործոնը, հետազոտողի անձը, խառնվածքը, կամքը և այլն: Այդպիսով այսօր՝ հետդասական գիտության մեջ գերակշռող է այն մոտեցումը, որ մեթոդն առաջնային է առարկայից կամ գոնե դրանք փոխկապված են:

Ո՞ր տեսակետի հետ եք դուք համաձայն: Բաժանվե՛ք խմբերի ու քննարկեք:

2. **Մատերիալիստական դիալեկտիկան** պետությունը և իրավունքը դիտարկում է որպես պատմական երևույթներ, դրանց ծագումը կապելով հասարակության կրած սոցիալ-տնտեսական փոփոխությունների հետ (մասնավոր սեփականության և դասակարգերի առաջացումը): Այս մեթոդը պետությունը և իրավունքը համարում է զարգացող, հասարակական այլ երևույթների հետ փոխկապված երևույթներ: Այդ երևույթների մեջ մարդկային գիտակցությունը երկրորդական տեղ է գրավում: Առաջնային են նյութական, տնտեսական գործոնները: Ըստ **սուբյեկտիվ իդեալիստական դիալեկտիկայի** պետության և իրավունքի առաջացումը, գոյությունը և զարգացումը պայմանավորված են մարդու գիտակցությամբ: Օրինակ՝ բանականությունը մարդկանց հանգեցնում է հասարակական դաշինքի գաղափարին և պետության հիմնադրմանը, դաշինքի պայմանների փոփոխությանը:

Միգուցե՞ աշխարհն այնպիսին է, ինչպիսին մենք այն պատկերացնում ենք ու փորձում դրան ադեկվատ գործել, այդ թվում իրավաբանորեն ամրագրել այդ պատկերացման հիմունքները:

Բաժանվեք խմբերի ու քննարկեք այս հիմնախնդիրները:

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ
ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԹՈԴՆԵՐ
ՀԱՄԱԳԻՏԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ
ՄԱՍՆԱՎՈՐ ՄԵԹՈԴՆԵՐ
ՀԱՏՈՒԿ ՄԵԹՈԴՆԵՐ


ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԹՈԴՆԵՐԸ
ՄԵՏԱՖԻԶԻԿԱ
ԴԻԱԼԵԿՏԻԿԱ
ՍԻՆԵՐԳԵՏԻԿԱ
ՄԱՏԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ
ԻԴԵԱԼԻՍՏԱԿԱՆ
ՕԲՅԵԿՏԻՎ ԻԴԵԱԼԻԶՄ
ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԻԴԵԱԼԻԶՄ


ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳԻՏԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ
ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ
ԱՆԱԼԻԶ
ՍԻՆԹԵԶ
ԴԵԴՈՒԿՑԻԱ
ԱՅԼՆ
ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ
ՊԱՏՄԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՕԲՅԵԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ
ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻՈՒԹՅՈՒՆ
ՀԱՄԱԼԻՐՈՒԹՅՈՒՆ


ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՄԵԹՈԴՆԵՐԸ
ՄԱՍՆԱԿԻ ՄԵԹՈԴՆԵՐ
ԿՈՆԿՐԵՏ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ԱՅԼՆ
ՀԱՏՈՒԿ ՄԵԹՈԴՆԵՐ
ՁԵՎԱԿԱՆ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ, ԴՈԳՄԱՏԻԿ
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ, ԿՈՄՊԱՐԱՏԻՎ
ԻՐԱՎԱԿԱՆ ՄՈԴԵԼԱՎՈՐՄԱՆ
ԻՐԱՎԱԿԱՆ ՓՈՐՁԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԹԵՄԱ 3. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԵՂԸ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Թեմայի բովանդակությունը

- *Պետության և իրավունքի տեսության հարաբերակցությունը պետությունը և իրավունքը հետազոտող հասարակական գիտությունների (փիլիսոփայություն, քաղաքագիտություն, սոցիոլոգիա, տնտեսագիտություն) հետ:*
- *Իրավական գիտությունների համակարգը, օբյեկտ և առարկան: Իրավական գիտությունների դասակարգումը. հիմնարար տեսական, պատմական, ճյուղային, միջճյուղային, կիրառական, միջազգային, արտասահմանյան երկրների պետությունը և իրավունքը հետազոտող գիտություններ: Պետության և իրավունքի տեսությունը իրավական գիտությունների համակարգում:*
- *Պետության և իրավունքի տեսությունը որպես ուսումնական դասընթաց: Դասընթացի նպատակները, գործառույթները կամ խնդիրները, դասընթացի կառուցվածքը (ընդհանուր մաս, պետության տեսություն, իրավունքի տեսություն, իրավունքի և պետության գործողության կառուցակարգի տեսություն):*

§ 1. Պետության և իրավունքի տեսության կապը հասարակական գիտությունների հետ

12

Պետությունը և իրավունքը համարվում են նաև այնպիսի հասարակական գիտությունների ուսումնասիրության օբյեկտ, ինչպիսիք են՝ փիլիսոփայությունը, քաղաքագիտությունը, սոցիոլոգիան, տնտեսագիտությունը:

Փիլիսոփայությունը գիտականորեն բացատրելով հասարակական կեցությունը, հասարակության առաջացման և զարգացման օրինաչափությունները, անդրադառնում է նաև պետությանը և իրավունքին, իր հայեցակարգային դիրքերից իմաստավորելով այդ հասարակական երևույթները:Փիլիսոփայությունը մեթոդաբանական կողմնորոշիչ, հենակետ է ծառայում պետության և իրավունքի տեսության համար՝ բնութագրելով պետության և իրավունքի տեղը աշխարհում և հասարակական համակարգում: Փիլիսոփայության և պետության ու իրավունքի տեսության խաչման արդյունքում ձևավորվում գիտական նոր ոլորտ՝ **իրավունքի փիլիսոփայություն**:

Պետությունը և իրավունքը որպես հասարակական ինստիտուտներ հետազոտվում են նաև **սոցոլոգիայի կողմից**: Վերջինս առանձնացնում է դրանց սոցոլոգիական կողմերը և օրինաչափությունները, մի կողմ թողնելով իրավական հիմնախնդիրները, օրինակ՝ օրենսդիր իշխանության գործողության արդյունավետությունը: Սոցոլոգիայի և պետության ու իրավունքի տեսության խաչման արդյունքում առաջացել է նոր գիտություն՝ **իրավունքի սոցոլոգիա**:

Քաղաքագիտությունը հետազոտում է քաղաքական համակարգը և նրա բաղադրատարրերը (պետությունը քաղաքական համակարգի սուբյեկտ է), քաղաքական գործընթացները, քաղաքական կուսակցությունները, շարժումները, մի կողմ թողնելով դրանց իրավաբանական առումները, օրինակ՝ կարգավորող իրավունքի նորմերը: Քաղաքագիտության և իրավագիտության խաչման արդյունքում առաջացել է նոր գիտություն՝ **իրավական քաղաքականություն**:

Տնտեսագիտության ուսումնասիրության առարկան տնտեսական հարաբերություններն են՝ արտադրություն, փոխանակում և բաշխում: Այս ընթացքում այն անդրադառնում է նաև պետության և իրավունքի տնտեսական դերին ու առաքելությանը: Տնտեսագիտության և իրավագիտության խաչման արդյունքում առաջանում է **տնտեսության իրավական կարգավորման գիտական ոլորտը**:

§ 2. Իրավական գիտությունների համակարգը (դասակարգումը)

Իրավական գիտությունները կազմում են գիտության ոլորտ, որի ընդհանուր անվանումն է իրավագիտություն: Գիտության այս ոլորտի հետազոտության ընդհանուր օբյեկտը պետությունը և իրավունքն են: Այդ ընդհանուր օբյեկտում իրավական ամեն մի գիտություն ունի իր հետազոտության կոնկրետ առարկան: Գիտության առարկան ընդհանուր օբյեկտի այն մասը, կողմն է, որն առանձնացված է օբյեկտիվ իրականությունից և ընդգրկված է ճանաչողության գործընթաց:

Իրավագիտության համակարգը ըստ հետազոտման առարկայի կարելի է բաժանել յոթ խմբերի.

1) **Հիմնարար տեսական իրավական գիտություններ**, որոնք հետազոտում են պետության և իրավունքի ամենից ընդհանուր օրինաչափությունները: Այդպիսիք են պետության և իրավունքի տեսությունը, իրավունքի փիլիսոփայությունը, իրավունքի սոցիոլոգիան, իրավական հերմենևտիկան և այլն:

2) **Պատմական իրավական գիտություններ**՝ պետության և իրավունքի ընդհանուր պատմություն, Հայաստանի պետության և իրավունքի պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն: Եթե վերջինը հետազոտում է պետական և իրավական գաղափարների զարգացման պատմությունը (այն կարծես թե պետության և իրավունքի տեսության պատմական մասը լինի), ապա մյուս պատմահիրավական գիտությունները հետազոտում են իրական պետական հիմնարկությունների և իրավական համակարգերի ծագումն ու զարգացումը՝ կոնկրետ երկրներում՝ ժամանակագրական կարգով:

3) **Ճյուղային իրավական գիտություններ**, որոնց հետազոտության առարկան իրավունքի որևէ ճյուղի (օրենսդրության) նորմերն ու դրանց կիրառման պրակտիկան են: Օրինակ՝ սահմանադրական իրավունք, վարչական իրավունք, քաղաքացիական իրավունք, քրեական իրավունք և այլն:

4) **Միջճյուղային իրավական գիտություններ**, որոնք սերտորեն կապված են ճյուղայինների հետ, սակայն ունեն հետազոտման ինքնուրույն առարկա: Օրինակ արդարադատության կազմակերպում, դատախազական հսկողություն և այլն:

5) **Կիրառական իրավական գիտություններ** (երբեմն անվանում են նաև հատուկ), որոնք ծագել են տեխնիկական, բնական և այլ գիտությունների ու իրավագիտության կամ իրավական պրակտիկայի խաչման արդյունքում: Օրինակ՝ կրիմինալիստիկա, կրիմինոլոգիա, դատական բժշկություն, դատական հոգեբանություն, դատական վիճակագրություն, հաշվապահական հաշվառում և փորձաքննություն և այլն:

6) **Միջազգային իրավական գիտություններ**, որոնց հետազոտության առարկան միջազգային իրավունքն է, նրա առանձին ոլորտները: Օրինակ՝ միջազգային հանրային իրավունք (ներառյալ միջազգային պայմանագրային իրավունք, դիվանագիտական և հյուպատոսական իրավունք և այլն) և միջազգային մասնավոր իրավունք:

7) **Արտասահմանյան երկրների պետությունը և իրավունքը հետազոտող գիտություններ**: Օրինակ՝ արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունք (համեմատական սահմանադրագիտություն), արտասահմանյան երկների քաղաքացիական իրավունք (համեմատական քաղաքացիագիտություն) և այլն: Այս խմբի գիտությունների մեջ առանձնանում է **համեմատական իրավագիտությունը**՝ որպես ընդհանուր համեմատական գիտություն, որի հետա-

զոտման առարկան աշխարհի իրավական համակարգերն են: Որպես գիտություն համեմատական իրավագիտությունը տեսապատմական գիտությունների հարաբերականորեն ինքնուրույն մասն է:

§ 3. Պետության և իրավունքի տեսությունը իրավական գիտությունների համակարգում

Իրավական գիտությունների համակարգում պետության և իրավունքի տեսությունը հանդես է գալիս որպես համատեսական և մեթոդաբանական գիտություն: Որպես համատեսական գիտություն պետության և իրավունքի տեսությունն այլ իրավական գիտությունների ու իրավական պրակտիկայի համեմատ ունի ընդհանրացնող բնույթ:

Ճյուղային իրավական գիտություններն ունեն էմպիրիկ նշանակություն: Դա նշանակում է, որ նրանք բոլորը որպես ճանաչողության աղբյուր օգտագործում են երևացող ու ստուգման ենթակա փաստերը: Պետության և իրավունքի տեսության խնդիրն է համակարգել, մեկնաբանել և ընդհանրացնել պետահիրավական իրականության փաստերը: Ճյուղային իրավական գիտությունները կողմնորոշված են միայն պետության և իրավունքի որևէ մեկ առումի, կողմի հետազոտության վրա, օրինակ՝ հանցագործություն և պատիժ:

Պետության և իրավունքի տեսությանը բնութագրական է ընդհանրացնող, միավորող, ամբողջական մոտեցումը, որն հաշվի է առնում այլ գիտությունների հետազոտման արդյունքները: Օրինակ, եթե ճյուղային իրավական գիտություններից ամեն մեկը հետազոտում է իր ոլորտի իրավախախտումները, դրանց առանձնահատկությունները, ապա պետության և իրավունքի տեսությունը հետազոտում է իրավախախտումը ընդհանրացված կերպով: Այն ինտեգրելով բոլոր տեսակի իրավախախտումներին բնորոշ ընդհանուրը, առանձնահատուկը ստեղծում է իրավախախտման ընդհանուր տեսություն:

Որպես մեթոդաբանական, հենքային գիտություն պետության և իրավունքի տեսությունն հետազոտում է պետության և իրավունքի զարգացման հիմնական և ընդհանուր օրինաչափությունները, մշակում է ճանաչողության ընդհանուր մեթոդները և սկզբունքները, ինչպես նաև իրավագիտության կատեգորիաների և հասկացությունների համակարգը: Այդ ամենը հիմք է այլ իրավական գիտությունների համար, որոնք ընդհանուր տեսական դրույթներն օգտագործում են իրենց ոլորտների հատուկ խնդիրների լուծման համար: Ամեն մի իրավական գիտություն մշակելով իր ճյուղային տեսությունը ղեկավարվում և

կողմնորոշվում է պետության և իրավունքի տեսության մեթոդաբանական դրույթներով: Օրինակ իրավական պետությունը, որպես սահմանադրական իրավունքի ինստիտուտ, հենվում է իրավական պետության տեսական մոդելի վերաբերյալ պատկերացումների վրա:

Իրավագիտության մեջ պետության և իրավունքի տեսությունն ապահովում է նաև գիտական պատկերացումների ամբողջականությունը, հասկացողական ու եզրույթային ապարատի միասնությունը:

§ 4. Պետության և իրավունքի տեսությունը որպես ուսումնական դասընթաց

Պետության և իրավունքի տեսությունը որպես գիտություն նպատակ ունի հետազոտել ու ձևակերպել պետության և իրավունքի զարգացման օրինաչափությունները: **Պետության և իրավունքի տեսության որպես դասընթացի նպատակը գիտական հետազոտության արդյունք համարվող տեսական նյութը սովորողին մատչելի ձևով շարադրելն է:** Պետության և իրավունքի տեսության որպես դասընթացի ավանդման արդյունքում սովորողը յուրացնում է տեսության մշակած հիմնական սկզբունքները, դրույթները, գաղափարները, որոնք արդեն մեծամասամբ հանրաճանաչ են:

Պետության և իրավունքի տեսությունը որպես դասընթաց իրավաբանական կրթության ոլորտում կատարում է հետևյալ գործառույթները.

1) սովորեցնում է պետական և իրավական ընդհանուր օրինաչափությունները, իրավագիտության մեթոդաբանական հիմունքները,

2) օգնում է յուրացնելու կարևոր պետական և իրավական հասկացությունները, եզրույթները, այլ կերպ ասած, իրավաբանական լեզուն,

3) նախապատրաստում է ուսանողին մնացած իրավական դասընթացները յուրացնելուն, հանդես գալով որպես հիմք և նախադրյալ իրավագետի հետագա կրթական գործընթացի համար,

4) ձևավորում է մասնագիտական արհեստավարժություն՝ գործնական ունակություններ և հմտություններ վերլուծելու պետաիրավական կոնկրետ երևույթները, ճիշտ կիրառել ստացված տեսական գիտելիքները,

5) ձևավորում է իրավական աշխարհայացք և կողմնորոշում՝ դնելով մասնագետի իրավական մշակույթի հիմքերը:

§ 5. Պետության և իրավունքի տեսություն դասընթացի կառուցվածքը

+ 14

Պետության և իրավունքի տեսությունը որպես գիտություն իր ծավալով շատ ավելի լայն և ընդգրկուն է, քան որպես դասընթաց: Դասընթացն իր գլխավոր խնդրին համապատասխան ներկայացնում է տվյալ գիտության առարկայի մեջ մտնող հիմնահարցերը՝ ուսուցողական նպատակներով:

Դասընթացն ունի իր ներքին կառուցվածքը, որն արտացոլվում է առարկայական ծրագրում: Ծրագիրը դասընթացի համակարգը կազմող ուսումնական նյութի հիմնահարցերի շարադրանքն է՝ ըստ բաժինների և թեմաների: Այդ համակարգը պայմանականորեն կարելի է բաժանել չորս բաժինների:

1) **Ընդհանուր մաս**, որում ներկայացվում է պետության և իրավունքի տեսության որպես գիտության առարկան և մեթոդաբանությունը, ինչպես նաև պետության և իրավունքի առաջացման հիմնահարցերը:

2) **Պետության տեսություն**, որում ներկայացվում է պետության հասկացությունը, հատկանիշները, էությունը, պետական իշխանությունը, պետության գործառույթները, ձևերը, կառուցակարգը (ներառյալ աппարատը) և այլ հիմնահարցեր կապված պետության հետ:

3) **Իրավունքի տեսություն**, որում ներկայացվում են իրավունքի հասկացությունը, հատկանիշները, էությունը, սկզբունքները, աղբյուրները, իրավունքի նորմերը, իրավունքի տիպերը և իրավական համակարգերը, իրավաստեղծագործությունը, իրավունքի համակարգը և այլ իրավական հիմնահարցեր:

4) **Իրավունքի և պետության գործողության կառուցակարգը**, որում ներկայացվում են իրավահարաբերություններ, իրավունքի իրականացում, իրավունքի մեկնաբանում, իրավաչափ վարքագիծ և իրավախախտում, իրավաբանական պատասխանատվություն, օրինականություն և իրավակարգ թեմաների հիմնահարցերը:

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

© ԲԱՑԱՏՐԵ՛Ք ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԸ

Տնտեսության իրավական կարգավորում, պետահիրավական ուսմունք, պետահիրավական իրականություն, միջազգային իրավունք, համատեսական գիտություն, մեթոդաբանական գիտություն, էմպիրիկ, իրավախախտում, հասկացությունների և եզրույթների ապարատի միասնություն, հանրաճանաչ դրույթներ, պետության տեսություն, իրավունքի տեսություն, մասնագիտական արհեստավարժություն, իրավական աշխարհայացք, դասընթացի առարկայական ծրագիր:

? ՊԱՏԱՍԽԱՆԵ՛Ք ՀԱՐՑԵՐԻՆ

1. Ինչո՞վ է պայմանավորված պետության և իրավունքի տեսության ու այլ հասարակական գիտությունների կապը:
2. Ի՞նչ է փիլիսոփայությունը և ի՞նչ նշանակություն ունի այն պետության և իրավունքի տեսության համար:
3. Որո՞նք են պետության և իրավունքի տեսության և սոցիոլոգիայի առնչությունները:
4. Ի՞նչ է հետազոտում քաղաքագիտությունը և ինչո՞վ է այն տարբերվում պետության և իրավունքի տեսությունից:
5. Ինչո՞վ են տարբերվում և ինչպե՞ս են խաչվում տնտեսագիտության և իրավագիտության հետազոտման առարկաները:
6. Ո՞րն է իրավագիտության հետազոտության ընդհանուր օբյեկտը և ինչո՞վ են տարբերվում գիտության օբյեկտը և առարկան:
7. Որո՞նք են իրավագիտության համակարգը կազմող գիտությունների խմբերը:
8. Թվարկե՛ք հիմնարար տեսական իրավական գիտությունները:
9. Որո՞նք են պատմական իրավական գիտությունները:
10. Ի՞նչ են հետազոտում ճյուղային իրավական գիտությունները:
11. Որո՞նք են միջճյուղային և կիրառական իրավական գիտությունները և ինչպե՞ս են ձևավորվել դրանք:
12. Ո՞րն է միջճյուղային իրավական գիտության հետազոտման առարկան:
13. Ինչո՞վ են տարբերվում արտասահմանյան երկրների պետությունը և իրավունքը հետազոտող և ճյուղային իրավական գիտությունները:

14. Ի՞նչ է իրենից ներկայացնում համեմատական իրավագիտությունը որպես գիտություն:
15. Ի՞նչ դեր է խաղում պետության և իրավունքի տեսությունը իրավագիտության համակարգում:
16. Ինչու՞ են պետությանն և իրավունքի տեսությունը համարում համատեսական գիտություն:
17. Ո՞րն է պետության և իրավունքի տեսության մեթոդաբանական նշանակությունը իրավագիտության համակարգում:
18. Որո՞նք են պետության և իրավունքի տեսության որպես գիտության և ուսումնական դասընթացի նպատակները:
19. Ի՞նչ գործառույթներ է կատարում պետության և իրավունքի տեսությունը իրավաբանական կրթության համակարգում:
20. Ինչպի՞սին է պետության և իրավունքի տեսության դասընթացի կառուցվածքը:

ԲԱՆԱՎԻՃԵՔ

1. Ոչ վաղ անցյալում գիտական հետազոտության մեթոդ էր համարվում կուսակցականության սկզբունքը, որին համապատասխան և կառուցված էր պետության և իրավունքի տեսություն դասընթացի ծրագիրը: Բերենք օրինակ խորհրդային շրջանի գրականությունից՝ «Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի ընդհանուր պատմություն առարկան, որպես կուսակցական գիտություն, ուսանողությանը զինում է խորը և բազմակողմանի գիտելիքներով, հաղորդակցում մարդկային հասարակության պատմությանը»: Այսօր գիտական հետազոտության սկզբունքներ են ճանաչվում բազմակարծությունը և օբյեկտիվությունը: Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ էր խորհրդային հասարակագիտությունը և կրթությունը կառուցված կուսակցականության սկզբունքով: Ո՞ր սկզբունքն է ճիշտ ձեր համոզմամբ:

ԳՇԱՊԱՏԿԵՐԱՑԻՆ ԵՎ ՈՒՐՎԱԳՇԱՑԻՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐՐՈՐԴ ԹԵՄԱՅԻ ՀԱՄԱՐ

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ



ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ
ՆՊԱՏԱԿԸ՝ շարադրել տեսական նյութը սովորողի համար մատչելի ձևով
ԽՆԴԻՐՆԵՐԸ
1. սովորեցնել – պետաիրավական ընդհանուր օրինաչափությունները
2. սովորեցնել – իրավագիտական լեզուն
3. նախապատրաստել – ձեռքբերած իրավական դասընթացները յուրացնելուն
4. ձևավորել – մասնագիտական արհեստավարժություն
5. ձևավորել – իրավական աշխարհայացք և իրավական մշակույթ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ			
ԲԱԺԻՆ 1 ընդհանուր մաս	ԲԱԺԻՆ 2 Պետության տեսություն	ԲԱԺԻՆ 3 Իրավունքի տեսություն	ԲԱԺԻՆ 4 Պետության և իրավունքի գործողության կառուցակարգը

ԹԵՄԱ 4. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

Թեմայի բովանդակությունը

- *Հասարակություն. հատկանիշները, հասկացությունը: Մինչպետական հասարակության կազմակերպական ձևերը (նախնադարյան հոտ, տոհմային համայնք, ցեղ, ցեղային միություն) և տնտեսական հիմքերը: Մինչպետական հասարակության սոցիալական իշխանության և նորմերի ընդհանուր բնութագիրը:*
- *Պետության առաջացման ընդհանուր պատճառները (օրինաչափությունները): Պետության առաջացման տնտեսական, սոցիալ-դասակարգային, մարդկային, արտաքին-պաշտպանական օրինաչափությունները: Պետության առաջացման առանձնահատուկ օրինաչափությունները: Պետության առաջացման եվրոպական և արևելյան (ասիական) ուղիները: Պետության առաջացման եվրոպական ուղու ձևերը՝ աթենական, հռոմեական, գերմանական: Արևելյան հասարակությունների հիմնական հատկանիշները:*
- *Պետության առաջացման տեսությունների բազմազանությունը: Աստվածաբանական, նահապետական, պայմանագրային, բռնության, մատերիալիստական տեսությունների ընդհանուր բնութագիրը:*
- *Պետական և անմիջական իշխանության տարբերիչ հատկանիշները: Մինչպետական և պետական հասարակության տարբերիչ հատկանիշները:*
- *Իրավունքի առաջացման պատճառները և իրավական նորմերի ձևավորման ուղիները՝ իրավական սովորույթ, դատական նախադեպ, նորմատիվ ակտ: Իրավունքի նորմերի և նախնադարյան հասարակության սոցիալական նորմերի տարբերիչ հատկանիշները՝ ըստ ծագման եղանակի, կամային ուղղվածության, արտաքին արտահայտման ձևի, ուժի մեջ մտնելու ժամանակի, կարգավորման միջոցների, կենսագործման ապահովման եղանակի:*

§ 1. Հասարակություն. հատկանիշները, հասկացությունը

15

Պետությունը և իրավունքը ծագել են մարդկային հասարակության երկարատև էվոլյուցիայի հետևանքով: Հասարակությունն ունի շատ ավելի երկար և հարուստ պատմություն, քան պետությունը և իրավունքը: Ուստի վերջիններիս ծագման և գործողության օրինաչա-

փոփոխությունները հասկանալու համար անհրաժեշտ է իմանալ, թե ինչ է հասարակությունը:

Հասարակությունը որպես երևույթ բնական միջավայրից և իրեն հարակից այլ երևույթներից տարբերվում է մի շարք հատկանիշներով:

1. Հասարակությունն իրենից ներկայացնում է բանական էակների՝ գիտակցությամբ և կամքով օժտված անհատների համակցություն: Հասարակությունը ծագում է մարդու ձևավորմանը զուգընթաց, երբ բնական կացությունից անցում է կատարվում քաղաքակիրթ կացությանը: Բնական, մինչհասարակական մարդկանց (homohabelis - հմուտ մարդ) միավորում էր բնազդը, որը գենետիկորեն հատուկ էր նրանց: Բնական, մինչհասարակական մարդկանց և նրանց հոտերի ողջ խնդիրը շրջակա միջավայրին հարմարվելն էր: Այնինչ հասարակությունը ոչ թե բնազդային, այլ գիտակցված միավորում է: Նրա բջիջը բանական մարդն է (homo sapiens):

2. Հասարակությունը միմյանց հետ համագործող մարդկանց միավորում է՝ իրենց պահանջմունքների բավարարման համար: Օրինակ՝ գիշատիչ գազանների և այլ ցեղերի հարձակումներից պաշտպանվելու պահանջմունքը մարդկանց ստիպեց համագործակցել: Ուստի հասարակությունը մարդկանց համագործակցության արդյունք է:

3. Հասարակությունը մարդկանց կայուն և մշտական համագործակցություն է: Որոշակի անհատների պատահական, ժամանակավոր միավորումն իրենից հասարակություն չի ներկայացնում: Հասարակական համագործակցությանը կայունություն և մշտականություն է հաղորդում համընդհանուր շահը: Համընդհանուր շահերը պայմանավորում են միասնական սոցիալական նպատակները: Համընդհանուր շահերը չեն կլանում, փոխարինում մասնավոր, անհատական շահերին: Օրինակ՝ այլ ցեղերի հարձակումներից պաշտպանվելու պահանջմունքն անհատապես հնարավոր չէ բավարարել: Ուստի պաշտպանությունը, որպես ցեղի գոյության և վերարտադրության գրավական, վերածվում է համընդհանուր շահի, որին համապատասխան ցեղն իր առջև դնում է նպատակ՝ պահպանել և վերարտադրել իրեն:

4. Հասարակությանը բնորոշ է սոցիալական իշխանություն և հասարակական նորմերի համակարգ: Սոցիալական իշխանությունը

(հասարակական կառավարման համակարգը) և հասարակական նորմերի համակարգը (սովորույթներ, ավանդույթներ, բարոյական նորմեր, կրոնական կանոններ և այլն) ձևավորվում են հասարակության կազմավորմանը զուգընթաց: Հասարակական նորմերը, հասարակության անդամների հարաբերությունները՝ հասարակական կյանքը կարգավորող նմուշային վարքագծի կանոններ են: Ե՛վ սոցիալական իշխանությունը, և՛ հասարակական նորմերը մարդկային հասարակության անհրաժեշտ տարրերն են: Եթե օրինակ, սիմֆոնիկ նվագախմբին անհրաժեշտ է դիրիժոր, ապա հասարակությանը՝ սոցիալական իշխանություն, որովհետև այն դիրիժորի նման կառավարում, կանոնակարգում է հասարակությունը: Հասարակական իշխանությունը ենթադրում է իշխանության սուբյեկտի (կառավարողների) և իշխանության օբյեկտի (կառավարվողների) գոյությունը: Հասարակական իշխանության ներգործության օբյեկտն ամբողջ հասարակությունն է:

5. **Հասարակությունը սոցիոմշակութային համակարգ** է: Ամեն մի հասարակություն ունի արժեքների ընդհանուր համակարգ, այլ կերպ ասած, մշակույթ: Այդ մշակույթը ձևավորվում է պատմականորեն և ընկած է անհատական ու հասարակական գիտակցության հիմքում: Մշակույթն արտացոլում է հասարակության շահերն ու նպատակները և իր հերթին նպաստում է դրանց կենսագործմանը:

Միավորելով վերը թվարկված հատկանիշները կարող ենք տալ հասարակության հետևյալ բնորոշումը. ***հասարակությունը բանական էակների կայուն և մշտական համակցություն է, միավորված ընդհանուր շահերի հիման վրա, որին բնորոշ են սոցիալական իշխանությունը, սոցիալական նորմերը և սոցիոմշակութային որոշակի արժեքների համակարգը:***

§ 2. Մինչպետական հասարակության կազմակերպական ձևերը և տնտեսական հիմքերը

Պատմականորեն մինչպետական հասարակությունն անցել է սոցիալական կազմակերպության հետևյալ ձևերը՝ **նախնադարյան հոտ, տոհմային համայնք, ցեղ, ցեղային միություն**:

Նախնադարյան հոտը բնական հասարակությունից տոհմային հասարակության անցումային ձևն էր: Հոտի ողջ խնդիրը բնական մի-

ջավայրին հարմարվելն էր, իսկ տնտեսությունը՝ յուրացնող տնտեսություն էր: Մարդիկ զբաղվում էին հավաքչությամբ, որսով, այսինքն՝ յուրացնում էին այն, ինչը կար բնության մեջ: Նախնադարյան հոտին բնորոշ էր միայն բնական անհավասարությունը՝ տարիքային, ֆիզիկական և այլն: Սոցիալական անհավասարություն դեռևս չկար: Հոտի գլուխ կանգնած անհատի առաջնորդությունը պայմանավորված էր նրա խելքով, ուժով, հմտությամբ: Կառավարումը հիմնված էր պարզունակ նախնադարյան կոլեկտիվիզմի վրա: Իր հերթին այդ կոլեկտիվիզմը բնական էր, մարդուն հատուկ բնազդային որակ:

Պատմականորեն հասարակության կազմակերպման առաջին ձևը եղել է տոհմը: **Տոհմն արյունաազգակցական կապերով միավորված մարդկանց խումբ էր:** Տոհմն ապահովում էր մարդկանց գոյատևումը, որովհետև մարդիկ դեռևս շատ կողմերով կախված էին բնությունից: Բնական պայմանների ուժով տոհմի անդամները համատեղ աշխատում (որս, հավաքչություն) և համատեղ սպառում էին: Տոհմերը գոյություն են ունեցել հազարամյակներ: Ավելի ուշ շրջանում ազգակից տոհմերը միավորվել են՝ ավելի խոշոր հասարակական ընդհանրությունների՝ ցեղերի մեջ:

Տոհմի զարգացման ուշ շրջանում ձևավորվում է արտադրող տնտեսությունը: Վերջինս նախադրյալ էր անհատական սեփականության ձևավորման համար: Առաջ են գալիս աշխատանքի խոշոր բաժանումները՝ հողագործություն, անասնապահություն, արհեստ, առևտուր: Այժմ արդեն արգելվում է ամուսնությունը տոհմի ներսում (էկզոգամիա), ինչը ինքնուրույն ընտանիքի ձևավորման նախադրյալն էր: Նախնադարյան տոհմային համայնքի կառավարումն իրականացնում էին տոհմի ընդհանուր ժողովը, ընտրովի ավագանին կամ խորհուրդը, տոհմապետը:

Ավելի ուշ շրջանում ձևավորվեցին ցեղերը և ցեղային միությունները: **Ցեղը մի քանի արյունաազգակից տոհմերի տարածքային միավորում էր:** Եթե տոհմային համայնքը միայն արյունակիցների միություն էր, ապա ցեղը ենթադրում էր նաև տարածքային միություն: Ցեղի ձևավորմամբ կազմավորվեցին նաև նրա կառավարման մարմինները՝ ընդհանուր ժողովը, ցեղի խորհուրդը, առաջնորդը:

Որոշակի խնդիրների լուծման անհրաժեշտությունը նպաստեց ցեղային միությունների կազմավորմանը: **Ցեղային միությունը մի քանի ցեղերի միավորումն էր:** Միավորմանը նպաստող գործոններից էին

պաշտպանությունը, նոր տարածքների նվաճումը, խոշորամասշտաբ հասարակական աշխատանքները: Արտադրողական ուժերի զարգացումը խթանեց անհատական ընտանիքների և հարևանային հարաբերությունների ձևավորմանը: Առաջ եկան գույքային անհավասարությունը, հարուստ և աղքատ ընտանիքները:

§ 3. Մինչպետական հասարակության սոցիալական իշխանության և նորմերի ընդհանուր բնութագիրը

Նախ պարզենք, թե ի՞նչ է իշխանությունը և ինչպե՞ս է այն իրականացվում: Հասարակության հետ միասին ի հայտ է գալիս նաև հասարակական իշխանությունը: Իշխանությունը հասարակությունը դարձնում է ամբողջական, կառավարելի: Այն կազմակերպվածության և կարգուկանոնի հաստատման միջոց է: Իշխանությունը, որպես կազմակերպված ուժ, բնորոշ է ինչպես ամբողջ հասարակությանը, այնպես էլ նրա տարբեր բաղկացուցիչ մասերին: Հետևաբար, գոյություն ունեն իշխանության տարբեր տեսակներ: Օրինակ՝ տոհմի, ցեղի, համայնքի, պետական, հասարակական կազմակերպության, ծնողական, եկեղեցական: **Ցանկացած տեսակի իշխանության բնութագրական գիծն ընդունակությունը կամ հնարավորությունն է ստիպել հնազանդվել, իր կամքին ենթարկել այլ մարդկանց**: Իշխանությունն առանց ուժի անզոր է իր կամքը թելադրելու մարդկանց, կառավարելու հասարակությունը: Իշխանության ուժը կարող է հենվել հարկադրանքի, երբեմն նաև բռնության, կամ էլ հեղինակության վրա: Այսպիսով իշխանությունը հարաբերություն է իշխանության սուբյեկտի և օբյեկտի միջև, որի արդյունքում սուբյեկտն իրեն է ենթարկում օբյեկտին:

Մինչպետական հասարակության սոցիալական իշխանության առանձնահատկությունն այն էր, որ այստեղ իշխանությունը մարմնավորում էր ամբողջ տոհմի կամքը և ուղղված էր տոհմի ընդհանուր գործերի կառավարմանը: Իշխանության օբյեկտը ևս ամբողջ տոհմն էր, նրա բոլոր անդամները: Նախնադարյան տոհմատիրական հասարակության մեջ իշխանության սուբյեկտը և օբյեկտը համընկնում էին, այդ իսկ պատճառով իշխանությունն իր բնույթով անմիջական հասարակական էր, այսինքն՝ իշխանավորները դեռևս չէին առանձնացել հասարակությունից: Տոհմատիրական իշխանության իրականացման բնական եղանակը հասարակական ինքնակառավարումն էր: Դեռևս գոյություն չունեին կառավարման հատուկ մարմիններ: Իշխանութ-

յան իրականացման բարձրագույն ձևը տոհմի (ցեղի) բոլոր չափահաս անդամների ժողովն էր, որը լուծում էր տոհմի կենսագործունեության բոլոր հիմնական հարցերը: Ժողովի որոշումները պարտադիր էին բոլորի համար:

Նախնադարյան հասարակության ոչ բարդ հարաբերությունները կարգավորվում էին սովորույթներով: Սովորույթները պատմականորեն ձևավորված վարքագծի կանոններ են, որոնք արմատավորվեցին հասարակական առօրյայում երկարատև ժամանակի ընթացքում բազմակի անգամ կիրառվելու հետևանքով: Օրինակ, կոլեկտիվ աշխատանքային գործունեության, որսորդության կանոնները: Աստիճանաբար դրանց գումարվեցին արարողակարգերը: Օրինակ, որսորդությունը զուգակցվում էր խորհրդավոր ծիսակարգերով: Մինչպետական հասարակության սովորույթներն ունեին չմասնատված «մոնոնորմերի» բնույթ, այսինքն՝ դրանք միաժամանակ և՛ հասարակական կյանքի կազմակերպման, և՛ նախնադարյան բարոյականության, և՛ ծիսակարգային կանոններ էին: Այսպես՝ տղամարդու և կնոջ միջև աշխատանքային գործառույթների բնական բաժանումը և՛ արտադրական սովորույթ էր, և՛ բարոյական նորմ: Նախնադարյան մոնոնորմերն ի սկզբանե պայմանավորված էին յուրացնող հասարակության բնույթով: Այդ նորմերի համակարգում իրավունքները և պարտականությունները միաձուլված էին: Զարգացման որոշակի մակարդակում ձևավորվում է սովորույթների ապահովման այնպիսի միջոց, ինչպիսին արգելքն է (տաբու): Տաբուն պաշտպանում էր որսատարածքները՝ չափն անցնող ոչնչացումից: Սովորույթները, որպես կանոն, պահպանվում էին հեղինակության և սովորության ուժով, իսկ երբեմն էլ ապահովվում էին ուղղակի հարկադրանքով (պարտադրանք, վտարում, մահ): Բայց հարկադրողն այդ դեպքում ամբողջ հասարակությունն էր:

§ 4. Պետության առաջացման ընդհանուր պատճառները (օրինաչափությունները)

Պետական կազմակերպությունը գալիս է փոխարինելու տոհմացեղային կազմակերպությանը, իսկ իրավունքը՝ սովորույթներին: Դա տեղի ունեցավ նախնադարյան հասարակության տնտեսական, հասարակական, մարդկային, արտաքին-պաշտպանական ոլորտներում արմատական փոփոխությունների պատճառով: Այդ փոփոխությունն-

ներն էլ հենց կազմում են պետության առաջացման տնտեսական, սոցիալ-դասակարգային, մարդկային, արտաքին պաշտպանական օրինաչափությունները:

Պետության առաջացման տնտեսական օրինաչափությունների շղթան ներառում է հետևյալ գործընթացները. նեոլիթյան հեղաշրջում - անցում յուրացնող տնտեսությունից՝ արտադրող տնտեսության - աշխատանքի բաժանումներ - աշխատանքի արտադրողականության աճ - արտադրական ավելցուկի ձևավորում - մասնավոր սեփականության առաջացում:

Անցումը միանգամից տեղի չի ունեցել, քանի որ տնտեսության մեջ փոփոխությունները ևս կատարվում էին ոչ միանգամից: Մարդկության պատմության մեջ կարևոր շրջադարձ էր անցումը յուրացնող տնտեսությունից արտադրող տնտեսության: **Յուրացնող տնտեսության** պայմաններում տոհմը սպառում և օգտագործում էր միայն բնության բարիքները՝ որսորդության և հավաքչության միջոցով: Աստիճանաբար, մարդը տիրապետեց բուսաբուծությանը և անասնաբուծությանը, սկսեց վերամշակել բնության բարիքները, այսինքն՝ աշխատանքի միջոցով ստեղծել, արտադրել բարիքներ, և այդպիսով ձևավորվեց **արտադրող տնտեսությունը**: Այդ տնտեսությունն օբյեկտիվորեն հանգեցրեց աշխատանքի հասարակական բաժանմանը: Աշխատանքի խոշոր բաժանումները՝ հողագործությունը, անասնապահությունը, արհեստը, իսկ այնուհետև առևտուրը նպաստեցին տնտեսության արագ աճին, արտադրական ավելցուկի ձևավորմանը, իսկ սա էլ իր հերթին՝ մասնավոր սեփականության առաջացմանը: Նոր պայմաններում տնտեսապես շահավետ է դառնում ուրիշի աշխատանքի օգտագործումը: Հիմա արդեն ռազմագերիներին, որոնց նախկինում սպանում էին կամ հավասար պայմաններում ընդունում իրենց տոհմի մեջ, սկսեցին դարձնել ստրուկներ՝ ստիպելով աշխատել իրենց համար: Նրանց արտադրանքի ավելցուկը յուրացնում էին տերերը:

Պետության առաջացման սոցիալ-դասակարգային օրինաչափությունների շղթան ներառում է հետևյալ գործընթացները. տոհմի քայքայում - մենամուսնական ընտանիքի առաջացում - հասարակական հակամարտությունների առաջացում - հասարակության բաժանում սոցիալ-դասակարգային խմբերի: Որպես տնտեսական օրինաչափությունների հետևանք՝ հասարակության մեջ սկզբում նկատվեց,

իսկ աշխատանքի բաժանմանը զուգընթաց՝ արագ խորացավ գույքային շերտավորումը: Այդ գործընթացի հետևանքով առաջ եկան ունևոր և չունևոր հակամարտ խմբեր: Գույքային անհավասարությունը հանգեցրեց սոցիալական անհավասարության: Հասարակության շարունակվող շերտավորումը հանգեցրեց նրան, որ տոհմի ընդհանուր զանգվածից առանձնացավ ավագանին՝ առաջնորդները, ռազմական պետերը, քրմերը: Վերջիններս, օգտագործելով իրենց հասարակական դիրքը, յուրացնում էին ռազմական ավարի մեծ մասը, լավագույն հողերը, ձեռք էին բերում մեծ թվով անասուններ և աշխատանքի գործիքներ: Ժամանակի ընթացքում նրանց հաջողվեց ժառանգական դարձնել իրենց իշխանությունը:

Պետության առաջացման մարդկային կամ հումանիտար օրինաչափությունների շղթան վերաբերում էր մարդուն ներառում էր հետևյալ գործընթացները՝ տոհմային բնական կոլեկտիվիզմի քայքայում - մարդու անհատականացում և առանձնացում տոհմից - ինքնավար անհատի ձևավորում:

Պետության առաջացման պատճառներ մեջ կարևոր դեր էին խաղում նաև **արտաքին-պաշտպանական օրինաչափությունները**: **Այս օրինաչափությունների** շղթան ներառում էր հետևյալ գործընթացները. տարածքի պաշտպանության կազմակերպման անհրաժեշտություն - պաշտպանական և նվաճողական պատերազմներ - աշխարհազորային կամ մշտական բանակի կազմավորում:

Հասարակական-տնտեսական նոր պայմաններում իշխանության կազմակերպման նախկին համակարգը՝ տոհմացեղային կազմակերպությունը, որը գույքային տարբերություն չունեցող, չանհատականացած մարդկանց հասարակության կառավարման համակարգ էր, դարձավ անկարող: Այդպիսով հասարակական կառավարման անմիջական համակարգին եկավ փոխարինելու պետական կառավարման համակարգը: Վերջինիս գլխավոր առանձնահատկությունն, ի տարբերություն նախորդի, այն էր, որ կառավարման սուբյեկտը (կառավարողները) և կառավարման օբյեկտը (կառավարվողները՝ հասարակությունը) արդեն չէին համընկնում: Պետությունը հասարակությունից առանձնացված և նրանից վեր կանգնած կազմակերպություն էր՝ բաղկացած պետական մարմիններից (թագավոր, արքունիք, փոխարքա, բանակ և այլն):

§ 5. Պետության առաջացման առանձնահատուկ օրինաչափությունները

Պետության առաջացման օրինաչափությունները, այսինքն՝ օբյեկտիվորեն ընթացող գործընթացները կարելի է բաժանել **ընդհանուր կամ համամիասնական և առանձնահատուկ օրինաչափությունների**: Ընդհանուր կամ համամիասնական օրինաչափությունները գործել են բոլոր ժողովուրդների մոտ և պայմանավորել են նախնադարյան հասարակության քայքայումը և պետության առաջացումը (տես նախորդ հարցը): Առանձնահատուկ օրինաչափությունները շատ դեպքերում պայմանավորված են պատահականություններով, քանի որ արձանագրում են պատճառական կապերի հատուկ բնույթը: Արդյունքում պետության առաջացման ընդհանուր և հատուկ օրինաչափությունների գործողության շնորհիվ իրականության մեջ մենք նկատում ենք պետության առաջացման և կայացման իրարից տարբերվող ուղիներ և հատուկ ձևեր:

Պետության տեսությունը տարբերում է պետության առաջացման երկու ուղի՝ **եվրոպական և արևելյան (ասիական)**: Եվրոպայի տարածքում պետության առաջացման գլխավոր գործոնը հասարակության դասակարգային բաժանումն էր, որն իր հերթին պայմանավորված էր հողի, արտադրամիջոցների և ստրուկների նկատմամբ մասնավոր սեփականության առաջացմամբ: Այս պայմաններում հանրային իշխանության գլխավոր գործառույթը դարձավ տնտեսական կարգավորումը և մասնավոր սեփականության պաշտպանությունը: Եվրոպայի տարածքում առանձնացնում են պետության առաջացման երեք հիմնական ձևերը՝ **աթենական, հռոմեական, գերմանական**:[1]

Աթենքում պետության առաջացումը, որ երբեմն անվանում են դասական ձև, անմիջականորեն կապված է ներքին, դասակարգային-տնտեսական, մասնավոր-սեփականատիրական հակասությունների հետ, որոնք զարգացել էին աթենական տոհմային հասարակության երկարատև գոյության ընթացքում:

Հռոմում պետության կազմավորման գործընթացը գնում էր նույն ճանապարհով, ինչ որ Աթենքում: Սակայն այստեղ կար մի պատահական գործոն՝ եկվոր բնակչության (պլեբեյների) և հռոմեական ար-

---

[1] Այս անվանումները տվել է Ֆ. Էնգելսը «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության առաջացումը» (1884) աշխատանքում:

տոնյալ բնակչության (պատրիկների) միջև հակասությունը, որը ներազդեց պետության առաջացման վրա: Պլեբեյներն անձնապես ազատ, սակայն հռոմեական համայնքի մեջ չմտնող, բայց առևտրական և արտադրական խոշոր հարստություն ունեցող բնակիչներն էին, որոնք ձգտում էին իշխանության: Նրանց պայքարը իշխանության համար արագացրեց տոհմացեղային կազմակերպության քայքայումը և պետության առաջացումը:

Հին գերմանական ժողովուրդների մոտ պետության առաջացումը արագացրեց «բարբարոսների», այսինքն՝ տոհմացեղային զարգացման մակարդակում գտնվող ժողովուրդների կողմից հռոմեական կայսրության տարածքների նվաճումը: Ահռելի տարածքների նվաճումը հանգեցրեց նախաավատական պետությունների առաջացմանը:

Պետության առաջացման արևելյան կամ ասիական ուղին հատուկ է Հին Արևելքի, Աֆրիկայի և Հարավային Ամերիկայի հասարակություններին: Այս ուղու առանձնահատկությունն այն է, որ, ի տարբերություն Եվրոպայի, այստեղ տնտեսական կարգավորման և մասնավոր սեփականության պաշտպանության գործառույթը չուներ մեծ նշանակություն: Հիմնականը հանրային իշխանության կառավարչական գործառույթն էր: Դա պայմանավորված էր բնակլիմայական պայմաններով, որոնք չէին նպաստում մասնավոր սեփականության զարգացմանը: Արդյունքում այստեղ հազարամյակներ պահպանվեցին գյուղատնտեսական համայնքները և հողի նկատմամբ հասարակական պետական սեփականությունը: Հիմնական տնտեսական միավորը գյուղական համայնքն էր, որը շահագործվում էր պետության կողմից՝ պետությունը յուրացնում էր հավելյալ արդյունքը՝ գանձելով բնական ռենտան:

Պետության առաջացման առանձնահատկությունները պայմանավորեցին **արևելյան հասարակությունների հետևյալ հիմնական հատկանիշները.**

1) տնտեսական հարաբերությունների հիմքը հողի նկատմամբ պետական սեփականությունն էր, հիմնական տնտեսական միավորը՝ գյուղական համայնքը.

2) մասնավոր սեփականությունը թերզարգացած էր և չուներ վճռական նշանակություն, ուստի արևելյան հասարակությունները չունեին հստակ սոցիալ-դասակարգային կառուցվածք.

3) պետական իշխանությունն ուներ միահեծանական-բռնապետական բնույթ, որի իրականացման գործում առաջնային նշանակություն ուներ հարկադրանքը.

4) կառավարչական գործառույթն իրականացնում էր հզոր պաշտոնեական ապարատը՝ կազմված տոհմացեղային ավագանուց: Այդ ապարատի զգալի մասը կազմում էր հատուկ կերպով կազմակերպված պաշտոնեական բյուրոկրատիան:

5) Արևելքում իշխանությունը սրբացված (սակրալիզացված) էր, ինչը հանգեցրեց արևելյան հասարակությունների կայուն լճացմանը: Այսպես, օրինակ Չինաստանը և Հնդկաստանը հարյուրամյակներ շարունակ չէին կրում որևէ փոփոխություն և զարգացում, բացի արքայատոհմերի փոփոխությունից: Դրան հակառակ եվրոպական պետությունները շատ շարժուն էին:

§ 6. Պետության առաջացման տեսությունների բազմազանությունը և դրանց ընդհանուր բնութագիրը

Պետության և իրավունքի առաջացման հիմնախնդիրները մինչև օրս էլ գիտության մեջ մնում են վիճելի: Գոյություն ունեն պետության և իրավունքի առաջացման ու զարգացման գործընթացը մեկնաբանող բազմաթիվ տեսություններ: Եվ դա բնական է, քանի որ այդ բազմազանությունն ունի ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ պատճառներ: **Օբյեկտիվ պատճառներից** են նախ այն, որ պետության առաջացումը տեղի է ունեցել հին ժամանակներում, ինչի հետևանքով մեր ունեցած տեղեկություններն այդ գործընթացների մասին շատ քիչ են: Բացի այդ տարբեր ժողովուրդների մոտ պետության առաջացումը ձեռք է բերել յուրահատուկ գծեր և առանձնահատկություններ՝ տարբերվելով այլ պետություններից: Այս պայմաններում շատ դժվար է առաջ քաշել պետության առաջացման այնպիսի տեսություն, որը կընդգրկեր բոլոր պատմական դարաշրջաններում և երկրագնդի բոլոր մասերում առաջացած պետությունների հատկությունները ու հատկանիշները: **Սուբյեկտիվ պատճառներից** են մարդկանց (հետազոտողների) կողմից միևնույն երևույթն, այդ թվում նաև պետության առաջացումը տարբեր կերպ ընկալելը, ինչը պայմանավորված է նրանց կամային-հոգեբանական, դասակարգային, ազգային և այլ տարբերություններով, ինչպես նաև մեթոդաբանական-փիլիսոփայական զինվածությամբ:

Պետության առաջացման հնագույն տեսություններից մեկը **աստվածաբանականն** է: Այս տեսության հիմնադիրները գտնում են, որ պետությունը գոյություն ունի աստվածային կամքի ուժով, հետևաբար՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է հաշտվել այդ կամքի հետ, ենթարկվել նրան ամեն ինչում: Պետությանը և պետական իշխանությանը վերագրելով աստվածային ծագում՝ այդ տեսությունն իրեն հատուկ միջոցներով բարձրացնում է նրանց հեղինակությունը, պարսավում հանցավորությունը, նպաստում հասարակության մեջ փոխըմբռնմանն ու բանական կարգերի հաստատմանը:

Պետության առաջացման **նահապետական տեսությունը** լայնորեն տարածված էր անտիկ աշխարհում և իր երկրորդ շնչառությունը ստացավ միջնադարում՝ հասնելով մինչև մեր օրերը: Ըստ այս տեսության, մարդիկ, որպես հասարակական էակներ, ձգտում են միավորման, որի հետևանքով կազմավորվում է նահապետական ընտանիքը: Այդ ընտանիքի անդամների քանակի աճը հանգեցնում է պետության առաջացմանը: Հետևաբար՝ պետական իշխանությունը հայրական, նահապետական իշխանության շարունակությունն ու զարգացումն է: Հայ իրականության մեջ այս տեսության յուրօրինակ տարբերակը Հայկ նահապետի մասին պատմությունն է:

Պետության առաջացման **պայմանագրային տեսության** սաղմերին մենք հանդիպում ենք անտիկ մտածողների մոտ: Այդ գաղափարներն իրենց զարգացումն ստացան միջնադարի առաջավոր մտածողների աշխատություններում: Նշված տեսության կողմնակիցները գտնում են, որ պետությանը նախորդել է բնական կացությունը: Հանուն խաղաղության և անվտանգության կնքվում է հասարակական պայմանագիր հասարակության անդամների, իսկ այնուհետև յուրաքանչյուր անդամի և պետության միջև, որով մարդիկ իրենց իրավունքների մի մասը տալիս են պետական իշխանությանը և պարտավորվում ենթարկվել նրան, իսկ պետությունը պարտավորվում է պահպանել մարդուն պատկանող սեփականության, ազատության, անվտանգության անօտարելի իրավունքները: Հետևաբար՝ մարդիկ ցանկացած պահի կարող են լուծարել հասարակական պայմանագիրը, ընդ որում՝ նաև ապստամբության միջոցով, և կնքել նոր պայմանագիր:

Բռնության (նվաճումների) տեսությունը ծագել է 19-րդ դարի վերջում: Հենվելով հայտնի պատմական փաստերի վրա՝ դրա կողմ-

նակիցները գտնում են, որ պետության առաջացման պատճառը պատերազմներն ու նվաճումներն են: Ըստ այդ տեսության՝ դասակարգերը և պետությունը ծագել են միաժամանակ: Նվաճման հետևանքով հաղթող ցեղն իրեն է ենթարկել պարտվող ցեղին՝ յուրացնելով նրա հողերը և ստիպելով աշխատել իր համար, վճարել հարկեր: Այդ նվաճման տրամաբանական հետևանքը, ըստ այս տեսության, հաղթող ցեղի կողմից հարկադրանքի ապարատի, այսինքն՝ պետության ստեղծումն է:

Պետության առաջացման մատերիալիստական տեսությունը, որի հիմնադիրը 19-րդ դ. գերմանացի մտածող Կարլ Մարքսն է, պետության ծագումը կապում է ընտանիքի, մասնավոր սեփականության, դասակարգերի ու դասակարգային պայքարի ի հայտ գալու հետ, որոնց տրամաբանական և իրական հետևանքը պետության առաջացումն է՝ որպես մի գործիք սեփականատեր դասակարգի ձեռքին՝ հակառակորդ դասակարգին շահագործելու և ճնշելու համար: Ըստ այս տեսության նախնադարյան տոհմատիրական հասարակության տնտեսական զարգացումը հանգեցնում է արտադրական ավելցուկի ձևավորմանը: Այսինքն՝ ամեն մի տնտեսվարող կարողանում էր արտադրել ավելի շատ, քան ինքը ընդունակ էր սպառել: Դա իր հերթին նպաստում է հողի և արտադրության միջոցների նկատմամբ մասնավոր սեփականության առաջացմանը: Այսպիսով, հասարակությունը բաժանվում է ունևորների և չունևորների՝ այսինքն հակառակորդ դասակարգերի, որոնց միջև ծավալվում է անհաշտ պայքար: Այդ պայքարի ընթացքում ունևոր դասակարգը ստեղծում է պետությունը՝ որպես հակառակորդ դասակարգին ճնշելու և շահագործելու գործիք:

§ 7. Պետական և անմիջական հասարակական իշխանության տարբերիչ հատկանիշները

Հասարակության ձևավորմանը զուգընթաց կազմավորվում են նաև որոշակի հասարակական կառավարման համակարգ (սոցիալական իշխանություն) և հասարակական նորմերի համակարգ (սովորույթներ, ավանդույթներ, բարոյական նորմեր, կրոնական կանոններ և այլն): Հասարակական իշխանությունը ենթադրում է իշխանության սուբյեկտի (կառավարողների) և իշխանության օբյեկտի (կառավար-

վողների) գոյությունը: Հասարակական իշխանության ներգործության օբյեկտն ամբողջ հասարակություն է:

Մինչպետական հասարակության սոցիալական իշխանության առանձնահատկությունն այն էր, որ այստեղ իշխանությունը մարմնավորում էր ամբողջ տոհմի կամքը և ուղղված էր տոհմի ընդհանուր գործերի կառավարմանը: Իշխանության օբյեկտը ևս ամբողջ տոհմն էր, նրա բոլոր անդամները: Նախնադարյան տոհմատիրական հասարակության մեջ իշխանության սուբյեկտը և օբյեկտը համընկնում էին, այդ իսկ պատճառով իշխանությունն իր բնույթով անմիջական հասարակական էր, այսինքն՝ իշխանությունը և իշխանավորները դեռևս չէին առանձնացել հասարակությունից: Տոհմատիրական իշխանության իրականացման բնական եղանակը հասարակական ինքնակառավարումն էր: Դեռևս գոյություն չունեին կառավարման հատուկ մարմիններ: Իշխանության իրականացման բարձրագույն ձևը տոհմի (ցեղի) բոլոր չափահաս անդամների ժողովն էր, որը լուծում էր տոհմի կենսագործունեության բոլոր հիմնական հարցերը: Ժողովի որոշումները պարտադիր էին բոլորի համար:

Պետական կազմակերպությունը գալիս է փոխարինելու տոհմացեղային կազմակերպությանը: Հասարակական-տնտեսական նոր պայմաններում իշխանության կազմակերպման նախկին համակարգը՝ տոհմացեղային կազմակերպությունը, որը գույքային տարբերություն չունեցող հասարակության կառավարման համակարգ էր, դարձավ անկարող: Այդպիսով հասարակական կառավարման անմիջական համակարգին եկավ փոխարինելու պետական կառավարման համակարգը: Վերջինիս գլխավոր առանձնահատկությունը, ի տարբերություն նախորդի, այն էր, որ կառավարման սուբյեկտը (կառավարողները) և կառավարման օբյեկտը (կառավարվողները՝ հասարակությունը) արդեն չէին համընկնում: Պետությունը հասարակությունից առանձնացված և նրանից վեր կանգնած կազմակերպություն էր՝ բաղկացած պետական մարմիններից (թագավոր, արքունիք, փոխարքա, բանակ և այլն):

§ 8. Մինչպետական և պետական հասարակության տարբերիչ հատկանիշների համեմատական աղյուսակ

Նախնադարյան մինչպետական հասարակություն	Պետական հասարակություն
1. Սոցիալապես միասեռ, չկան անհաշտ հակասություններ.	1. Սոցիալապես տարասեռ, շերտավորված, կան անհաշտ հակասություններ.
2. Իշխանության սուբյեկտի և օբյեկտի համընկնում, ինչի արդյունքում հասարակական իշխանությունն արտահայտում և պաշտպանում է ամբողջ հասարակության շահերը.	2. Հանրային իշխանությունը ի դեմս պետական կառավարման ապարատի վեր է կանգնած հասարակությունից և երբեմն չի արտահայտում ողջ հասարակության շահերը.
3. Բնակչության բաժանում արյունաազգակցական սկզբունքով, որի արդյունքում հանրային իշխանությունը տարածվում է միայն արյունակիցների վրա.	3. Բնակչության բաժանում տարածքային սկզբունքով՝ արտաքին աշխարհից՝ պետական սահմանով, իսկ ներսում՝ վարչատարածքային միավորներով.
4. Չկա հարկադրանքի ապարատ, իշխանության իրականացման հիմնական մեթոդը համոզումն է.	4. Կա հարկադրանքի ապարատ (բանակ, ոստիկանություն, բանտեր), որի վրա հենվում է պետական իշխանությունը.
5. Բնակչությունից հավաքվող հարկերի, տուրքերի բացակայություն.	5. Ձևավորվում է բնակչության հարկման պաշտոնական համակարգ (բնամթերային և դրամական հարկեր և տուրքեր).
6. Սոցիալական կարգավորումն իրականացվում է չգրված մոնոնորմ սովորույթների միջոցով, որոնց իրականացման հիմնական երաշխիքը դրանց հեղինակությունն է,	6. Սոցիալական կարգավորումը տարբերակված է առանձին տեսակների (բարոյական, կրոնական, իրավական և այլն), որոնցից աչքի են ընկնում իրավունքի նորմերը՝ պետականորեն երաշխավորված համապարտադիր վարքագծի կա-

մարդկանց ներքին համոզմունքը:	նոնները:

§ 9. Իրավունքի առաջացման պատճառները և իրավական նորմերի ձևավորման ուղիները

Պետության հետ միասին և նույն պատճառների ուժով ծագում է նաև **իրավունքը**: Մասնավոր սեփականությունը և հասարակության բաժանումն ունևորների ու չունևորների, հասարակական կյանքի բարդանալը և բազմազան դառնալը քայքայում են տոհմացեղային սովորույթների կարգավորիչ դերը: Չէ՞ որ այդ սովորույթները ձևավորվել էին տոհմի և ցեղի կոլեկտիվ սեփականության պայմաններում, ելնում էին դրանց անդամների հավասարության և շահերի միասնության սկզբունքներից: Տոհմատիրական հասարակությանը հայտնի չէին մասնավոր սեփականությունը և գույքային անհավասարությունը: Այդ իսկ պատճառով տոհմացեղային սովորույթներն անուժ էին նոր իրավիճակում:

Հասարակության մեջ տեղի ունեցող սոցիալ-տնտեսական փոփոխություններն առաջ բերեցին այնպիսի երևույթ, ինչպիսին էր մարդու անհատականացումը: Նոր մարդն անհատ էր, որ տարբերում էր իրեն և մյուսներին: Նա որպես հասարակական հարաբերությունների մասնակից առանձնացել էր համայնքից և պահանջում էր ինքնավար գոյություն (սոցիալական ազատություն): Նախնադարում հնարավոր չէր իրավունք, որովհետև չկար կոլեկտիվի (տոհմի, ցեղի) բաժանում առանձին սուբյեկտների, որովհետև մարդը, որպես կենսաբանական-հոգեբանական էակ, չէր առանձնացված հասարակությունից: Նոր պայմաններում մարդը սոցիալական անհատ էր, որ հասկանում էր հասարակության զարգացման ընթացքում ձևավորվող հնարավորությունները (ազատությունները): Հասարակության և նրա սոցիալական իշխանության խնդիրներից էր դառնում ինքնավար անձի անհատական ազատության ամրագրումը և ապահովումը՝ իրավունքների ու պարտականությունների տարբերակման հիմքով:

Բացի այդ, սովորույթները կարգավորում էին միայն տվյալ տոհմի և ցեղի անդամների փոխհարաբերությունները: Եկվոր բնակչության վրա դրանք չէին տարածվում: Նահապետական ընտանիքի առաջացումը, եկվոր բնակչության ներհոսքը և տեղաբնակների հետ խառնվելը, արյունաազգակցական կապերի աստիճանական փոխարինումը հարևանության հարաբերություններով, այլ կերպ ասած,

բնակչության բաժանումը տարածքային հատկանիշով, հանգեցրին տոհմացեղային սովորույթների նշանակության կորստին:

Առաջացավ հասարակական հարաբերությունների կարգավորման այլ համակարգի անհրաժեշտությունը: Հասարակության բոլոր անդամների կամքն արտահայտող տոհմական կարգերի հասարակական նորմերին փոխարինեցին իրավունքի նորմերը: Այդ նորմերի գլխավոր առանձնահատկությունն այն էր, որ դրանց իրացումն ապահովված էր պետության հարկադրական ուժով: Սկզբնական շրջանում նոր հասարակական հարաբերությունները կարգավորելիս օգտագործվում էին նախնադարյան սովորույթները՝ փոփոխելով և հարմարեցնելով դրանց բովանդակությունը նոր պահանջմունքներին և շահերին: Քանի որ դրանց իրացումը ապահովվում էր պետության հարկադրանքի ուժով, ապա դրանք վերածվեցին **սովորութային իրավունքի**՝ իրավունքի ամենահին ձևին: Այսպես, հեթանոսական Հայաստանում ամուսնաընտանեկան հարաբերությունները կարգավորվում էին սովորութային իրավունքի նորմերով, ըստ որոնց թույլատրվում էր՝ հարճության իրավունքը, բազմակնությունը և բազմամուսնությունը, մերձավոր ազգականների և բարեկամների ամուսնությունը, տեգոր՝ այրիացած հարսի հետ ամուսնանալը, կնոջ ամլության պատճառով երկրորդ կին ունենալը, ազատ ամուսնալուծության իրավունքը և այլն: Քրիստոնեության ընդունմամբ սովորութային իրավական նորմերի դերը ամուսնական հարաբերությունների կարգավորման գործում սկսեց նվազել, որովհետև եկեղեցական կանոններն արգելեցին բոլոր վերը նշված սովորութային նորմերն ամուսնության ոլորտում: Նոր պայմաններում վերահաստատվեցին կամ պահպանվեցին նշանդրեքը, հարսանյաց հանդեսով ամուսնությունն օրինականացնելը, օժիտը և այլն:

Իրավունքի ձևավորման գործում մեծ դեր էր պատկանում դատական մարմինների գործունեությանը: Հատուկ նշանակություն ունեին միապետների (դատավորների, իշխանների և այլն) կայացրած դատական որոշումները, երբ նրանք անձամբ իրականացնում էին դատական գործառույթներ: **Դատական նախադեպերը**, այսինքն՝ դատական որոշումները, որոնք հիմք էին դառնում հետագայում նույնաբնույթ գործեր լուծելու համար, հնագույն պետություններում իրավունքի կարևորագույն ձևերից մեկն էր:

Գրի առաջացմամբ առաջ եկավ իրավունքի այնպիսի ձև, ինչպիսին **օրենքն էր**: Օրենքը գերագույն պետական իշխանության (թագավոր, իշխան, սենատ և այլն) ակտն էր, որն ամրագրում էր իրավունքի նորմեր: Ստեղծվեցին իրավունքի առաջին գրավոր հուշարձանները՝ իրավական սովորույթների, ինչպես նաև դատական որոշումների, թագավորների օրենքների ժողովածուները: Համմուրապի թագավորի օրենքները Հին Բաբելոնում, 12 աղյուսների օրենքները՝ Հին Հռոմում, Մխիթար Գոշի Դատաստանագիրքը՝ միջնադարյան Հայաստանում և այլն:

Այսպիսով, ի սկզբանե իրավունքը կազմավորվեց որպես պետության կողմից ճանաչված նոր սովորույթների համակցություն (**իրավական սովորույթ**): Դրանց պահանջների կատարմանը հետևում էին պետական մարմինները և ամենից առաջ՝ դատարանները: Դատարանների առաջացումը և գործունեությունը ձևավորեց իրավունքի աղբյուրի նոր տեսակ՝ **դատական նախադեպը**: Ավելի ուշ իրավական նորմերը սահմանվում էին **նորմատիվ ակտերով**՝ օրենք, դատաստանագիրք, պրավդա և այլն:

§ 10. Իրավունքի նորմերի և նախնադարյան սոցիալական նորմերի տարբերիչ հատկանիշները

Իրավունքի և նախնադարյան սոցիալական նորմերը տարբերվում են ըստ իրենց ծագման եղանակի, կամային ուղղվածության, արտաքին արտահայտման ձևի, ուժի մեջ մտնելու ժամանակի, կարգավորման միջոցների, կենսագործման ապահովման եղանակի:

Ըստ ծագման եղանակի նախնադարյան նորմ-սովորույթներն առաջանում են մարդկանց համատեղ կյանքի ընթացքում բազմակի անգամ կրկնվելու և հասարակության կյանքում արմատավորվելու միջոցով: Իրավունքի նորմերն առաջանում են պետականորեն կազմակերպված հասարակությունում և ձևավորվում են պետության կողմից (սահմանվում, սանկցիավորվում, փոփոխվում):

Ըստ կամային ուղղվածության նորմ-սովորույթներն արտահայտում են ամբողջ հասարակության (տոհմի, ցեղի) կամքը (շահերը): Իրավունքի նորմերը կարող են շեղվել հասարակական ընդհանուր կամքից և շահերից, արտահայտել սոցիալական այն խմբի (դասա-

կարգ, դաս, կաստա, ազգ, ռասսա) կամքն ու շահերը, որը կանգնած է իշխանության գլուխ:

Ըստ արտաքին արտահայտման ձևի նորմ-սովորույթները գտնվում են մարդկանց գիտակցության մեջ, փոխանցվում են սերնդից սերունդ դաստիարակության միջոցով: Նոր սովորույթների գոյության ձևը բանավոր, չգրված ձևն է: Իրավունքի նորմերն արտաքին արտահայտություն են գտնում գրավոր իրավական բազմազան փաստաթղթերում՝ գրի առնված սովորութային իրավունքի ժողովածուներում, նորմատիվ ակտերում, նորմատիվ պայմանագրերում, դատական նախադեպերում և այլն:

Ըստ ուժի մեջ մտնելու ժամանակի նորմ-սովորույթները ծագում են շատ դանդաղ, աստիճանաբար՝ երկարատև ժամանակահատվածում: Իրավունքի նորմերն ուժի մեջ են մտնում կամ դադարում են գործել պաշտոնական ճանապարհով՝ ըստ նպատակահարմարության:

Ըստ կարգավորման միջոցների նորմ-սովորույթները չգիտեն սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների բաժանում: Որպես սոցիալական կարգավորման միջոցներ օգտագործվում են արգելքները (տաբուները), պարտադրումը և ընդհանուր թույլատվությունը: Իրավունքի նորմերը նախատեսում են սուբյեկտիվ իրավունքների և իրավաբանական պարտականությունների բաժանումը: Սոցիալական կարգավորումն իրականացնում են ընդհանուր իրավական թույլատվության, պարտադրման և արգելքների սահմանման միջոցով:

Ըստ կենսագործման ապահովման եղանակի նորմ-սովորույթներն աչքի են ընկնում նրանով, որ իրականացվում են սովորույթի, ավանդույթի, ներքին համոզման ուժով և ապահովվում են հասարակական կարծիքով: Դրանց խախտումը հազվադեպ է և առկայության դեպքում հարկադրանքը ելնում է տոհմից (վտարում տոհմից, մարմնական պատիժներ, մահապատիժ): Իրավունքի նորմերն ապահովվում են հասարակական և պետական ներգործության միջոցներով, ընդհուպ՝ մինչև պետական հարկադրանքը:

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԱՑԱՏՐԵ՛Ք ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԸ

էվոլուցիա, բանական էակ, բնական կացություն, քաղաքակիրթ կացություն, հմուտ մարդ, բանական մարդ, պահանջմունք, համընդհանուր և անհատական շահեր, նորմ, իշխանություն, իշխանության սուբյեկտ, իշխանության օբյեկտ, բնական և տոհմային հասարակություն, բնական և սոցիալական անհավասարություն, էկզոգամիա, հարևանային հարաբերություն, իշխանության ուժ, տաբու, նեոլիթյան հեղաշրջում, արտադրական ավելցուկ, մասնավոր սեփականություն, մենամուսնական ընտանիք, հասարակական հակամարտություն, բնական կոլեկտիվայնություն, աշխարհազորային և մշտական բանակ, պաշտոնեական բյուրոկրատիա, սակրալիզացիա, կայուն լճացում, դինամիկա, հասարակական պայմանագիր, անօտարելի իրավունք, տնտեսական շահագործում, սոցիալապես միասեռ և տարասեռ հասարակություն, իրավունքի նորմ, անհաշտ հակասություն, իրավունք, պարտականություն, թույլտվություն, պարտադրում, արգելք:

ՊԱՏԱՍԽԱՆԵ՛Ք ՀԱՐՑԵՐԻՆ

1. Որո՞նք են հասարակության հատկանիշները:
2. Ինչո՞վ է տարբերվում հասարակությունն անհատների պատահական, ժամանակավոր միությունից:
3. Ի՞նչ է սոցիալական իշխանությունը:
4. Ի՞նչ են սոցիալական նորմերը: Բերե՛ք օրինակներ:
5. Մեկնաբանե՛ք «հասարակությունը որպես սոցիոմշակութային համակարգ» հատկանիշը:
6. Տվե՛ք հասարակություն հասկացության բնորոշումը:
7. Որո՞նք են մինչպետական հասարակության սոցիալական կազմակերպության ձևերը:
8. Ինչո՞վ են տարբերվում տոհմային համայնքը և ցեղը:
9. Ո՞րն է իշխանության հիմնական բնութագրական գիծը:
10. Ինչու՞ են մինչպետական իշխանությունն անվանում անմիջական:
11. Բնութագրե՛ք նախնադարյան սովորույթները: Ո՞րն է նրա կենսագործման երաշխիքը:

12. Ինչու՞ են նախնադարյան սովորույթներն անվանում մոնոնորմեր:
13. Որո՞նք են պետության առաջացման ընդհանուր պատճառները (օրինաչափությունները):
14. Նկարագրե՛ք պետության առաջացման տնտեսական օրինաչափությունները:
15. Ինչու՞մ է կայանում յուրացնող և արտադրող տնտեսությունների տարբերությունը:
16. Որո՞նք են պետության առաջացման սոցիալ-դասակարգային օրինաչափությունները:
17. Ներկայացրե՛ք պետության առաջացման մարդկային օրինաչափությունները:
18. Ի՞նչ դեր խաղացին պետության առաջացման գործընթացում արտաքին-պաշտպանական խնդիրները:
19. Ինչու՞մ է պետության առաջացման ընդհանուր (համամիասնական) և առանձնահատուկ օրինաչափությունների տարբերությունը:
20. Ինչու՞մ է պետության առաջացման եվրոպական ուղու առանձնահատկությունը և որո՞նք են դրա ձևերը:
21. Ինչու՞մ է պետության առաջացման արևելյան ուղու առանձնահատկությունը:
22. Որո՞նք են արևելյան հասարակության հիմնական հատկանիշները և ինչո՞վ էին դրանք պայմանավորված:
23. Ինչո՞վ է պայմանավորված պետության առաջացման տեսությունների բազմազանությունը:
24. Բնութագրե՛ք պետության առաջացման տեսությունների բովանդակությունը:
25. Պետության առաջացման տեսություններից ո՞րն է իդեալիստական և ո՞րը մատերիալիստական:
26. Ինչո՞վ են տարբերվում պետական և անմիջական նախնադարյան իշխանությունները:
27. Օգտվելով համեմատական աղյուսակից՝ մեկնաբանե՛ք մինչպետական և պետական հասարակությունների տարբերիչ հատկանիշները:
28. Որո՞նք էին իրավունքի առաջացման պատճառները:
29. Ի՞նչ դեր խաղացին մարդկային օրինաչափությունները և մարդու անհատականացումն իրավունքի առաջացման գործում:

30. Ինչու՞ նախնադարյան սովորույթները զրկվեցին կարգավորիչ ազդեցությունից:
31. Որո՞նք են իրավունքի առաջացման ուղիները (ձևերը):
32. Ինչու՞մ է սովորույթի և իրավական սովորույթի տարբերությունը:
33. Ո՞րն է իրավունքի և նախանդարյան սովորույթների տարբերությունը ըստ ծագման եղանակի:
34. Ո՞րն է իրավունքի և նախանդարյան սովորույթների տարբերությունը ըստ կամային ուղղվածության:
35. Ո՞րն է իրավունքի և նախանդարյան սովորույթների տարբերությունը ըստ արտահայտման ձևի:
36. Ո՞րն է իրավունքի և նախանդարյան սովորույթների տարբերությունը ըստ ուժի մեջ մտնելու ժամանակի:
37. Ո՞րն է իրավունքի և նախանդարյան սովորույթների տարբերությունը ըստ կարգավորման միջոցների:
38. Ո՞րն է իրավունքի և նախանդարյան սովորույթների տարբերությունը ըստ կենսագործման ապահովման եղանակի:

ԿԱՏԱՐԵ՛Ք ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Պատրաստեք զեկուցում մարդու և հասարակության ծագման մասին:

ԲԱՆԱՎԻՃԵ՛Ք

1. Ինչպես տեսաք, գոյություն ունեն պետության և իրավունքի առաջացման ու զարգացման գործընթացը մեկնաբանող մի շարք տեսություններ (աստվածաբանական, նահապետական, պայմանագրային, բռնության, մատերիալիստական): Ձեր կարծիքով, ինչո՞վ է պայմանավորված այդ բազմազանությունը և նշված տեսություններից ո՞րն է ավելի հիմնավոր, համոզեցուցիչ, իրատեսական: Բաժանվե՛ք հինգ խմբերի և բանավիճե՛ք:

2. Արդյո՞ք իրականում անհրաժեշտ է իշխանությունը: Եթե այո, ապա դրանց պատմական ձևերից (անմիջական հասարակական իշխանություն և պետական իշխանություն) ո՞րն է նախընտրելի և ինչու՞: Բանավիճե՛ք երկու խմբով:

ԳԾԱՊԱՏԿԵՐԱՅԻՆ ԵՎ ՈՒՐՎԱԳԾԱՅԻՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 4-ՐԴ ԹԵՄԱՅԻ ՀԱՄԱՐ

ՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԱՑՄԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՕՐԵՆՔՆԵՐԸ
Նեղլիթյան հեղաշրջում, անցում յուրացնող տնտեսությունից արտադրող տնտեսության
Աշխատանքի երեք խոշոր բաժանումներ
Աշխատանքի արտադրողականության աճ և արտադրական ավելցուկի առաջացում
Մասնավոր սեփականության առաջացում


ՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԱՑՄԱՆ
ՄԱՐԴԿԱՅԻՆ
ՕՐԵՆՔՆԵՐԸ
տոհմային բնական կոլեկտիվիզմի քայքայում
մարդու անհատականացում, առանձնացում տոհմից
ինքնավար անհատի ձևավորում


ՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԱՑՄԱՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-
ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ
ՕՐԵՆՔՆԵՐԸ
տոհմի քայքայում, մենամուսնական ընտանիքի առաջացում
հասարակական հակամարտությունների առաջացում
հասարակության բաժանում սոցիալ-դասակարգային խմբերի


ՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԱՑՄԱՆ
ԱՐՏԱՔԻՆ-
ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ
ՕՐԵՆՔՆԵՐԸ
տարածքի պաշտպանության կազմակերպման անհրաժեշտություն
պաշտպանական և նվաճողական պատերազմներ
աշխարհազորային կամ մշտական բանակի կազմավորում

ՄԻՆՉՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԲԵՐԻՉ ՀԱՏԱԿԱՆԻՇՆԵՐԸ

1. Սոցիալապես միասեռ	1. Սոցիալապես տարասեռ
2. Իշխանության սուբյեկտը և օբյեկտը համընկնում են	2. Իշխանության սուբյեկտը և օբյեկտը տարանջատված են
3. Բնակչության բաժանում արյունազազգակցական սկզբունքով	3. Բնակչության բաժանում վարչատարածքային սկզբունքով
4. Իշխանությունն իրականացվում է համոզմամբ	4. Իշխանությունն իրականացվում է հարկադրանքով
5. Սոցիալական կարգավորիչ են սովորույթները	5. Սոցիալական կարգավորումը տարբերակված է
6. Չկան հարկեր և տուրքեր	6. Բնակչության պաշտոնական հարկման համակարգ

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ-ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

- ԻՐԱՎԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒՅԹ
- ԴԱՏԱԿԱՆ ՆԱԽԱԴԵՊ
- ՆՈՐՄԱՏԻՎ ԱԿՏ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

- ԵՎՐՈՊԱԿԱՆ ՈՒՂԻ
  - Աթենական ձև
  - Հռոմեական ձև
  - Գերմանական ձև
- ԱՐԵՎԵԼՅԱՆ ՈՒՂԻ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ
• հողի պետական սեփականություն
• գյուղի համայնքը հիմնական տնտեսավարող
• թերզարգացած մասնավոր սեփականություն
• ոչ հստակ դասակարգային կառուցվածք
• միահեծանական պետական իշխանություն
• կազմակերպված պաշտոնական բյուրոկրատիա
• սրբացված (սակրալ) պետական իշխանություն
• հասարակության կայուն լճացում

Պետության առաջացման տեսություններ

1. Աստվածաբանական
2. Նահապետական
3. Պայմանագրային
4. Բռնության
5. Մատերիալիստական և այլն

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՏԱՐԲԵՐԻՉ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ	
Նախնադարյան սովորույթներ	Իրավունքի նորմեր
Ըստ ծագման	
բազմակի անգամ կրկնվելու, արմատավորվելու միջոցով	ձևավորում, սահմանում է պետությունը
Ըստ կամային ուղղվածության	
արտահայտում են տոհմի, ցեղի կամքը և շահերը	կարող են շեղվել հասարակության ընդհանուր կամքից ու շահերից

Ըստ արտահայտման ձևի	
առկա են գիտակցության մեջ	ամրագրված են իրավունքի աղբյուրներում
Ըստ ապահովման եղանակի	
համոզում, համոզմունք, հասարակական կարծիք	հիմնական միջոցը պետական հարկադրանքն է
Ըստ կարգավորման միջոցների	
արգելքներ, պարտադրում և ընդհանուր թույլտվություն	սուբյեկտիվ իրավունք և պարտականություն՝ արգելք, պարտադիր գործողություն

ԹԵՄԱ 5. ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Թեմայի բովանդակությունը

- *Պետության հասկացությունը: Պետության հատկանիշները. պետական իշխանությունը որպես հանրային իշխանություն, հասարակության կառավարման հատուկ կառուցակարգ (մեխանիզմ), բնակչության և իշխանության բաժանումը վարչատարածքային սկզբունքով, հարկերի հավաքումը, ինքնիշխանությունը (սուվերենությունը), հասարակական կյանքի իրավական կարգավորումը:*
- *Պետության ինքնիշխանությունը: Պետության ինքնիշխանության ներքին և արտաքին կողմերը: Պետական ինքնիշխանության հատկանիշները: Պետության ինքնիշխան իրավունքները: Պետության ինքնիշխանության հարկադիր կամ կամավոր սահմանափակումը:*
- *Ժողովրդի ինքնիշխանություն հասկացությունը: Ժողովրդի ինքնիշխանությունը որպես արդի սահմանադրական կարգերի գլխավոր հիմունք: Ժողովրդի և պետության ինքնիշխանության հարաբերակցությունը:*
- *Ազգ եզրույթի էթնիկ և քաղաքական իմաստները: Էթնիկ իմաստով ազգի ինքնիշխանություն հասկացությունը: Ազգի ինքնորոշման իրավունքը և դրա դրսևորման ձևերը: Ազգի և պետության ինքնիշխանության հարաբերակցությունը:*
- *Պետական իշխանությունը որպես սոցիալական իշխանության հատուկ տարատեսակ: Պետական իշխանության հասկացությունը և առանձնահատկությունները:*
- *Պետությունը և պետական իշխանությունը: Իշխանահարաբերությունները և դրանց կառուցվածքը: Պետական իշխանության իրականացման ձևերը և եղանակները (մեթոդները): Պետական իշխանության լեգիտիմությունը և լեգալությունը:*
- *«Պետության էություն» և «սոցիալական առաքելություն» հասկացությունները: Պետության էության մեկնաբանման դասակարգային մոտեցումը: Պետության էության մեկնաբանման համասոցիալական մոտեցումը: Պետության էության և սոցիալական առաքելության հիմնախնդրի հանգուցալուծումը: Պետության էության զարգացման արդի օրինաչափությունները:*

§ 1. Պետություն հասկացության բնորոշումը

Պետականագիտության մեջ գոյություն ունեն «պետություն» հասկացության (այսինքն՝ թե ինչ է պետությունը) բազմազան բնորոշումներ: Ինչպես պետության ծագման հիմնախնդիրը, այնպես էլ պետության հասկացության բազմազանությունն ունի և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ պատճառներ (տես նախորդ թեման): Այս պայմաններում շատ դժվար է տալ պետության հասկացության այնպիսի բնորոշում, որը կընդգրկեր բոլոր պատմական դարաշրջաններում գոյություն ունեցած և ներկայի պետությունների հատկություններն ու հատկանիշները: Պետք է նկատի ունենալ, որ պետության բնորոշումն անհրաժեշտ է կառուցել այնպիսի ընդհանրացված և համընդհանուր հատկանիշների հիման վրա, որոնք բնորոշ են բոլոր պետություններին՝ նրանց պատմական զարգացման բոլոր փուլերում: Այդպիսի բնորոշումներից մեկ հետևյալն է. ***պետությունը հասարակության հատուկ լիիշխան քաղաքական կազմակերպություն է, որն ունի տարածք, իր իշխանությունը տարածում է տվյալ տարածքի և այնտեղ ապրող բնակչության վրա, դրա համար ունի կառավարման հատուկ ապարատ, հրապարակում է վարքագծի համապարտադիր կանոններ (իրավունքի նորմեր)՝ դրանց իրացումը անհրաժեշտ դեպքերում ապահովելով հարկադրանքով և օժտված է ինքնիշխանությամբ:***

§ 2. Պետության հատկանիշները

Պետության հատկանիշները[1] վեր հանելու համար այն կարելի է ենթարկել համեմատական վերլուծության երկու ուղղություններով՝ առաջին, պետությունը և անմիջական, միջնպետական հասարակության կառավարման համակարգը, երկրորդ, պետությունը և հասարա-

---

[1] Փիլիսոփայության մեջ ընդունված է տարբերել հատկանիշը և յուրահատկությունը: Հատկանիշները բնութագրում են երևույթը որպես հասկացություն, յուրահատկությունները բնութագրում են երևույթը որպես իրական ամբողջություն: Հատկանիշները և յուրահատկությունները գտնվում են համապատասխանության մեջ, այսինքն՝ յուրահատկություններն արտացոլվում են և արտահայտվում են հասկացության մեջ՝ որպես նրա հատկանիշներ: Ամեն մի երևույթ իրականում օժտված է անթիվ բազմազանությամբ յուրահատկություններով: Այդ իսկ պատճառով հասկացության մեջ ներառվում են հատկանիշները, որոնք արտացոլում են երևույթի ամենից էական յուրահատկությունները: Անշուշտ, էական համարվող յուրահատկությունների շրջանակի որոշումը պայմանավորված է նաև կոնկրետ հետազոտողի դիրքորոշումներից և մեթոդաբանական մոտեցումներից:

կության մեջ գործող այլ քաղաքական կազմակերպությունները: Այդ վերլուծության արդյունքում տեսաբանները վեր են հանում պետությանը բնորոշ անկրկնելի, յուրօրինակ հետևյալ հատկանիշները:

1. ***Բնակչության և իշխանության բաժանումը վարչատարածքային սկզբունքով:*** Տարածքը և բնակչությունն անհրաժեշտ նախադրյալներ են պետության առաջացման համար: Պետական իշխանությանը ենթակա է ամբողջ բնակչությունը՝ որոշակի տարածքի շրջանակներում: Դա հիմք է տալիս պնդելու, որ պետությունն իրենից ներկայացնում է քաղաքական իշխանության միասնական տարածքային կազմակերպություն՝ ամբողջ երկրի մասշտաբով: Բնակչության տարածքային բաժանումը ծնում է նոր հասարակական ինստիտուտ՝ հպատակություն կամ քաղաքացիություն: Իշխանության իրականացումը տարածքային սկզբունքով հանգեցնում է մեկ պետությունը մյուսից բաժանող պետական սահմանի առաջացմանը:

2. ***Պետությունը միայն կառավարմամբ զբաղվող մարդկանց հատուկ խումբ է՝ հանրային իշխանություն:*** Պետության կարևորագույն հատկանիշն այնպիսի իշխանության հիմնադրումն է, որը, ի տարբերություն տոհմատիրական հասարակության կոլեկտիվ իշխանության, անմիջականորեն չի համընկնում բնակչության հետ: Պետությունն **ունի հասարակության կառավարման հատուկ կառուցակարգ (մեխանիզմ)**: Պետության կառուցակարգը, փաստորեն, պետական իշխանության նյութական արտահայտությունն է: Իր մարմինների ու հիմնարկությունների օգնությամբ պետությունն իրականացնում է հասարակության անմիջական կառավարումը, պաշտպանում իր սահմանների անձեռնմխելիությունը, ապահովում քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Կարևոր է ընդգծել, որ ցանկացած պետական իշխանություն անխուսափելիորեն ենթադրում է պետական մարմինների կողմից երաշխավորված ***հարկադրանքի կիրառում:***

3. ***Պետությունը բնակչությունից հավաքում է հարկեր:*** Հանրային իշխանության և նրա ապարատի (պաշտոնյաներ, բանակ, ոստիկանություն, բանտեր և այլն) կարիքները բավարարելու համար բնակչությունը ենթարկվում է հարկման, որը տոհմային կարգերին անհայտ էր: Հարկերը բնակչությունից գանձվում են սահմանված չափերով և նախապես որոշված ժամկետներում, նաև՝ հարկադրաբար: Դրանց հիմնական կոչումն է՝ երկրի պաշտպանությունն ապահովող

միջոցներ ձեռնարկելը, բնակչության սոցիալական ապահովումը, կառավարման ապարատի ծախսերը փակելը: Փաստորեն, հարկերի գոյությունը պայմանավորված է նրանով, որ պետությունն ընդհանուր գործերը լուծելիս կարիք ունի որոշակի դրամական, նյութական միջոցների:

4. ***Պետությունը հասարակական կյանքը կարգավորում է իրավական հիմքերով:*** Հասարակության կյանքի կարգավորման իրավական ձևը հատուկ է հենց պետությանը, և ոչ մի պետություն ի վիճակի չէ առանց իրավունքի արդյունավետորեն կառավարել հասարակությունը: Ի տարբերություն հասարակության այլ քաղաքական կազմակերպությունների, պետությունը հրապարակում է երկրի ամբողջ բնակչության համար պարտադիր կանոններ: Վարքագծի այդ կանոնների իրացումն անհրաժեշտ դեպքերում ապահովվում է պետության հարկադրական ուժով: Իրավական նորմերի պահանջները պետությունը կենսագործում է իր հատուկ մարմինների միջոցով, որոնք իրավախախտների նկատմամբ կիրառում են հարկադրանք:

5. ***Պետությունը օժտված է ինքնիշխանությամբ (սուվերենությամբ):*** Պետությունն իրենից ներկայացնում է իշխանության ինքնիշխան կազմակերպություն: Հենց այդ հատկանիշով է պետությունն ամենից շատ տարբերվում հասարակության մնացած քաղաքական կազմավորումներից: Պետության ինքնիշխանությունը ժողովրդի ինքնիշխանության արտահայտությունն է: ***Պետության ինքնիշխանությունը նշանակում է տվյալ պետության իշխանության գերակայություն երկրի ներսում և նրա անկախությունն այլ պետությունների հետ հարաբերություններում:*** Պետական իշխանությունը որպես ինքնիշխան համընդհանուր է, տարածվում է ամբողջ բնակչության, երկրի բոլոր հասարակական ու քաղաքական կազմակերպությունների վրա: Լինելով առաջնային, պետական իշխանությունն օժտված է հասարակական այլ կազմակերպությունների անօրինական դրսևորումները վերացնելու արտոնությամբ և տիրապետում է ներգործության բացառիկ միջոցների, որոնցով, բացի նրանից, ոչ մի այլ կազմակերպություն օժտված չէ: Խոսքն ամենից առաջ բանակի, ոստիկանության և հարկադրանքի այլ մարմինների մասին է:

§ 3. Բնակչությունը և տարածքը որպես պետության հատկանիշ

Տարածքը և դրա վրա ապրող բնակչությունը պետության առաջացման բնական նախադրյալներն են, պետության գոյության նյութական և սոցիալական հիմքը: Չի կարող լինել պետություն առանց երկրագնդի վրա տեղ գրավող ինչ-որ տարածքի: Ինքը՝ տարածքը ինքնաբերաբար չի առաջացնում պետություն: Այն կազմում է տարածությունը, որի շրջանակներում ապրող բնակչության վրա պետությունն ունի իշխանություն: Պետության այս հատկանիշն անվանում են նաև այլ կերպ՝ բնակչության բաժանում վարչատարածքային սկզբունքով կամ բնակչության միասնական տարածքային կազմակերպություն ամբողջ երկրի մասշտաբով: Դա նշանակում է, որ մինչպետական հասարակությանը բնորոշ և մարդկանց միավորող արյունաազգակցական սկզբունքին գալիս է փոխարինելու վարչատարածքային սկուզբունքը: Պետության հետ միասին առաջանում են պետության տարածք, պետության սահման երևույթները և դրանց հասկացությունները: Ամեն մի պետության գոյության հիմնական պայմաններից մեկն իր սահմանների շրջանակներում տարածքային գերակայությունն է: Այստեղից բխում է, որ տարածքը, որպես պետության հատկանիշ, անբաժանելի ու անձեռնմխելի է, բացառիկ ու անօտարելի:

Պետության տարածքը ներառում է՝ 1) ցամաքային տարածությունը, 2) ջրային տարածությունը՝ ներքին ջրերը պետական սահմանների ներսում և տարածքային ջրերը 12 ծովային մղոնի սահմաններում, 3) օդային տարածքը պետական սահմաններով՝ մինչև 35 կմ բարձրության վրա, 4) ընդերքը, 5) լողացող ապարատները բաց ծովում, 6) թռչող ապարատները պետության սահմաններից դուրս, 7) տիեզարական օբյեկտները պետության դրոշի և գերբի ներքո, 8) խողովակաշարերը, 9) ստորջրյա մալուխները (կաբելները) և նավթահան ջրային աշտարակները, 10) արտասահմանում գտնվող դիվանագիտական ներկայացչությունները և հյուպատոսությունները:

Բնակչության կազմակերպման տեսանկյունից առաջ են գալիս այնպիսի երևույթներ, ինչպիսիք են՝ հպատակությունը կամ քաղաքացիությունը, որպես անհատի և պետության կայուն իրավական կապ: Այդ կապն արտահայտվում է փոխադարձ իրավունքներում և պարտականություններում: Պետության քաղաքացին ձեռք է բերում պետության կառավարմանը մասնակցելու, պետության հովանավորութ-

յան ու պաշտպանության իրավունք: Միաժամանակ նա պարտավոր է ենթարկվել պետաիշխանական կարգադրերին և կրել պատասխանատվություն պետության առջև: Քաղաքացիներից բացի բնակչության կառուցվածքում առանձնանում են նաև այլ պետությունների քաղաքացիները (օտարերկրացիներ), քաղաքացիություն չունեցող անձինք (ապատրիդներ), երկքաղաքացիները (բիպատրիդներ):

§ 4. Հանրային իշխանությունը որպես պետության հատկանիշ[1]

Որպես հանրային իշխանություն կամ հանրային իշխանության ապարատ պետությունը տարբերվում է մինչպետական, նախնադարյան համայնական կազմակերպությունից: Այստեղ իշխանությունն ուներ անմիջական հասարակական բնույթ: Դրան հակառակ պետական հասարակությունում իշխանական գործառույթներն իրականացնում է հասրակությունից առանձնացած, արտադրական աշխատանք չկատարող մարդկանց խումբը: Պետության այդպիսի հատկությունն անվանում են հանրային կամ հրապարակային իշխանություն: Այսպիսով, պետության առաջացմամբ տեղի է ունենում հանրային պետական իշխանության առանձնացում հասարակությունից: Քաղաքական գործառույթները ևս առանձնանում և կենտրոնանում են պետական պաշտոնյաների ձեռքում: Արտաքուստ պետությունը հանդես է գալիս որպես իշխանության իրականացման և հասարակության կառավարման կառուցակարգ: Որպես հանրային իշխանության ապարատ այն իրենից ներկայացնում է ներկայացուցչական, գործադիր և դատական մարմինների համակարգ:

Պետական մարմինները նպատակամղված ներազդում են հասարակական հարաբերությունների վրա դրանք կարգավորելու և պլանավորելու համար: Այդ ընթացքում պետությունն օգտագործում է նաև հարկադրանքը, որը կիրառում են հատուկ մարմինները՝ բանակ, հասարակական կարգի և անվտանգության մարմիններ և այլն:

---

[1] Գիտական գրականության մեջ չկա միասնական մոտեցում «հանրային իշխանություն» հասկացության մեկնաբանման հարցում: Սովորաբար այն դիտարկում են որպես պետության հիմնական հատկանիշ, երբեմն որպես պետություն հասկացության հոմանիշ: Տարբեր են նաև այդ հատկանիշի անվանումները՝ «հանրային իշխանություն», «պետությունը որպես միայն կառավարմամբ զբաղվող մարդկանց հատուկ խումբ», «պետությունն ունի հասարակության կառավարման հատուկ կառուցակարգ (մեխանիզմ)» և այլն:

§ 5. Պետության ինքնիշխանությունը

Պետության ինքնիշխանությունը[1] նրա քաղաքական-իրավական հատկությունն է, որն արտահայտվում է երկրի ներսում պետական իշխանության գերակայությամբ և արտաքին հարաբերություններում անկախությամբ:

Պետության ներքին ինքնիշխանությունն արտահայտվում է պետության գերակայությամբ և լիիշխանությամբ քաղաքական համակարգի այլ կազմակերպությունների նկատմամբ: Դա պետության մենաշնորհային իրավունքն է իրականացնել օրենսդիր, կառավարական և իրավապահպան գործառույթներ երկրի ներսում:

Պետության արտաքին ինքնիշխանությունն արտահայտում է պետության անկախությունը և իրավահավասարությունը որպես միջազգային իրավունքի սուբյեկտ՝ այլ պետությունների հետ հարաբերություններում, անթույլատրելիությունը դրսից միջամտել պետության ներքին գործերին, իրավահավասար անդամությունը միջազգային կազմակերպություններին:

Տեսականորեն ընդունված է առանձնացնել պետական ինքնիշխանության հետևյալ հատկանիշները.

1) գերակայություն.

2) ինքնուրույնություն.

3) լիիշխանություն.

4) անբաժանելիություն.

5) անկախություն.

6) իրավահավասարություն.

7) անօտարելիություն:

Ինքնիշխանությամբ օժտված է ցանկացած պետություն՝ անկախ պետության տարածքի չափից, բնակչության քանակից, կառավարման և կառուցվածքի ձևերից: Պետության ինքնիշխանությունը դրսևորվում է նրա ինքնիշխան իրավունքներում, որոնք իրականացվում են պետության մարմինների ու ինստիտուտների կողմից: Այդ իրավունքներն են՝

- օրենքներ հրապարակելու իրավունքը,

---

[1] Ինքնիշխանություն եզրույթը (ֆրանսերեն - souveraintе, անգլերեն - sovereignty, ռուսերեն - суверенитет) պետության նկատմամբ առաջին անգամ օգտագործել է ֆրանսիացի մտածող ժան Բոդենը 16-րդ դարում: Բառացիորեն նշանակում է գերագույն իշխանություն:

• պետական մարմինները ձևավորելու իրավունքը,

• իր խորհրդանիշերը (զինանշան, հիմն, դրոշ) որոշելու իրավունքը,

• պետական դրամական միավոր ունենալու իրավունքը,

• հարկեր սահմանելու իրավունքը,

• պատերազմի և խաղաղության իրավունքը,

• այլ պետություններում և միջազգային կազմակերպություններում իր ներկայացուցիչներին նշանակելու իրավունքը,

• միջպետական միությունների մեջ միավորվելու իրավունքը և այլն:

Պետությունների ինքնիշխանության ծավալը միատեսակ չէ՝ տարբեր պատճառների ուժով: Շատ պետությունների ինքնիշխանությունը ձևական է կամ սահմանափակված: Արդի դարաշրջանում պետական իշխանության ներքին գերակայությունը և արտաքին անկախությունն ավելի ու ավելի են սահմանափակվում միջազգային իրավունքով: Բացի այդ, ակնհայտ է, որ գերտերությունների սուվերեն իրավունքներն առավել իրական են, քան գաճաճ պետությունների:

Պետության ինքնիշխանությունը կարող է սահմանափակվել հարկադրաբար կամ կամավոր կերպով: **Հարկադիր սահմանափակումն**, հնարավոր է, օրինակ՝ պատերազմում հաղթող պետության կողմից հաղթված պետության նկատմամբ: **Կամավոր սահմանափակումը** կատարվում է պետության ինքնուրույն որոշմամբ՝ կոնկրետ համաձայնությամբ կամ պայմանագրի հիման վրա: Օրինակ՝ **կոնկրետ համաձայնությամբ** յուրաքանչյուր առանձին դեպքում պետություններից մեկը կարող է մյուսին հանձնել հանցագործին: **Պայմանագրի հիման վրա** ինքնիշխանության սահմանափակումը կատարվում է դաշնության կամ միջպետական միությունների մեջ մտնելով և դաշնությանը կամ վերպետական կազմավորմանը իր ինքնիշխան իրավունքները փոխանցելով:

20-րդ դարում մարդու իրավունքների միջազգայնացումը և համընդհանրացումը էականորեն թույլացրեցին պետության ներքին գործերին չմիջամտելու և ինքնիշխան հավասարության անխախտելիության դիրքերը: ՄԱԿ-ի կանոնադրությամբ սահմանված շրջանակներում և սահմաններում կիրառվում են զինված ուժեր այն պետությունների նկատմամբ, որոնք թույլ են տալիս կամ կատարում են մարդու իրավունքների խախտումներ (մարդասիրական ինտերվենցիա):

§ 6. Ժողովրդի և պետության ինքնիշխանության հարաբերակցությունը

Բացի պետության ինքնիշխանությունից գոյություն ունեն ժողովրդի և ազգի ինքնիշխանությունը: Ժողովրդի ինքնիշխանությունը նշանակում է՝ ժողովրդի գերակայություն որպես իշխանության աղբյուր և կրող՝ նրա իրավունքը ինքնուրույն որոշել իր բախտը՝ անմիջականորեն կամ ներկայացուցչական մարմինների միջոցով մասնակցել իր պետության քաղաքականության ձևավորմանը, պետական մարմինների կազմավորմանը, վերահսկել պետության գործունեությունը:

Ժողովրդի ինքնիշխանությունն արդի սահմանադրական կարգերի գլխավոր հիմունքներից է, ժողովրդավարության որակական բնութագիրը: Համաձայն ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածի «*Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով*»:

Ժողովրդի ինքնիշխանությունից կամ ժողովրդաիշխանությունից բխում են ժողովրդի հետևյալ հիմնական իրավունքները.

1) լինել գերագույն իշխանության աղբյուր և կրող պետության մեջ,

2) ձևավորել իշխանության ներկայացուցչական մարմինները,

3) պատվիրակել սեփական լիազորությունները իշխանության ներկայացուցչական մարմիններին,

4) ունենալ սահմանադրությամբ ամրագրված կարգավիճակ,

5) մասնակցել օրենսդրական գործունեությանը, պետության կառավարմանը և այլն:

Ժողովրդի և պետության ինքնիշխանության հարաբերակցությունը բարդ հիմնախնդիր է: Պատմականորեն պետության ինքնիշխանությունը ոչ միշտ է ենթադրել ժողովրդի ինքնիշխանություն: Պետության ինքնիշխանությունը կարող է զուգակցվել ժողովրդի ինքնիշխանության բացակայությամբ, երբ պետությունն ինքնիշխան է, սակայն ժողովուրդը զրկված է իր հիմնադիր իրավունքներից: Օրինակ միահեծանական, ամբողջատիրական վարչածևերի պայմաններ-

ռում: Դրան հակառակ ժողովրդավարական քաղաքացիական հասարակությունում պետության ինքնիշխանությունն ածանցված է ժողովրդի ինքնիշխանությունից: Ժողովրդի հիմնադիր իշխանությունն այստեղ համարվում է բոլոր իշխանությունների աղբյուրը: Ժողովրդավարական պետության ինքնիշխանությունը համարվում է ժողովրդի ինքնիշխանության դրսևորման ձևը:

§ 7. Ազգի ինքնիշխանությունը և նրա հարաբերակցությունը պետության ինքնիշխանության հետ

Ազգ եզրույթը (լատ. natio - ցեղ, ժողովուրդ) օգտագործվում է երկու իմաստով՝ էթնիկ և քաղաքական:

Ազգը էթնիկ իմաստով էթնոսոցիալական ընդհանրություն է, որին բնորոշ է իր նույնականության ինքնագիտակցությունը, այսինքն՝ պատմական ճակատագրի, հոգեբանության, բնավորության, ազգային, նյութական և հոգևոր արժեքների ընդհանրությունը, ինչպես նաև տարածքային-լեզվական և տնտեսական-միասնությունը:

Ազգը քաղաքական իմաստով մեկ պետության մեջ միավորված պետության քաղաքացիներն են, որոնք կարող են լինել տարբեր ազգություններից: Օրինակ՝ ամերիկյան ազգը: Նման ընդհանրությունը ծագում է միևնույն տարածքում տարբեր ազգերից կազմված բնակչության բավականին երկար ապրելու շնորհիվ, ենթադրում է պետության հետ իրավաբանական կապ՝ քաղաքացիություն: Ազգ հասկացությունը քաղաքական իմաստով ըստ էության համընկնում է ժողովուրդ հասկացության հետ, հետևաբար այս իմաստով «ազգի ինքնիշխանությունը» համապատասխանում է «ժողովրդի ինքնիշխանությանը»:

Էթնիկ իմաստով ազգի ինքնիշխանությունն ունի լրիվ այլ իմաստ և նշանակում է տվյալ ժողովրդի լիիշխանությունը, որն իրականացվում է «ազգի (ժողովրդի) ինքնորոշման իրավունքի» իրականացմամբ: Ինքնորոշումը որպես ազգի իրավունք խմբային է, որը պատկանում է ժողովուրդներին, ազգերին: **Ազգի (ժողովրդի) ինքնորոշման իրավունքը միջազգային իրավունքի սկզբունքներից է, համաձայն որի բոլոր ժողովուրդները (էթնիկ իմաստով) իրավունք ունեն ազատ, առանց դրսից միջամտության որոշելու իրենց ներքին և արտաքին քաղաքական կարգավիճակը, իրականացնել տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացումը:**

Ներքին կարգավիճակի որոշումը հանգում է կառավարման ձևի, հասարակական և պետական կարգերի վերակառուցումների իրականացման ճանապարհների ու միջոցների ընտրության իրավունքի ազատությանը:

Արտաքին քաղաքական կարգավիճակի որոշումը հանգում է ազգի իրավունքին ստեղծել ինքնուրույն պետություն, միանալ այլ պետությանը:

Արդի պետությունները որպես կանոն բազմազգ են: Բազմազգ պետության ինքնիշխանությունը պետք է երաշխավորի միավորված ազգերից յուրաքանչյուրի ինքնիշխանությունը: Ցանկացած պետական կազմավորում, համաձայն ՄԱԿ-ի կանոնադրության, պետք է հարգի ազգի ինքնորոշման իրավունքը և ապահովի այդ իրավունքի երաշխիքները: Ազգի ինքնորոշման իրավուքը (ազգի ինքնիշխանությունը) կարող է դրսևորվել ոչ միայն պետություն ստեղծելով, այլև ազգային-տարածքային ինքնավարությամբ և ազգային-մշակութային ինքնավարությամբ:

§ 8. Հասարակական իշխանություն. հասկացությունը, անհրաժեշտությունը

Իշխանությունը մարդկանց համակցությանը բնորոշ գերիշխելու և ենթարկվելու հարաբերություն է: Այդ հարաբերության մասնակիցներն են իշխողը՝ իշխանության սուբյեկտը և ենթարկվողը՝ իշխանության օբյեկտը: Իշխող սուբյեկտներն իրենց կամքը իրականացնում են նաև հարկադրանքով: **Իշխանությունն իշխողի ընդունակություն է ազդել մարդկանց վարքագծի և գործունեության վրա և նրանց ենթարկել իր կամքին: Իշխանությունը ենթադրում է սուբյեկտ (կառավարող, իշխող) և օբյեկտ (կառավարվող, ենթարկվող):**

Առանց իշխանության չի կարող լինել հասարակություն, մարդկանց համագործակցություն: Իշխանությունը հասարակությունը դարձնում է ամբողջական, կառավարելի: Այն կազմակերպվածության և կարգ ու կանոնի հաստատման, ընդհանուր խնդիրների լուծման միջոց է:

Իշխանությունը պետք է ունենա ուժ՝ իրեն ենթարկելու կառավարվողներին: Իշխանությունն առանց ուժի անզոր է իր կամքը թելադրելու մարդկանց, կառավարելու հասարակությունը: Իշխանության ուժը կարող է հենվել հարկադրանքի կամ էլ հեղինակության

վրա: Հեղինակավոր է այն իշխանությունը, որը վայելում է կառավարվողների մեծամասնության հարգանքը, վստահությունը:

Իշխանության անհրաժեշտությունն ունի մարդաբանական հիմքեր: Իշխանության գոյությունը պայմանավորված է մարդու բնույթով: Ինչո՞ւ: Որովհետև մարդը՝ որպես գիտակցությամբ և կամքով օժտված էակ, նաև անհատ է: Նա իր բնույթով ինքնավար է: Ըստ մարդաբանների՝ մարդու մեջ կա նաև բնական եսասիրություն, ինչի արդյունքում նա տարբերություն է դնում իր և իրեն շրջապատող այլ անհատների, իր և հասարակության միջև: Այսինքն՝ մարդը ընդունակ է նաև ամենաթողության: Եթե չսանձվեն մարդու եսասիրությունը, չորոշվեն նրա ազատության սահմանները, ապա հասարակության մեջ կսկսվի «բոլորի պատերազմ՝ ընդդեմ բոլորի»:

Իշխանությունն անհրաժեշտ է ընդհանուր խնդիրներն իրականացնելու համար: Եթե անհատները հոգում են իրենց կարիքները և պահանջմունքները, ապա իշխանությունը լուծում է ընդհանուր գործերը: Առանձին անհատն ինքն է կառավարում իրեն և որոշում իր վարքագիծը, ինչպես, օրինակ՝ միայնակ ջութակահարը: Սակայն անհատների խմբին անհրաժեշտ է կառավարող: Ինչպես սիմֆոնիկ նվագախմբին անհրաժեշտ է դիրիժոր, այնպես էլ հասարակությանը՝ իշխանություն: Հետևաբար՝ հասարակությունը անհրաժեշտաբար ենթադրում է կառավարման համակարգ (հասարակական իշխանություն) և հասարակական նորմերի համակարգ (սովորույթներ, ավանդույթներ, բարոյական նորմեր, կրոնական կանոններ և օրենքներ):

§ 9. Պետական իշխանությունը որպես հասարակական իշխանության հատուկ տարատեսակ

Հասարակության մեջ կան իշխանության տարբեր տեսակներ: Իշխանությունը՝ որպես կազմակերպված ուժ, բնորոշ է ինչպես ամբողջ հասարակությանը, այնպես էլ նրա բաղկացուցիչ մասերին: Օրինակ՝ տոհմի, ցեղի, համայնքի, հասարակական կազմակերպության, ծնողական, եկեղեցական: Դրանք տարբերվում են իրենց ընդգրկման աստիճանով: Օրինակ՝ կուսակցության իշխանությունը տարածվում է միայն իր անդամների վրա:

Մարդկանց բոլոր տեսակի ընդհանրություններից ամենամեծը տեղայնացված հասարակությունն է: Հետևաբար, ամենաընդգրկուն իշխանությունը հասարակական իշխանությունն է, որի օբյեկտը ողջ

հասարակությունն է: Մինչև պետության առաջացումը հասարակական իշխանությունը կազմակերպված էր ինքնակառավարման, այսպես կոչված, նախնադարյան ժողովրդավարության հիման վրա, երբ կառավարողները և կառավարվողները (հասարակությունը) դեռևս չէին առանձնացել, համընկնում էին: Ուստի նման իշխանությունն անվանում են անմիջական հասարակական իշխանություն, որի կազմակերպական ձևը տոհմի, ցեղի ժողովն էր կամ ավագների խորհուրդը: Նախնադարյան ժողովրդավարական իշխանության աստիճանական քայքայման հետևանքով առաջ եկավ հասարակական իշխանության նոր տեսակ՝ պետական իշխանությունը, որն ուներ կազմակերպական հզոր ուժ՝ ի դեմս պետական կառավարման կառույցների:

Պետական իշխանությունը սոցիալական իշխանության առանձին տարատեսակ է: Պետությունը քաղաքական կազմակերպություն է, իսկ իշխանությունը նրա ընդունակությունը, գործառույթը:

Պետական իշխանությունը դա հանրային քաղաքական բնույթ ունեցող իշխելու և ենթարկվելու հարաբերություն է, որի սուբյեկտները հենվում են պետության հարկադրանքի վրա: Այդ իշխանությունը իրականացվում էր հասարակությունից առանձնացված պետական ապարատի միջոցով: Պետական իշխանության սուբյեկտը և օբյեկտը չեն համապատասխանում: Պետական իշխանության իրականացվում է պետական կառավարման միջոցով: Կառավարումը պետական նպատակամղված գործողություն է հասարակության, նրա այս կամ այն ոլորտի վրա: Պետական իշխանությունը կոչված է ապահովելու հասարակության կայունությունը, կարգը ու կանոնը, պաշտպանել քաղաքացիներին ոտնձգություններից՝ օգտագործելով ինչպես համոզման այնպես էլ հարկադրանքի միջոցներ: Պետական իշխանությունը հանրային իշխանություն է: Դա նշանակում է, որ միայն նա իրավունք ունի հանդես գալու ժողովրդի, ամբողջ հասարակության անունից:

§ 10. Պետական իշխանության առանձնահատուկ գծերը

1. Պետական իշխանությունն իրականացնում է պետությունը: Պետությունը պետական իշխանության կրողն է: Սակայն ի սկզբանե իշխանության սուբյեկտը, աղբյուրը ժողովուրդն է, որը պետությանը իր համաձայնությամբ, օժտում է իշխանական լիազորություններով:

2. Պետական իշխանությունը հանրային իշխանություն է: Պետական իշխանությունը, ի տարբերություն տոհմացեղային իշխանության, չի համընկնում բնակչության հետ: Այն իրականացնում է առան-

ծին կառավարման ապարատը, որը մարդկանց խումբ է՝ զբաղված հասարակության կառավարմամբ: Պետական իշխանությունն անվանում են հանրային, որովհետև այն և միայն այն իրավունք ունի հանդես գալու ամբողջ հասարակության, ժողովրդի անունից:

3. Պետական իշխանությունն իրականացվում է պետական մարմինների միջոցով: Պետական մարմինների համակարգն անվանում են նաև պետական ապարատ: Ուստի պետական իշխանությունը կարելի է բնորոշել որպես հասարակության կառավարում պետական ապարատի միջոցով: Պետական ապարատի սկզբնական և կարևորագույն կառուցվածքային տարրը պետական մարմինն է, որը մասնակցում է պետության խնդիրների իրականացմանը և դրա համար օժտված է իշխանական լիազորություններով: Այսինքն՝ պետական մարմինը կարող է հրապարակել պարտադիր նորմատիվ և անհատական իրավական ակտեր: Այդ ակտերի կատարման համար պետական մարմինը կարող է կիրառել տարբեր մեթոդներ, այդ թվում՝ հարկադրանք: Պետական մարմինների կազմավորումը, կառուցվածքը և գործունեության կարգը սահմանվում են օրենսդրությամբ: Պետական մարմիններն ունեն իրավասություն՝ իրավունքների և պարտականությունների ամբողջություն, որը ևս ամրագրվում է օրենսդրությամբ:

4. Պետական իշխանությունը պետք է լինի լեգիտիմ:[1] Պետական իշխանությունը կարող է լինել լեգիտիմ և ոչ լեգիտիմ: Լեգիտիմ է այն

---

[1] Տեսության մեջ կան պետական իշխանությունը բնութագրող երկու հասկացություն՝ լեգիտիմություն և լեգալություն: Երկուսի հիմքում էլ ընկած է նույն արմատը՝ (lex – օրենք, օրինական), սակայն իմաստով դրանք տարբերվում են իրարից: Պետական իշխանության լեգալությունը դրա ծագման, կազմակերպման, գործունեության իրավաչափության ճանաչումն է: Այդպիսի օրինականացումը կատարվում է տարբեր ճանապարհներով, որոնցից կարևորը ժողովրդավարական սահմանադրության ընդունումն է: Հետևաբար լեգալությունը կամ լեգալիզացիան իրավաբանական կատեգորիա է, որովհետև իշխանության և նրա լիազորությունների հիմնավորումը արմատավորված է իրավական ակտերում և ընթացակարգերում, իրավահարաբերություններում: Պետական իշխանության լեգիտիմությունը ավելի բարդ հասկացություն է: Եթե լեգալությունը ձևական վիճակն է, ապա լեգիտիմությունը փաստական: Պետական իշխանության լեգիտիմությունը դա այն գործընթացներն են, որոնց օգնությամբ այն ձեռք է բերում լեգիտիմության որակ, արտահայտում է իշխանության ճշմարտացիությունը, արդարացվածությունը, գործունեության համապատասխանությունը անհատի, հասարակական խմբերի, ժողովրդի հոգեբանական դիրքորոշումներին, ակնկալիքներին: Պետական իշխանության լեգիտիմության հետևանքը նրա հեղինակությունն է բնակչության մեծամասնության աչքերում:

պետական իշխանությունը, որում հռչակված է ժողովրդաիշխանության սկզբունքը, իսկ պետական մարմինները ձևավորվում են ժողովրդավարական բնույթ ունեցող իրավական կանոնների հիման վրա: Օրինակ՝ ժողովրդավարական պետական իշխանության լեգիտիմացման միջոցը նրա բարձրագույն մարմինների ընտրովիությունն է ժողովրդի կողմից: Ընտրություններն իրենց հերթին պետք է լինեն ազատ, պարբերական, այլընտրանքային (մրցակցային), հավասար, արդար, ազնիվ: Հակառակ դեպքում օրինակ՝ կեղծված ընտրությունների միջոցով ձևավորված իշխանությունը, լեգիտիմ չէ:

5. Պետական իշխանությունն իրականացվում է համոզման և հարկադրանքի եղանակներով:

§ 11. Պետական իշխանության իրականացման եղանակները 3

Պետական իշխանությունն իրականացվում է պետական մարմինների և պաշտոնատար անձանց միջոցով: Պետական մարմինները մարդկանց և զանազան կազմակերպությունների վրա ներգործում են տարբեր կերպ՝ մի դեպքում քարոյական խթանման, համոզման, իսկ մեկ այլ դեպքում՝ պետական հարկադրանքի միջոցով: Այլ կերպ ասած, պետական իշխանությունն իր պատմական զարգացման ողջ ընթացքում օգտագործում է կառավարման երկու հիմնական եղանակներ, մեթոդներ՝ **համոզում և հարկադրանք:**

Համոզումը մարդկանց կամքի և գիտակցության վրա գաղափարաբարոյական միջոցներով ակտիվ ներգործության ձևն է: Մարդուն կառավարելու կարևոր միջոցներից մեկն էլ խոսքն է: Օրինակ, պետական իշխանությունն իրականացվում է նաև դաստիարակության, պատգամների, կոչերի, գաղափարների օգնությամբ: Այս միջոցների օգտագործման արդյունքում մարդու, մարդկանց խմբերի մոտ ձևավորվում են որոշակի բարոյահոգեբանական արժեքներ, և դրանով իսկ, հասարակական շահերն ու իշխանության պահանջները վերածվում են անհատի ներքին **հոգեբանական համոզմունքի:** Օրինակ՝ հայրենիքի պաշտպանությանը մասնակցելու իրավական պարտականությունը քաղաքացու կողմից իրացվում է նաև կամավոր կերպով, որովհետև տվյալ քաղաքացու բարոյաարժեքային կողմնորոշման կամ աշխարհայացքի հիմքում, որպես համոզմունք, ընկած է հայրենասիրությունը: Հանուն այդ գաղափարի, նման մարդը պատրաստ է նաև ինքնազոհողության: Իսկ եթե անհատի մոտ չկա այդ

բարոյաարժեքային կողմնորոշումը, այսինքն՝ նա հակված չէ կատարելու իր վրա դրված իրավական պարտականությունը, ապա պետությունը դիմում է հարկադրանքի:

Պետական հարկադրանքը լիազորված պետական մարմինների ու պաշտոնատար անձանց հոգեբանական, նյութական (տուգանք), ֆիզիկական (բռնի) ներգործությունն է անհատի և մարդկանց խմբերի վրա: Հարկադրանքի կիրառման նպատակն է մարդուն ստիպել գործել ի շահ պետության: Եթե, օրինակ, քաղաքացին, կամավոր չի կատարում հայրենիքի պաշտպանությանը մասնակցելու իր պարտականությունը, ապա նրա համար դա կարող է ունենալ մի շարք բացասական հետևանքներ: Մասնավորապես, նրա նկատմամբ կարող է հարուցվել քրեական գործ՝ իսկական զինվորական ծառայության հերթական զորակոչից խուսափելու համար, որը պատժվում է ազատազրկմամբ:

Պետական հարկադրանքը սահմանվում և կիրառվում է իրավական (օրենքի) նորմերով: Հետևաբար, այն կարող է լինել իրավական (օրինական) և ոչ իրավական (բռնապետական): Կան պետություններ, որոնցում պետական իշխանությունը բռնապետական, դիկտատորական է (հին հունարեն՝ «դիկտատուրա»՝ բռնի իշխանություն բառից), այսինքն՝ այն կառավարումն իրականացնելիս մեծամասամբ հենվում է բռնի ուժի և հարկադրանքի վրա: Նման պետության ղեկավարին անվանում են բռնապետ (դիկտատոր):

Կազմակերպական առանձնահատկությունների տեսանկյունից պետական իշխանության կառուցակարգը կարող է լինել միապետական կամ հանրապետական: Միապետություններում իշխանությունը կենտրոնացված է ժառանգական միապետի՝ արքայի, թագավորի, շահի, ցարի ձեռքում: Իսկ հանրապետություններում իշխանության տերը ժողովուրդն է, որը որոշակի ժամկետով ընտրում է իր ներկայացուցիչներին՝ երկիրը՝ ժողովրդի շահերից ելնելով՝ կառավարելու համար:

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԱՑԱՏՐԵ՛Ք ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԸ

Համապարտադիր, կառավարման ապարատ, պետության կառուցվածք, հատկանիշ, ապատրիդ, բիպատրիդ, ինքնորոշման իրավունք, լիիշխանություն, մարդասիրական ինտերվենցիա:

ՊԱՏԱՍԽԱՆԵ՛Ք ՀԱՐՑԵՐԻՆ

1. Ինչո՞վ է պայմանավորված պետություն հասկացության բնորոշման բազմազանությունը:
2. Բնորոշե՛ք պետություն հասկացությունը:
3. Որո՞նք են պետության հատկանիշները:
4. Ինչպե՞ս է կարգավորում հասարակական կյանքը պետությունը:
5. Բնութագրե՛ք պետությունը որպես բնակչության միասնական տարածքային կազմակերպություն:
6. Ի՞նչ է պետության տարածքը:
7. Ի՞նչ կառուցվածքային խմբեր է ներառում պետության բնակչությունը և ինչո՞վ են դրանք տարբերվում:
8. Բնութագրե՛ք պետության ինքնիշխանությունը որպես նրա հատկանիշ:
9. Ո՞րն է պետական ինքնիշխանության ներքին առումը:
10. Ո՞րն է պետական ինքնիշխանության արտաքին առումը:
11. Թվարկե՛ք ինքնիշխանության յոթ հատկանիշները:
12. Ինչո՞վ է պայմանավորված պետության ինքնիշխանության ծավալը:
13. Ի՞նչ հիմքերով կարող է սահմանափակվել պետության ինքնիշխանությունը:
14. Բնորոշե՛ք ժողովրդի ինքնիշխանությունը:
15. Որո՞նք են ժողովրդաիշխանությունից բխող ժողովրդի հիմնական իրավունքները:
16. Ի՞նչ հարաբերակցության մեջ են ժողովրդի և պետության ինքնիշխանությունը:
17. Որո՞նք են «ազգ» եզրույթի իմաստները:
18. Ի՞նչ բովանդակություն ունի էթնիկ իմաստով ազգի ինքնիշխանությունը:

19. Որո՞նք են ազգի ինքնիշխանության ներքին և արտաքին առումները:
20. Ի՞նչ ձևերով կարող է դրսևորվել ազգի ինքնորոշման իրավունքը (ինքնիշխանությունը):
21. Ի՞նչ է իշխանությունը և ո՞ր իշխանությունն է հեղինակավոր:
22. Որո՞նք են իշխանության մարդաբանական հիմքերը:
23. Որո՞նք են իշխանության անհրաժեշտության ընդհանուր հասարակական խնդիրները:
24. Իշխանության ի՞նչ տեսակներ գիտեք:
25. Ի՞նչ հարաբերակցության մեջ են պետությունը և պետական իշխանությունը:
26. Որո՞նք են պետական իշխանության առանձնահատուկ գծերը:
27. Ո՞ր պետական իշխանությունն է համարվում լեգիտիմ և որո՞նք են դրա միջոցները:
28. Ի՞նչ եղանակներով է իրականացվում պետական իշխանությունը:
29. Ի՞նչ են համոզումը և համոզմունքը որպես իշխանության իրականացման եղանակներ:
30. Ի՞նչ է պետական հարկադրանքը:

ԲԱՆԱՎԻՃԵՔ

1. Ժամանակակից միջազգային իրավական դոկտրինայում առկա է մրցակցություն նրա երկու սկզբունքների՝ պետության «տարածքային ամբողջականության» և «ազգերի ինքնորոշման: Տարածքը որպես պետության հատկանիշ, համարվում է անբաժանելի ու անձեռնմխելի է, բացառիկ ու անօտարելի: Ազգի (ժողովրդի) ինքնորոշման իրավունքին համաձայն բոլոր ժողովուրդները (էթնիկ իմաստով) իրավունք ունեն ազատ, առանց դրսից միջամտության որոշելու իրենց ներքին և արտաքին քաղաքական կարգավիճակը, ընդհուպ անջատվելը և ինքնուրույն պետություն ստեղծելը:

Ի՞նչ եք կարծում, որ սկզբունքին պետք է առաջնայնություն տրվի միջազգային կոնֆլիկտները լուծելիս և ի՞նչ չափանիշների հիման վրա: Բաժանվեք երկու խմբերի՝ «տարածքային ամբողջականության» և «ազգերի ինքնորոշման իրավունքի» կողմնակիցներ և քննարկեք հիմնախնդիրը:

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Բնակչություն և տարածք

Կառավարման կառուցակարգ

Հարկերի հավաքում

Իրավական կարգավորում

Ինքիշխանություն

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

1. ցամաքը՝ սահմանով	6. լողացող ապարատները բաց ծովում
2. ջրերը՝ ներքին և տարածքային 12 մղոն	7. խողովակաշարերը
3. օդային տարածքը՝ 35 կմ բարձրությամբ.	8. ստորջրյա կաբելները և ջրային նավթահանները
4. ընդերքը՝ սահմանագծով	9.տիեզերական օբյեկտները
5. արտասահմանյան դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսությունները	

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ
• ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ • ՕՏԱՐԵՐԿՐՅԱՑԻՆԵՐ • ԵՐԿՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ՝ ԲԻՊԱՏՐԻՈՆԵՐ • ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՁՈՒՆԵՑՈՂՆԵՐ՝ ԱՊԱՏՐԻՈՆԵՐ

Պետության ինքնիշխանությունը

Ներքին առում	Արտաքին առում
• գերակայություն • լիիշխանություն	• անկախություն •իրավահավասարություն
•մենաշնորհային իրավունք իրականացնել օրենսդիր, գործադիր, իրավապահական գործառույթներ	• անթույլատրելիությունը միջամտել պետության ներքին գործերին, • իրավահավասար անդամություն միջազգային կազմակերպություններին

ՊԵՏԱԿԱՆ ԻՆՔԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

1. ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ
2. ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆ
3. ԼԻԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ
4. ԱՆԲԱԺԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ
5. ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ
6. ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ
7. ԱՆՕՏԱՐԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Պետության ինքնիշխանության սահմանափակման հիմքերը		
հարկադրաբար	կամավոր	
օրինակ՝ պատերազմում հաղթած պետության կողմից պարտվածի նկատմամբ:	պետության ինքնուրույն որոշմամբ	
	կոնկրետ համաձայնություն	պայմանագրի հիման վրա
	օրինակ՝ պետությունը կարող է մյուսին հանձնել հանցագործին	օրինակ՝ դաշնության կամ միջպետական միությունների մեջ մտնելը

ԺՈՂՈՎՐԴԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Պետական ինքնիշխանություն

Ժողովրդի ինքնիշխանություն

ԱԶԳԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ



ԹԵՄԱ 6. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

§ 1. Պետության էության և սոցիալական առաքելության հասկացությունները

Բացահայտել պետության էությունը, նշանակում է վեր հանել այն գլխավորը և որոշիչը, որ պայմանավորում է հասարակության մեջ պետության օբյեկտիվ անհրաժեշտությունը (ծագումը, գոյությունը, հետագա զարգացումը), սոցիալական առաքելությունը, դերն ու նշանակությունը: Պետության ծագումը և գոյությունը պայմանավորված է նրա ընդունակությամբ բավարարել հասարակության (բնակչության) հիմնարար պահանջմունքները: Այլ կերպ ասած պետության էությունը կապված է նրա սոցիալական արժեքի, նշանակության հետ:

Ծագելով հասարակությունից և վեր կանգնելով նրանից պետությունը նոր պայմաններում (սոցիալական անհավասարության և անհատների շահերի հակադրման) պետք է լուծեր հասարակական հիմնարար խնդիրները, կազմակերպեր հասարակական «ընդհանուր գործերը»: Օրինակ՝ անվտանգությունը, քաղաքացիական խաղաղությունը և իրավակարգը, արտադրության կազմակերպումը, ի վերջո հասարակության գոյությունը և հարատևումը: Հետևաբար, պետության էությունն արտահայտվում է նրա ընդունակությամբ իրականացնել ընդհանուր հասարակական գործառույթների կատարումը, հասարակության գործերի կարգավորումը և կառավարումը: Ուստի **պետության սոցիալական առաքելությունը, արժեքը կայանում է նրանում, որ այն կարգավորում և կառավարում է հասարակությունը, որոշում է նրա զարգացման ընդհանուր նպատակները և կազմակերպում է դրանց իրականացումը**:

Սակայն պետության էությունը և սոցիալական առաքելությունը չի դրսևորվում մեխանիկորեն: Նրա դրսևորման վրա ազդում են բազմաթիվ գործոններ: Այդ գործոնների շարքում առաջնային նշանակություն ունի պետական իշխանության պատկանելությունը: Պետության էությունը որոշվում է նրանով, թե ում է պատկանում պետական իշխանությունը, ով է այն իրականացնում և ում շահերից ելնելով:

§ 2. Պետության էության մեկնաբանման դասակարգային և համասոցիալական մոտեցումները

Պետության էության հիմնախնդիրները առաջ են բերել սուր բանավեճեր: Առկա բազմաթիվ մոտեցումներից առանձնանում են երկուսը՝ *դասակարգայինը և համասոցիալականը:*

Դասակարգային կամ մարքսիստական մոտեցումը ապացուցում է, որ քաղաքական իշխանությունը պատկանում է տնտեսապես գերիշխող դասակարգին և օգտագործվում է ի շահ նրա: Հետևաբար պետությունը գործիք է, որի միջոցով մեկ դասակարգը (փոքրամասնությունը) իշխում է մյուսի (մեծամասնության) վրա: Այդպիսի պետության էությունը հանգում է տնտեսապես և քաղաքականապես գերիշխող դասակարգի դիկտատուրային: Հետևաբար, պատմականորեն հայտնի դասակարգերն իրականացնում էին ստրկատերերի, ավատատերերի (ֆեոդալների), դրամատերերի (բուրժուաների) դիկտատուրան: Դասակարգի դիկտատուրան պայմանավորում է տվյալ պետության բովանդակությունը՝ նպատակները, խնդիրները և գործառույթները: Օրինակ, ստրկատիրական հասարակության պայմաններում պետությունը կառավարման գործիք է ստրկատերերի ձեռքին ստրուկներին ճնշելու և շահագործելու համար:

Ըստ մարքսիզմի՝ սոցիալիստական պետությունը, ի տարբերություն նախորդների, պրոլետարիատի դիկտատուրայի փուլում պետական իշխանությունն իրականացնում է բնակչության մեծամասնության շահերից ելնելով, և, դրանով իսկ, այն հանդիսանում է կիսապետություն: Ցավոք, իրական սոցիալիստական պետությունում մարքսիզմի շատ տեսական դրույթներ այդպես էլ մնացին թղթի վրա, որովհետև իրականում իշխանությանը բռնատիրել էր բյուրոկրատիան, պետական ապարատը ծառայում էր ոչ թե աշխատավորների լայն խավերին, այլ կուսակցական-պետական վերնախավին:

Անշուշտ, պետության գործունեության դասակարգային ուղղվածությունը նրա էական բնութագրերից է, բայց այն գերիշխող է միայն ոչ ժողովրդավարական, դիկտատորական պետություններում, որտեղ գոյություն ունի հասարակության մի մասի խստագույն շահագործում մյուս մասի կողմից: Սակայն, նույնիսկ այդ պայմաններում, պետությունը կատարում է որոշակի գործառույթներ՝ ի շահ ամբողջ հասարակության, լուծում է ընդհանուր խնդիրներ: Օրինակ, պայքար է մղում

հանցավորության դեմ, պաշտպանում է երկիրը արտաքին հարձակումներից:[1]

Պետության էությունը բնութագրելու մյուս չափանիշը համամարդկայինն է, համասոցիալականը: Պետության էության նկատմամբ համահասարակական մոտեցումը պնդում է, որ ժողովրդավարական հասարակություններում իշխանությունը պատկանում է ամբողջ ժողովրդին, հետևաբար, պետությունն այստեղ իշխանությունն ստանում է ժողովրդից, և այն իրականացնում է ի շահ ամբողջ հասարակության: Հետևաբար, այդպիսի պետությունը կատարում է խնդիրներ և գործառույթներ, որոնք բխում են յուրաքանչյուրի և բոլորի շահերից:

§ 3. Պետության էության և սոցիալական առաքելության հիմնախնդրի հանգուցալուծումը

Պետության հասկացության և էության նեղ դասակարգային բնորոշումը, անկասկած, ծայրահեղություն է: Սակայն նրա հասկացության «զուտ համամարդկային» բնորոշումը հակառակ ծայրահեղությունն է: Իրական կյանքում չկան ո՛չ զուտ դասակարգային և ո՛չ էլ զուտ համամարդկային պետություններ: Ճշմարտությունն այս դեպքում «ոսկե միջինն» է: Այսինքն՝ պետության էությունը վերլուծելիս անհրաժեշտ է հաշվի առնել երկու մոտեցումներն էլ: Դրանցից ցանկացածի անտեսումն այդ էության բնութագիրը դարձնում է միակողմանի: Այլ կերպ ասած՝ ***պետության էությունն ունի երկակի բնույթ:*** Հասարակության զարգացմանը զուգընթաց փոխվեցին հասարակական կյանքի պայմանները, որի հետևանքով նաև պետության էության մեջ փոխվեց «դասակարգային» և «ընդհանուր» խնդիրների հարաբերակցությունը: Մի կողմից նեղացան կամ մասամբ անհետացան պետության այն էական գծերը, որոնք այն բնութագրում էին որպես դասակարգային կազմակերպություն: Մյուս կողմից ընդլայնվեցին, հարստացան պետության այն հատկությունները, որոնք բնութագրում են այն որպես համահասարակական կառավարման գործիք: ***Ժողովրդավարական, իրավական պետությունում առաջին պլան է մղվում նրա համամարդկային էությունը, իսկ դասակարգայինը դառ-***

---

[1] Համահասարակականից և դասակարգայինից բացի, պետության և նրա էության վրա հաճախ ուժեղ ազդեցություն են թողնում ազգային և նույնիսկ՝ խմբային, կլանային, առանձին անհատների շահերը, որոնք կարող են ներկայացվել նաև որպես համազգային, համասոցիալական:

*նում է երկրորդական: Նման մոտեցումը հիմք է տալիս իրավագետնե-
րին ժամանակակից քաղաքակիրթ պետությունը համարել սոցիալա-
կան հաշտության միջոց՝ իր բովանդակությամբ և իրավական պե-
տություն՝ իր ձևով:*

§ 4. Պետության էության զարգացման արդի օրինաչափությունները

Անկախ տեսական տարակարծություններից, նորագույն ժամանակաշրջանում պետության էվոլուցիոն զարգացման պատմական փորձը հաստատում է, որ արդի պետությունը սոցիալ-իրավական պետություն է, որն ունի վերադասակարգային էություն: Այդ պետության սոցիալական հիմքը զարգացած քաղաքացիական հասարակությունն է: Այդ հասարակության մեջ չկան հստակ արտահայտված դասակարգեր, սոցիալական հակասություններն անհաշտ (անտագոնիստական) չեն, ուստի փոխվել են արդի պետության գործունեության բովանդակությունը և զարգացման օրինաչափությունները.

• **Պետությունը դարձել է հասարակական հաշտության միջոց:** Նա հասարակական հակասությունները լուծում է ոչ թե բռնության և ճնշման ուղով, այլ հանդուրժողականության, հասարակական փոխզիջման միջոցով: Պետությունը պայմաններ է ստեղծում քաղաքացիական հասարակության զարգացման համար:

• **Պետության համասոցիալական գործառույթները զարգանում և ընդարձակվում են:** Պետությունը պաշտպանում է աշխատող մարդուն, հոգ է տանում բնակչության սոցիալական պաշտպանվածության մասին, ոստի ազատական պետությունից այն վերածվում է սոցիալական պետության:

• **Պետությունը վերադառնում է հասարակության տնտեսական կյանք այն կայունացնելու նպատակով:** Տնտեսությանը չմիջամտելու ազատական սկզբունքը զիջում է կարգավորվող տնտեսության սկզբունքին: Ազատ շուկայական տնտեսությանը փոխարինում է խառը տնտեսությունը:

• **Պետական կառավարման հասարակական ոլորտները ընդարձակվում և խորանում են:** Համապատասխանաբար ծնավորվում են նոր մարմիններ և հիմնարկություններ, ինչը հանգեցնում է պետական ապարատի ուռճացման:

• **Պետությունները համաշխարհային մասշտաբով մերձենում և ակտիվ փոխգործում են՝** ընդհանուր և համամիասնական համաշ-

խարհային ինտեգրացիոն գործընթացների հետևանքով: Միջազգային ոլորտում պետություններն անցկացնում են փոխզիջումների, պայմանագրային հարաբերությունների քաղաքականություն:

• **Տեղի է ունենում արդի պետությունների մոդելների միասնականացում**: Միասնականացումը պայմանավորված է արդի պետությունների կողմից համաշխարհային իրավական արժեքների փոխառմամբ (ռեցեպցիա) և կիրառմամբ: Օրինակ՝ իշխանությունների տարանջատում, իրավունքի գերակայություն, խորհրդարանականություն, իրավական պետություն, սոցիալական պետություն, մարդու իրավունքները որպես բարձրագույն արժեք և այլն:

• **Պետության գլխավոր խնդիրներից մեկը դառնում է գիտատեխնիկական առաջադիմությունը**, որը արդի դարաշրջանում հասարակական զարգացման հզոր գործոն է:

ԲԱՑԱՏՐԵ՛Ք ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԸ

էություն, սոցիալական առաքելություն, մարքսիզմ, ընդհանուր գործեր, ոսկե միջին, կարգավորվող տնտեսություն, ազատական տնտեսություն, համաշխարհային իրավական արժեքներ:

ՊԱՏԱՍԽԱՆԵ՛Ք ՀԱՐՑԵՐԻՆ

1. Ի՞նչ է պետության էությունը և ի՞նչ կապ կա պետության էության ու սոցիալական առաքելության միջև:
2. Ինչո՞վ է որոշվում պետության էությունը:
3. Ի՞նչ մոտեցումներ կան պետության էության մեկնաբանման հարցում:
4. Ո՞րն է Ձեր կարծիքով պետության էության մեկնաբանման հիմնախնդրի լուծումը:
5. Ի՞նչ է նշանակում «պետության էությունն» ունի երկակի բնույթ:
6. Որո՞նք են արդի պետության էության զարգացման օրինաչափությունները:
7. Ի՞նչ եք հասկանում արդի պետությունների մոդելների միասնականացում ասելով:
8. Ի՞նչ դեր է խաղում ԳՏԱ արդի ժամանակաշրջանում և ի՞նչ կապ կա նրա և պետության միջև:

ԿԱՏԱՐԵ՛Ք ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Իդեալական պետություն

Իդեալական պետական կառուցվածքի նախագիծը առաջ է քաշել հույն մտածող **Հիպոդամոսը** (մ.թ.ա. 5-րդ դ.): Ըստ նրա նախագծի պետության բնակչությունը պետք է ունենա 10.000 քաղաքացի, որոնք բաժանվում են 3 դասի՝ արհեստավորներ, հողագործներ և ռազմիկներ: Բոլոր պաշտոնյաները ընտրվում են ժողովրդի կողմից: Իդեալական պետության նախագծերը հետագայում ստացան լայն տարածում, ինչպես հունական մտքի ծաղկման ժամանակաշրջանում (իդեալական պետության կառուցվածքի պլատոնյան նախագ-

ծերը), այնպես էլ հետագայում: Մարդկությունը ազատության ու արդարության իր ձգտումներն արտահայտում էր ոչ միայն տեսական պատկերացումներում, այլ նաև հեքիաթներում, լեգենդներում, առասպելներում, կրոնական պատկերացումներում, օրինակ քրիստոնեական «Աստծո քաղաքը»: Անցել են բազում դարեր, սակայն մարդկային մտքի փնտրտուքը դեռևս չի ավարտվել: Ստորելով այս մասին փորձեք կառուցել և նկարագրել իդեալական հասարակության ու պետության ձեր յուրօրինակ, մտածացին մոդելը, որը կարող է լինել նաև հեքիաթային:

Շարադրանքի կառուցվածքի կողմնորոշիչ՝ ա) իդեալական հասարակությունը ու պետությունը իմ պատկերացմամբ, բ) իդեալական հասարակության ու պետության իմ կառույցը հնարավոր է կամ հնարավոր չէ կենսագործել, գ) եթե հնարավոր է, նկարագրել, թե ինչպես, եթե հնարավոր չէ, ապա հիմնավորել, թե ինչու՞:

ԲԱՆԱՎԻՃԵՔ

1. Մեր Սահմանադրությունը Հայաստանի Հանրապետությունը հռչակում է ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն, որում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Սահմանադրական այս դրույթների քննարկման առիթով ծավալված բանավեճի ընթացքում մասնակիցների մի մասը գտնում էր, որ Սահմանադրության այդ ձևակերպումները արտահայտում են մեր պետության էությունը, որ Հայաստանի Հանրապետությունն իրականում ունի համահասարակական էություն և գործում է մեր բոլորի շահերից ելնելով: Բանավեճի մասնակիցների մյուս մասը, ընդհակառակը, պնդում էր, որ Սահմանադրությունը չի պայմանավորում մեր պետության էությունը, որ մեր պետությունը չի կարելի անվերապահորեն անվանել համահասարակական էություն ունեցող, որ Հայաստանի Հանրապետությունը արտահայտում է միայն հասարակական մի խմբի (կլանի) շահերը:

Բանավեճի մասնակիցներից ո՞ր մասի հետ եք դուք համաձայն և ինչո՞ւ: Բաժանվեք խմբերի և քննարկեք:

ԳԾԱՊԱՏԿԵՐԱՅԻՆ ԵՎ ՈՒՐՎԱԳԾԱՅԻՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 6-ՐԴ ԹԵՄԱՅԻ ՀԱՄԱՐ

Պետության էությունը
գլխավորը, որոշիչը, որ պայմանավորում է նրա օբյեկտիվ անհրաժեշտությունը,ծագումը, գոյությունը, սոցիալական առաքելությունը:
Պետության սոցիալական առաքելությունը
պետության դերը և նշանակությունը, ընդունակությունը բավարարել բնակչության հիմնարար պահանջմունքները, կարգավորել և կառավարել հասարակությունը, որոշել նրա զարգացման ընդհանուր նպատակները և կազմակերպել դրանց իրականացումը:

ԱՐԴԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
• հասարակական հաշտության միջոց
• սոցիալական գործառույթների զարգացում
• տնտեսության պետական կարգավորում
• կառավարման ոլորտների ընդարձակում
• համաշխարհային ինտեգրացիա
• պետության մոդելի միասնականացում
• ԳՏԱ պետության խնդիր և հասարակության զարգացման գործոն

ԹԵՄԱ 7. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Թեմայի բովանդակությունը

➢ *Պետության գործառույթներ հասկացությունը, բնութագրական գծերը, նշանակությունը:*

➢ *Պետության գործառույթների դասակարգումը ըստ ուղղվածության (ոլորտների), ըստ շարունակականության, ըստ պետության տարածքի ընդգրկման, ըստ պետության էության հետ կապի:*

➢ *Պետության ներքին գործառույթները (տնտեսական, ֆինանսական, սոցիալական, մշակութային, իրավական, բնապահպանական) և դրանց բովանդակությունը:*

➢ *Պետության արտաքին գործառույթները (երկրի պաշտպանության, դիվանագիտական, միջազգային խաղաղության և անվտանգության ապահովման, միջպետական տնտեսական և առևտրաֆինանսական համագործակցության, միջպետական մշակութային, գիտատեխնիկական և տեղեկատվական համագործակցության, միջպետական էկոլոգիական համագործակցության, համաշխարհային իրավակարգի պահպանության) և դրանց բովանդակությունը:*

➢ *Պետության գործառույթների իրականացման ձևերը. հասկացությունը տեսակները (իրավական և կազմակերպական): Պետության գործառույթների իրականացման իրավական ձևերը՝ իրավաստեղծ, իրավակիրառ, իրավապահպան, մեկնաբանողական-իրավական, հիմնադիր, հսկիչ-վերահսկողական: Պետության գործառույթների իրականացման կազմակերպական ձևերը. կազմակերպական-կանոնակարգող, կազմակերպական-տնտեսական, կազմակերպական-գաղափարախոսական:*

➢ *Պետության գործառույթների իրականացման մեթոդները. հասկացությունը, տեսակները:*

➢ *Գործառույթների իրականացման իրավական մեթոդները. օրինականությունը, տեղեկութավորումը, համոզումը, խթանումը, խորհրդատվությունը, անմիջական կառավարումը, օրինական հարկադրանքը:*

➢ *Պետության գործառույթների իրականացման կազմակերպական մեթոդները. սոցիոլոգիական հետազոտությունը (դիտարկում, անկետավորում, հարցում), ծրագրավորումը, հիմնախնդիրների հետազոտումը, կանխատեսումը, ընթացիկ վերլուծությունը, արդյունքների ամփոփումը, գաղափարադաստիարակչական աշխատանքի մեթոդները:*

➢ *Պետության գործառույթների դինամիկան, փոխպայմանավորվածությունը, փոխգործողությունը:*

§ 1. Պետության գործառույթներ հասկացությունը և նշանակությունը

Պետության գործառույթներ (լատիներեն functio - կատարում, կենսագործում) հասկացությունը ցույց է տալիս թե ինչո՞վ է զբաղված պետությունը, ի՞նչ նպատակներ է նա հետապնդում և ի՞նչ խնդիրներ է լուծում: Պետության գործառույթները բնորոշում են հետևյալ կերպ. ***պետության գործառույթները նրա գործունեության հիմնական ուղղություններն են, որոնք արտահայտում են պետության էությունը և սոցիալական նշանակությունը, ուղղված են հասարակության պետական կառավարման նպատակների ու խնդիրների իրագործմանը:***

Պետության գործառույթների բնութագրական գծերն են.

1. **Պետության գործառույթները սերտորեն փոխկապված են պետության խնդիրների հետ**, սակայն նույնական չեն: Պետության խնդիրն այն է, ինչը լուծում է պահանջում, իսկ գործառույթն այդպիսի լուծմանն ուղղված գործունեության տեսակն է:

2. **Պետության յուրաքանչյուր գործառույթ ունի իր ներգործության օբյեկտը և իր բովանդակությունը**: Օբյեկտը հասարակական հարաբերությունների որոշակի ոլորտն է (տնտեսություն, երկրի պաշտպանություն), որին ուղղված է պետական ներգործությունը: Գործառույթների բովանդակությունը մատնանշում է, թե ինչ է անում պետությունը, ինչ կառավարչական գործողություններ է կատարում տվյալ ոլորտում, ինչով են զբաղվում նրա համապատասխան մարմինները: Օրինակ, պետության խնդիրներից մեկն էլ երկիրը արտաքին հնարավոր հարձակումներից պաշտպանելն է: Այդ խնդրի իրացման համար պետությունն իրականացնում է երկրի պաշտպանության գործառույթ, որը ենթադրում է՝ զինված ուժերի (բանակի) ստեղծում, դրա անընդհատ կատարելագործում, բանակի մարտունակության և մարտական պատրաստականության բարձրացում, քաղաքացիական պաշտպանության և պահեստային զինված ուժերի կազմակերպում, ինչպես նաև բազմաթիվ այլ միջոցառումներ, որոնք նախատեսվում են տվյալ պետության պաշտպանական-ռազմական դոկտրինով:

3. **Պետության գործառույթները կազմում են ենթահամակարգ, փոխկապված միասնություն, որի վրա վճռական ազդեցություն է թողնում պետության էությունը**: Հասարակության աստիճանական զարգացման ընթացքում փոխվում են նաև պետության գործառույթները, դրանց բովանդակությունը: Քաղաքակրթության և ժողովրդավարության զարգացումը համահասարակական ուղղվածություն են տալիս նաև պետության գործառույթներին:

4. **Պետության գործառույթները պետք է տարբերել պետության մարմնի գործառույթից**: Առաջինը ներառում է պետության գործունեությունն ամբողջությամբ, ունի հավաքական, համալիր բնույթ: Մինչդեռ պետական մարմնի գործառույթը նեղ է, մասնակի, պայմանավորված է միայն այդ մարմնի առջև դրված խնդիրներով: Միևնույն գործառույթը կարող է կենսագործվել պետության բոլոր մարմինների հավաքական գործունեությամբ:

5. **Պետության գործառույթը պետք է տարբերել նաև պետության գործունեության տեսակներից**: Պետության գործունեության տեսակներ են իրավաստեղծ, իրավակիրառ, իրավապահպան գործունեությունը: Մեկ գործառույթը կարող է իրականացվել պետության բոլոր գործունեության տեսակներով: Օրինակ՝ երկրի պաշտպանությունը ոչ միայն պատերազմն է ագրեսորի հետ, այլ նաև մինչ այդ պետության իրականացրած իրավաստեղծ, իրավակիրառ և իրավապահպան գործունեությունը, որն ուղղված է բանակի կազմավորմանը, երկրի պաշտպանունակության ամրապնդմանը:

6. **Պետության գործառույթների շրջանակը քարացած չէ**: Ցանկացած պետություն պետք է գործի մշտապես: Պետության անգործությունը հավասարազոր է և՛ պետության, և՛ հասարակության կործանմանը: Հետևաբար, պետությունը իրականացնում է բազմաթիվ գործառույթներ: Դրանց առաջացումը, փոփոխումը կախված է զարգացման ընթացքում տվյալ պահին հասարակության առջև կանգնած խնդիրներից: Դարաշրջանային և այլ փոփոխությունները, պետության խնդիրների և առաջնությունների վերակառուցումն անխուսափելիորեն հանգեցնում են և՛ գործառույթների փոփոխության և գործառույթների բովանդակության վերակառուցման: Գործառույթների մի մասը անհետանում է, իսկ մյուս մասը առաջանում: Սակայն կան գործառույթներ, որոնք մշտական են: Օրինակ՝ իրավական, ներառյալ ի-

ռավակարգի պահպանությունը՝ չնայած դրա բովանդակության փոփոխությանը բնորոշ է բոլոր դարաշրջանների պետություններին:

7. **Պետության գործառույթներն իրականացվում են որոշակի ձևերով ու մեթոդներով:**

§ 2. Պետության գործառույթների դասակարգումը

Տեսական գրականության մեջ գոյություն ունեն պետության գործառույթների զանազան չափանիշներով դասակարգման մի շարք տարբերակներ: Դրանցից առավել հիմնավոր են հետևյալ չափանիշները՝

- ըստ ուղղվածության (ոլորտների),
- ըստ շարունակականության,
- ըստ պետության տարածքի ընդգրկման,
- ըստ պետության էության հետ կապի:[1]

Ըստ ուղղվածության կամ ոլորտների պետության գործառույթները լինում են ներքին և արտաքին: Ներքին գործառույթները նպատակամղված են երկրի ներքին խնդիրների լուծմանը, իսկ արտաքինները՝ այլ պետությունների հետ որոշակի հարաբերությունների հաստատմանը, դրանց զարգացմանը, երկրի պաշտպանությանը: Ներքին և արտաքին գործառույթները սերտորեն կապված են միմյանց հետ, փոխադարձաբար լրացնում են իրար:

Ըստ շարունակականության չափանիշի պետության գործառույթները բաժանվում են մշտականի և ժամանակավորի: Մշտական

---

[1] Բացի այս երկու դասակարգումներից պետության գործառույթները դասակարգվում են նաև ըստ սոցիալական նշանակության (հիմնական և ոչ հիմնական): Այս դասակարգումը լուրջ քննադատության է ենթարկվում այն պատճառով, որ չի համապատասխանում պետության գործառույթի ավանդական բնորոշմանը: Այսպես ստացվում է, որ «պետության հիմնական գործառույթները նրա գործունեության հիմնական ուղղություններն են», իսկ «ոչ հիմնականները՝ հիմնական ուղղությունները»: Տրամաբանական հակասությունն ակնհայտ է (տես՝ **Протисов В.М.** Теория права и государства. Проблемы теории права и государства. 2-е изд. перероб. и доп., М., юрайт-М, 2007. էջ 87: Գործառույթների մյուս դասակարգումը կատարվում է ըստ գործառույթների իրականացման իրավական ձևերի: Այդ ձևերն են իրավաստեղծ, գործադիր-կարգադրիչ և իրավապահպան ձևերը՝ կառուցված իշխանությունների տարանջատման սկզբունքի վրա: Սակայն այս դասակարգման ընդունման դեպքում իր տեսական իմաստն է կորցնում «գործառույթների իրականացման իրավական ձև» հասկացությունը: Բացի այդ ինչպես կտեսնենք ստորև, պետության գործառույթների իրականացման իրավական ձևերը չեն սահմանափակվում այդ երեքով:

գործառույթներն իրականացվում են պետության զարգացման բոլոր ժամանակներում անընդմեջ: Օրինակ երկրի պաշտպանության գործառույթը մշտական է: Ժամանակավոր գործառույթներն իրականացվում են ժամանակավոր խնդիրների լուծման համար և շատ դեպքերում ունեն արտակարգ բնույթ: Օրինակ՝ ՀՀ հռչակումով և անկախության ձեռք բերմամբ մեր պետության առջև կանգնած գործառույթներից մեկը դարձավ շուկայական տնտեսության հիմնադրումը և սեփականության բազմազանության հաստատումը, քանի որ խորհրդային հասարակությունում արտադրության միջոցները հանրային սեփականություն էին: Սոցիալիստական հանրային սեփականության ապապետականացման և մասնավորեցման գործընթացների ավարտից հետո այդ գործառույթը վերացավ և Հայաստանում այժմ պետությունը կատարում է միայն տնտեսական գործառույթ:

Ըստ պետության տարածքում գործողության կարելի է առանձնացնել համապետական (համազգային) և լոկալ (տեղական) գործառույթները: Համապետական են այն գործառույթները, որոնք իրականացվում են պետության ողջ տարածքում և համատարած են: Լոկալ գործառույթները սահմանափակվում են պետության տարածքի մի մասով: Օրինակ՝ ՀՀ իրականացնում է 1988 թ. երկրաշարժի հետևանքների վերացման գործառույթ աղետի գոտում:

Ըստ պետության էության հետ կապի պետության գործառույթները դասակարգվում են համասոցիալականի և դասակարգայինի: Այս բաժանումը պայմանավորված է պետության էությամբ և սոցիալական առաքելությամբ: Պետության գործառույթները մատնանշում են պետության դասակարգային կամ համասոցիալական էությունը: Օրինակ, իրավակարգի պահպանությունը և հանցավորության դեմ պայքարը բխում է ամբողջ հասարակության շահերից: Իսկ հնագույն պետություններում ստրուկների ճնշումը և շահագործումը ուներ նեղ դասակարգային ուղղվածություն:

§ 3. Պետության ներքին և արտաքին գործառույթները

Պետության ներքին գործառույթները նրա գործունեության հիմնական ուղղություններն են, որոնք ուղղված են երկրի տարածքում հասարակության պետական կառավարման նպատակների ու խնդիրների իրագործմանը: Պետության ներքին գործառույթները բաժանվում են տեսակների ըստ հասարակական հարաբերությունների ո-

լորտի, որոնք համարվում են պետության գործունեության օբյեկտ:[1] Այս չափանիշով կարելի է առանձնացնել պետության ներքին հետևյալ գործառույթները.

ա) տնտեսական,
բ) սոցիալական,
գ) ֆինանսական վերահսկողության և հարկման,
դ) մշակութային,
ե) իրավական,
զ) էկոլոգիական:

Պետության արտաքին գործառույթները նրա գործունեության հիմնական ուղղություններ են, որոնք ուղղված են երկրի արտաքին խնդիրների և շահերի լուծմանը: Պետության արտաքին գործառույթները ևս բաժանվում են տեսակների ըստ արտաքին հասարակական հարաբերությունների ոլորտի (գործունեության օբյեկտի):[2] Պետության արտաքին գործառույթներից են՝

---

[1] Պետության ներքին գործառույթների կոնկրետ տեսակների հարցում պետականագիտության մեջ չկա միասնական մոտեցում. իրավիճակը կարելի է բնութագրել հետևյալ կերպ՝ ինչքան հեղինակ, այնքան տեսակետ: Եթե ամփոփենք այդ տեսակները կարելի արձանագրել գործառույթների տեսակների հետևյալ շրջանակը. քաղաքական (ներառյալ ժողովրդաիշխանության ապահովման), տնտեսական, ֆինանսական վերահսկողության և հարկման, սոցիալական, էկոլոգիական, մշակութային (հոգևոր, գաղափարախոսական), տեղեկատվական, իրավապահպան, իրավապաշտպան և այլն: Սակայն գործառույթների շրջանակը ընդլայնող մոտեցումը կարելի է համարել ոչ հիմնավոր և անտրամաբանական: Այսպես, կան հեղինակներ, ովքեր առանձնացնում են մարդու իրավունքների և ազատությունների պահպանության, իրավապահպան և իրավապաշտպան գործառույթները: Այնինչ դրանք բոլորը կարելի է միավորել մեկ գործառույթում՝ իրավական:

[2] Ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործառույթների դասակարգման հարցում պետականագիտության մեջ չկա միասնական մոտեցում: Հեղինակների մի մասը կողմնակից է երկգործառութային մոտեցմանը՝ ա) երկրի պաշտպանություն, բ) համագործակցությունն այլ պետությունների հետ տնտեսական, քաղաքական, գիտատեխնիկական, մշակութային, բնապահպանական և այլ ոլորտներում: Տեսաբանների մյուս մասը արտաքին գործառույթները տրոհում է առանձին մանր տեսակների ըստ գործառույթի արտաքին օբյեկտի: Օրինակ՝ արտաքին քաղաքական, տնտեսական, էկոլոգիական, մշակութային, տեղեկատվական, միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության, համաշխարհային իրավակարգի պահպանության, երկրի պաշտպանության, համամիասնական (գլոբալ) հիմնախնդիրների լուծմանը մասնակցելու: Համաձայն չլինելով պետության արտաքին գործառույթների անվերջ մասնատմանը, այնուհանդերձ ուսումնական նպատակներով այստեղ դրանք ներկայացնում ենք լայն շրջանակով:

ա) երկրի պաշտպանության,

բ) դիվանագիտական (քաղաքական),

գ) միջազգային անվտանգության և խաղաղության ապահովման,

դ) միջպետական տնտեսական և առևտրաֆինանսական համագործակցության,

ե) միջպետական մշակութային, գիտատեխնիկական և տեղեկատվական համագործակցության,

զ) միջպետական էկոլոգիական համագործակցության,

է) համաշխարհային իրավակարգի պաշտպանության:

§ 4. Պետության ներքին գործառույթների բովանդակությունը

⊙ Տնտեսական գործառույթ

> տնտեսական հարաբերությունների, ներառյալ արտաքին, կարգավորում.

> պետական բյուջեի ձևավորում և դրա կատարման վրա հսկողություն.

> երկրի տնտեսական զարգացման ընդհանուր ծրագրերի մշակում.

> տնտեսության ամենից առաջնային ճյուղերի զարգացման խթանում.

> ձեռնարկատիրական գործունեության համար նպաստավոր պայմանների ստեղծում.

> արտադրանքի որակի նկատմամբ հսկողություն.

> և այլն:

⊙ Ֆինանսական վերահսկողության և հարկման գործառույթ

> ֆինանսատնտեսական գործունեության համակարգի կազմակերպում և վերահսկողություն.

> հարկային համակարգի կազմակերպում և հարկահավաքություն.

> անհատների և կազմակերպությունների եկամուտների օրինականության նկատմամբ վերահսկողություն:

⊙ Սոցիալական գործառույթ

> մարդու արժանապատիվ կյանքի համար պայմանների ստեղծում և ապահովում.

> հասարակության կարիքավոր անդամներին սոցիալական օգնության մատուցում.

> առողջապահության, սպասարկման, կրթության, հանգստի, հաղորդակցության, բնակարանային

շինարարության ոլորտներում համահասարակական ծրագրերի մշակում և կենսագործում:

⊙ Մշակութային (հոգևոր, գաղափարախոսական) գործառույթ

> ազգի համախմբում, ազգային ինքնագիտակցության զարգացում.

> ազգային փոքրամասնությունների զարգացման ապահովում.

> կրթության համընդհանուր և անընդհատ համակարգի կազմակերպում.

> գիտության և մշակույթի զարգացման օժանդակում.

> ժողովրդի մշակութային ժառանգության պահպանություն:

⊙ Իրավական գործառույթ

> իրավական կարգավորման նորմատիվային հիմքի (օրենսդրության) ստեղծում.

> մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների իրավական ամրագրում, ապահովում,

պահպանում, պաշտպանություն.

> հասարակական հարաբերությունների բոլոր մասնակիցների կողմից իրավունքի նորմերի լրիվ և ճշգրիտ

իրականացման ապահովում.

> իրավախախտների հայտնաբերում և պատասխանատվության ենթարկում:

⊙ Բնապահպանական գործառույթ

> մարդու կյանքի համար բնական, էկոլոգիապես անվտանգ պայմանների ապահովում.

> շրջակա միջավայրի պահպանություն, վերականգնում և բարելավում.

> բնական ռեսուրսների պահպանության և ռացիոնալ օգտագործման ապահովում.

> ժողովրդի գենոֆոնդի պահպանում:

§ 5. Պետության արտաքին գործառույթների բովանդակությունը

⊙ Երկրի պաշտպանության գործառույթ

> պաշտպանել երկրի անկախությունը, ինքնիշխանությունը և տարածքային ամբողջականությունը՝

դիվանագիտական, տնտեսական և հատկապես ռազմական (զինված ուժեր) միջոցառումների

իրականացմամբ:[1]

⊙ Դիվանագիտական (քաղաքական) գործառույթ

> հաստատել և պահպանել դիվանագիտական հարաբերություններ այլ պետությունների և միջազգային

կազմակերպությունների հետ համաձայն միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի:

⊙ Միջազգային խաղաղության և անվտանգության ապահովման գործառույթ

> քաղաքական և ռազմական փոխզիջումների և հավասարակշռության հաստատումը այլ պետությունների

հետ համագործակցելով.

> համաշխարհային, լոկալ և քաղաքակրթական պատերազմների կանխումը:

⊙ Միջպետական տնտեսական և առևտրաֆինանսական համագործակցության գործառույթ

> առևտրաֆինանսական հարաբերությունների հաստատումը այլ պետությունների հետ.

> գործարար տնտեսական համագործակցությունը.

> ինտեգրումը համաշխարհային տնտեսությանը:

---

[1] Որոշ հեղինակներ արտաքին գործառույթների համակարգում առանձնացնում են ուրիշի տարածքների նվաճման և ազդեցության գոտիների ընդլայնման գործառույթը: Պատմաբանների հաշվարկով պետական հասարակության գոյության մոտ 5000 տարվա ընթացքում մարդկությունը 4700 տարի անընդհատ պատերազմել է: Ճիշտ է արդի ժամանակաշրջանում ուղղակի ագրեսիան արգելված է, սակայն չի վերացել ուրիշների բնական ռեսուրսների նկատմամբ վերահսկողությունը, տնտեսական շահագործումը:

⊙ **Միջպետական մշակութային, գիտատեխնիկական և տեղեկատվական համագործակցության գործառույթ**

> այլ պետությունների հետ մշակութային, գիտական կապերի հաստատումը և զարգացումը.

> մշակութային արժեքների պահպանության համատեղ միջոցառումների իրականացումը.

> այլ պետություններում գտնվող հայ պատմամշակութային արժեքների պահպանությանը նպաստելը.

> հայկական սփյուռքի հետ կապերի ամրապնդմանը, հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանը

նպաստելը.

> մասնակցությունը համաշխարհային տեղեկատվական տարածությանը:

⊙ **Միջպետական էկոլոգիական համագործակցության գործառույթ**

> երկրագնդի էկոլոգիական անվտանգության և մաքրության ապահովումը:

⊙ **Համաշխարհային իրավակարգի պահպանության գործառույթ**

> մասնակցությունը միջպետական և ազգամիջյան բախումների կարգավորմանը.

> պայքարը միջազգային հանցավորության դեմ.

> զանգվածային ոչնչացման զենքի տարածման դեմ պայքարը:

§ 6. Պետության գործառույթների իրականացման ձևերը

Պետության յուրաքանչյուր գործառույթ իրենից ներկայացնում է որոշակի ոլորտում պետական իշխանության (կառավարման) իրականացման բովանդակության, ձևերի և մեթոդների միասնություն: Պետության գործառույթների իրականացումը տեղի է ունենում նրա գործունեության ընթացքում և արտահայտվում է որոշակի ձևերով: *Պետության գործառույթների իրականացման ձևերը պետության մարմինների միասեռ գործունեությունն է, որի միջոցով իրականացվում են պետության գործառույթները*: Պետության գործառույթներն իրականացվում են **իրավական և կազմակերպական ձևերով**:

Պետության գործառույթների իրականացման իրավական ձևը ընթանում է իրավաբանորեն նշանակալի գործողությունների կատարմամբ և հանգեցնում է իրավական հետևանքների: Ավանդաբար

ընդունված է առանձնացնել իրավական երեք հիմնական ձևեր՝ *իրավաստեղծ, իրավակիրառ, իրավապահպան: Սակայն վերջին տարիներին տեսաբաններն առանձնացնում են մեկնաբանողական-իրավական, հիմնադիր և հսկիչ-վերահսկողական ձևերը:*

Իրավաստեղծ գործունեությունը պետության իրավասու մարմինների և պաշտոնատար անձանց գործունեությունն է, որն արտահայտվում է իրավունքի նորմերի պաշտոնական սահմանմամբ, սանկցավորմամբ, փոփոխմամբ, վերացմամբ և ավարտվում է նորմատիվ իրավական ակտի կամ իրավունքի այլ աղբյուրի (դատական նախադեպ և այլն) հրապարակմամբ: Օրինակ, երկրի պաշտպանությունը ապահովվում է նաև օրենքներ ընդունելով:

Իրավակիրառ գործունեությունը պետական մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեությունն է ուղղված անհատական իրավական գործերի քննությանը և լուծմանը, օրենքների կիրառմանը, որն ավարտվում է անհատական իրավական ակտի ընդունմամբ:

Իրավապահպան գործունեությունն արտահայտվում է իրավական գործողությունների կատարմամբ, որոնք ուղղված են իրավական նորմերով կարգավորված հասարակական հարաբերությունների պահպանությանը, անհատին իրավախախտումներից պահպանելուն, մեղավորներին պատասխանատվության ենթարկելուն: Պետության բոլոր մարմինները, ըստ էության, իրականացնում են իրավապահպան գործունեություն, սակայն որոշ մարմինների համար այդ գործունեությունը հիմնական է: Օրինակ, ազգային անվտանգության, դատախազության, ոստիկանության և այլ մարմինները:

Մեկնաբանողական-իրավական գործունեությունը իրավասու պետական մարմինների և պաշտոնատար անձնանց գործունեությունն է ուղղված իրավունքի նորմերի պաշտոնական մեկնաբանմանը, որն ավարտվում է մեկնաբանող ակտի ընդունմամբ:

Հսկիչ-վերահսկիչ իրավական գործունեությունը հանգում է իրավական նորմերի կենսագործման օրինականության ստուգմանը համապատասխան իրավական ձևերով: Վերահսկիչ գործունեություն իրականացնում են և՝ օրենսդիր, և՝ գործադիր, և՝ դատական մարմինները՝ իրենց իրավասությանը բնորոշ մեթոդներով ու եղանակներով: Օրինակ Ազգային ժողովը վերահսկում է բյուջեի կատարման գործընթացը:

Հիմնադիր իրավական գործունեությունը նպատակամղված է պետության մարմինների, դրանց ստորաբաժանումների (պաշտոնատար անձնանց) կազմավորմանը (նշանակմանը), վերակառուցմանը, ստեղծմանը և վերացմանը: Հիմնադիր գործունեությունն իրականացվում է օրենքով սահմանված կարգով, դրա համար լիազորված մարմինների կողմից և նպատակամղված է պետական իշխանության մարմինների կառուցվածքային, կադրային-ծառայողական ապահովմանը: Հիմնադիր գործունեության մեջ վճռական դեր ունեն ընտրական գործընթացները:

Պետության գործառույթների իրականացման կազմակերպական ձևերն ունեն կառավարչական-փաստական բնույթ, զրկված են իրավական բովանդակությունից, չեն պահանջում խստագույն իրավական ձևակերպում, կապված չեն իրավականորեն նշանակալի գործողությունների հետ, չեն առաջացնում իրավական հետևանքներ: Սակայն դա չի նշանակում, որ գործունեության այս ձևերը ընդհանրապես չեն կարգավորված իրավունքով: Ամեն մի գործունեություն ի վերջո ենթաօրենսդրական է, իրականացվում է գործող օրենսդրության շրջանակներում, պետք է համապատասխանի պետական մարմինների իրավասությանը: Այս ձևերում իրավունքը կարգավորում է միայն դրանց ընդհանուր հիմունքները: Որպես պետության գործառույթների իրականացման կազմակերպական ձևեր առանձնացնում են *կազմակերպական-կանոնակարգող, կազմակերպական-տնտեսական, կազմակերպական-գաղափարախոսական ձևերը*:

Պետության գործառույթների իրականացման կազմակերպական-կանոնակարգող ձևը ներառում է պետական կառավարման գիտական խորհուրդների մշակումը, փաստաթղթերի նախագծերի պատրաստումը, ընտրությունների կազմակերպումը, պետական կառավարման կադրային ապահովումը ու կազմակերպումը, ինչպես նաև պետության մարմինների գործունեության ապահովման այլ ընթացիկ աշխատանքները:

Պետության գործառույթների իրականացման կազմակերպական-տնտեսական ձևը ներառում է հաշվապահական հաշվառման, վիճակագրության, մատակարարման կազմակերպումը, ինչպես նաև այլ օպերատիվ-տեխնիկական և տնտեսական գործունեության ձևերը:

Պետության գործառույթների իրականացման կազմակերպական-գաղափարախոսական ձևը ներառում է պետական քաղաքակա-

նության և նորմատիվ ակտերի վերաբերյալ բնակչությանը տեղեկացնելը, դրանց բացատրումը, ինչպես նաև այլ քարոզչական, կրթական և դաստիարակչական գործունեությունը, որը նպատակամղված է պետության գործառույթների գաղափարախոսական-գիտակցական ապահովմանը, հասարակական կարծիքի և համոզմունքի ձևավորմանը: Օրինակ՝ երկրի պաշտպանությունն իրականացվում է նաև դաստիարակության, հասարակական կարծիքի ձևավորման միջոցով:

§ 7. Պետության գործառույթների իրականացման մեթոդները

Պետության գործառույթների իրականացման մեթոդներն այն եղանակները, հնարքները և միջոցներն են, որոնք կիրառվում են պետության գործառույթներն իրականացնելիս: Պետության գործառույթներից գրեթե ամեն մեկն իրականացվում է և՛ իրավական, և՛ ոչ իրավական ձևերով: Գործառույթների իրականացման յուրաքանչյուր ձևին համապատասխանում են իրեն բնորոշ մեթոդները:

Գործառույթների իրականացման իրավական մեթոդները այն միջոցները, հնարքները, եղանակներն են, որոնց օգնությամբ իրականացվում են գործառույթների իրավական ձևերը: Այդպիսիք են օրինականությունը, տեղեկությավորումը, համոզումը, խթանումը, խորհրդատվությունը, անմիջական կառավարումը, օրինական հարկադրանքը:

Օրինականությունը հասարակության կառավարման եղանակ է օրենքի միջոցով և օրենքի շրջանակներում: Օրինակ, բնության պահպանության գործառույթն իրականացնելիս պետությունը ընդունում է բնապահպանական օրենքներ և կիրառում դրանք:

Տեղեկությավորումը պետության քաղաքականության, պետության ընդունած ընդհանուր և անհատական որոշումների վերաբերյալ հանրությանը և պատշաճ սուբյեկտներին տեղեկացնելն է՝ հասարակական կարծիքի ձևավորման համար:

Համոզումը գաղափարադաստիարակչական միջոցներով որոշակի գործունեության կամ գործողության նպատակահարմարության և անհրաժեշտության բացատրումն է՝ բնակչության գաղափարական մշակման, նրա մոտ համոզմունքի ձևավորման համար:

Խրախուսումը անհատներին և կազմակերպություններին իրավունքներով ու արտոնություններով օժտելն է՝ նրանց գործունեութ-

յունը խթանելու համար: Օրինակ, զինվորական ծառայություն անցած դիմորդին արտոնություններ տրամադրելը:

Խորհրդատվությունը սուբյեկտների ազատ հնարավորությունների պայմաններում վարքագծի ցանկալի տարբերակի ընտրության կողմնորոշելն է:

Անմիջական կառավարումը պետության մարմինների կողմից իրենց իրավասությանը համապատասխան գործադիր կարգադրիչ գործունեության իրականացումն է:

Օրինական հարկադրանքը վարքագծի ընտրության ազատության օրինական սահմանափակումն է ուժային ճնշման ճանապարհով, ինչպես նաև իրավական պատասխանատվությունը:

Պետության գործառույթների իրականացման կազմակերպական մեթոդներն այն եղանակները, միջոցները, հնարքներն են, որոնց օգնությամբ պետությունը ապահովում է իր գործառույթների իրականացումը. Սրանք մեծամասամբ ունեն սպասարկող նշանակություն: Օրինակ՝ սոցիոլոգիական հետազոտությունը (դիտարկում, անկետավորում, հարցում), ծրագրավորումը, հիմնախնդիրների հետազոտումը, կանխատեսումը, ընթացիկ վերլուծությունը, արդյունքների ամփոփումը, ինչպես նաև գաղափարադաստիարակչական աշխատանքի մեթոդները:

Պետության գործառույթների իրականացման ձևերում կան մեթոդներ, որոնք իրենց բնույթով իրավական են (ամրագրված են օրենսդրությամբ), սակայն ունեն զուտ կազմակերպական նշանակություն: Օրինակ, կատարման կազմակերպման և ստուգման եղանակները, տեղեկատվական ապահովման միջոցները, կադրերի ընտրությունը և նշանակումը, որակավորման բարձրացումը և այլն:

§ 8. Պետության գործառույթների դինամիկան, փոխպայմանավորվածությունը, փոխգործողությունը

Պետության գործառույթները ոչ թե քարացած այլ դինամիկ, շարժուն երևույթներ են. Գործառույթների դինամիկան դրսևորվում է երկակիորեն: *Առաջին,* պետության պատմական զարգացման ընթացքում անընդհատ փոխվում են գործառույթների շրջանակը, գործառույթների մի մասը վերանում է, առաջանում են նոր գործառույթներ պայմանավորված դարաշրջանային, հասարակական զարգացման պահանջմունքներով ու խնդիրներով: Օրինակ, 20-րդ դարում պե-

տությունները սկսեցին կատարել սոցիալական և էկոլոգիական գործառույթներ, որոնք մինչ այդ գոյություն չունեին: Ճիշտ է սոցիալական և էկոլոգիական միջոցառումներ իրականացվել են գրեթե բոլոր ժամանակներում, սակայն մինչ 20-րդ դարը դրանք միայն դրվագներ, եզակի ակտեր էին, չունեին մշտական, կրկնվող, պարբերական և համակարգված գործունեության նշանակություն: *Երկրորդ,* պետության պատմական զարգացման ընթացքում փոխվում և զարգանում են նաև գործառույթների բովանդակությունը, իրականացման ձևերն ու մեթոդները, գործառույթների իրականացման ինտենսիվությունը: Օրինակ, տնտեսական գործառույթը, որն իրականացվել է պետության պատմության ողջ ընթացքում, իր բովանդակության և իրականացման ձևերի ու մեթոդների տեսանկյունից անընդհատ փոփոխություններ է կրել: Այսպես, քաղաքակրթության պատմության նոր և նորագույն շրջանում պետության տնտեսական գործառույթը կառուցվել է երեք մոդելների վրա՝ տնտեսության չմիջամտելու (գիշերային պահակի պետություն), կարգավորվող շուկայական տնտեսության, որոշ երկրներում պլանային տնտեսության: Արդի շրջանում այդ գործառույթի իրականացման մոդելը խառը տնտեսությունն է՝ պետության ուժեղ կարգավորիչ դերով, որի ինտենսիվությունն անընդհատ աճում է:

Պետության գործառույթները պայմանավորված են պետության էությամբ. Պետության էությունը մեծապես ազդում է պետության նպատակների ու խնդիրների վրա, իսկ դրանք, իրենց հերթին, պետության գործառույթների շրջանակի ու բովանդակության վրա: Պետության գործառույթները կարելի է դասակարգել պետության էության, նրանց դասակարգային կամ համահասարակական ուղղվածության չափանիշով: Սակայն դա չի նշանակում, որ միևնույն պահին պետությունն իրականացնում է միայն դասակարգային կամ զուտ սոցիալական գործառույթներ: Պետության գործառույթների շրջանակում երկուսն էլ գոյատևում են: Օրինաչափությունն այն է, որ հասարակության զարգացմանը, ժողովրդավարացմանը զուգընթաց պետության էության մեջ համասոցիալական ուղղվածության գերակշռության պայմաններում պակասում, քչանում են պետության նեղ դասակարգային գործառույթները և առաջընթաց են ապրում ու գերակշռում համասոցիալական ուղղվածություն ունեցող գործառույթները կամ մշտական գործառույթների մեջ գերակայում է համասոցիալա-

կան ուղղվածությունը: Այսպես, օրինակ, իրավական գործառույթը բնորոշ է բոլոր պետություններին: Սակայն միայն արդի պետություններում է, որ այդ գործառույթի բովանդակության մեջ գերակա ուղղություն է մարդու իրավունքների ապահովումը, պահպանությունը, երաշխավորումը, պաշտպանությունը:

Պետության գործառույթներից յուրաքանչյուրն աչքի է ընկնում ինքնուրույնությամբ: Սակայն այդ ինքնուրույնությունը հարաբերական է, քանի որ գործառույթներից ամեն մեկը նախադրյալային, սպասարկող, երաշխավորող նշանակություն ունի մյուսի համար: Ակնհայտ է, որ տնտեսական գործառույթի կազմակերպված, խելացի իրականացումը, ճիշտ հարկային քաղաքականությունը նախադրյալ են սոցիալական գործառույթի բովանդակության իրականացման համար: Իրավական գործառույթի լիարժեք իրականացումը, պատշաճ օրենսդրությունը և օրինականության հաստատումը պայմաններ են ստեղծում մնացած բոլոր գործառույթների պատշաճ և լիարժեք իրականացման համար:

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

© ԲԱՑԱՏՐԵ՛Ք ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԸ

Գործառույթ, կառավարչական գործողություն, գործունեության օբյեկտ, արժանապատիվ կյանք, պետական բյուջե, մշակութային ժառանգություն, իրավախախտ, գենոֆոնդ, քաղաքակրթական պատերազմ, լոկալ, իրավաստեղծագործություն, համոզմունք և համոզում, դինամիկա:

ՊԱՏԱՍԽԱՆԵ՛Ք ՀԱՐՑԵՐԻՆ

1. Բնորոշե՛ք պետության գործառույթները:
2. Ո՞րն է պետության գործառույթների և խնդիրների կապը:
3. Ի՞նչ են պետության գործառույթի օբյեկտը և բովանդակությունը:
4. Ինչո՞վ են տարբերվում պետության գործառույթները պետական մարմնի գործառույթից:
5. Ո՞րն է պետության գործառույթի և պետության գործունեության տեսակի տարբերությունը:

6. Ի՞նչ հիմքերով են դասակարգվում պետության գործառույթները:
7. Որո՞նք են պետության գործառույթներն ըստ ուղղվածության (ոլորտների):
8. Որո՞նք են պետության գործառույթներն ըստ շարունակականության:
9. Որո՞նք են պետության գործառույթներն ըստ պետության տարածքի ընդգրկման:
10. Ի՞նչ հիմքով են պետության գործառույթները դասակարգվում դասակարգայինի և համասոցիալականի:
11. Բնորոշե՛ք պետության ներքին և արտաքին գործառույթներ հասկացությունները:
12. Թվարկե՛ք պետության ներքին գործառույթները:
13. Թվարկե՛ք պետության արտաքին գործառույթները:
14. Նկարագրե՛ք պետության տնտեսական գործառույթի բովանդակությունը:
15. Նկարագրե՛ք պետության ֆինանսական վերահսկողության գործառույթի բովանդակությունը:
16. Նկարագրե՛ք պետության սոցիալական գործառույթի բովանդակությունը:
17. Նկարագրե՛ք պետության մշակութային գործառույթի բովանդակությունը:
18. Նկարագրե՛ք պետության իրավական գործառույթի բովանդակությունը:
19. Նկարագրե՛ք պետության բնապահպանական գործառույթի բովանդակությունը:
20. Նկարագրե՛ք պետության երկրի պաշտպանության գործառույթի բովանդակությունը:
21. Նկարագրե՛ք պետության դիվանագիտական գործառույթի բովանդակությունը:
22. Նկարագրե՛ք պետության միջազգային խաղաղության և անվտանգության ապահովման գործառույթի բովանդակությունը:
23. Նկարագրե՛ք պետության միջպետական տնտեսական և առևտրաֆինանսական համագործակցության գործառույթի բովանդակությունը:

24. Նկարագրե՛ք պետության միջպետական մշակութային, գիտա-տեխնիկական և տեղեկատվական համագործակցության գործառույթի բովանդակությունը:
25. Նկարագրե՛ք պետության միջպետական էկոլոգիական համագործակցության գործառույթի բովանդակությունը:
26. Նկարագրե՛ք պետության համաշխարհային իրավակարգի պահպանության գործառույթի բովանդակությունը:
27. Ի՞նչ են պետության գործառույթների իրականացման ձևերը և որո՞նք են դրանք:
28. Ո՞րն է պետության գործառույթների իրականացման իրավական ձևի առանձնահատկությունը:
29. Բնութագրե՛ք պետության գործառույթների իրականացման իրավաստեղծ, իրավակիրառ, իրավապահպան, մեկնաբանողական, հսկիչ-վերահսկիչ և հիմնադիր իրավական ձևերը:
30. Ինչու՞մ է կայանում պետության գործառույթների իրականացման կազմակերպական ձևերի առանձնահատկությունը և որո՞նք են դրանք:
31. Ի՞նչ են պետության գործառույթների իրականացման մեթոդները և որո՞նք են դրանք:
32. Թվարկե՛ք և բնութագրե՛ք պետության գործառույթների իրականացման իրավական մեթոդները:
33. Թվարկե՛ք և բնութագրե՛ք պետության գործառույթների իրականացման կազմակերպական մեթոդները:
34. Ինչպիսին է գործառույթների պատմական զարգացման դինամիկան:
35. Ինչու՞մ է արտահայտվում պետության գործառույթների և պետության էության միջև կապը:
36. Ի՞նչ կապի մեջ են գտնվում պետության գործառույթները:

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

պետության էությունը և սոցիալական նշանակությունն արտահայտող գործունեության հիմնական ուղղություններ են, որոնք ուղղված են հասարակության պետական կառավարման խնդիրների ու նպատակների իրագործմանը:

Տնտեսական գործառույթ

- տնտեսական ոլորտի կարգավորում,
- պետական բյուջեի ձևավորում և կատարման հսկողություն,
- երկրի տնտեսական զարգացման ընդհանուր ծրագրերի մշակում,
- տնտեսության առաջնային ճյուղերի զարգացման խթանում,
- ձեռնարկատիրական գործունեության համար նպաստավոր պայմանների ստեղծում,
- արտադրանքի որակի նկատմամբ վերահսկողություն,
- և այլն:

Ֆինանսական վերահսկողության և հարկման գործառույթ

- ֆինանսատնտեսական համակարգի կազմակերպում և վերահսկողություն.
- հարկային համակարգի կազմակերպում և հարկահավաքություն.
- անհատների և կազմակերպությունների եկամուտների օրինականության նկատմամբ վերահսկողություն.

Սոցիալական գործառույթ

- մարդու արժանապատիվ կյանքի համար պայմանների ստեղծում և ապահովում.
- հասարակության կարիքավոր անդամներին սոցիալական օգնության մատուցում.
- առողջապահության, սպասարկման, կրթության, հանգստի, հաղորդակցության, բնակարանային շինարարության ոլորտներում համահասարակական ծրագրերի մշակում և կենսագործում:

Մշակութային (հոգևոր, գաղափարախոսական) գործառույթ

- ազգի համախմբում.
- ազգային ինքնագիտակցության և ազգային փոքրամասնությունների զարգացման ապահովում.
- կրթության համընդհանուր և անընդհատ համակարգի կազմակերպում.
- գիտության և մշակույթի զարգացման օժանդակում.
- ժողովրդի մշակութային ժառանգության պահպանություն:

Իրավական գործառույթ

- հասարակական կյանքի իրավական կարգավորման նորմատիվային հիմքի (օրենսդրության) ստեղծում.
- մարդու և քաղաքացու իրավունքների իրավական ամրագրում, ապահովում, պահպանում, պաշտպանում.
- հասարակական հարաբերությունների բոլոր մասնակիցների կողմից իրավունքի նորմերի լրիվ և ճշգրիտ իրականացման ապահովում.
- իրավախախտների բացահայտում և պատասխանատվության ենթարկում:

Բնապահպանական գործառույթ

- մարդու կյանքի համար բնական և անվտանգ պայմանների ապահովում.
- շրջակա միջավայրի պահպանության, վերականգնում և բարելավում.
- բնական ռեսուրսների պահպանության և ռացիոնալ օգտագործման ապահովում.
- ժողովրդի գենոֆոնդի պահպանում:

Երկրի պաշտպանության գործառույթ

Պաշտպանել երկրի անկախությունը, ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունը դիվանագիտական, տնտեսական, ռազմական միջոցառումների իրականացմամբ:

Միջազգային խաղաղության և անվտանգության ապահովման գործառույթ

- քաղաքական ու ռազմական փոխզիջումների և հավասարակշռության հաստատումը այլ պետությունների հետ համագործակցելով:
- համաշխարհային, լոկալ և քաղաքակրթական պատերազմների կանխումը:

Միջպետական տնտեսական, առևտրաֆինանսական համագործակցության գործառույթ

- առևտրաֆինանսական հարաբերությունների հաստատումը այլ պետությունների հետ:
- գործարար տնտեսական համագործակցություն:
- ինտեգրումը համաշխարհային տնտեսությանը:

Միջպետական էկոլոգիական համագործակցության գործառույթ

Երկրագնդի էկոլոգիական անվտանգության և մաքրության ապահովումը:

Միջպետական գիտամշակութային, տեղեկատվական համագործակցության գործառույթ

- այլ պետությունների հետ գիտամշակութային կապերի հաստատում և զարգացում.
- մշակութային արժեքների պահպանության համատեղ միջոցառումների իրականացում.
- այլ պետություններում գտնվող հայ պատմամշակութային արժեքների պահպանությանը նպաստելը.
- հայկական սփյուռքի հետ կապերի ամրապնդմանը, հայ կրթամշակութային կյանքի զարգացմանը նպաստելը.
- մասնակցությունը համաշխարհային տեղեկատվական տարածությանը:


ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՁԵՎԵՐԸ
ԻՐԱՎԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ
Իրավաստեղծ
Իրավակիրառ
Մեկնաբանող
Հսկիչ-վերահսկիչ
Հիմնադիր
Կազմակերպական կանոնակարգող
Կազմակերպական տնտեսական
Կազմակերպական գաղափարախոսական


ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ
ԻՐԱՎԱԿԱՆ
օրինականություն
տեղեկութավորում
համոզում և խթանում
խորհրդատվություն
անմիջական կառավարում
օրինական հարկադրանք
ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ
կատարման կազմակերպում և ստուգում
տեղեկատվական ապահովման միջոցներ
կադրերի ընտրության և նշանակման
ծառայողների որակավորման բարձրացման
ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ
դիտարկում, անկետավորում հարցում
ծրագրավորում կանխատեսում
հետազոտում վերլուծություն ամփոփում
գաղափարադաստիարակչական

ԹԵՄԱ 8. ՊԵՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ

Թեմայի բովանդակությունը

❖ *Պետության ձև հասկացությունը և տարրերը: Պոլիբիոսը պետության ձևերի մասին:*

❖ *Պետության կառավարման ձև. հասկացությունը, հատկանիշները և տեսակները: Կառավարման միապետական ձևը. հասկացությունը և տեսակները: Անսահմանափակ (բացարձակ) և սահմանափակ միապետություններ: Սահմանադրական միապետության տարատեսակները. դուալիստական և խորհրդարանական:*

❖ *Կառավարման հանրապետական ձևը. հասկացությունը և տեսակները: Խորհրդարանական, նախագահական, խառը հանրապետություններ: Սոցիալիստական հանրապետություն:*

❖ *Պետական կառավարման ռեժիմ հասկացությունը: Պետական կառավարման ռեժիմի տեսակները դուալիստական միապետություն, խորհրդանական և նախագահական կառավարման ռեժիմ:*

❖ *Պետական կառուցվածքի ձև. հասկացությունը և տեսակները: Պարզ՝ միասնական (ունիտար) և բարդ՝ դաշնային (ֆեդերատիվ) կամ համադաշնային (կոնֆեդերատիվ) պետություններ:*

❖ *«Պետահիրավական ռեժիմ» հասկացության բնորոշումը: Պետահիրավական ռեժիմի կազմավորման օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները: Պետահիրավական ռեժիմի հատկանիշները: Պետահիրավական ռեժիմի դասակարգման հիմնախնդիրը: Ժողովրդավարական և հակաժողովրդավարական պետահիրավական ռեժիմների բնութագրերը:*

❖ *Պետության էության, տիպի և ձևի հարաբերակցությունը:*

§ 1. Պետության ձև. հասկացությունը և տարրերը

Պետական իշխանության մարմինների կազմակերպական ձևը, տարածքի կառուցվածքային առանձնահատկությունները, իշխանության իրականացման մեթոդները, պետության էական բնութագրերից են: Այդ բնութագրերն արահայտվում են «պետության ձև» հասկացությամբ: ***Պետության ձև ասելով հասկանում են, թե ի՞նչ սկզբունքներով և տարածականորեն ինչպե՞ս է կառուցված պետական իշխանությունը, ինչպե՞ս են ստեղծվում պետական իշխանության բարձրագույն մարմինները, ինչպե՞ս են դրանք փոխգործակցում միմյանց և բնակչության հետ, ի՞նչ մեթոդներով է իրականացվում պետական իշխանությունը:***

Պետության ձև հասկացությունն ունի գործնական քաղաքական նշանակություն: Ամեն մի պետության ձևը վերլուծելիս իրական պատկերացում ենք կազմում տվյալ պետության մեջ իշխանության կազմակերպման մասին, թե ի՞նչ մարմինների կողմից և ի՞նչ մեթոդներով է այն իրականացվում: Գործնականում պետության ձևից է կախված պետական կառավարման արդյունավետությունը, իշխանության և հասարակության կայունությունը, քանի որ պետության ձևը նաև քաղաքական ուժերի փոխզիջմամբ որոշվող խնդիր է:

Պետության ձևը, ինչպես և նրա էությունը քարացած չեն: Դրանք միշտ փոփոխվում ու զարգանում են բազմաթիվ տնտեսական, սոցիալ-քաղաքական, գաղափարական և այլ գործոնների ազդեցությամբ: Հետևաբար՝ փոխվում են նաև դրանց վերաբերյալ պատկերացումները: Պետության և իրավունքի պատմական զարգացման ընթացքում արտահայտվել են բազմաթիվ մտքեր պետության ձևի մասին: Առաջարկվել են զանազան մոտեցումներ և տարբերակներ: Օրինակ՝ հույն մտածող Պոլիբիոսը պետականության ծագման և հետագա փոփոխման պատմությունը (վկայակոչելով Պլատոնին, Արիստոտելին և մի քանի այլ նախորդների) պատկերում է որպես «բնության օրենքով» կատարվող գործընթաց: Պոլիբիոսի կարծիքով պետության ձևերը ըստ իրենց բնական ծագման և հերթափոխման կարգի, զբաղեցնում են հետևյալ տեղերը լրիվ փուլի շրջանակում՝

1) թագավորություն,
2) բռնապետություն,
3) արիստոկրատիա,
4) օլիգարխիա,
5) դեմոկրատիա,
6) օխլոկրատիա:

Ըստ Պոլիբիոսի մարդկանց որպես կենդանի էակներին հատուկ թուլությունը, բնականորեն մղում է նրանց հավաքվելու միասեռ ամբոխում: Համածայն հենց բնության կարգերի ամբոխի տիրակալ ու առաջնորդ է դառնում նա, ով մյուսներին գերազանցում է իր բնական ուժով և հոգևոր քաջությամբ: Ժամանակի ընթացքում սկզբնական առաջնորդ-ինքնակալը աննկատ և բնականորեն դառնում է *թագավոր:* Թագավորները ժամանակի ընթացքում փոխում են պարզությամբ և հպատակների մասին հոգատարությամբ լցված իրենց նախկին ապրելակերպը և սկսում չափից դուրս հակվել ավելորդություններին:

Դա առաջացրեց հպատակների նախանձը, ատելությունը, անբավարարվածությունը և կրքերը: Արդյունքում «թագավորությունը դարձավ *բռնապետություն*»: Պետության այդ վիճակը և ձևը Պոլիբիոսը բնութագրում է որպես իշխանության անկման սկիզբ: Այնուհետև ժողովրդի օգնությամբ ազնվազարմ և քաջ մարդիկ տապալում են բռնակալին և հիմնում՝ *արիստոկրատիա*: Սկզբում արիստոկրատական կառավարողները ամեն գործում ղեկավարվում են «ընդհանուր բարիքի» մասին հոգսերով, սակայն աստիճանաբար արիստոկրատիան վերածվում է *օլիգարխիայի*: Այստեղ թագավորում են իշխանության չարաշահումները, անօրինական շահասիրությունը, հարբեցողությունը և շատակերությունը: Ժողովրդի հաջող ելույթը ընդդեմ օլիգարխների հանգեցնում է *դեմոկրատիայի* հաստատմանը: Դեմոկրատական կառավարման ձևի առաջին սերունդների կյանքի օրոք պետության մեջ բարձր են գնահատվում հավասարությունը և ազատությունը: Սակայն աստիճանաբար ամբոխը, որ սովոր է սնվելու ուրիշների մատուցած ողորմության հաշվին, ընտրում է իրեն առաջնորդ՝ քաջ դեմագոգին, իսկ ինքը հեռանում է պետական գործերից: Դեմոկրատիան վերածվում է *օխլոկրատիայի*: Այդ դեպքում «պետությունը իրեն զարդարում է ազատ ժողովրդավարական կառավարման ազնվագույն անունով, իսկ իրականում դառնում է պետություններից ամենավատը՝ օխլոկրատիա»: Պետական ձևերի մեջ օխլոկրատիան ոչ միայն ամենավատն է, այլև ձևերի հերթափոխման մեջ վերջին աստիճանն է: Օխլոկրատիայի օրոք «սկսվում է ուժի գերիշխանությունը, իսկ առաջնորդի շուրջ հավաքված ամբոխը կատարում է սպանություններ, արտաքսումներ, հողի վերաձևումներ»: Այս վիճակն ավարտվում է ինքնակալ թագավորության հաստատմամբ: Պետական ձևերի հերթափոխման շրջանը, այդպիսով, փակվում է: Պետության ձևերի բնական զարգացման վերջնական կետը համընկնում է ելակետայինի հետ:

Քանի որ յուրաքանչյուր առանձին հասարակ ձևին հատուկ է անկայունությունը, Պոլիբիոսը առաջարկում է «կատարյալ ձև ճանաչել նրան, որում միավորվում են բոլոր ձևերի առանձնահատկությունները», այսինքն՝ թագավորական իշխանության , արիստոկրատիայի և դեմոկրատիայի: Այդպիսի *խառը կառավարման* գլխավոր առավելությունը Պոլիբիոսը տեսնում էր պետության պատշաճ կայունության ապահովման մեջ, որը կարող է կանխել անցումը կառավարման խե-

ղաթյուրված ձևերին: Այդ տեսանկյունից Պոլիբիոսը նշում է, որ ամենալավ կառույցով առանձնանում է հռոմական պետությունը, որում «երեք իշխանությունների լիազորությունները՝ կոնսուլների, սենատի և ժողովրդի», համապատասխանաբար արտահայտում են թագավորական, արիստոկրատական և դեմոկրատական սկզբունքները:

Արդի ժամանակաշրջանում պետականագիտության մեջ ընդունված տեսակետը հանգում է հետևյալին. պետության ձևը ներառում է իշխանության կազմակերպման երեք փոխկապակցված բաղադրատարրերը՝

1) պետական կառավարման ձևը,

2) պետական կառուցվածքի ձևը,

3) պետաիրավական ռեժիմը:[1]

---

[1] Քաղաքական և իրավական գրականության մեջ իր կայուն տեղն ունի նաև «քաղաքական ռեժիմ» հասկացությունը: Հանդիպում են նաև «պետաքաղաքական ռեժիմ», «քաղաքական-իրավական ռեժիմ» հասկացությունները, որոնց մեկնաբանությունները հաճախ չեն համընկնում: Հեղինակների մի մասը «քաղաքական ռեժիմ» և «պետական ռեժիմ» հասկացությունները համարում է հոմանիշներ և որպես փոխզիջումային լուծում օգտագործում է «պետաքաղաքական ռեժիմ» կամ «պետական (քաղաքական) իրավական ռեժիմ» հասկացությունները: Ամփոփելով առկա տեսակետները «քաղաքական ռեժիմ» և «պետական ռեժիմ» հասկացությունների վերաբերյալ, կարող ենք ասել, որ այդ հասկացությունների հստակ իմաստային տարբերությունն ավելի հիմնավոր և մանրամասն մշակված է խորհրդային և հետխորհրդային ռուսական քաղաքագիտության և իրավագիտության կողմից: Ի տարբերություն քաղաքականի՝ պետական ռեժիմն իրենից ներկայացնում է պետական մեխանիզմի միջոցով հանրային իշխանության իրականացման ձևերի, մեթոդների և հնարքների համակցություն: Սակայն «պետական ռեժիմ» հասկացությունը չի սպառում քաղաքական իշխանության իրականացման բոլոր միջոցները: Քաղաքական ռեժիմը լայն հասկացություն է, քան պետական ռեժիմը, չնայած վերջինս, որպես կանոն, հանդիսանում է գլխավորը քաղաքական ռեժիմում, նրա էությունը, սիրտը: Հետևաբար, պետության ձևի գործառույթային կողմը բնութագրող տարրը համարվում է «պետական-իրավական ռեժիմը», այլ ոչ թե «քաղաքականը»: «Քաղաքական ռեժիմը» շատ ավելի լայն է իր կողմից բնութագրվող պետության ձևի բաղադրատարրից: Քաղաքական ռեժիմը չի կարող հանգեցվել պետության ձևի որևէ տարրին: Ռեժիմն այս կամ այն երկրում կազմավորվում է որպես զանազան գործոնների գործողության արդյունք, ընդ որում ոչ միայն պետական մարմինների գործունեությունից, այլ նաև քաղաքական կուսակցությունների, զանգվածային շարժումների: Արտապետական բոլոր գործոնները չնայած և ազդում են պետական ռեժիմի վրա, պետության և նրա մարմինների գործունեության վրա, այնուամենայնիվ դրանք չեն մտնում հենց պետական իշխանության իրականացման մեթոդների հասկացության մեջ:

Պետության ձևի բաղադրատարրերն անմիջականորեն կապված են իշխանության հետ: Պետական կառավարման ձևն արտացոլում է պետական իշխանության կենտրոնական և տեղական մարմինների ձևավորման կարգը: Պետության կառուցվածքն արտացոլում է պետության ներքին կառուցվածքը, իշխանության վարչատարածքային և ազգային կազմակերպությունը: Պետաիրավական ռեժիմը համարվում է իշխանության կազմակերպական ձևավորման իրական դրսևորումը, դրա գործառութավորման ընթացքը և արդյունքը: Եթե պետական կառավարման և կառուցվածքի ձևերը բնութագրում են պետության կազմակերպակառուցվածքային կողմերը, ապա պետաիրավական ռեժիմը բնութագրում է պետության ձևի բովանդակային կողմը:

§ 2. Պետության ձևի կազմավորման օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները

Պետության ձևը միանգամից, ինքնաբերաբար չի կազմավորվում: Պետության ձևը պայմանավորված է պետության առաջացման և զարգացման կոնկրետ-պատմական պայմաններով, տվյալ երկրի ազգային կազմով, պատմական և ազգային ավանդույթներով, տարածքի չափերով, կրոնական, տնտեսական, սոցիալական և այլ գործոններով: Պետության ձևի վերջնական ձևավորման գործոններն իրենց բույթով լինում են օբյեկտիվ և սուբյեկտիվ: Որպես պետության ձևի կազմավորման վրա ազդող օբյեկտիվ գործոններ կարելի է նշել՝

1) տնտեսության բնույթը (կենտրոնացված, պլանային, ապակենտրոնացված, շուկայական և այլն).

2) հասարակության զարգացման մակարդակը.

3) հասարակության ընդհանուր, քաղաքական և իրավական մշակույթի մակարդակը.

4) պետության պատմական տիպը.

5) հասարակության մեջ սոցիալ-դասակարգային ուժերի հարաբերակցությունը.

6) պատմական, ազգային, մշակութային և այլ ավանդույթները:

Այս և նման բնույթի այլ գործոններն օբյեկտիվ բնույթ ունեն և անպայմանորեն ազդում են պետության ձևի վրա: Սակայն օբյեկտիվ բնույթ ունեցող գործոնների հետ միասին պետության ձևի, հատկապես պետաիրավական որոշակի ռեժիմի ձևավորման վրա էական ազդեցություն են թողնում նաև սուբյեկտիվ գործոնները: Որպես *սուբ-*

յեկտիվ գործոն կարող են հանդես գալ իշխանության տեր քաղաքական ընտրանու՝ էլիտայի տիպը, դիրքորոշումները, միապետի անձնական որակները, անձնիշխանության և անհատի պաշտամունքի գաղափարախոսությունը և այլն: Սուբյեկտիվ գործոնների մեջ շատ կարևոր տեղ և դեր է խաղում «ազգի կամ ժողովրդի ոգին և կամքը»:[1] ժողովրդի ոգու և կամքի ու պետականության միջև կապի կողմնակիցները ելնում են ելակետային թեզիսից, որը կարելի է ձևակերպել այսպես. ինչպիսին հասարակությունը, ժողովուրդը, ազգն են, այնպիսին էլ նրանց ոգին և կամքը, և վերջին հաշվով այդպիսին կլինի նրանց ստեղծած պետությունը և նրա ձևը:

§ 3. Պետության կառավարման ձև. հասկացությունը, հատկանիշները և տեսակները

Պետական կառավարման ձևը ցույց է տալիս գերագույն պետական իշխանության կազմակերպման եղանակը, պետական մարմինների ձևավորման կարգը, դրանց փոխգործությունը միմյանց միջև, բնակչութ-

---

[1] Տես՝ ***Марченько М.Н.*** Проблемы теории государства и права. М., 2005, էջ 209: Փիլիսոփաների, պատմաբանների, իրավագետների կողմից վեր են հանվել և հետազոտվել են ժողովրդի ոգու և կամքի ու պետականության բնույթի միջև կապի բազմաթիվ վարկածներ: Այդպիսիք են օրինակ Մոնտեսքիոյի աշխարահագրական տեսությունը, իրավունքի պատմական տեսությունը և այլն: «Ազգի ոգին և կամքը» կատեգորիայի միջոցով հետազոտողները փորձում են պարզել, թե ինչպես են ժողովրդի կամ ազգի ոգին և կամքը ազդում պետական կարգի, պետական-իրավական ռեժիմի և հասարակության կացության վրա: Ժողովրդի ոգին և կամքը կարող են ուղղված լինել պետական կարգի, պետականության ամրապնդմանը՝ շնորհիվ իրենց ակտիվ, նպատակամղված պաշտպանությանը, և ընդհակառակը, դրանք իրենց պասիվ, անտարբեր վերաբերմունքով կամա թե ակամա նպաստում են պետականության թուլացմանը: 19-րդ դարի վերջին հայտնի գերմանացի իրավաբան Ռուդոլֆ Հերինգն իր հայտնի «Հռոմեական իրավունքի ոգին նրա զարգացման տարբեր աստիճաններում» աշխատության մեջ բարձրացրեց հիմնահարց, թե որն էր հռոմեական ժողովրդի ոգին և կամքը, և ինչ կապ կար դրանց ու պետության միջև: Փորձելով հասկանալ Հռոմեական պետության ու իրավունքի էությունը, Հերինգը ցույց տվեց, որ բացի կայսրերի և այլ պաշտոնատար անձանց կամքից պետական կարգերը պայմանավորված են նաև այլ սուբյեկտիվ գործոններով, որոնցից մեկն էլ «հռոմեական ժողովրդի ոգին ու կամքն» էր: (տես՝ ***Марченько М.Н.*** Проблемы теории государства и права. М., 2005, էջ 209):

յան մասնակցության աստիճանը պետական մարմինների ձևավորմանը:

Պետության կամ պետական կառավարման ձևը պետական կառուցվածքի կամ պետահիրավական ռեժիմի ձևից տարբերվում է իրեն բնորոշ տարրերով կամ հատկանիշներով: Այդ հատկանիշներն են.

1) պետության բարձրագույն մարմինների ստեղծման եղանակը (նշանակում, գահաժառանգում, ընտրություն),

2) պետական իշխանության կենտրոնական կառույցը (օրենսդիր, գործադիր և դատական մարմիններ, պետության գլուխ),

3) իրավասության բաշխումը կենտրոնական (կամ բարձրագույն) պետական մարմինների միջև,

4) կենտրոնական բարձրագույն մարմինների կազմակերպման և փոխգործողության սկզբունքը (իշխանությունների բաժանում, կենտրոնացում),

5) պետության բարձրագույն մարմինների հարաբերակցությունը բնակչության հետ:

Գոյություն ունեն պետական կառավարման երկու հիմնական ձևեր՝ *միապետություն և հանրապետություն:*

Միապետությունը կառավարման այն ձևն է, որում բարձրագույն պետական իշխանությունը պատկանում է մեկ անձի՝ միապետին (թագավոր, ցար, կայսր, շահ և այլն), որը գահը զբաղեցնում է ժառանգաբար և ցմահ, և որպես կանոն իրավաբանորեն պատասխանատու չէ բնակչության առջև:

Հանրապետությունը պետական կառավարման ձև է, որում բարձրագույն պետական իշխանությունը պատկանում է որոշակի ժամկետով ժողովրդի կողմից ընտրված մարմիններին, որոնք պատասխանատու են ընտրողների առջև:

§ 4. Կառավարման միապետական ձևի տեսակները

Միապետությունները լինում են երկու տեսակի՝ *անսահմանափակ (բացարձակ) և սահմանափակ:*

Անսահմանափակ (բացարձակ) միապետություններում միապետը պետության բարձրագույն մարմինն է: Նա իրականացնում է օրենսդիր գործառույթներ (միապետի կամքը իրավունքի և օրենքի

աղբյուր է), ղեկավարում է գործադիր իշխանության մարմինները, վերահսկում է արդարադատությունը:

Պատմականորեն բացարձակ միապետության առաջին ձևը *հին արևելյան միահեծանություններն էին*: Հին Արևելքում աշխարհագրական պայմանները, խոշորածավալ հասարակական աշխատանքների կատարման (ոռոգման համակարգերի կառուցման) անհրաժեշտությունը կանխորոշեցին ուժեղ հանրային իշխանության առաջացումը: Այդ պետությունների տնտեսական հիմքը պետական սեփականությունն էր, հատկապես՝ հողի նկատմամբ: Պետությունն այստեղ միաժամանակ և՛ կառավարում, և՛ շահագործում էր գյուղական համայնքներին: Բայց պետությունը ոռոգման համակարգերի կառուցման ուժով նաև արտադրության կազմակերպիչն էր: Այս հանգամանքներն էլ պայմանավորեցին ուժեղ, ոչնչով չսահմանափակված միապետական իշխանության ձևավորումը, որում ամբողջ իշխանությունը պատկանում էր ժառանգական միապետին: Վերջինս երկիրը կառավարում էր ուժեղ ռազմաբյուրոկրատական ապարատի օգնությամբ: Օրինակ՝ կառավարման միահեծանական ձև ուներ Վանի թագավորությունը՝ Ուրարտուն:

Բացարձակ միապետությունները բնութագրական էին նաև ավատական պետությունների զարգացման վերջին փուլին, երբ ավատական մասնատվածության վերջնական հաղթահարումից հետո ավարտվեց կենտրոնացված պետությունների կազմավորման գործընթացը: Ներկայումս աշխարհում զուտ բացարձակ միապետություններ չկան:

Սահմանափակ միապետության բնորոշ ձևեր են՝

1) վաղ ավատատիրական միապետություններ,

2) դասային-ներկայացուցչական միապետություններ,

3) նոր ժամանակաշրջանի սահմանադրական միապետություններ:

Վաղ ավատական միապետություն էր օրինակ Արշակունյաց թագավորությունը: Ավատատիրության միջին շրջանում ապրանքափոխանակային հարաբերությունների զարգացումը քայքայեց բնատնտեսության հիմքերը: Դա նախադրյալ էր քաղաքական կենտրոնացման և վաղ ավատատիրական միապետությունից *դասային-ներկայացուցչական միապետության* անցման համար: Կառավարման այս ձևում միապետի իշխանությունը սահմանափակված էր ավատատիրական հասարակության դասերի ներկայացուցչական մարմնով, օրինակ Անգլիայում՝ պառլամենտով, Լեհաստանում՝ Սեյմով:

Սահմանադրական միապետությունը ծագեց դրամատիրական հասարակության դարաշրջանում: Այն իրենից ներկայացնում է կառավարման ձև, որի դեպքում միապետի իշխանությունը սահմանափակվում է ներկայացուցչական (ընտրովի) մարմնով և այդ փաստը, որպես կանոն, ամրագրվում է սահմանադրությամբ: Միապետն այս դեպքում իրավունք չունի փոխել սահմանադրությունը:

Սահմանադրական միապետության տարատեսակներն են *դուալիստականը և խորհրդարանականը:*

Եթե բացարձակ միապետությունում չկան սահմանադրություն և խորհրդարան, իշխանությունների բաժանում, ամբողջ իշխանությունը կենտրոնացված է մեկ անձի՝ միապետի ձեռքում, ապա *դուալիստական միապետությունում* պետական իշխանությունը կրում է երկակի բնույթ: Իշխանությունը բաժանվում է միապետի (նա է կազմավորում կառավարությունը) և օրենսդիր խորհրդարանի միջև: Կառավարությունը կազմվում է անկախ խորհրդարանի կուսակցական կազմից և պատասխանատու է միայն միապետի առջև: Ներկայումս կառավարման այս ձևը գրեթե սպառել է իրեն: Պատմականորեն այդպիսի կառավարմեն ձև են ունեցել կայզերական Գերմանիան և Ճապոնիան:

Խորհրդարանական միապետությունում միապետը թագավորում է, բայց չի կառավարում: Կառավարությունը կազմվում է ընտրություններում հաղթանակած կուսակցությունների ներկայացուցիչներից և պատասխանատու է միայն խորհրդարանի առջև: Օրենքներն ընդունում է խորհրդարանը: Միապետի իշխանությունը օրենսդիր, գործադիր և դատական ոլորտներում, փաստորեն, խորհրդանշական (սիմվոլիկ) է: Օրինակ, Մեծ Բրիտանիայում միապետը իրավունք ունի վետո (մերժում) կիրառել խորհրդարանի ընդունած օրենքների նկատմամբ, բայց արդեն հարյուրամյակներ նա այդ իրավունքից չի օգտվել: Այդ պատճառով ասում են, որ «Անգլիական արքան թագավորում է, սակայն չի կառավարում»: Ժամանակակից աշխարհում խորհրդարանական միապետություններ են նաև Նորվեգիան, Հոլանդիան, Շվեդիան, Ճապոնիան և այլն:

§ 5. Կառավարման հանրապետական ձևի տեսակները

Կառավարման հանրապետական ձևն առաջացել է ստրկատիրական պետություններում: *Ժողովրդավարական Աթենական հանրապետությունում* պետության մարմիններն ընտրվում էին Աթենքի լիիրավ քաղաքացիների՝ ժողովրդական ժողովի կողմից: Սակայն, ստրկատիրական պետություններում տարածված էր *արիստոկրատական հանրապետությունը,* որտեղ պետական իշխանության բարձրագույն ընտրովի մարմինների կազմավորմանը և աշխատանքին հիմնականում մասնակցում էր ռազմահողատեր ավագանին:

Ավատատիրության դարաշրջանում հանրապետական կառավարման ձևը հազվադեպ էր: Այն գոյություն ուներ միայն ինքնորոշման իրավունք ունեցող միջնադարյան քաղաքներում, որտեղ ընտրությունների միջոցով կազմավորվում էին իշխանության մարմիններ (քաղաքապետարան, քաղաքային խորհուրդ) պատասխանատու պաշտոնատար անձանց՝ քաղաքապետերի գլխավորությամբ:

Պատմության նոր դարաշրջանում առաջացան *խորհրդարանական և նախագահական հանրապետությունները:* Դրանք տարբերվում են իրարից նրանով, թե պետական իշխանության բարձրագույն մարմիններից ո՞վ է կազմում կառավարությունը ու ղեկավարում նրա գործունեությունը՝ խորհրդարա՞նը, թե՞ նախագահը, և նրանցից ո՞ւմ՝ առջև է պատասխանատու կառավարությունը: Եթե հանրապետությունում կառավարությունը կազմավորվում է ընտրություններում հաղթած կուսակցության կողմից կամ ընտրվում է խորհրդարանի կողմից և հաշվետու, պատասխանատու է նրա առջև (խորհրդարանը կարող է անվստահության քվե հայտնել կառավարությանը), ապա այն *խորհրդարանական հանրապետություն է:* Այդպիսին էր, օրինակ, Հայաստանի առաջին Հանրապետությունը, այդպիսին են ժամանակակից Իտալիան, Ավստրիան:

Եթե հանրապետությունում նախագահն է կազմում կառավարությունը և վերջինս իր գործունեության համար հաշվետու և պատասխանատու է միայն նախագահի առջև, ապա հանրապետությունը նախագահական է: Այդպիսի հանրապետության դասական օրինակը ԱՄՆ-ն է:

Գոյություն ունեն նաև *խառը՝ նախագահական-խորհրդարանական կամ կիսանախագահական կառավարման ձևի հանրապետություններ:* Այդպիսին է, օրինակ, մեր հանրապետությունը: ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է, որ Նախագահի կողմից կազմավորվող կառավարությունը հաշվետու և պատասխանատու է նաև Ազգային

ժողովի առջև: Վերջինս իրավասու է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ անվստահություն հայտնել կառավարությանը: Կառավարությանն անվստահություն հայտնելու մասին որոշման ընդունման դեպքում կառավարությունը հրաժարական է տալիս: Հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարման ձևը իրենում պարունակում է թե՛ նախագահական, և թե՛ խորհրդարանական ձևին բնորոշ գծեր: ՀՀ կառավարման ձևը խորհրդարանական է այնքանով, որքանով Նախագահին ինքնուրույն չի նշանակում վարչապետին, այլ Ազգային ժողովում պատգամավորական տեղերի բաշխման եւ պատգամավորական խմբակցությունների հետ խորհրդակցությունների հիման վրա վարչապետ է նշանակում պատգամավորների մեծամասնության վստահությունը վայելող անձին, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա առավել թվով պատգամավորների վստահությունը վայելող անձին: Այնուհետև՝ Հանրապետության Նախագահը վարչապետի առաջարկությամբ նշանակում և ազատում է կառավարության անդամներին: Կառավարությունն իր կազմավորումից հետո՝ քսանօրյա ժամկետում, Ազգային ժողով է ներկայացնում իր ծրագիրը: Կառավարության ծրագրին հավանություն տալու մասին որոշումն ընդունվում է Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Այդպիսի որոշում չընդունվելու դեպքում վարչապետը Հանրապետության Նախագահին դիմում է ներկայացնում կառավարության հրաժարականի մասին, իսկ Հանրապետության Նախագահն ընդունում է կառավարության հրաժարականը:

Հանրապետական կառավարման հատուկ ձև է ***սոցիալիստական հանրապետությունը,*** որն առաջացավ մի շարք երկրներում սոցիալիստական հեղափոխությունների հետևանքով: Տարբերվում են ***սոցիալիստական հանրապետության երեք տեսակներ՝ Փարիզի կոմունա, խորհուրդների հանրապետություն և ժողովրդադեմոկրատական հանրապետություն,*** որոնք պրոլետարիատի դիկտատուրայի պետության ձևերն են: Սոցիալիստական հանրապետությունում պետական կառուցակարգը կազմավորվում է ոչ թե իշխանությունների տարանջատման սկզբունքով, այլ ընդհակառակն, այսպես կոչված ժողովրդավարական կենտրոնացման սկզբունքով: Այստեղ սովորաբար մերժվում է այլախոհությունը և բազմակուսակցական համակարգը: Հասարակության կյանքի տնտեսական, սոցիալ-քաղաքական և մշակութային-դաստիարակչական ղեկավարությունը կենտրոնացվում է պետության միասնական կառուցակարգում, որը հնարավորություն է

տալիս պետական իշխանությանը ամբողջ երկրում կառավարել հանրայնացված արտադրության միջոցները, կարգավորել և վերահսկել նյութական ու հոգևոր բարիքների բաշխումը՝ հանուն սոցիալիզմի և կոմունիզմի շինարարության:

§ 6. Պետական կառավարման ռեժիմները. հասկացությունը և տեսակները

Հետևողական մոտեցման դեպքում պետք է տարանջատել «պետաիրավական ռեժիմ» և «պետական կառավարման ռեժիմ» հասկացությունները: ***«Պետաիրավական ռեժիմը»*** ընդհանրապես պետական իշխանության իրականացման միջոցների, մեթոդների, եղանակների և (կամ) հնարքների համակցությունն է: Մինչդեռ ***«պետական կառավարման ռեժիմ»*** հասկացությունը բնութագրում է պետական կառավարման ձևի գործողության ընթացքում այս կամ այն պետական մարմնի իրական տեղը պետության տվյալ կառավարման ձևի կառուցակարգում: Օրինակ՝ պետությունների կառավարման ձևը կարող է լինել միևնույնը՝ պառլամենտական միապետություն, սակայն պետական կառավարման ռեժիմը տարբեր է՝ կախված նրանից, թե որ մարմինն է գերակայում պետության կառուցակարգում՝ խորհրդարանը, թե՞ կառավարությունը: Այս մոտեցմամբ կարելի է առանձնացնել «պետական կառավարման ռեժիմի»հետևյալ տեսակները.

1. **Դուալիստական միապետություն՝** երեք տարատեսակով.

ա) գործադիր իշխանության գերակշռությամբ դուալիստական միապետություն,

բ) իշխանությունների հավասարակշռմամբ դուալիստական միապետություն,

գ) օրենսդիր իշխանության գերակշռությամբ դուալիստական միապետություն:

2. **Խորհրդանական պետական ռեժիմ**, որն իր հերթին բաժանվում է՝

ա) խորհրդարանական կառավարման ռեժիմ,

բ) մոնիստական խորհրդարանականության ռեժիմ,

գ) դուլիստական խորհրդարանականության ռեժիմ,

դ) կաբինետային կառավարման ռեժիմ:

3. **Նախագահական կառավարման ռեժիմ**, որի տարատեսակներն են՝

ա) նախագահական ձևի դուալիստական պետական կառավարման ռեժիմը,

բ) նախագահական մենիշխանական պետական կառավարման ռեժիմը:[1]

Որպես օրինակ կարելի է վերցնել Մեծ Բրիտանիան: 18-րդ դարից սկսած այն իր կառավարման ձևով խորհրդարանական միապետություն է: 19-րդ դարում Մեծ Բրիտանիան համարվում էր պառլամենտարիզմի դասական երկիր, որում առաջատար դեր էր պատկանում պառլամենտին: Կառավարությունը ձևավորվում էր պառլամենտական ուժերի հարաբերակցության հիմքով և պատասխանատվություն էր կրում օրենսդիր մարմնի առջև: Կառավարությունը պետք է հրաժարական տար, եթե կորցնում էր Համայնքների պալատի վստահությունը: Թագավորական իշխանությունը ետին պլան էր մղված: Միապետի վերաբերյալ առաջ եկավ «Նա թագավորում է, բայց չի կառավարում» ասույթը: 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբին այս երկրում տեղի է ունենում կառավարության դերի ուժեղացում: Երկկուսակցական համակարգի ուժեղացման պայմաններում, երբ իշխանությունը կիսում են երկու գլխավոր քաղաքական կուսակցությունները՝ պահպանողականները և ազատականները (Երկրորդ աշխարհամարտից հետո կոչվեցին լեյբորիստներ), կաբինետը, հենվելով պառլամենտական մեծամասնության վրա, սկսում է աստիճանաբար իրեն ենթարկել Համայնքների պալատը՝ վերջինիս ըստ էության վերածելով կաբինետի կամքը կատարող խորհրդակցական մարմնի: Լորդերի պալատը՝ թագավորական իշխանության նախկին հենարանը, կորցնում է իր նշանակությունը, հատկապես ժառանգական պերերի ինստիտուտի վերացումից հետո: Արդյունքում միապետին մնում է միայն «խորհուրդ տալու, առաջարկելու, զգուշացնելու» իրավունքը: Պառլամենտականությունը որպես պետական կառավարման ռեժիմ արդեն չկա: Ըստ էության, պետության կառավարման ռեժիմը դարձել է կաբինետային կառավարման ռեժիմ, որը երբեմն անվանում են «մինիստրականություն»: Այսպիսով, կառավարման ձևը մնում է միևնույնը՝ պառլամենտական միապետություն, սակայն պետական կառավարման ռեժիմը փոխվել է:

Պետական կառավարման ռեժիմի փոփոխությունը կարող է տեղի ունենալ նաև այնպիսի կառավարման ձևի շրջանակներում, ինչ-

---

[1] Տես՝ Конституционное право зарубежных стран. Под ред. М.Б. Баглая, Ю.И. Лейбо, Л.М. Энтина. М., 2005, էջ 173-177:

պիսին է նախագահականը: Նույնիսկ մեկ երկրում կայուն նախագահական կառավարման ձևի պայմաններում կարող է տեղի ունենալ ռեժիմային փոփոխություն՝ կամ գործադիր իշխանության կամ օրենսդիր իշխանության ուժեղացում, ինչը սակայն պարտադիր չի հանգեցնում սահմանադրության և դրանով ամրագրված կառավարման ձևի փոփոխության:

§ 7. Պետական կառուցվածքի ձև. հասկացությունը և տեսակները

Պետական կառուցվածքի ձևը բնութագրում է պետական իշխանության տարածքային կազմակերպումը, պետության ներքին բաժանումը մասերի, պետության և նրա բաղկացուցիչ մասերի փոխհարաբերության բնույթը:

Ըստ կառուցվածքի ձևի պետությունները լինում են ***պարզ՝ միասնական (ունիտար) և բարդ՝ դաշնային (ֆեդերատիվ) կամ համադաշնային (կոնֆեդերատիվ):***

Միասնական (լատիներեն՝ ունիտար) պետությունն ամբողջական, կենտրոնացված պետություն է, որի տարածքը բաժանված է պետական կազմավորման կարգավիճակ չունեցող և ինքնիշխան իրավունքներով չօժտված վարչատարածքային միավորների (մարզեր, պրովինցիաներ, շրջաններ և այլն): ՀՀ-ն ունիտար պետություն է: Ունիտար պետություններում գոյություն ունեն բարձրագույն պետական մարմինների միասնական համակարգ, միասնական քաղաքացիություն, մեկ սահմանադրություն: Այդ պարագայում նախադրյալներ են ստեղծվում երկրի ամբողջ տարածքի վրա կենտրոնական պետական իշխանության բավականին ուժեղ ազդեցության համար:

Դաշնային (ֆեդերատիվ) պետությունը բարդ միութենական պետություն է, որի մասերը (հանրապետությունները, նահանգները, կանտոնները) ինքնիշխանությամբ օժտված պետություններ կամ պետական կազմավորումներ են: Դաշնության կազմի մեջ մտնող պետական կազմավորումները կամ պետությունները կոչվում են դաշնության սուբյեկտներ: Դաշնային պետությունները կազմավորվում են ազգային (Ռուսաստան) կամ տարածքային (Գերմանիա) հատկանիշներով: Դաշնային պետություններն ունեն միասնական դաշնային զինված ուժեր, միասնական ֆինանսական, դարկային, մաքսային

համակարգեր: Սակայն բոլոր դաշնային պետություններում պետական իշխանության մարմինների համակարգը, իրավական համակարգը, քաղաքացիությունը ունեն երկու մակարդակ՝ ամբողջ դաշնության և նրա սուբյեկտների: Ժամանակակից դաշնությունների սահմանադրությունները չեն ճանաչում սուբյեկտների՝ դաշնության կազմից դուրս գալու իրավունքը: Նախկինում այդ իրավունքը ճանաչվում էր ԽՍՀՄ Սահմանադրությամբ: Նախկին Խորհրդային Միությունը, որպես դաշնություն, գրականության մեջ երբեմն համարում են արհեստական, և ավելի շատ՝ ունիտար:

Համադաշնությունը (կոնֆեդերացիան) որոշակի նպատակների (ռազմական, տնտեսական, քաղաքական) հասնելու համար ստեղծված ինքնիշխան պետությունների միություն է, որը, որպես կանոն, ժամանակավոր բնույթ ունի: Համադաշնությունները կամ վերածվում են դաշնության կամ լուծարվում են: Համադաշնությունը ենթադրում է համադաշնության բարձրագույն մարմինների ստեղծում: Վերջիններիս որոշումները պարտադիր չեն համադաշնության սուբյեկտների համար, որոնք կարող են վերացնել դրանց գործողությունն իրենց տարածքում: Համադաշնությունը ինքնիշխանությամբ օժտված չէ, եթե մի քանի պետություններ միավորվում են համադաշնության մեջ (ի տարբերություն դաշնության), ապա դա չի հանգեցնում նոր պետության առաջացմանը: Համադաշնության սուբյեկտները կարող են դուրս գալ համադաշնության կազմից, չունեն ընդհանուր սահմանադրություն և միասնական իրավական համակարգ:

§ 8. «Պետահիրավական ռեժիմ» հասկացության բնորոշումը

«Ռեժիմ» եզրույթն իր բովանդակությամբ ընդգրկուն է և օգտագործվում է մի քանի իմաստներով: Այն լատիներենից փոխառված regimen բառն է, որն հայերեն թարգմանվում է վարչակարգ, վարչածև:[1] Ռեժիմ հասկացության բազմանշանակությունը վկայում է նրա

[1] «Ռեժիմ» եզրույթն օգտագործվում է մի քանի իմաստներով. 1) պետական կարգ, իշխանության իրականացման միջոցների, մեթոդների, եղանակների համակցություն, 2) խստորեն կարգավորված կենսական կարգ (աշխատանքի, հանգստի, բուժման, սնվելու, քնի), 3) որոշակի տեսակի գործունեության համար սահմանված պարտադիր կանոնների, պահանջների, նորմերի,

միջառարկայական, միջծյուղային բնույթի մասին, այսինքն, որ այն օգտագործվում է գիտության տարբեր ոլորտներում: Մեզ հետաքրքրողը «ռեժիմը» իշխանության իրականացման միջոցների, մեթոդների, եղանակների համակցությունն է:

Գիտատեսական գրականության մեջ առկա են պետաիրավական ռեժիմի մի քանի բնորոշումներ և պատկերացումներ դրա մասին: Ամենից տարածված, ավանդական բնորոշումը համարվում է հետևյալ բնորոշումը. ***պետաիրավական ռեժիմը պետական իշխանության իրականացման միջոցների, մեթոդների, եղանակների և (կամ) հնարքների համակցությունն է***: Պետական կամ պետաիրավական ռեժիմի բոլոր տեսակի բնորոշումների քննարկումները բերում են այն համոզման, որ այդ հասկացության ավանդական բնորոշումը պետք է լրացվի մի շարք հատկություններով և ճշգրտվի:

Առաջին, պետական ռեժիմի և իրավական կարգի, ձևի միջև առկա է անխզելի կապ, որի արդյունքում «պետական ռեժիմ» եզրույթը պետք է լրացվի «իրավական» եզրույթով, իսկ պետության ձևի երրորդ բաղադրատարր պետք է անվանվի «պետաիրավական ռեժիմ» (վարչակարգ, վարչաձև):[1] Պետական-քաղաքական ռեժիմի և նրա ի-

---

սկզբունքների համակարգ (օրինակ, նավագնացության, հողօգտագործման, որսի, ձկնորսության, ազատազրկման և այլն), 4) ինչ որ մեկի կամ ինչ որ բանի որոշակի վիճակ, կարգավիճակ, կացություն (ռեժիմային օբյեկտ, ռեժիմային արտադրություն, ռեժիմային գործարան):

[1] Պետական ռեժիմի ավանդական բնորոշումների և դրանց հարող նույնանակարդակ բնորոշումների կողքին առանձնանում են պետական (քաղաքական) ռեժիմի, այսպես կոչված, իրավականացված (կամ իրավաբանականացված) բնորոշումները: Այս բնույթի բնորոշումներից աչքի է ընկնում Վ. Ներսեսյանցի բնորոշումը: Նա պետական իշխանության իրականացման ձևերի, եղանակների հիմնահարցերն արտացոլում է «պետական (քաղաքական) վարչակարգ» (ռեժիմ) հասկացության մեջ բնորոշելով այն որպես պետական իշխանության իրականացման իրավական կարգի բնույթ, հատկություն, որակ (տես ***Ներսիսյանց Վ.Ս.*** Պետության և իրավունքի տեսություն, Երևան, 2001, էջ 84-85): Այս բնորոշման մեջ նորությունն այն է, որ պետական (քաղաքական) ռեժիմն իր էությամբ համարվում է «պետական-իրավական վարչակարգ, պետության գործունեության որոշակի իրավական կարգ, պետության իշխանության իրականացման այս կամ այն իրավական ձևերը, ընթացակարգերը, հնարքները, եղանակները և մեթոդները»: Հետևաբար, պետական ռեժիմի տարբեր ձևերը, իրենց էությամբ լինելով իրավական, միաժամանակ իրարից տարբերվում են նաև իրենց իրավական զարգացվածության մակարդակով և աստիճանով, համապատասխան իրավական կարգի բնույթով և որակով: Ներսեսյանցի այս բնորոշումը և հիմնավորումները լիարժեքորեն

ռավական ձևերի անխզելի կապն ունի ոչ միայն գործնական, այլ նաև տեսական նշանակություն այն իմաստով, որ ռեժիմի բնորոշումը միշտ կապված է այն բանի հետ, թե ինչպիսի իրավական կամ հակաիրավական ձևերով է այն հառնում, հետևաբար, այն պետք է ներառվի «ռեժիմի» բնորոշման մեջ ընդգրկված հատկությունների (հատկանիշների) շրջանակում:

Երկրորդ, «պետաիրավական ռեժիմ» հասկացությունը պետք է ներառի նաև արդյունքային, հետևանքային հատկությունները, այսինքն՝ «ռեժիմի» գործողության-իրական, փաստական հասարակական կացությունը, վիճակը՝ ի դեմս ժողովրդավարության կամ հակաժողովրդավարության:

Երրորդ, պետաիրավական ռեժիմի բնորոշումը պետք է ներառի պետական իշխանության լեգիտիմացման գործընթացը: Այդ դեպքում լեգիտիմության տակ հասկացվում է «իշխանության ընդունումը նրան ենթարկված սուբյեկտների կողմից և վերջիններիս համաձայնությունը, որ այդ իշխանությունը (իդեալում լինելով օրինական-լեգալ), համապատասխանում է քաղաքացիների ընդհանուր պատկերացմանն արդարացի քաղաքական համակարգի մասին»:[1] Այլ խոսքերով իշխանության լեգիտիմությունը նշանակում է դրա ընդունում և պաշտպանություն քաղաքացիների կողմից՝ որպես արդարության իրենց պատկերացմանը համապատասխանող:

Այս երեք հետևությունների և «պետական ռեժիմի» ավանդական հասկացության ինտեգրման, սինթեզման ճանապարհով կարելի է կառուցել «պետաիրավական ռեժիմի» հետևյալ բնորոշումը է. ***պետաիրավական ռեժիմը պետական կառուցակարգի միջոցով հանրային իշխանության իրականացման, ինչպես նաև պետության գործունեության իրավական ձևերի, մեթոդների, միջոցների, եղանակների և հնարքների համակցությունն է, որոնց միջոցով պետական իշխանությունը լեգիտիմացնում է իրեն (գոյությունը և գործողությունը) և որի հավաքական գործողության հետևանքը ժողովրդավարության փաստական մակարդակն է:***

հաստատում են, որ պետության ձևի երրորդ տարրը անպայմանորեն պետք է արտացոլվի «պետաիրավական ռեժիմ» այլ ոչ թե «պետական ռեժիմով» եզրույթով:

[1] Տես՝ ***Киреева С.А.*** Политический режим как элемент формы государства (теоретико-правовое исследование): Автореф. дисс. на. соискание уч. ст. канд. юр. наук. Саратов, 1997. էջ 26:

§ 9. Պետաիրավական ռեժիմի հատկանիշները

Պետաիրավական ռեժիմը բնութագրելու համար հիմք կարող են ծառայել զանազան գործոններ: Վերջիններս պետաիրավական ռեժիմի տեսակը բացահայտելու չափանիշներ են, որոնք ընդունված է անվանել «պետաիրավական ռեժիմի հատկանիշներ»: Քանի որ պետաիրավական ռեժիմը բնորոշվում է որպես մեթոդների, եղանակների և միջոցների համակարգ, որոնց օգնությամբ իրականացվում է պետական իշխանությունը, ապա պետք է նկատի ունենալ, որ մեթոդները, եղանակները և միջոցները կարող են լինել բազմազան: Նշանակում է անհրաժեշտ է ունենալ ընդհանուր չափանիշներ կամ չափորոշիչներ, որոնց օգնությամբ մենք կարող ենք արձանագրել պետաիրավական ռեժիմի այս կամ այն տեսակին պատկանելությունը:[1] Օրինակ՝ քաղաքացիների նկատմամբ իրավական կարգավորումն իր բնույթով կարող է լինել երկու տեսակի՝ թույլատվական-խթանող և արգելող-սահմանափակող: Ակնհայտ է, որ եթե պետության մեջ իրավական կարգավորումն իր բնույթով ավելի շատ թույլատվական-խթանող է, ուրեմն պետական իշխանությունն ունի ժողովրդավարական բնույթ, և, ընդհակառակն, եթե իրավական կարգավորման եղանակը գերազանցապես արգելող-սահմանափակող է, ապա պետական իշխանությունն ունի հակաժողովրդավարական բնույթ, նրա պետաիրավական ռեժիմն ավտորիտար է: Այստեղից եզրակացություն, որ «պետաիրավական ռեժիմը» բնութագրելու համար օգտագործվող չափանիշներից, հատկանիշներից մեկն էլ իրավական կարգավորման բնույթը, եղանակն է:[2]

---

[1] Պետականագիտության մեջ այդ պարամետրերը կառուցվում են երկու կերպ: Առանձին հեղինակներ մատնանշում են կոնկրետ տեսակի պետաիրավական ռեժիմի պարամետրերը (տես օրինակ՝ *Խրիպաչյուկ Վ.Ն.* Պետության և իրավունքի տեսություն: Երևան, 1997, էջ 154): Հեղինակների մյուս խումբն առանձնացնում է պետաիրավական ռեժիմի ընդհանուր հատկանիշները՝ անկախ տեսակից (տես օրինակ՝ ***Марченько М.Н.*** Проблемы теории государства и права. М., 2005, էջ 211): Կարծում ենք, որ երկրորդ խումբ հեղինակների մոտեցումն ավելի ճիշտ է, և հետևաբար, մենք ևս կշարժվենք այդ ճանապարհով, այսինքն՝ կփորձենք կառուցել պետաիրավական ռեժիմի ընդհանուր հատկանիշները, անկախ տեսակից՝ սինթեզելով առանձին հեղինակների առանձնացրած չափանիշները, և իհարկե, դուրս թողնելով այն հատկանիշները, որոնք վերաբերում են ողջ քաղաքական համակարգին:

[2] Այս կարգի հատկությունները ներառվում են «պետաիրավական ռեժիմի» հասկացության մեջ, և հեղինակների կողմից անվանվում են պետաիրավա-

Պետաիրավական ռեժիմի հատկանիշներն են՝

1) սահմանադրական կարգի հիմունքների բնույթը՝ քաղաքական բազմակարծություն՝ ներառյալ բազմակուսակցականություն, տնտեսական բազմակացութաձևություն,

2) պետական իշխանության ձևավորման կառուցակարգերին ժողովրդի մասնակցության աստիճանը, ինչպես նաև այդպիսի ձևավորման եղանակները և կարգը,

3) հասարակության և պետական իշխանության փոխհարաբերության սկզբունքը,

4) մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների իրական լինելու և երաշխավորվածության աստիճանը,

5) պետական իշխանության իրականացման իրավական կառուցակարգերի բնութագիրը,

6) անմիջական ժողովրդաիշխանության իրականացման աստիճանը,

7) հրապարակայնության և պետական ապարատի թափանցիկության աստիճանը,

8) պետական իշխանության երեք ճյուղերի միջև իրավասության բաշխումը և դրանց փոխհարաբերությունների բնույթը,

9) քաղաքացիների և պաշտոնատար անձանց նկատմամբ իրավական կարգավորման բնույթը (խթանող, սահմանափակող),

10) պետական որոշումներ ընդունելիս փոքրամասնության շահերի հաշվառումը,

11) պետական իշխանություն իրականացնելիս որոշակի մեթոդների գերակշռությունը (համոզում, հարկադրանք և այլն),

12) իրավունքի դերը հասարակական և պետական կյանքում և օրենքի գերակայության աստիճանը,

13) հասարակության մեջ ուժային պետական կառույցների քաղաքական և իրավական կարգավիճակը,

14) պաշտոնատար անձանց՝ ներառյալ բարձրագույն, քաղաքական և իրավական պատասխանատվության ենթարկելու իրական կառուցակարգերի գոյությունը և այլն:

կան ռեժիմի հատկանիշներ, պարամետրեր, պետաիրավական ռեժիմի գործոններ, պետաիրավական ռեժիմի հիմնական բաղադրատարրեր: Կարծում ենք, որ ճիշտ է դրանք անվանել «պետաիրավական ռեժիմի հատկանիշներ» և դրանց տակ հասկանալ այն չափանիշները, որոնց օգնությամբ որոշվում է կամ որոնք վկայում են որևէ պետության պետաիրավական ռեժիմի տեսակը:

Թվարկված հատկանիշների նշանակությունը կայանում է նրանում, որ դրանց օգնությամբ, դրանց դրսևորման, փոխհարաբերակցության բացահայտման միջոցով, ինչպես նաև մի շարք այլ միջոցների օգտագործմամբ որոշվում է, թե կոնկրետ երկրի պետահիրավական ռեժիմը որ տիպին կամ տեսակին և ենթատեսակին է պատկանում:

§ 10. Պետահիրավական ռեժիմի դասակարգման հիմնախնդիրը

Իրավագիտության մեջ առկա են պետահիրավական ռեժիմների դասակարգման մի քանի տարբերակներ:[1] Այսպես՝ Ռ. Մուխաևը, ելնելով կառավարման եղանակում ժողովրդավարության և դիկտատուրայի մեթոդների ու միջոցների հարաբերակցությունից, որն ի վերջո որոշում է պետության և անհատի փոխհարաբերության բնույթը, պետական ռեժիմը դասակարգում է նախ տիպերի՝ վերջիններիս շրջանակում առանձնացնելով ավելի կոնկրետ տարատեսակներ:[2] Այդ մոտեցմանը համապատասխան պետահիրավական ռեժիմի տիպերն են՝ ավտոկրատական և դեմոկրատական տիպերը: Ավտոկրատիայի պատմական տեսակներն են հանդիսանում՝ միահեծանությունը, դիկտատուրան, բոնապետությունը, բացարձակությունը: Ժողովրդավարական տիպի պետահիրավական ռեժիմների պատմական տարատեսակներն են անտիկ աշխարհի ժողովրդավարություններից սկսած մինչև արդի ժողովրդավարական պետահիրավական ռեժիմները:

Վ. Չետվերնինը տարբերում է ժողովրդավարական և ավտորիտար պետական (քաղաքական) ռեժիմի տարատեսակները, ինչպես նաև տո-

---

[1] Տարբերակներից մեկը դասակարգումը կապում է պետության և իրավունքի տիպերի հետ և համապատասխանաբար յուրաքանչյուր տիպում առանձնացնում է տվյալ տիպին յուրահատուկ ռեժիմը: Նման դասակարգման կողմնակիցները ստրկատիրական պետության և իրավունքի տիպի շրջանակներում առանձնացնում են դեսպոտական (միահեծանական), թեոկրատական-միապետական, արիստոկրատական (օլիգարխիական) ռեժիմներ և ստրկատիրական ժողովրդավարության ռեժիմ: Ավատատիրական կարգերի համար առանձնացնում են բացարձակ, ավատատիրական-ժողովրդավարական (ազնվականների համար), կղերապետատիրական (թեոկրատական միապետություններում), ռազմաստիկանական ռեժիմներ և «լուսավորյալ» միապետության ռեժիմ: Կապիտալիզմի օրոք առանձնացվում են բուրժուաժողովրդավարական (սահմանադրական), բոնապարտիստական, ռազմաստիկանական և ֆաշիստական ռեժիմներ: Սոցիալիզմի օրոք առանձնացվում են միայն և զուտ «հետևողական-ժողովրդավարական» պետական ռեժիմներ (տես՝ Юридический енциклопедический словарь. էջ 319):

[2] Տես՝ ***Мухаев Р.Т.*** Теория государства и права. М., 2001, էջ 165:

տալիտար ռեժիմը: Ի տարբերություն առաջին երկուսի, այս հեղինակը, տոտալիտար ռեժիմը չի համարում պետական ռեժիմի տարատեսակ, այլ բռնակալություն, որը պետություն չէ, այլ բռնապետություն:[1]

Վ. Խրոպանյուկը պետաիրավական ռեժիմի դասակարգման հիմնական չափանիշը համարում է պետական իշխանության իրականացման ձևերի և եղանակների ժողովրդավարականությունը: Դրան համապատասխան, ըստ նրա պետական ռեժիմները կարող են լինել ժողովրդավարական և հակաժողովրդավարական (ամբողջատիրական, բռնապետական, ռասիստական)[2]:

Վ. Ներսեսյանցն իրավական չափանիշներին համապատասխան՝ պետական-իրավական ռեժիմները բաժանում է երկու խմբի՝ ազատականների և ավտորիտարների:[3]

Բերված դասակարգումները, մինչ այժմ վերը քննարկված նյութը փաստում է այն հանգամանքը, որ ոչ միայն «պետաիրավական ռեժիմ» հասկացության բնորոշումը, այլ նաև պետաիրավական ռեժիմը տեսակների դասակարգելու հիմնախնդիրը իրավագիտության ամենաբարդ հիմնախնդիրներից է: Առաջարկվող դասակարգումները բազմերանգ են և բազմաբնույթ, ինչը պայմանավորված է հետազոտման առարկայի բարդությամբ և հակասականությամբ: Այս պայմաններում, որպեսզի խուսափենք խառնաշփոթից, ինչպես նաև սույն աշխատանքի ուսումնական բնույթը նկատի ունենալով, նպատակահարմար ենք գտնում պետաիրավական ռեժիմը դասակարգել ամենից ընդհանուր գծերով՝ համաձայնվելով այն հեղինակների հետ, ովքեր գտնում են, որ պետաիրավական ռեժիմները լինում են երկու տեսակի՝ *ժողովրդավարական և հակաժողովրդավարական*: Այս դասա-

---

[1] Տես՝ Проблемы общей теории права и государства. Под общ. ред. В.С. Нерсесянца. М., 1999, էջ 608-617:

[2] Տես *Խրոպանյուկ Վ.Ն.* Պետության և իրավունքի տեսություն, Երևան, 1997, էջ 152:

[3] Ներսեսյանցի տեսակետը յուրահատուկ է նրանով, որ ավանդաբար պետական ռեժիմի տարատեսակներ համարվող բռնակալական, ռազմաոստիկանական, ֆաշիստական, ռասսայական, ազգայնական, կուսակցական, դասակարգային, ամբողջատիրական և այլ վարչակարգերը պետական կառավարում չեն, պետություն չեն ներկայացնում, այլ բռնատիրություն, որում չկա իշխանության իրականացում որոշակի իրավակարգի շրջանակներում: Հետևաբար թվարկվածները չեն տեղավորվում «պետական (քաղաքական) ռեժիմ» հասկացության մեջ, դրանք բռնակալական վարչակարգի տարատեսակներ են, բարց ոչ պետական (տես *Ներսիսյանց Վ.Ս.* Պետության և իրավունքի տեսություն, Երևան, 2001, էջ 84-85):

կարգման հիմնական չափանիշը պետական իշխանության իրականացման եղանակների, ձևերի ու մեթոդների ժողովրդավարականության աստիճանն է:

Իհարկե, իրականության մեջ պետահիրավական ռեժիմի իդեալական ժողովրդավարական ձևեր գոյություն չունեն: Այս դեպքում խոսքն ավելի շատ գնում է դրսևորվող միտումների մասին: Եթե դրանք գլխավորապես համոզման, համաձայնեցման, օրինականության, պառլամենտարիզմի մեթոդներն են, եթե կիրառվող պետական հարկադրանքն ունի իրավական, մարդասիրական բնույթ, ուրեմն առկա է առաջադիմական, ժողովրդավարական ռեժիմը: Իսկ եթե դրանք ունեն հետադիմական, դիկտատորական, բռնի բնույթ, և մարդու բնական իրավունքներն ու ազատությունները չեն ապահովված ու չեն պաշտպանված, հասարակության մեջ թագավորում են կամայականությունը և ապօրինությունները, ուրեմն՝ առկա է հակաժողովրդավարական (ամբողջատիրական կամ տոտալիտար, ինքնակալական, ռասիստական, ֆաշիստական) պետահիրավական ռեժիմը:

§ 11. Ժողովրդավարական պետահիրավական ռեժիմի բնութագրերը

Իրականության մեջ պետահիրավական ռեժիմի կատարյալ ժողովրդավարական ձևեր գոյություն չունեն: Այս կամ այն կոնկրետ պետության մեջ առկա են պաշտոնական իշխանության իրականացման իրենց բովանդակությամբ տարբեր եղանակներ: Այդուհանդերձ կարելի է առանձնացնել պետական-իրավական ռեժիմի այս կամ այն տարատեսակին բնորոշ առավել ընդհանուր գծերը:

Ժողովրդավարական, ազատական պետական-իրավական ռեժիմը ժամանակակից իրավական պետության ու քաղաքացիական հասարակության պայմաններում պետական իշխանության իրականացման ձևն է, եղանակը և կարգը: Նման պետահիրավական ռեժիմը ենթադրում է մարդու (քաղաքացու) հիմնական, ի ծնե և անօտարելի իրավունքների ու ազատությունների լայն շրջանակ, իրավական օրենքի գերակայություն, իշխանությունների բաժանման պաշտոնական ճանաչում ու գործնական իրականացում, սահմանադրականության, պառլամենտարիզմի, գաղափարական ու քաղաքական բազմաձևության, բազմակուսակցության հաստատում, ժողովրդի ինքնիշխան իշխանության իրականացում հանրաքվեի և ազատ ընտրությունների իրավական ձևերով, քաղաքացիական հասարակութ-

յան ինստիտուտների, պետական իշխանության գործունեության նկատմամբ հասարակական հսկողության ձևերի ու մեխանիզմների ինքնուրույն և արդյունավետ գործունեություն:[1] Այսպիսով՝ ժողովրդավարական ռեժիմները կազմավորվում են իրավական պետություններում: Նրանք բնութագրվում են պետական իշխանության իրականացման այնպիսի եղանակներով, որոնք իրականորեն ապահովում են անհատի ազատ զարգացումը, նրա օրինական իրավունքների և շահերի փաստացի պաշտպանությունը: Ժողովրդավարական պետության ռեժիմին, ըստ Վ.Ն. Խրոպանյուկի, բնորոշ են հետևյալ հատկանիշները.[2]

Առաջին, ժողովրդավարական-ազատական ռեժիմները տնտեսական գործունեության ոլորտում անձին տրամադրում են ազատություն, որը հասարակության բարեկեցության նյութական հիմքն է:

Երկրորդ, քաղաքացու անհատական բոլոր տեսակի իրավունքները և ազատություններն ունեն իրական երաշխիքներ:

Երրորդ, ժողովրդավարական ռեժիմն արդյունավետ մեխանիզմներ է ստեղծում, որպեսզի բնակչությունը ուղղակիորեն ներգործի երկրի պետական իշխանության բնույթի վրա (ընտրական համակարգի միջոցով, պետական մարմինների գործունեության նկատմամբ ընտրողների հսկողության միջոցով):

Չորրորդ, ժողովրդավարական պետությունում անհատը պաշտպանված է կամայականություններից, անօրինականություններից, քանի որ նրա իրավունքները մշտապես գտնվում են դատական մարմինների պաշտպանության ներքո:

Հինգերորդ, ժողովրդավարական ռեժիմը իշխանությունների իրական տարանջատման հետևանքն է:

Վեցերորդ, ժողովրդավարական իշխանությունը հավասար չափով է հաշվի առնում մեծամասնության և փոքրամասնության շահերը, բնակչության անհատական և ազգային առանձնահատկությունները: Այն միաժամանակ խոչընդոտում է բյուրոկրատական կամայականություններին և իրենց ինքնուրույն պետականությունը չունեցող ազգային փոքրամասնությունների սոցիալ-տնտեսական իրավունքների խախտումներին:

---

[1] Տես *Ներսիսյանց Վ.Ս.* Պետության և իրավունքի տեսություն, Երևան, 2001, էջ 84-85:

[2] Տես *Խրոպանյուկ Վ.Ն.* Պետության և իրավունքի տեսություն, Երևան, 1997, էջ 154:

Յոթերորդ, պետականորեն իշխելու ժողովրդավարական եղանակները հնարավորություն են տալիս հաղթահարել ծագող սոցիալական հակասությունները, ապահովում են փոխզիջումը պետական մարմինների և քաղաքացիների, բնակչության տարբեր սոցիալական խմբերի միջև:

Ութերորդ, ժողովրդավարական պետության գործունեության հիմնական սկզբունքը քաղաքական, գաղափարական բազմակարծությունն է:

Իններորդ, ժողովրդավարական պետաիրավական ռեժիմը հիմնվում է անհատի և հասարակության զարգացման օբյեկտիվ պահանջներն արտացոլող օրենքների վրա, այդ պատճառով այն ապահովում է կայուն իրավակարգ, հանցավորության ցածր մակարդակ, նպաստում է անհատի և պետության, սոցիալական և ազգային տարբեր խմբերի միջև ընդհարումների խաղաղ լուծմանը:

§ 12. Հակաժողովրդավարական պետաիրավական ռեժիմի բնութագրերը

Հակաժողովրդավարական պետաիրավական ռեժիմը ներհատուկ է պետության մնացած բոլոր տիպերին (բացի ժամանակակից զարգացած իրավական պետությունից): Ավտորիտար-հակաժողովրդավարական պետական-իրավական ռեժիմը, այս կամ այն տեսքով, ձևավորվում է այնտեղ, որտեղ չկան բավարար չափով զարգացած քաղաքացիական հասարակություն և իրավական պետություն՝ դրանց ներհատուկ՝ ձևերով, սկզբունքներով, նորմերով, ընթացակարգերով ու մեխանիզմներով, իրավունքի և իրավական օրինականության տիրապետման, մարդու ու քաղաքացու իրավունքների պաշտպանության և իրականացման երաշխիքներ, պետական իշխանության կամայականության կանխման ու սանձահարման, պետական մարմինների և պաշտոնատար անձանց գործունեության նկատմամբ մշտական ու արդյունավետ վերահսկողություն:[1] Քաղաքացիական հասարակության և ժամանակակից իրավական պետության ձևավորման գործընթացի նախնական փուլերի ավտորիտար-հակաժողովրդավարական պետական-իրավական ռեժիմի համար բնութագրական է ավտորիտարիզմի և ազատականության բաղադրա-

---

[1] Տես *Ներսիսյանց Վ.Ս.* Պետության և իրավունքի տեսություն, Երևան, 2001, էջ 84-85:

տարրերի զուգորդումը: Ավտորիտար և ազատական-ժողովրդավարական հիմունքների նման զուգորդումը ներհատուկ է նաև Հայաստանի Հանրապետության պետական-իրավական ռեժիմին:

Ավտորիտար-հակաժողովրդավարական պետական-իրավական ռեժիմը, ըստ Վ.Ն. Խրոպանյուկի բնութագրվում է հետևյալ հատկանիշներով.

Առաջին, գլխավորը, որով որոշվում է պետական իշխանության բնույթը՝ պետության և անհատի փոխհարաբերությունն է: Եթե պետությունն ի դեմս տարբեր մարմինների ճնշում է անհատին, ոտնահարում է նրա իրավունքները, արգելակում է նրա ազատ զարգացմանը, ապա այդպիսի ռեժիմը հակաժողովրդավարական է:

Երկրորդ, հակաժողովրդավարական ռեժիմը բնութագրվում է հասարակական կյանքի բոլոր ոլորտների (տնտեսություն, քաղաքականություն, գաղափարախոսություն, սոցիալական, մշակութային) նկատմամբ պետության ամբողջական վերահսկողությամբ: Այդպիսի պետությունում սահմանվում է մեկ կուսակցության դիկտատուրա, որը փաստորեն իրականացնում է բոլոր պետական գործառույթները, ունենալով ոչ մի օրենքով չսահմանափակված լիազորություններ:

Երրորդ, հակաժողովրդական ռեժիմին բնութագրական է բոլոր հասարակական կազմակերպությունների համապետականացումը (արհմիությունների, երիտասարդական, կանանց կազմակերպությունների, ստեղծագործական միությունների, տեխնիկական, մարզական և այլ ընկերությունների):

Չորրորդ, հակաժողովրդական պետությունում անհատը փաստացիորեն զրկված է որևէ սուբյեկտիվ իրավունքներից, թեկուզ և ձևականորեն դրանք կարող են լինել հռչակված նույնիսկ սահմանադրական ակտերում: Այլախոհների և առաջադեմ ուժերի նկատմամբ կիրառվում են կոշտ ճնշամիջոցներ:

Հինգերորդ, հակաժողովրդավարական ռեժիմների դեպքում իրականում գործում է պետության գերակայությունն իրավունքի նկատմամբ, որը կամայականության, օրինականության խախտման, հասարակական կյանքում իրավական սկզբունքների վերացման հետևանք է:

Վեցերորդ, հակաժողովրդավարական պետության բնութագրական հատկանիշը հասարակական կյանքի համընդգրկուն ռազմականացումն է, խաղաղ տնտեսությունը ճնշող հսկայական ռազմաբյու-

ռոկրատական ապարատի, ռազմաարդյունաբերական համալիրի առկայությունը:

Յոթերորդ, հակաժողովրդավարական ռեժիմն անտեսում է ազգային պետական կազմավորումների, հատկապես ազգային փոքրամասնությունների շահերը: Ամբողջատիրական պետություններում ազգային փոքրամասնությունները գործնականում զրկված են իրենց ներքին գործերը լուծելու ինքնուրույնությունից, քանի որ այդ հարցերը ամբողջովին գտնվում են կենտրոնական իշխանությունների իրավասության ներքո:

Ութերորդ, հակաժողովրդավարական պետությունն իր բոլոր տարատեսակներով հաշվի չի առնում բնակչության կրոնական համոզմունքների առանձնահատկությունները: Այն լիովին ժխտում է կրոնական աշխարհայացքը կամ նախապատվությունը տալիս է կրոններից մեկին, արգելելով և ճնշելով իրեն անցանկալի բոլոր կրոնական հոսանքները:[1]

§ 13. Պետության էության, տիպի և ձևի հարաբերակցությունը

Կոնկրետ պետության ձևը կախված է այն բանից, թե ինչ տիպի շրջանակներում է այն գտնվում, այսինքն՝ պայմանավորված է պետության պատմական տիպով: Պետության տարբեր տիպերում եղել են միանման կառավարման ձևեր, սակայն, որպես կանոն, դրանք իրարից էականորեն տարբերվել են: Օրինակ, տարբեր են աթենական և արդի խորհրդարանական հանրապետությունները: Այսպիսով՝ պետության տիպի և ձևի հարաբերակցությունը բնութագրելիս պետք է ելնել պետության տիպի որոշիչ բնույթից: Սակայն, պետության ձևը կախված է նաև մի շարք այլ գործոններից, որոնցից են տնտեսության վիճակը, ազգային և պատմական ավանդույթները, միջազգային իրադրությունը, աշխարհագրական դիրքը, քաղաքական իրադրությունը և այլն:

Պետության էության և ձևի միջև հստակ կապ և փոխպայմանավորվածություն չկա: Միևնույն կառավարման և կառուցվածքի ձևի պետությունները կարող են ունենալ լրիվ տարբեր էություն և սոցիալական նշանակություն: Պետական կառավարման ձևի և պետական կառուցվածքի ձևի միջև ևս հատուկ կապ չկա: Միևնույն պետական

---

[1] Տես *Խրոպանյուկ Վ.Ն.* Պետության և իրավունքի տեսություն, Երևան, 1997, էջ 152:

կառավարման ձևում կարող են լինել պետական կառուցվածքի տարբեր ձևեր: Օրինակ, Հայաստանի Հանրապետությունը և Ռուսաստանի Դաշնությունը ունեն կառավարման միևնույն ձևը, սակայն պետական կառուցվածքի ձևով նրանք տարբեր են:

Պետության ձևի այլ տարրերի ու պետաիրավական ռեժիմի միջև ևս հստակ կապ չկա: Եթե պետական կառավարման և կառուցվածքի ձևերը բնութագրում են պետության կազմակերպակառուցվածքային կողմերը, ապա պետաիրավական ռեժիմը բնութագրում է պետության ձևի բովանդակային կողմը: Պետությունն իր կառավարման ձևով կարող է լինել միապետություն, բայց պետաիրավական ռեժիմով՝ ժողովրդավարական, կամ կարող է կառավարման ձևով լինել հանրապետություն, բայց պետաիրավական ռեժիմով՝ հակաժողովրդավարական: Սակայն պետաիրավական ռեժիմը լինելով պետության ձևի երրորդ տարրը, միաժամանակ ամենակարևոր տարրն է, քանի որ նախորոշում է իշխանությունների, հասարակության և անհատի փոխգործողության եղանակը և բնույթը: Հետևաբար՝ «պետաիրավական ռեժիմ» հասկացությունը լրիվ արտահայտում է պետության էությունը: Նույն պատճառով պետաիրավական ռեժիմը համարվում է պետության ձևի հարաբերականորեն ինքնավար բաղադրատարրը, որն ի վիճակի է փոխել և՛ կառավարման ձևը, և՛ պետական կառուցվածքի ձևը: Այդպիսի ընդունակությունը պետաիրավական ռեժիմի համար պայմանավորված է նրա դինամիկ, ներուժային հատկություններով:

Պետաիրավական ռեժիմը տարբերվում է պետության ձևի այլ տարրերից: Այն բնութագրվում է պետական իշխանության իրականացման իրական կառուցակարգով, բացահայտում է իշխանությունների իրավաբանորեն չամրագրված փոխհարաբերությունները, այսինքն՝ փաստական վիճակը: Պետաիրավական ռեժիմը կարող է համապատասխանել կառավարման ձևին՝ պետական իշխանության իրականացման իրավական մոդելին, և կարող է նաև էապես տարբերվել դրանից: Ընդ որում, կառավարման ձևը պետության ձևի ավելի կայուն տարրն է, մինչդեռ միևնույն կառավարման ձևի պայմաններում ռեժիմը կարող է կտրուկ փոխվել կամ դրանում կարող են տեղի ունենալ վերածնումներ, որոնք արդյունքում սովորաբար հանգեցնում են նոր պետաիրավական ռեժիմի կայացմանը, այսինքն՝ պետական իշխանության իրականացման նոր մեթոդին:

? ՊԱՏԱՍԽԱՆԵՔ ՀԱՐՑԵՐԻՆ

1. Բնորոշե՛ք պետության ձև հասկացությունը:
2. Որո՞նք են պետության ձևի բաղադրատարրերը:
3. Որո՞նք էին պետության ծագման և ձևերի հերթափոխման փուլերը ըստ Պոլիբիոսի:
4. Ի՞նչ գործոններ են ազդում կոնկրետ պետության ձևի կազմավորման վրա:
5. Ինչպե՞ս կարող է ազդել «ժողովրդի ոգին և կամքը» պետության ձևի վրա:
6. Բնորոշե՛ք կառավարման ձև հասկացությունը:
7. Որո՞նք են պետական կառավարման ձևի հատկանիշները:
8. Բնորոշե՛ք միապետական և հանրապետական կառավարման ձևերի հասկացությունը:
9. Որո՞նք են միապետական կառավարման ձևի անսահմանափակ տեսակները:
10. Որո՞նք են սահմանափակ միապետության տեսակները:
11. Ինչո՞վ են տարբերվում խորհրդարանական և դուալիստական միապետությունները:
12. Թվարկե՛ք հանրապետության պատմական տեսակները:
13. Ինչո՞վ են տարբերվում խորհրդարանական և նախագահական հանրապետությունները:
14. Ի՞նչ է իրենից ներկայացնում կառավարման խառը ձևի հանրապետությունը:
15. Որո՞նք են սոցիալիստական հանրապետության ձևերը և ի՞նչ առանձնահատկություններ ունեն դրանք:
16. Ինչո՞վ են տարբերվում «պետահիրավական ռեժիմ» և «պետական կառավարման ռեժիմ» հասկացությունները:
17. Բնորոշե՛ք պետության կառուցվածքի ձև հասկացությունը և թվարկե՛ք դրա տեսակները:
18. Ի՞նչ է ունիտար պետական կառուցվածքի ձևը:
19. Ի՞նչ է դաշնային պետական կառուցվածքի ձևը:
20. Ի՞նչ է համադաշնային պետական կառուցվածքի ձևը:
21. Բնորոշե՛ք պետահիրավական ռեժիմ հասկացությունը:
22. Ի՞նչ են պետահիրավական ռեժիմի հատկանիշները: Թվարկե՛ք դրանք:
23. Պետահիրավական ռեժիմի տեսակների ինչպիսի դասակարգումներ կան:

24. Բնութագրե՛ք ժողովրդավարական պետաիրավական ռեժիմը:
25. Բնութագրե՛ք հակաժողովրդավարական պետաիրավական ռեժիմը:
26. Ինչպիսի՞ն է պետության էության, տիպի և ձևի հարաբերակցությունը:
27. Ինչպիսի՞ն է պետության ձևի երեք բաղադրատարրերի կապն ու փոխգործողությունը:

ԿԱՏԱՐԵ՛Ք ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Օգտվելով հանրագիտարանից կամ ինտերնետից պատրաստե՛ք զեկուցում Արիստոտելի, Պլատոնի, Պոլիբիոսի պետաիրավական գաղափարների մասին:

ԲԱՆԱՎԻՃԵՔ

1. Ինչպիսի՞ն է ՀՀ պետական կառավարման ձևը: Արդյոք հայ ժողովուրդը ճիշտ ընտրություն է կատարել հայոց պետականության կառավարման ձևը ընտելիս (հիմնավորե՛ք պատասխանը): Եթե մեր հանրապետության պետական կառավարման ձևը որոշելիս մենք ճիշտ ընտրություն չենք կատարել, ապա նշված ձևերից ո՞րն է նախընտրելի և ինչո՞ւ.

- բացարձակ միապետությունը,
- սահմանադրական միապետությունը,
- նախագահական հանրապետությունը,
- խորհրդարանական հանրապետությունը:

Բաժանվե՛ք թվարկված կառավարման ձևերի կողմնակից խմբերի և կազմակերպեք քննարկում:

2. Ի՞նչ է պետաիրավական վարչաձևը և ձեր կարծիքով ինչպիսի՞ն է Հայաստանի Հանրապետության՝ որպես պետության վարչաձևը (ժողովրդավարական, թե՝ հակաժողովրդավարական): Բաժանվեք երկու բանավեճային խմբերի և կազմակերպեք քննարկում օգտագործելով վերը մեկնաբանված պետաիրավական ռեժիմի հատկանիշները, ժողովրդավարական և հակաժողովրդավարական պետաիրավական ռեժիմի բնութագրերը: Բանավեճի մասնակիցների մի մասը պետք է պնդի, որ ՀՀ բնութագրական է ժողովրդավարական ռեժիմը, իսկ մյուս մասը հակաժողովրդավարական:


Պետության ձև. հասկացությունը և տարրերը
Պետության ձևը բնութագրում է,
պետական իշխանության կազմակերպման կզբունքները և տարածքային կառույցը,
պետական իշխանության բարձրագույն մարմինների ստեղծման կարգը,
պետական իշխանության բարձրագույն մարմինների փոխգործակցումը միմյանց և բնակչության հետ,
պետական իշխանության իրականացման մեթոդները:
պետական կառավարման ձև
պետական կառուցվածքի ձև
պետահիրավական ռեժիմ


Պոլիբիոսը պետության ձևերի հերթափոխման շրջափուլի մասին
թագավորություն
բռնապետություն
արիստոկրատիա
օլիգարխիա
դեմոկրատիա
օխլոկրատիա
խառը ձև

Պետական կառավարման ձև. հատկանիշները, տեսակները

- պետության բարձրագույն մարմինների ստեղծման կարգը,
- իշխանության կենտրոնական կառույցը (օրենսդիր, գործադիր և դատական մարմիններ, պետության գլուխ),
- իրավասության բաշխումը կենտրոնական մարմինների միջև,
- կենտրոնական մարմինների կազմակերպման և փոխ-
- գործողության սկզբունքը (իշխանությունների բաժանում կամ կենտրոնացում),
- պետության բարձրագույն մարմինների հարաբերա-
- կցությունը բնակչության հետ:

հանրապետություն | *միապետություն*

Կառավարման միապետական ձևի տեսակները

- *անսահմանափակ (բացարձակ)*
  - *հին արևելյան միահեծանություններ*
  - *Ուշ միջնադարի բացարձակ միապետություններ*
- *սահմանափակ*
  - *վաղ ավատատիրական*
  - *դասային ներկայացուցչական*
  - *սահմանադրական*
    - *խորհրդարանական*
    - *դուալիստական*

ՆՈՐ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ

կառավարությունը կազմավորվում է ընտրություններում հաղթած կուսակցության կողմից կամ ընտրվում է խորհրդարանի կողմից, հաշվետու և պատասխանատու է նրա առջև: Խորհրդարանը կարող է անվստահության քվե հայտնել կառավարությանը:

ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ

կառավարությունը կազմում է նախագահը:
Կառավարությունն իր գործունեության համար հաշվետու և պատասխանատու է միայն նախագահի առջև:

ԽԱՌՆ

պառլամենտական խմբակցությունների հետ խորհրդակցությունների հիման վրա նախագահը վարչապետ է նշանակում խորհրդարանի ձեռնամասնության վստահությունը վայելող անձին, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա առավել թվով պատգամավորների վստահությունը վայելող անձին: Կառավարությունը պառլամենտի հավանությանն է ներկայացնում իր ծրագիրը: Վերջինս իրավաուն է անվստահություն հայտնել կառավարությանը:

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ

Փարիզի կոմունա, խորհրդային, ժողովրդադեմոկրատական

պետական կառուցակարգը կազմավորվում է ոչ թե իշխանությունների բաժանման, այլ կենտրոնացման սկզբունքով: Արգելված է այլախոհությունը և բազմակուսակցական համակարգը: Կուսակցության միջոցները հանդիսացված են, պետությունը կարգավորում ու վերահսկում է նյութական ու հոգևոր բարիքների արտադրությունը և բաշխումը: Սոցիալիզմի և կոմունիզմի շինարարության:



Պետահիրավական ռեժիմ հասկացությունը և տեսակները

Պետահիրավական ռեժիմը պետական կառուցակարգի միջոցով իշխանության իրականացման, պետության գործունեության իրավական ձևերի, մեթոդների, միջոցների, եղանակների և հնարքների համակցությունն է, որի միջոցով պետական իշխանությունը լեգիտիմացնում է իրեն (գոյությունը և գործողությունը), իսկ հավաքական գործողության հետևանքը ժողովրդավարության փաստական մակարդակն է:

Ժողովրդավարական | Հակաժողովրդավարական

ԹԵՄԱ 9. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՑԱԿԱՐԳԸ (ՄԵԽԱՆԻԶՄԸ)

Թեմայի բովանդակությունը

- *Պետությունը որպես հասարակության կառավարման կառուցակարգ:*
- *Պետության կառուցակարգի և ապարատի հարաբերակցության հիմնախնդիրը:*
- *Պետության կառուցակարգը (մեխանիզմը). հասկացությունը, բնութագրական գծերը: Պետության կառուցակարգի կառուցվածքը: Պետական կառուցակարգի կազմավորման վրա ազդող գործոնները: Պետական կազմակերպությունները որպես պետական կառուցակարգի բաղադրամաս. հասկացությունը, տեսակները:*
- *Պետական ապարատի հասկացությունը, հատկանիշները: Պետական ապարատի կառուցվածքը.պետական մարմիններ, պետական կառավարչական հիմնարկներ: Պետական կառավարչական հիմնարկի հասկացությունը և գործառույթները:*
- *Պետության մարմին. հասկացությունը, հատկանիշները: Պետական մարմնի պետաիշխանական լիազորությունները, իրավասությունը, կառուցվածքը: Պետական մարմինների դասակարգումը. ըստ իշխանությունների տարանջատման սկզբունքի, ըստ պետական ապարատի աստիճանակարգության մեջ գրաված տեղի և դիրքի, ըստ որոշումների ընդունման եղանակի, ըստ իրավական գործունեության ձևի, ըստ իրավասության բնույթի, ըստ կազմավորման եղանակի, ըստ լիազորության ժամկետների:*
- *Պետական մարմինները և տեղական ինքնակառավարման մարմինները: Կենտրոնացված և ապակենտրոնացված պետություններ: Տեղական ինքնակառավարումը որպես ժողովրդաիշխանության ձև: Տեղական ինքնակառավարման հասկացությունը:*
- *Պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունքների հասկացությունը և հատկանիշները: Պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունքների դասակարգումը. հիմնարար սկզբունքներ, ընդհանուր սկզբունքներ, ճյուղային սկզբունքներ, կոնկրետ սկզբունքներ: Պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունքների շրջանակի վրա ազդող գործոնները:*
- *Պետական ապարատի կազմակերպման և գործունեության ընդհանուր սկզբունքները. մարդասիրության, ժողովրդավարության, հրապարակայնության, իրավական օրինականության, իշխանությունների բաժանման, պետական ծառայության մատչելության և արհեստավարժու-*

թյան, կոլեգիալության և միանձնյա կառավարման զուգակցման, պետության՝ հասարակության առջև պետության հանրային-իրավական պատասխանատվության, պաշտպանունակության:

§ 1. Պետությունը որպես հասարակության կառավարման կառուցակարգ

Պետությունն ունի հասարակության կառավարման հատուկ կառուցակարգ (մեխանիզմ): Պետական կառուցակարգը մարդկանց միասնական խումբ է, որն անջատված է հասարակությունից և զբաղվում է միայն կառավարմամբ: Պետության կառուցակարգը, փաստորեն, պետական իշխանության և կառավարման նյութական արտահայտությունն է: Իր մարմինների ու կազմակերպությունների օգնությամբ պետությունն իրականացնում է հասարակության անմիջական կառավարումը, պաշտպանում իր սահմանների անձեռնմխելիությունը, ապահովում քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Ի տարբերություն մինչպետական, նախնադարյան համայնական հասարակությունից պետական հասարակությունում իշխանական գործառույթներն իրականացնում է հասարակությունից առանձնացած, արտադրական աշխատանք չկատարող մարդկանց խումբը: Արտաքուստ պետությունը հանդես է գալիս որպես իշխանության իրականացման և հասարակության կառավարման կառուցակարգ:

Պետության կառուցակարգն օբյեկտիվորեն անհրաժեշտ է, քանզի հասարակությունը չի կարող գոյություն ունենալ և զարգանալ առանց պետական կառավարման կառուցակարգի: Պետական կառուցակարգը նպատակամղված ներազդում է հասարակական հարաբերությունների վրա դրանք կարգավորելու և պլանավորելու համար: Այդ ընթացքում պետությունն օգտագործում է նաև հարկադրանքը, որը կիրառում են հատուկ մարմինները՝ բանակ, հասարակական կարգի և անվտանգության մարմիններ և այլն:

§ 2. Պետության կառուցակարգի և ապարատի հարաբերակցության հիմնախնդիրը

Պետության կազմակերպական կառույցը նշելու համար պետականագիտության մեջ օգտագործվում են մի շարք հասկացություններ, ինչպես օրինակ՝ «պետության մեխանիզմ», «պետական ապարատ», «պետական իշխանության մեխանիզմ»: Հայերենում մեխանիզմ եզրույթը թարգմանվում է՝ կառուցակարգ:

եզրույթաբանական բազմազանությունից բացի, պետականագիտության մեջ կան տարբեր մոտեցումներ, թե ի՞նչ են պետական կառուցակարգը և պետական ապարատը, ինչպիսի՞ն է դրանց հարաբերակցությունը, ի՞նչ կառուցվածք ունեն դրանք, որո՞նք են դրանց կառուցվածքային մասերի կազմակերպական իրավական ձևերը: Այսպիսով՝ պետության տեսության առջև ծառացած խնդիրներից է՝ որոշել «պետական (կամ պետության) կառուցակարգ» («պետության մեխանիզմ») հասկացությունների հարաբերակցությունը «պետական ապարատ» հասկացության հետ:

Առանձին հեղինակներ «պետական ապարատ» և «պետական կառուցակարգ» հասկացությունները համարում են մոտավորապես հավասարազոր՝ դրանք ընդունելով որպես հոմանիշներ: Սակայն, այդպիսի մոտեցման հետ համաձայնվել չի կարելի: «Պետական կառուցակարգ» հասկացությունն ավելի լայն է ու ընդգրկուն, քան «պետական ապարատ» հասկացությունը: «Պետական կառուցակարգ» հասկացությունը բավականին տարողունակ է, բազմաբովանդակ և խորը: Պետության կառուցակարգի կառուցվածքում ներառվում են՝ 1) պետական մարմինները և կառավարչական հիմնարկները (պետական ապարատը), 2) պետական կազմակերպությունները, որոնք չեն օժտված իշխանական լիազորությունով, այլ կատարում են համասոցիալական գործառույթներ տնտեսության, կրթության, առողջապահության, մշակույթի, գիտության ոլորտներում: 3) պետական ծառայողները, որոնք զբաղվում են կառավարմամբ, 4) ֆինանսական և կազմակերպական միջոցները, ինչպես նաև հարկադրական ուժը, որոնք անհրաժեշտ են պետական կառուցակարգի արդյունավետ գործունեության համար,

§ 3. Պետության կառուցակարգը (մեխանիզմը). հասկացությունը և հատկանիշները

Պետության կառուցակարգը պետական մարմինների և հիմնարկությունների (պետական ապարատի), ինչպես նաև պետական կազմակերպությունների ամբողջական աստիճանակարգված համակարգ է, որի միջոցով գործնականում իրականացվում է պետական իշխանությունը, պետության խնդիրներն ու գործառույթները:

Պետության կառուցակարգի բնութագրական գծերն են.

1. Պետական կառուցակարգն իրենից ներկայացնում է պետական մարմինների, պետական կառավարչական հիմնարկների և պետական կազմակերպությունների ամբողջություն: Պետության կառու-

ցակարգն իրենից ներկայացնում է բարդ համակարգ, այսինքն՝ պետական մարմինների, պետական կառավարչական հիմնարկությունների և կազմակերպությունների կարգավորված համակցություն: Պետական կառուցակարգի մի մասը, ընդ որում, հիմնական մասը, միջուկը պետական ապարատն է, որով, բնականաբար, պայմանավորվում է կառուցակարգի ներքին կառուցվածքը: Պետական ապարատն իրենից ներկայացնում է պետական մարմինների ամբողջություն: Պետական կառուցակարգի մեջ, բացի ապարատից, մտնում են նաև պետական կազմակերպությունները: Պետական կառուցակարգի բաղկացուցիչ մաս կազմող պետական մարմինների և պետական կազմակերպությունների հիմնական տարբերակիչ հատկանիշն իշխանական լիազորություններով օժտվածությունն է:

2. Պետության կառուցակարգը ամբողջական է, ունի միասնական խնդիրներ ու նպատակներ: Պետական բոլոր մարմինները և կազմակերպությունները միմյանց հետ սերտորեն կապակցված են: Նրանցից յուրաքանչյուրը կատարում է որոշակի խնդիր, հանդիսանում է ընդհանուր կառուցակարգի օղակը, որով բոլոր մարմինները գործում են համաձայնեցված, միասնական, ներդաշնակ:

3. Պետության կառուցակարգի հիմնական տարրերն են համարվում պետական մարմինները: Պետական մարմինների համակարգը կազմում է պետական ապարատը: Յուրաքանչյուր պետական մարմին, որպես ընդհանուրի մաս, հանդիսանում է պետական իշխանության կրողը: Պետական մարմինը լինելով պետական ապարատի հիմնական բաղադրատար, միակը չէ, որովհետև պետական ապարատի կառուցվածքում ներառվում են նաև պետական կառավարչական հիմնարկները:

4. Պետության կառուցակարգը կազմակերպական և նյութական ուժն է, որի օգնությամբ պետությունն իրականացնում է իր իշխանությունը, կառավարում է հասարակությունը, հասնում կոնկրետ արդյունքների՝ լուծելով իր առջև դրված խնդիրները: Կառուցակարգը պետության իշխանության կառուցվածքային և առարկայական մարմանավորումն է:

§ 4. Պետական կառուցակարգի կազմավորման վրա ազդող գործոնները

Պետական կառուցակարգի կառուցման և գործունեության հիմքում ընկած են օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններ, որոնք կանխորոշում են դրա ներքին կառուցվածքը, գործունեության բնույթը, ձևերը

և մեթոդները: Պետական կառուցակարգի վրա զգալի ազդեցություն են գործում տնտեսությունը, սոցիալական կառուցվածքը (օրինակ՝ ազգային կազմը), տարածքային չափերը, աշխարհագրական դիրքը, քաղաքական ուժերի փոխհարաբերակցությունը, կրոնը, պետության նպատակները, խնդիրներն ու գործառույթները և այլ գործոններ: Այդ գործոնների ազդեցությանը համապատասխան էլ ձևավորվում, ստեղծվում է պետական կառուցակարգը, կատարվում են անհրաժեշտ փոփոխություններ դրանում:

Պատմական փորձը վկայում է, որ պետության կառուցակարգը քարացած չէ: Այն մշտապես զարգանում ու նորանում է: Մարդկային հասարակության զարգացման տարբեր դարաշրջաններում պետական կառուցակարգն ունեցել է իր առանձնահատկություններն ու ուրույն կառուցվածքը, որոնք հետևել են ժամանակի պահանջներին և կյանքի պայմաններին: Պետական ապարատի միջոցով իրականացվում է հասարակական և պետական գործերի կառավարումը: Հասարակության զարգացմանը զուգընթաց այդ «կառավարումը», դրա հետ՝ նաև պետական ապարատը, անընդհատ բարելավվում և կատարելագործվում են: Սակայն միաժամանակ պետական կառավարման հասարակական ոլորտներն ընդարձակվում և խորանում են: Համապատասխանաբար ձևավորվում են նոր մարմիններ և հիմնարկություններ, ինչը հանգեցնում է պետական ապարատի և նրա ծառայողների քանակական աճին, իսկ որոշ դեպքերում՝ նաև ուռճացման: Սա արդի դարաշրջանում պետականության և պետական կառուցակարգի զարգացման միտումներից մեկն է: Հետևաբար օպտիմալ պետական ապարատի հիմնադրումը բավականին հիմնախնդիրային հարց է:

§ 5. Պետական կազմակերպությունները որպես պետական կառուցակարգի բաղադրամաս

Պետական կառուցակարգն իրենից ներկայացնում է պետական մարմինների, պետական կառավարչական հիմնարկների և պետական կազմակերպությունների ամբողջություն: Ի՞նչ են պետական կազմակերպությունները: Իրավաբանական գրականության մեջ այս հիմնահարցին վերաբերվել են թռուցիկ կերպով, առանց խորքային և հանգամանալից քննարկման: Արդյունքում տեսական պետականագիտության տեսադաշտից դուրս են մնացել այնպիսի հիմնահարցեր, ինչպիսին է պետական մեխանիզմի յուրաքանչյուր բաղադրատարրի կազմակերպական իրավական ձևը: Չկա նաև հստակ եզրութաբա-

նական մոտեցում: Պետական մարմին չհամարվող բաղադրատարրերը նշելու համար օգտագործում են հիմնարկ, հաստատություն, կազմակերպություն եզրույթները՝ երբեմն հստակ իմաստային և կարգավիճակային տարբերություն չդնելով դրանց միջև: Այնինչ, հետևողական մոտեցումը պահանջում է վեր հանել դրանց տարբերությունները, ընդ որում, հաշվի առնելով արդեն ընդունված և գործող օրենսդրությունը՝ նվիրված այդ հարաբերությունների կարգավորմանը:

Պետական ապարատի կառուցվածքից դուրս մնացած, սակայն պետական կառուցակարգի մաս կազմող մնացած բաղադրատարրերը նշելու համար ճիշտ է օգտագործել «պետական կազմակերպություն» եզրույթը: Պետական կազմակերպություններն անմիջականորեն պրակտիկ գործունեություն են ծավալում պետության գործառույթները տարբեր ոլորտներում կատարելու ուղղությամբ (տնտեսական, սոցիալական, մշակութային, պաշտպանական և այլն): Սոցիալական և մշակութային գործառույթներն ընդգրկում են նաև գիտության, կրթության (գիտական, նախագծային, հանրակրթական դպրոցների, քոլեջների, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական կազմակերպությունների ցիրուցավորված ցանցը), առողջապահության և այլ բնագավառները: Սակայն, պետական կազմակերպությունները կարող են իրականացնել նաև տնտեսական գործունեություն, այսինքն՝ թողարկել արտադրանք, կատարել զանազան աշխատանքներ, մատուցել ծառայություններ հասարակությանն ու բավարարել մարդկանց պահանջմունքները, ստեղծել եկամուտներ: Այդպիսով, պետական կազմակերպություններն իրենց բնույթով կարող են լինել առևտրային և ոչ առևտրային: Ներկայումս սրանց կազմակերպական իրավական ձևի հիմնահարցերը ենթարկված են իրավական կարգավորման: Արդյունքում իրականության մեջ կան պետական առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններ:

Համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի (23.10.2001թ.) 3-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Պետական կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որն ստեղծվում է միայն մշակույթի, առողջապահության, սոցիալական, սպորտի, կրթության, գիտության, բնապահպանական և ոչ առևտրային այլ բնագավառներում գործունեություն իրականացնելու նպատակով»: Հոդվածի մեկնաբանությունից բխում է, որ մշակույթի, առողջապահության, սոցիալական, սպորտի, կրթության, գիտության, բնապահպանական բնագա-

վառներն օրենսդրության կողմից դիտարկվում են ոչ առևտրային բնագավառներ, ուստի ոլորտի կազմակերպությունները պիտի ունենան ոչ առևտրային կազմակերպության ձև:[1]

§ 6. Պետական ապարատի հասկացությունը, հատկանիշները

«Պետական ապարատ» հասկացությունն իրավաբանական գրականության մեջ ընկալվում է որպես իշխանական լիազորություններով օժտված պետական մարմինների համակարգ: Պետական ապարատը յուրաքանչյուր պետության կարևորագույն բաղկացուցիչ տարրն է: Դա այն «արքիմեդյան լծակն է», որի օգնությամբ հասարակությունը լուծում է իր առջև դրված խնդիրները: Պետականագիտության մեջ չկա պետական ապարատ հասկացության միասնական բնորոշում: Սակայն բոլոր հեղինակները, որպես կանոն, առանձնացնում են պետական ապարատի ձևական (ֆորմալ) հատկանիշը, այսինքն՝ այն մարմինների համակարգ է, որի օգնությամբ իրականացվում է պետական և հասարակական գործերի կառավարումը:

«Պետական ապարատ» հասկացությունը կարելի է բնորոշել հետևյալ կերպ. **պետական ապարատը որոշակի կազմակերպական և գործառութային սկզբունքներով կառուցված պետական մարմինների և պետական կառավարչական հիմնարկների համակարգ է, որն իրականացնում է պետական կառավարումը՝ հանդես գալով որպես հասարակության, անհատների իրավունքների ու օրինական շահերի երաշխավոր ու պաշտպան, և որի գործառույթներն ապահովվում են կազմակերպական, ֆինանսական միջոցներով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ պետական հարկադրանքով:**

Պետական ապարատի առավել բնութագրական հատկանիշներն են.

1. Պետական ապարատում ընդգրկվում են մարդիկ, որոնք հատուկ զբաղվում են կառավարմամբ (իրավաստեղծագործություն, հրապարակված օրենքների կատարում, իրավապահպանություն):

2. Պետական ապարատն իրենից ներկայացնում է մի համակարգ, որի մեջ ընդգրկված մարմիններն իրենց իշխանական անմիջական գործառույթներն իրականացնելու ընթացքում գտնվում են սերտ համագործակցության մեջ:

---

[1] ՀՀ կառուցակարգում մենք հանդիպում ենք նշված ոլորտներում առևտրային կազմակերպությունների կարգավիճակով գործող սուբյեկտների, ինչը զարմանալիորեն անհասկանալի և անտրամաբանական կարգավորում է:

3. Պետական ապարատը հանդես է գալիս որպես քաղաքացիների իրավունքների ու օրինական շահերի երաշխավոր ու պաշտպան:

4. Պետական ապարատի բոլոր օղակների գործառույթներն ապահովվում են կազմակերպչական, ֆինանսական (բյուջետային) միջոցներով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև հարկադրական ներգործությամբ: Առանց թվարկված միջոցների ոչ մի պետություն չի կարող գոյատևել: Դրանց թվին են դասվում նյութական արժեքները, բյուջետային միջոցները, գույքը, շենքերը, օժանդակ շինությունները, ինչպես նաև կազմակերպությունները, հիմնարկները, որոնք անհրաժեշտ են պետական մարմինների գործունեության համար:

§ 7. Պետական ապարատի կառուցվածքը

Պետական ապարատի առաջնային բաղադրատարրը պետական մարմինն է, սակայն այն ներառում է նաև պետական մարմինների իրավասության իրականացմանն օժանդակող աշխատանքային կառույցները, այսինքն՝ պետական կառավարչական հիմնարկները, որոնք իշխանական ուժի չեն տիրապետում, սակայն կարևոր դեր են կատարում պետական որոշումների նախապատրաստման և կատարման գործում: Այսպիսով, և՛ պետական ապարատի, և՛ պետական մեխանիզմի առաջնային բաղադրատարրը պետական մարմինն է, օրինակ՝ Հանրապետության նախագահը: Սակայն նախագահը միանձնյա կերպով, առանց օժանդակության չի կարող արդյունավետ կատարել իր գործառույթները: Հետևաբար պետական մարմինները իրենց իրավասության իրականացման համար ստեղծում են օժանդակող աշխատանքային կառույցներ (այսինքն՝ պետական հիմնարկներ), որոնք իշխանական ուժի չեն տիրապետում, սակայն կարևոր դեր են կատարում պետական որոշումների նախապատրաստման գործում: Պատմականորեն նման հաստատությունները կոչվել են գրասենյակներ, գործերի կառավարչություններ: ՀՀ-ում դրանց կազմակերպական իրավական ձևը **պետական կառավարչական հիմնարկն** է, որը միջնորդավորում և կոնկրետ պետական մարմնի գործունեությունը դարձնում է նպատակասլաց:

Համաձայն «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի՝ հիմնարկն իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն է, որն ստեղծվում է Հանրապետության նախագահին, օրենսդիր, գործադիր, դատական իշխանության մարմիններին, դատախազությանը, ինչպես նաև օրենքի հիման վրա ստեղծված պետական կառավարչական գործառույթ-

ներ իրականացնող մարմիններին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման և քաղաքացիական իրավահարաբերություններին նրանց մասնակցության ապահովման նպատակով: Նույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված է, որ հիմնարկն իրավունք ունի իրականացնել միայն այնպիսի գործողություններ, որոնք նպատակաուղղված են համապատասխան պետական մարմնին վերապահված լիազորությունները լիարժեք և արդյունավետ իրականացնելուն, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին նրանց մասնակցության ապահովման նպատակով: Այսպիսով, պետական կառավարչական հիմնարկն իրականացնում է երկու հիմնական գործառույթ՝ համապատասխան պետական մարմնին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման ապահովման և համապատասխան պետական մարմնի քաղաքացիական իրավահարաբերություններին մասնակցության ապահովման:

§ 8. Պետության մարմին. հատկանիշները, հասկացությունը

Պետական մարմնի՝ որպես պետության կառուցակարգի բաղկացուցիչ մասի հասկացության բնորոշումը կառուցելու համար, նախ, փորձենք վեր հանել նրա բնութագրական հատկանիշները:

1) Պետական մարմին օժտված է պետահիշխանական լիազորություններով: Պետահիշխանական լիազորությունները պետական մարմնին հնարավորություն են տալիս իր իրավասության շրջանակում լուծել որոշակի հարցեր, հրապարակել համապարտադիր կանոններ և ապահովել դրանց կատարումը: Պետական մարմինը կարող է հրապարակել կատարման համար պարտադիր նորմատիվ և անհատական իրավական ակտեր: Այդ ակտերի կատարման համար պետական մարմինը կարող է կիառել տարբեր մեթոդներ, այդ թվում՝ հարկադրանք:

2) Պետական մարմինները ունեն իրավասություն՝ իրավունքների և պարտականությունների ամբողջություն: Պետահիշխանական լիազորություններն իրենց արտահայտությունն են գտնում պետական մարմինների իրավասության մեջ: Իրավասությունը պայմանավորված է տվյալ պետական մարմնի առջև դրված խնդիրներով և գործառույթներով: Իրավասությունը պետական մարմնի տնօրինման առարկայի և դրա նկատմամբ օժտված լիազորությունների համակցությունն է: Պետական մարմնի իրավասությունը սահմանվում է սահմանադրությամբ, օրենքներով, այլ իրավական ակտերով:

3) Պետական մարմիններն ունեն ներքին կառուցվածք: Պետական մարմինը կազմված է համապատասխան ստորաբաժանումներից և պետական ծառայողներից: Պետական մարմնի կառույցը ներառում է ըստ տեսակների դասակարգված, նրա ենթակայության տակ գտնվող առանձին ծառայություններ (վարչություններ, բաժիններ, կազմակերպություններ), հաստիքներ: Բացի դրանից, յուրաքանչյուր մարմնի կառուցվածքի մեջ մտնում են նրա հիմնարկները: Հաստիքային ծառայողները և աշխատողները այդ մարմնի վրա դրված լիազորությունների անմիջական կատարողներն են կամ կատարման անմիջական տեխնիկական ապահովողները:

Պետական մարմնի կառուցվածքային մասերին կամ ստորաբաժանումներին միավորում է այդ մարմնի առջև դրված նպատակների միասնությունը և ծառայողական կարգապահությունը:

4) Պետական մարմինների կազմավորումը, կառուցվածքը և գործունեության կարգը սահմանվում են օրենսդրությամբ: Այսպես, ՀՀ Ազգային ժողովի ընտրության, կառուցվածքի և գործունեության կարգի հիմունքները սահմանված են Սահմանադրությամբ, իսկ դրանց ընթացակարգը և մանրամասնությունները օրենքներով:

5) Պետական մարմինը պետության կողմից լիազորված է իրականացնել նրա խնդիրները և գործառույթները: Պետական մարմինները կազմում են միասնական պետական ապարատը, որի գլխավոր խնդիրն հասարակության կենսագործունեության ապահովումը, մարդու իրավունքների ապահովումը և պաշտպանությունը, պետության պաշտպանությունը և անվտանգության ապահովումը: Պետական մարմինն իր խնդիրներն ու գործառույթներն իրագործում է երեք ձևով՝ ընդհանուր բնույթի կարգադրագրերի հրապարակում (նորմատիվ ակտեր), անհատական բնույթի կարգադրագրերի ընդունում (կիրառման ակտեր), կազմակերպչական աշխատանքների իրականացում: Իր խնդիրների իրագործման համար պետական մարմինն ունի անհրաժեշտ նյութական և ֆինանսական միջոցներ:

6) Պետական մարմինները պետության միասնական կառուցակարգի հարաբերականորեն ինքնուրույն մասն են: Պետական բազմազան մարմինները միմյանցից տարբերվում են իրենց ձևավորման կարգով, իրականացվող պետական գործունեության տեսակով, իրավասությունների բնույթով ու ծավալով, լիազորությունների կատարման առանձնահատկություններով, պետական գործառույթներ իրականացնելու ձևերով ու մեթոդներով: Պետական յուրաքանչյուր մարմին մյուս մարմինների համակարգում գործում է մասնագիտացված ձևով:

Այսպիսով, պետական մարմինը պետության կառուցակարգի իրավաբանորեն ձևակերպված, կազմակերպական կառուցվածքով և տնտեսապես առանձնացված մասն է, որ կազմավորվում և գործում է օրենքով սահմանված կարգով, օժտված է պետաիշխանական լիազորություններով՝ իր իրավասության շրջանակներում որոշակի խնդիրներ ու գործառույթներ իրականացնելու համար:

§ 9. Պետական մարմինները և տեղական ինքնակառավարման մարմինները

Ցանկացած պետություն հասարակությանը կառավարում է նախևառաջ կենտրոնական (համապետական) մարմինների միջոցով: Բնականաբար, միայն նրանք ի վիճակի չեն ամենուր լուծելու կառավարման բոլոր խնդիրները: Քանի որ պետությունն ունի տարածք, ապա առաջանում է տեղերում՝ պետության տարածքային մասերում, կառավարման անհրաժեշտությունը: Դա իրականացվում է տեղական մարմինների միջոցով:

Տեղական կառավարումն ունի իր տարատեսակները: Հնում միապետները, որպեսզի կարողանային կառավարել թագավորության ընդհարձակ տարածքները՝ հենվում էին տեղական իշխանավորների վրա: Վերջիններս երբեմն հենց տեղական ցեղախմբի առաջնորդներն էին, իսկ երբեմն էլ նշանակվում էին թագավորի կողմից: Նրանք արքային վճարում էին հարկ, տրամադրում զորք, մասնակցում էին համազգային նշանակություն ունեցող որոշումների կայացմանը: Հայ թագավորները երկիրը կառավարում էին նախարարների, իշխանների միջոցով: Այդպիսի տեղական կառավարումը կրում էր հայրենակալվածքային բնույթ: Նախարարը միաժամանակ և՛ տվյալ տարածքի (հայրենակալվածքի) սեփականատերն էր, և՛ կառավարողը:

Արդի պետություններում տեղական կառավարումը բազմազան է: Կան **կենտրոնացված պետություններ**, որոնցում տեղական մարմինները նշանակվում են վերևից, և կան **ապակենտրոնացված պետություններ**, որոնցում այդ մարմիններն ինքնուրույն և կենտրոնական իշխանությունից անկախ են: Դրանք ընտրվում են վարչական որևէ մի տարածքի բնակչության կողմից և կոչվում են տեղական ինքնակառավարման մարմիններ:

Տեղական ինքնակառավարումը ժողովրդաիշխանության ձև է: Տեղական ինքնակառավարումը պետական կառավարում չէ: Այն ժողովրդի իշխանության իրականացման ձևերից մեկն է, այլ ոչ թե պետության իշխանության շարունակությունը: Այդ իսկ պատճառով տե-

ղական ինքնակառավարման մարմինները համարվում են ժողովրդավարության հիմքերից մեկը:

Տեղական ինքնակառավարումը կառավարման ապակենտրոնացված ձև է և ենթադրում է տեղական ինքնակառավարվող տարածքային միավորների ընտրովի մարմինների ինքնուրույնությունը և ինքնավարությունը: Տեղական ինքնակառավարման համակարգն ապակենտրոնացված է, որովհետև այն պետության տարածքային բաժանմանը համապատասխան կառուցված հորիզոնական կառույց է: Դրա և պետական կառավարման կառույցների միջև չկա ուղղակի վարչական ենթակայություն: Օրինակ՝ մեր Հանրապետության տարածքը բաժանվում է մարզերի, իսկ մարզերն իրենց հերթին կազմված են գյուղական և քաղաքային համայնքներից: Մարզերում իրականացվում է պետական կառավարում, իսկ համայնքներում՝ տեղական ինքնակառավարում: Մարզպետի իշխանությունը պետական կենտրոնական գործադիր իշխանության շարունակությունն է տեղում: Գյուղական և քաղաքային համայնքներում իրագործվում է ոչ թե պետական կառավարում, այլ համայնքային ինքնակառավարում՝ համայնքի կողմից ընտրվող ինքնակառավարման մարմինների միջոցով:

Տեղական ինքնակառավարումը համայնքի իրավունքն ու կարողությունն է՝ սեփական պատասխանատվությամբ բնակիչների բարօրության նպատակով Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան լուծելու տեղական նշանակության հարցերը: Առանց համապատասխան իրավական և նյութաֆինանսական երաշխիքների ինքնակառավարումն անիմաստ է: Որպեսզի համայնքները կարողանան լուծել համայնքային հարցերը, օրինակ՝ բնակավայրի բարեկարգումը, պետք է ունենան համապատասխան լիազորություններ և նյութական միջոցներ: Այդ նպատակով Սահմանադրությունն ամրագրում է համայնքի ինքնակառավարման մի շարք երաշխիքներ:

§ 10. Պետական մարմինների դասակարգումը

Պետական մարմինները բազմազան են: Այդ բազմազան համակցությունը կարելի է ենթարկել դասակարգման՝ հիմք ընդունելով որոշակի չափանիշներ:

1. **Ըստ իշխանությունների տարանջատման սկզբունքի** պետական մարմինները լինում են՝ ա) **օրենսդիր** մարմիններ, օրինակ՝ ՀՀ Ազգային ժողով, բ) **գործադիր** մարմիններ, օրինակ՝ կառավարություն, նախարարություն, գ) **դատական** մարմիններ, օրինակ՝ սահմանադրական դատարանը:

2. **Ըստ պետական ապարատի աստիճանակարգության մեջ գրաված տեղի և դիրքի** պետական մարմինները բաժանվում են՝ ա) **կենտրոնական** կամ հանրապետական մարմիններ, որոնց իրավասությունը տարածվում է պետության ողջ տարածքի վրա. բ) **տեղական** պետական մարմիններ, որոնց իրավասությունը տարածվում է պետության տարածքի մի մասի՝ վարչատարածքային մեկ միավորի վրա: Օրինակ՝ մարզպետի և մարզպետարանի իրավասությունը տարածվում է տվյալ մարզի տարածքում: Դաշնային պետություններում պետական մարմինները բաժանվում են դաշնության մարմինների և դաշնության սուբյեկտների մարմինների:

3. **Ըստ որոշումների ընդունման եղանակի կամ իրավասության իրականացման կարգի** պետական մարմինները լինում են. ա) **կոլեգիալ** մարմիններ, օրինակ՝ կառավարությունը, որտեղ որոշումներն ընդունվում են կառավարության անդամների քվեարկության միջոցով. բ) **միանձնյա** մարմիններ, օրինակ՝ նախագահը, որն իրավական ակտերը ընդունում է միանձնյա:

4. **Ըստ իրավական գործունեության ձևի** պետական մարմինները լինում են՝ ա) **իրավաստեղծ մարմիններ**, որոնց գործունեությունն արտահայտվում է իրավունքի նորմերի պաշտոնական սահմանմամբ, սանկցավորմամբ, փոփոխմամբ, վերացմամբ և ավարտվում է նորմատիվ իրավական ակտի կամ իրավունքի այլ աղբյուրի (դատական նախադեպ և այլն) հրապարակմամբ: Օրինակ, խորհրդարանը ընդունում է օրենքներ. բ) **իրավակիրառ մարմիններ**, այսինքն՝ միայն իրավունքի նորմերը կիրառող մարմիններ, որոնց գործունեությունն ուղղված է անհատական իրավական գործերի քննությանը և լուծմանը, իրավունքի նորմերի կիրառմանը, որն ավարտվում է անհատական իրավական ակտի ընդունմամբ. գ) **իրավապահպան մարմիններ**, որոնց գործունեությունն ուղղված է իրավական նորմերով կարգավորված հասարակական հարաբերությունների պահպանության իրավական գործողությունների կատարմանը, անհատին իրավախախտումներից պահպանելուն, մեղավորներին պատասխանատվության ենթարկելուն, պետական հարկադրանք կիրառելուն: Պետության բոլոր մարմինները, ըստ էության, իրականացնում են իրավապահպան գործունեություն, սակայն որոշ մարմինների համար այդ գործունեությունը հիմնական է: Օրինակ, ազգային անվտանգության, դատախազության, ոստիկանության և այլ մարմինները:

5. **Ըստ իրավասության բնույթի** պետական մարմինները լինում են՝ ա) **ընդհանուր** իրավասության մարմիններ, որոնց իրավասությունը ներառում է հասարակական կյանքի ամենատարբեր կողմերի ու

ոլորտների կառավարման հարցերը, օրինակ՝ ՀՀ կառավարությունը. բ) **հատուկ** կամ ճյուղային իրավասության մարմիններ, որոնց իրավասությունը ներառում է հասարակության կյանքի որևէ մեկ կողմի, ոլորտի կառավարման հարցերը, օրինակ՝ պաշտպանության նախարարությունը որպես գործադիր մարմին իրականացնում է երկրի պաշտպանության համակարգի կառավարման գործառույթը. գ) **միջճյուղային** իրավասության մարմիններ, որոնց իրավասությունը ներառում է կառավարման բոլոր հնարավոր ոլորտներին վերաբերող որևէ հարցի կարգավորումը կամ կառավարումը, օրինակ՝ վիճակագրական վարչությունը հավաքում և համակարգում է կառավարման բոլոր բնագավառներին վերաբերող վիճակագրական տվյալները:

6) **Ըստ կազմավորման եղանակի** տարբերում են ա) **ներկայացուցչական** մարմիններ, որոնք ընտրվում են անմիջապես բնակչության կողմից, օրինակ՝ խորհրդարանը, Հանրապետության նախագահը. բ) **նշանակովի** մարմիններ, որոնք ձևավորվում են սահմանադրությամբ և օրենքներով լիազորված պետական մարմինների կողմից՝ ընտրության կամ նշանակման միջոցով: Օրինակ՝ կառավարությունը, նախարարությունները. գ) **ժառանգական** մարմիններ, օրինակ միապետը, որի իշխանությունը փոխանցվում է գահաժառանգության կարգին համապատասխան:

7) **Ըստ լիազորության ժամկետների** պետական մարմինները բաժանվում են մշտականի և ժամանակավորի: **Մշտական** մարմինները ստեղծվում են սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, առանց գործունեության ժամկետների սահմանափակման, գործում են մշտապես: **Ժամանակավոր** մարմինները ստեղծվում են գործնական ժամանակավոր նպատակների իրագործման համար, օրինակ՝ արտակարգ իրավիճակների հետ կապված:

● ԲԱՑԱՏՐԵ՛Ք ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԸ

Կառուցակարգ / պետական ապարատի ուռճացում / առևտրայի և ոչ առևտրային կազմակերպություն / «արքիմեդյան լծակ» / քաղաքացիական հարաբերություններ / իրավասություն / հարաբերական ինքնուրույնություն / աստիճանակարգություն / վարչատարածքային միավոր:

? ՊԱՏԱՍԽԱՆԵ՛Ք ՀԱՐՑԵՐԻՆ

1. Ո՞րն է պետության կառուցակարգի անհրաժեշտությունը:
2. Ինչպիսի՞ տեսական մոտեցումներ կան «պետության կառուցակարգ» և «պետական ապարատ» հասկացությունների հարաբերակցության վերաբերյալ:
3. Որո՞նք են պետության կառուցակարգի բաղադրատարրերը:
4. Ո՞րն է պետության կառուցակարգի հասկացության բնորոշումը:
5. Որո՞նք են պետության կառուցակարգի բնութագրական գծերը:
6. Ի՞նչ գործոններ են ազդում պետության կառուցակարգի կազմավորման վրա:
7. Ո՞րն է պետության կառուցակարգի պատմական զարգացման առնաճնահատկությունները և միտումը:
8. Ի՞նչ տեղ են գրավում պետական կազմակերպությունները պետության կառուցակարգում և որո՞նք են նրա տեսակները:
9. Ի՞նչ է պետական ոչ առևտրային կազմակերպությունը:
10. Ո՞րն է «պետական ապարատ» հասկացության բնորոշումը:
11. Որո՞նք են պետական ապարատի հատկանիշները:
12. Ի՞նչ կառուցվածք ունի պետական ապարատը:
13. Ի՞նչ է պետական կառավարչական հիմնարկը և որո՞նք են նրա գործառույթները:
14. Որո՞նք են պետական մարմնի հատկանիշները:
15. Ինչպե՞ս են արտահայտվում պետական մարմնի պետաիշխանական լիազորությունները:
16. Ի՞նչ է պետական մարմնի իրավասությունը:
17. Ո՞րն է պետական մարմնի հասկացության բնորոշումը:
18. Պետական մարմինների դասակարգման ի՞նչ չափանիշներ գիտեք:
19. Որո՞նք են պետական մարմինների տեսակները ըստ իշխանությունների տարանջատման սկզբունքի:
20. Որո՞նք են պետական մարմինների տեսակները ըստ պետական ապարատի աստիճանակարգության մեջ գրաված տեղի և դիրքի:

21. Որո՞նք են պետական մարմինների տեսակները ըստ որոշումների ընդունման եղանակի:
22. Որո՞նք են պետական մարմինների տեսակները ըստ իրավական գործունեության ձևի:
23. Որո՞նք են պետական մարմինների տեսակները ըստ իրավասության բնույթի:
24. Որո՞նք են պետական մարմինների տեսակները ըստ կազմավորման եղանակի:
25. Որո՞նք են պետական մարմինների տեսակները ըստ լիազորության ժամկետների:
26. Ինչո՞վ են տարբերվում պետական մարմինները և տեղական ինքնակառավարման մարմինները:
27. Ինչո՞վ են տարբերվում կենտրոնացված և ապակենտրոնացված պետությունները:
28. Ի՞նչ է տեղական ինքնակառավարումը:

ԿԱՏԱՐԵ՛Ք ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

1. **Պատրաստեք զեկուցում** անմիջական ժողովրդաիշխանության թվարկված ձևերի վերաբերյալ. «Հանրաքվե, ժողովրդական հարցում, ժողովրդական քննարկում, ընտրված ներկայացուցիչներին հետ կանչելը, ժողովրդական նախաձեռնություն»:

ՀԱՐՑՈՒՄ ՇՐՋԱՊԱՏԻՆ



5 մեծահասակների շրջանում անցակացրե՛ք հարցում, թե անմիջական ժողովրդաիշխանության ձևերից որին է նա մասնակցել: Արդյունքներն ամփոփե՛ք և վերլուծե՛ք լսարանում:

Պետության կառուցակարգի և ապարատի հարաբերակցությունը



Պետության կառուցակարգի հատկանիշները

- պետական մարմինների, կառավարչական հիմնարկների, պետական կազմակերպությունների համակցություն է.
- ամբողջական համակարգ է, ունի միասնական խնդիրներ ու նպատակներ.
- հիմնական տարրը պետական մարմինն է.
- կազմակերպական և նյութական ուժ է, որով պետությունն իրականացնում է իր իշխանությունը, կառավարումը.



Պետական կառուցակարգի կազմավորման վրա ազդող գործոնները



Պետական մարմնի բնութագրական գծերը
• օժտված է պետահիշխանական լիազորություններով.
• ունի օրենքով ամրագրված իրավասություն՝ լիազորություններ և պարտականություններ.
• ունի ներքին կառուցվածք՝ ընդհանուր խնդիրներով միավորված ստորաբաժանումներ և պետական ծառայողներ.
• կազմավորման, կառուցվածքի, գործունեության կարգը սահմանվում են օրենսդրությամբ.
• լիազորված է իրականացնել պետության խնդիրները և գործառույթները.
• պետության կառուցակարգի հարաբերականորեն ինքնուրույն մասն է







Պետական մարմինների դասակարգումը





ԹԵՄԱ 10. ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

§ 1. Պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունքների հասկացությունը և հատկանիշները

Պետական ապարատը պետական մարմինների համակարգ է, որոնք շախկապված են մի շարք կազմակերպական և գործառույթային սկզբունքներով: «Սկզբունք» բառը (լատիներեն principium) նշանակում է ինչ-որ երևույթի (ուսմունք, կազմակերպություն, գործունեություն և այլն) հիմք, առաջնային ելակետ, ղեկավար գաղափար, ելակետային դրույթ: Ընդունված մոտեցման համաձայն «սկզբունքն ամենի կարևորագույն մասն է»:[1]

Պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունքն առաջին հերթին գաղափար է: Որպես գաղափարներ այդ սկզբունքները մշակվել, հիմնավորվել և կյանքի են կոչվել պետական ապարատի գոյության բազմադարյա պատմության ընթացքում:

Պետական համակարգին բնորոշ ոչ բոլոր գաղափարական դրույթներն են, որ կարող են ճանաչվել որպես պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունքներ: Որպեսզի դրույթը ճանաչվի պետական ապարատի կազմակերպման ու գործունեության սկզբունք, այն պարտադիր պետք է օժտված լինի երկու հատկանիշներով, բավարարի երկու պահանջների:

1) Սկզբունք է համարվում պետական ապարատի կազմակերպման և գործունեության հիմնական, ամենաընդհանուր, ելակետային դրույթը: Պետական ապարատի կազմակերպման ու գործունեության սկզբունքները, որոշում են պետական ապարատի բոլոր հիմնական, ելակետային հարցերն ու պահերը: Ընդհանրապես, պետահիրավական ցանկացած ոլորտի կազմակերպման և գործունեության սկզբունքները որոշում են ավելի կոնկրետ իրավական դրույթների բովանդակությունը: Սկզբունքներին, որպես ելակետային դրույթների, հետևում են ավելի մասնավոր, մանրամասնեցված իրավական դրույթները և նորմերը: Սկզբունքները ղեկավար, ուղղորդիչ նշանակություն ունեն նաև պետական ապարատի փաստական գործունեության համար: Իրենց այդ հատկության ուժով սկզբունքները պայմանավորում են պետական մարմինների գործառույթները, կառուցվածքը, ներհամակարգային օղակների փոխհարաբերությունների

---

[1]Լատիներեն՝ principium est potissima pars cuiugue rei:

բնույթը, լիազորությունները, պետական ապարատի կազմակերպման և գործունեության այլ արմատական հարցեր: Սկզբունքների պահպանումը, հատկապես կարևորվում է օրինաստեղծ ոլորտում, քանի որ դրանց անտեսումը կարող է հանգեցնել պետական համակարգի հիմքերի խարխլման, խոչընդոտել համակարգի առջև դրված նպատակների և խնդիրների իրագործմանը:

2) Պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունք է այն դրույթը, որն ունի իրավական բնույթ, իրավունքի նորմի կարգավիճակ: Պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունքներն ամրագրվում են իրավական ձևերում (օրենքում): Ոչ մի գաղափար երբեք չի կարող ինքնաբերաբար պայմանավորել ինչ-ինչ հարաբերությունների իրավական կարգավորման բովանդակությունը, քանի դեռ այն չունի իրավական ձև, չի դարձել համապարտադիր պետահիշխանական կարգադրագիր: Այս տեսանկյունից պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունքները ամրագրվում են Սահմանադրությամբ կամ այլ օրենքներով կամ դուրս են բերվում դրանց իրավական դրույթների և նորմերի բովանդակությունից՝ մեկնաբանման, վերացարկման ճանապարհով: Նման սկզբունքը առանց նորմերի մեջ ուղղակիորեն, տառացիորեն ամրագրվելու, դրսևորվում է բազմաթիվ նորմերում: Այդպիսի սկզբունքը կարելի է անվանել նորմերում տարրալուծված, նրանց մեջ ծուլված սկզբունք:

Այսպիսով, պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունքներ են համարվում իրավունքի նորմերում ամրագրված (կամ դրանց իմաստից բխեցվող) դրույթները, որոնք որոշում են պետական ապարատի սոցիալական էությունը, դրա կազմակերպման և գործունեության ելակետային, հիմնական հարցերը (գործառույթները, կառուցվածքը, լիազորությունները և այլն):

§ 2. Պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունքների դասակարգումը

Պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունքների համակարգում անհրաժեշտ է տարանջատել նրա որոշակի տեսակները, որոնք միմյանց նկատմամբ գտնվում են որոշակի համակարգային ստորակարգության մեջ: Պետք է նկատի ունենալ, որ դասակարգումը պետք է կիրառել պատմական դարաշրջանի միատիպ պետությունների նկատմամբ: Այլ կերպ ասած խոսքը գնում է արդի

դարաշրջանի սոցիալ-իրավական պետության մոդելի պետական ապարատին բնորոշ սկզբունքների մասին, այլ ոչ թե ընդհանրապես պետության կազմակերպման և գործունեության սկզբունքների մասին:

Արդի դարաշրջանի պետության ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունքների համակարգը ներառում է.

ա) **հիմնարար սկզբունքներ**, մասնավորապես, իրավական պետության, սոցիալական պետության, ժողովրդավարական պետության և ինքնիշխան պետության սկզբունքները: Այս սկզբունքները, սահմանադրական ամրագրում ունեցող ամենից ընդհանուր ելակետային դրույթներն են, որոնք որոշում են պետական ապարատի կազմակերպման և գործունեության մյուս սկզբունքները.

բ) **ընդհանուր սկզբունքներ**, այսինքն՝ այնպիսի ելակետային և ղեկավար դրույթներ, որոնք ընկած են պետական ապարատի բոլոր կառուցվածքային մասերի կազմակերպման և գործունեության հիմքում, բնորոշ են այդ ապարատի բոլոր ճյուղերին, պետական բոլոր մարմիններին.

գ) **ճյուղային սկզբունքներ**, այսինքն՝ պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունքներ, որոնք ընկած են այդ ապարատի երեք ճյուղերից ամեն մեկի կազմակերպման և գործունեության հիմքում: Այսպես գործադիր իշխանության կառուցակարգի կազմակերպման և գործունեության հիմքում ընկած են լրիվ այլ սկզբունքներ, քան դատական իշխանության կամ օրենսդիր իշխանության կառուցակարգի հիմքում: Այս մակարդակի սկզբունքները մասամբ ընդհանուր սկզբունքների յուրահատուկ դրսևորումներ են իշխանության տվյալ ճյուղի ոլորտում, իսկ մասամբ էլ միայն տվյալ իշխանության ճյուղին բնորոշ սկզբունքներ են.

դ) **կոնկրետ սկզբունքներ**, այսինքն՝ սկզբունքներ, որոնց հիման վրա կազմակերպվում և գործում է կոնկրետ պետական մարմինը: Այս վերջին ենթահամակարգում գործում են և՛ հիմնարար, և՛ ընդհանուր, և՛ ճյուղային, և՛ վերջապես կոնկրետ սկզբունքները: Վերջիններս բնորոշ են միայն տվյալ պետական մարմնին, որպես պետական ապարատի կառուցվածքային մաս, օղակ:

§ 3. Պետական ապարատի կազմակերպման և գործունեության ընդհանուր սկզբունքների շրջանակը

Պետական ապարատի կազմակերպման և գործունեության ընդհանուր սկզբունքները կարելի է բնորոշել հետևյալ կերպ. պետական ապարատի կազմակերպման և գործունեության ընդհանուր սկզբունքները ելակետային դրույթներ և պահանջներ են, որոնք ընկած են պետական ապարատի բոլոր երեք ճյուղերի կազմակերպման և գործունեության հիմքում:

Յուրաքանչյուր երկրի պետական կառուցակարգի կազմակերպման և գործունեության հիմքում ընկած սկզբունքներն ունեն օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով պայմանավորվածություն: Անշուշտ, արդի ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետության մոդելը նպաստում է պետության կառուցակարգի սկզբունքների համամիասնականացմանը, սակայն պետք է նկատի ունենալ, որ կոնկրետ պետության կոնկրետ պայմանները կարող են պատճառավորել սկզբունքների շրջանակի վերանայման կամ լրացման հանգամանքը: Անշուշտ, պետական կառուցակարգի կազմակերպման և գործունեության սկզբունքների համակարգում ներառված նոր սկզբունքը չպետք է հակասի համընդհանուր ճանաչում գտած սկզբունքներին, այլ միայն լրացնի դրանք: Պետականագիտական գրականության մեջ ընդունված է, որ ցանկացած պետության կառուցակարգի կազմավորման, գործառութավորման և մշտական զարգացման վրա վճռապես ազդող գործոններ են՝ տնտեսական պայմանները, քաղաքական համակարգի ու կյանքի առանձնահատկությունները, պաշտոնական, այդ թվում՝ իրավական գաղափարախոսությունը, հասարակության բարոյաքաղաքական և գաղափարական որակները, պետական կառուցակարգի հիմնարար սկզբունքները, հասարակության առջև կանգնած խնդիրներն ու նպատակները և այլն: Պետական ապարատի ընդհանուր սկզբունքների շրջանակը պայմանավորված է նաև տվյալ պետության պատմական պայմաններով, ազգային կազմով, աշխարհաքաղաքականությամբ, մշակութային առանձնահատկություններով: Հաշվի առնելով մեր պետականության արդի առանձնահատկությունները և աշխարհաքաղաքական կացությունը, պետական ապարատի կազմակերպման և գործունեության ընդհանուր սկզբունքներ կարելի է համարել՝ ա) մարդասիրության սկզբունքը, բ) ժողովրդավարության սկզբունքը, գ) հրապարակայնության սկզբունքը, դ) իրավական օրինականության սկզբունքը, ե) իշխանությունների բաժանման սկզբունքը, զ) պետական ծառայության մատչելութ-

յան և արհեստավարժության սկզբունքը, է) կոլեգիալության և միանձնյա կառավարման զուգակցման սկզբունքը, ը) հասարակության առջև պետության հանրային-իրավական պատասխանատվության սկզբունքը, թ) պաշտպանունակության սկզբունքը:

§ 4. Իշխանությունների բաժանման սկզբունքը

Իշխանությունների տարանջատման տեսությունը ձևակերպել են անգլիացի մտածող Ջոն Լոկը (17-րդ դ.) և ֆրանսիացի լուսավորիչ Շարլ Լուի Մոնտեսքյոն (17-18-րդ դդ.): Իշխանությունների տարանջատման սկզբունքի գլխավոր պահանջն այն է, որ քաղաքական ազատության հաստատման, օրինականության ապահովման և իշխանության չարաշահումները բացառելու համար անհրաժեշտ է միասնական պետական իշխանությունը բաժանել երեք ճյուղերի: Բաժանումը պետք է դրսևորվի երեք առումներով՝ գործառութային բաժանում, ինստիտուցիոնալ բաժանում, անձնական բաժանում:

1. Իշխանությունների բաժանման գործառութային առումը: Ազատության ապահովման համար իշխանությունների բաժանումը ենթադրում է երեք առանձնացված գործառույթներ՝ օրենսդրական, գործադիր և դատական (արդարադատության):[1]

Օրենսդիր իշխանությունը ժողովրդի կողմից ընտրվող ներկայացուցչական մարմին է, որ կոչված է որոշելու հասարակության և պե-

---

[1] Որոշ հեղինակներ նախագահական իշխանությունը խառը կառավարման ձևի հանրապետություններում դիտարկում են որպես առանձին իշխանության ճյուղ՝ նախագահական իշխանություն: Սակայն նման մոտեցման հետ համաձայնվել չի կարելի: Հանրապետության նախագահը պետության գլուխն է: Պետության գլխի կարգավիճակն իշխանության նոր ճյուղի առկայություն չի նշանակում: Այնտեղ, որտեղ կա իշխանությունների բաժանում, այնտեղ չի կարող լինել նախագահական իշխանություն, որը չի համընկնում գործադիր իշխանության հետ: Հետևաբար նախագահը դուրս չի մնում իշխանությունների եռաճյուղ բաժանումից, այլ տեղավորվում է այդ համակարգում: Իշխանությունների եռաթև բաժանման համակարգում նախագահը համարվում է բարձրագույն գործադիր մարմին, որն իր կողմից ձևավորված կառավարության հետ միասին իրականացնում է գործադիր իշխանություն: Նախագահը հանդիսանում է հանրապետության գլուխը, որն իրականացնում է Հանրապետության ներքին և արտաքին քաղաքականության ընդհանուր ղեկավարումը: Նա սահմանված կարգով միջոցներ է ձեռնարկում պետության ինքնիշխանության, անկախության և տարածքային ամբողջականության պահպանման ուղղությամբ, ապահովում է պետական իշխանության մարմինների համաձայնեցված կենսագործունեությունն ու դրանց փոխհամագործակցությունը:

տության զարգացման ռազմավարությունը՝ օրենքներ ընդունելու ճանապարհով: Օրենսդիր իշխանությունը սահմանում է օրենսդրական իրավական նորմեր, որոնք որոշում են հասարակության և պետության մեջ մարդու ազատության չափը: Մասնավորապես, օրենսդիրը սահմանում է հասարակության և անհատի ազատության, անվտանգության, սեփականության ապահովման համար անհրաժեշտ և թույլատրելի հարկադրական ուժի կիրառման կանոնները:

Գործադիր իշխանությունը նշանակվում է իշխանության ներկայացուցչական մարմնի կողմից և զբաղվում է օրենքների կենսագործմամբ, ընթացիկ կառավարմամբ: Գործադիր իշխանությունը պետության հարկադիր-կատարողական ուժն է, որն ընդունակ է կիրառել հարկադրանք: Այդ լիազորությունը պետք է լինի իրավազոր, այսինքն՝ օրենքով սահմանված:

Դատական իշխանությունը՝ սահմանադրության և օրենքների հիման վրա իրականացնում է արդարադատություն: Օրենսդիրը, որ սահմանում է հարկադրանքը, չունի հարկադրանք կիրառելու իրավունք: Նույնը նաև դատական իշխանությունը. ինքը չի կիրառում, այլ թույլատրում կամ թելադրում է հարկադրանքի կիրառումը: Ստացվում է, որ կիրառողը մնում է գործադիրը՝ կառավարությունը, որն ինքը չունի օրենսդրման և արդարադատության գործառույթ, այլ ընդամենը գործում է օրենքների հիման վրա և ի կատարումն օրենքների ու դատարանների որոշումների:

2) **Իշխանությունների բաժանման ինստիտուցիոնալ առումը:** Պետական միասնական իշխանության այդ երեք թևերից յուրաքանչյուրն իրականացվում է պետական ապարատի առանձին օղակների, առանձին մարմինների միջոցով, որոնք միմյանցից գտնվում են հարաբերականորեն անկախ և ինքնուրույն վիճակում: Դրա նպատակն այն է, որ այդ իշխանությունները չկենտրոնացվեն մեկ մարմնի ձեռքում կամ մեկը մյուսի նկատմամբ չունենա առավելություն, որը կարող է հանգեցնել պետական իշխանության չարաշահման: Օրենսդրող մարմինն առանձնացված է գործադրողից, օրենքը սահմանողը չի զբաղվում դրա կիրառմամբ, իսկ գործադրողն էլ չի զբաղվում օրենսդրմամբ, այլ միայն օրենքների կիրառմամբ: Այստեղից հետևում է, որ գործադիր իշխանության մարմինները չպետք է զբաղվեն օրենսդրմամբ կամ օրենքի ուժ ունեցող ակտերի ընդունմամբ:

Իշխանությունների ինստիտուցիոնալ բաժանումը պահանջում է նաև, որ օրենսդիրը ևս իրավունք չունենա միջամտել գործադիր իշխանության գործունեությանը՝ ընդունելու ակտեր, որոնք Սահմանադրությամբ վերապահված են միայն գործադիր իշխանության իրա-

վասությանը: Օրենսդիրը գործադիրի նկատմամբ ունի միայն վերահսկողության իրավունք Սահմանադրությամբ սահմանված ինստիտուցիոնալ ձևերով: Դատական իշխանության օրենսդիրի կամ գործադիրի հետ միացման անթույլատրելիությունն ակնհայտ է: Իշխանությունների բաժանումը կանխում է օրենսդիրի անուղղակի ներխուժումն արդարադատության իրականացման ոլորտ, նույնիսկ օրենսդրման ձևով: Այդ պահանջի կենսագործման երաշխիքներ են մի շարք իրավական սկզբունքներ, օրինակ՝ «պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող օրենքները չունեն հետադարձ ուժ», «իրավաբանական պատասխանատվությունը վրա է հասնում միայն այն արարքների համար, որոնք ճանաչված են որպես իրավախախտում սանկցիայի կիրառման պահին»: Այդ պատճառով մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ:

3. Իշխանությունների բաժանման անձնական առումը: Այս պահանջը ևս շատ կարևոր է իշխանությունների բաժանման սկզբունքի կենսագործման համար: Ի կատարումն այս պահանջի, օրենսդիր մարմնի՝ Ազգային ժողովի կազմում չեն կարող մտնել գործադիր իշխանության և դատական համակարգում պաշտոնավարող անձինք: Պատգամավորը չի կարող զբաղեցնել պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել այլ վճարովի աշխատանք՝ բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:[1] Համապատասխանաբար, դատավորը չի կարող զբաղեցնել իր պարտականությունների հետ չկապված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, պաշտոն առևտրային կազմակերպությունում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

4. Հակակշիռները և զսպիչները իշխանությունների բաժանման համակարգում: Իշխանության երեք թևերի մարմիններն ինքնուրույն են իրենց իրավասության շրջանակներում և չեն կարող միջամտել այլ մարմինների իրավասությանը: Սակայն դա չի նշանակում, որ այդ մարմինները մեկուսացված են: Ի վերջո, դրանք պետական միասնական իշխա-

---

[1] Պատգամավորական մանդատի անհամատեղելիությունն այլ պաշտոններ զբաղեցնելու հետ բնորոշ է արդի պետությունների բացարձակ մեծամասնությանը: Բացառություն են կազմում խորհրդարանական հանրապետության և խորհրդարանական միապետության գծեր ունեցող երկրների խորհրդարանները, որոնցում խորհրդարանի անդամները միաժամանակ կարող են դառնալ կառավարության անդամ:

նության երեք ճյուղավորումներ են, որոնք սերտորեն համագործակցում են և մեկն առանց մյուսի անիմաստ է: Համաշխարհային փորձը վկայում է, որ հնարավոր է նաև իշխանությունների ներթափանցում: Խնդիրն այս դեպքում լիազորությունների հստակ սահմանազատումն է, որպեսզի այն չհանգեցնի սահմանադրական ճգնաժամի:

Բացի այդ, իշխանությունների փոխհարաբերությունները դրսևորվում են «հակակշիռների և զսպիչների» միջոցով, որոնք թույլ չեն տալիս իշխանությունների ճյուղերից որևէ մեկին դուրս գալ իրենց իրավասության շրջանակներից և, ընդհակառակը, հնարավորություն են տալիս իշխանության մի ճյուղից՝ պահել մյուսներին իրենց իրավասության շրջանակներում:[1] Դրա իմաստն այն է, որ պետական իշխանության երեք ճյուղերի մարմիններից յուրաքանչյուրն ունի այնպիսի լիազորություններ, որոնք հնարավորություն են տալիս հսկելու և ազդելու միմյանց վրա, համագործակցելու միմյանց հետ պետական կարևորագույն հարցերը վճռելիս: Օրինակ, մեր Սահմանադրությամբ ամրագրված են «հակակշիռների և զսպիչների» հետևյալ կառուցակարգերը. Հանրապետության Նախագահի իրավունքը վետո (մերժում) կիրառել Ազգային ժողովի օրենքների նկատմամբ, ՀՀ Ազգային ժողովի իրավունքը հաղթահարել այդ վետոն ձայների որակյալ՝ երկու երրորդի մեծամասնությամբ, Հանրապետության Նախագահի իրավունքը արձակել Ազգային ժողովը, Ազգային ժողովի իրավունքը պաշտոնանկ անել Հանրապետության Նախագահին օրենքով նախատեսված հիմքերի դեպքում և ընթացակարգով:

---

[1] **«Սահմանադրական հակակշիռը** պետական իշխանության ինստիտուտի սահմանադրական, ոչ գործառնական բնույթի լիազորություն է՝ կոչված դինամիկայում պահպանելու իշխանությունների տարանջատման սահմանադրական հաշվեկշիռը: Իր հերթին, **սահմանադրական զսպումը** պետական իշխանության ինստիտուտի սահմանադրական, ոչ գործառնական և ոչ հակակշռային բնույթի լիազորություն է՝ կոչված կանխելու իշխանությունների տարանջատման սահմանադրական հաշվեկշռի հնարավոր խախտումը՝ հակակշիռների համակարգի կողմից այն չապահովելու դեպքում» (տե՛ս *Հարությունյան Գ.Գ.* ՀՀ Իրավունքի գերակայության սահմանադրական երաշխիքները, Եր., Նժար, 2003, էջ 47):

§ 5. Իրավական օրինականությունը[1]

Որպես պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունք՝ իրավական օրինականությունը պետությունից և նրա մարմիններից առաջին հերթին պահանջում է իրավունքի արտացոլում օրենքում, իսկ այնուհետև իրավական օրենքի գերակայությունից և համապարտադիրությունից բխող ընդհանուր պահանջ՝ ուղղված յուրաքանչյուր պետական մարմինին և բոլոր պաշտոնատար անձանց՝ անշեղ կենսագործելու այդ օրենքները (նաև այլ իրավական ձևերում ամրագրված կարգադրագրերը): Այդպիսով իրավական օրինականությունը որպես պետական ապարատի կազմակերպման և գործողության սկզբունք բաղկացած է երկու մասերից: **Առաջին՝** իրավաօրինականություն, որը պետական ապարատի իրավաստեղծ մարմիններից պահանջում է պոզիտիվացնել միայն իրավունքի օբյեկտիվ հատկությունները, պահանջները, սկզբունքները և ընդունել միայն իրավական բնույթ ունեցող նորմատիվ ակտեր: **Երկրորդ՝** օրինականություն՝ որը պետական ապարատին ներկայացված պահանջ է՝ բարեխիղճ և անշեղ պահպանել և կատարել օրենքները և ենթաօրենսդրական նորմատիվ ակտերը, գործող պոզիտիվ իրավունքի բոլոր նորմերը, կարգադրագրերը: Պետական ապարատին և պետական ծառայողներին «թույլատրված է այն ամենը, ինչը նախատեսված է օրենքով և արգելված է այն ամենը, ինչը թույլատրված չէ օրենքով»:

Իրավական օրինականության պահանջը հաստատվում է նաև համաշխարհային պետական շինարարության և սահմանադրական զարգացման փորձով: Արդի սահմանադրություններն ամրագրում են առաջին հերթին իրավաօրինականության պահանջները՝ որպես պետության իրավաստեղծ գործունեության բովանդակությանը (նաև իրավակիրառմանը) ներկայացվող պահանջների համակարգ: Դրանք են. 1) մարդու իրավունքներն անօտարելի և բարձրագույն արժեքներ են 2) մարդու իրավունքները ազատության, արդարության, խաղաղության հիմքն են, 3) մարդու իրավունքների ճանաչումը, պահպա-

---

[1] Ավանդաբար պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունք է համարվում օրինականությունը: Պետականագետների մեծ մասը այդ սկզբունքը մեկնաբանում է ձևական տեսակետից, օրինակ՝ օրինականությունը պետության մարմինների, պաշտոնատար անձանց, քաղաքացիների և նրանց հասարակական կազմակերպությունների կողմից օրենքների ու դրանց համապատասխանող իրավական ակտերի անշեղ կատարումն է: Սակայն հետևողական մոտեցումը պահանջում է, որ պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունք համարվի իրավական օրինականությունը:

նումը, ապահովումը, պաշտպանությունը պետության պարտականությունն է, 4) պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք, 5) մարդու արժանապատվությունը հարգվում և պաշտպանվում է պետության կողմից, 6) բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև, 7) մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող աղավաղել այդ իրավունքների ու ազատությունների էությունը, 8) սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն, իսկ օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, այլ ներպետական իրավական ակտերը՝ Սահմանադրությանը և օրենքներին և այլն:

Իրավական օրինականությունը (իրավաօրինականություն և օրինականություն) որպես պետական ապարատի կազմակերպման և գործունեության ընդհանուր սկզբունք, ունի իր երաշխիքները, որոնք բազմազան են: Այդպիսի երաշխիքներից են՝ ա) ժողովրդաիշխանության սկզբունքը, պետական իշխանության լեգիտիմությունը, բ) իշխանությունների տարանջատման և հավասարակշռման սկզբունքը, գ) գործադիր իշխանության ենթաօրենսդրականությունը և վերահսկողության ու հսկողության համակարգը գործադիր իշխանության նկատմամբ, դ) սահմանադրական վերահսկողությունը, ե) ընդհանուր դատական վերահսկողությունը, դատախազական գործունեությունը, զ) իրավաստեղծ գործունեության ձևականացված և հստակ իրավական կարգավորումը, է) մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը, ը) իրավախախտ օրենսդրության դեմ պայքարի միջազգային համակարգերը և այլն:

§ 6. Հրապարակայնության և թափանցիկության սկզբունքը

Քաղաքացիական հասարակությունը բաց տեղեկատվական հասարակություն է[1]: Նրանում հռչակված և պետության կողմից երաշխավորված են խոսքի և քննադատության ազատությունը, հրապարակայնությունը: Այդպիսի հասարակության անդամը կարողանում է բավարարել տեղեկատվություն ստանալու իր իրավունքը: Այդ իրա-

---

[1] Այս ոլորտում առաջացող հարաբերությունները կազմում են քաղաքացիական հասարակության տեղեկատվական համակարգը, որի բաղադրատարրերն են մարդու տեղեկատվական իրավունքները, պետությունից անկախ գործող հասարակական, մասնավոր կազմակերպությունները, ինչպես նաև ՁԼՄ-ները:

վունքն իրականացվում է քաղաքացիական հասարակության անդամների անմիջական հաղորդակցությամբ, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների (ՁԼՄ) օգնությամբ:

Տեղեկությունը[1] և տեղեկացվածությունը մեծ դեր են խաղում մարդու իրավունքների իրականացման գործում: Տեղեկատվական թափանցիկությունը, բացախոսությունը, կառավարական քաղաքականության կանխատեսելիությունը ժողովրդավարական գործընթացի կարևորագույն բաղադրատարերն են, առանց որոնց ժողովրդաիշխանությունից մնում են միայն արտաքին ձևերը: Ձևն առանց բովանդակության անհետաքրքիր է ընտրողների համար:

«Կառավարում է նա, ով տիրապետում է տեղեկությունին»: Հետարդյունաբերական, տեղեկատվական հասարակությունում պետական կառավարումը և տեղեկությունը փոխկապակցված երևույթներն են, որոնք փոխներազդում են իրար վրա սոցիալական կառավարման ընթացքում: Եթե պետությունը չի տիրապետում հասարակական գործընթացների վերաբերյալ անկողմնակալ, օբյեկտիվ տեղեկության, ապա չի կարող արդյունավետ կերպով իրականացնել կառավարումը: Միևնույն ժամանակ պետական կառույցները ներազդում են տեղեկության վրա, նրա հրապարակայնության, մատչելիության, տարածման և սպառողին փոխանցման գործընթացի վրա: Բոլոր ժամանակներում իշխանության կարևորագույն սոցիալական գործառույթն է եղել տեղեկության չափավորումը, դրա հոգեբանական փաթեթավորումը: Դրա հիման վրա է կառուցված հասարակական կարծիքի մանիպուլյացիայի կառուցակարգը: Ամենահայտնի և հասարակ ձևը, որով իշխանությունը վերահսկում է տեղեկատվական հոսքերի վրա, համարվում է գրաքննությունը (ցենզուրա): Այս դեպքում պետությունը պատասխանատու չինովնիկների օգնությամբ կառավարում է տեղեկատվական նյութի բովանդակությունը:

Տեղեկատվական թափանցիկությունը, բացախոսությունը, կառավարական քաղաքականության հրապարակայնությունը, մարդու տեղեկատվական իրավունքները երաշխիք են պետության տեղեկատվական մենաշնորհի և չափից դուրս գաղտնիության դեմ: Չափից դուրս գաղտնիությունը խախտում է մարդու տեղեկատվական ի-

---

[1] Տեղեկությունը մշտապես փոփոխվող տեսական գիտելիք է և տարաբնույթ տեղեկություններ: Տեղեկությունն առաջադիմության գրավականն է: Քաղաքակրթության բարձրագույն աստիճանին հասնում է այն հասարակությունը և պետությունը, որը տնօրինում է ամենից որակով տեղեկությունին, մեծ ծավալով և արագ յուրացնում է այն՝ արդյունավետ կերպով օգտագործելով համամարդկային նպատակների իրականացման համար:

ռավունքները, անտեսում է իշխանության թափանցիկության և հրապարակայնության սկզբունքը: Դա մեզ համար ունի սկզբունքային նշանակություն, քանի որ ավանդաբար բնակչությանը բնորոշ է անվստահությունն իշխանության նկատմամբ, ինչը կարելի է հաղթահարել միայն մեկ ճանապարհով՝ պետական ապարատի աշխատանքի մասին տեղեկության հանրամատչելիությամբ:

Տեղեկության մենաշնորհային տնօրինումը, ինչը բնութագրական է ամենից առաջ հակաժողովրդավարական հասարակությանը, արգելք է մարդու իրավունքների լիարժեք իրականացման համար: Տեղեկության պետական մենաշնորհը և գրաքննությունը բումերանգի պես խփում են հենց պետությանը՝ տանելով հասարակությանը տնտեսական, քաղաքական և իրավական փակուղի: Չէ՞ որ տեղեկությը ժողովուրդ - պետություն ուղղակի կապի միջոցն է: Ուղղակի կապի կամայական չափաբաժնավորումը միայն առաջին հայացքից է շահավետ կառավարման սուբյեկտի համար: Ի վերջո, այն հանգեցնում է հետադարձ տեղեկության վնասակարությանը, զտվածությանը, կողմնակալությանը: Իսկ դա անխուսափելիորեն կառավարման կարևորագույն փուլում՝ որոշումների ընդունման, հանգեցնում է սխալների: Խորհրդային պետության փորձը վկայում է այդ մասին: Խորհրդային հասարակությունն անվանում էին «երկաթյա վարագույրով» փակված հասարակություն: Միջազգային ոլորտում և երկրի ներսում տեղեկության սահմանափակումը, չափից դուրս գաղտնիությունը, ճշմարիտ վիճակագրության և հրապարակայնության բացակայությունը, «հարմար» տեղեկության տարածումը հանգեցրին մեծաթիվ սխալների, որի հետևանքը այդ պետության կործանումն էր:

Վերը նշված հանգամանքները նկատի ունենալով պետությունը, հանրային իշխանության մարմինները, հասարակությունը պետք է գործեն բաց և թափանցիկ: Բնակչությունը պետք է տեղեկացված լինի ներպետական և միջազգային կյանքի դեպքերի մասին, անհրաժեշտության դեպքում կարողանա ստանալ իրեն հետաքրքրող տեղեկությունները: Շատ կարևոր է հետադարձ կապը, այսինքն՝ պետությունը պետք է ոչ միայն գործի թափանցիկ, այլև կառավարելիս, պետական քաղաքականությունը ձևավորելիս և իրականացնելիս հաշվի առնի հասարակական կարծիքը, տրամադրությունները:

§ 7. Պետության հանրային-իրավական պատասխանատվության սկզբունքը

Արդի պետական ապարատի կազմակերպման և գործունեության ընդհանուր սկզբունքներից մեկն էլ հասարակության ու անհատի առաջ պետության պատասխանատվությունն է: Ժողովուրդը համարվում է իշխանության միակ աղբյուրը, հետևաբար նա իրավունք ունի իրականացնելու վերահսկողության պետական իշխանության գործունեության նկատմամբ: Պետական մարմիններն իրենց հերթին պետք է պատասխանատվություն կրեն յուրաքանչյուր անհատի (քաղաքացու) և ընդհանրապես ամբողջ հասարակության առաջ՝ պետության ինքնիշխանության, մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների կենսագործման, բնակչության նյութական և մշակութային մակարդակի բարձրացման օրենսդրորեն սահմանված նպատակների նվաճման համար:

Ժողովրդի կամքով ձևավորված իշխանության համակարգը պետք է լինի թափանցիկ, ժողովրդին հաշվետու, նրա առաջ պատասխանատու: Այս հրամայականի՝ պետահիրավական համակարգում արտացոլման ձևը հանդիսանում է հասարակության և անհատի առաջ պետության պատասխանատվության սկզբունքը, որի ուժով պետական իշխանության մարմինները, նրանց պաշտոնատար անձինք, լինելով հանրային իշխանության կրող, հանրային պատասխանատվություն են կրում ժողովրդի, բնակչության, կոնկրետ անհատի առաջ: Իշխանության մարմինների և պաշտոնատար անձանց հանրային պատասխանատվությունը պետք է դիտարկել նրանց կողմից իրենց իրավունքների և պարտականությունների անպայման կատարման տեսանկյունից: Ուստի, բացի լիազորությունների, իրավունքների և պարտականությունների սահմանումից օրենսդրությունը պետք է հստակ սահմանի նաև մարմինների և պաշտոնատար անձանց իրավական պատասխանատվությունն այդ լիազորությունների, իրավունքների ու պարտականությունների չկատարման համար: Այդպիսի պատասխանատվությունը համարվում է հանրային-իրավական պատասխանատվություն: Ըստ պատասխանատվության հիմքերի՝ հանրային-իրավական պատասխանատվության միջոցները կարելի է բաժանել երկու խմբի. պատասխանատվության միջոցներ օրենսդրության խախտման համար և պատասխանատվության միջոցներ, որոնք վրա են հասնում իշխանության սուբյեկտի կողմից իր վրա դրված գործառույթը պատշաճ չկատարելու համար:

Հանրային-իրավական պատասխանատվության տեսակ է համարվում սահմանադրական պատասխանատվությունը, որ վրա է հաս-

նում սահմանադրական նորմերի խախտման համար, ի դեմս այն անբարենպաստ հետևանքների, որոնք ամրագրված են Սահմանադրությամբ և այլ օրենքներով, եթե Սահմանադրությունը վկայակոչում է դրանք: Այսպես կառավարությունը պատասխանատվություն է կրում նախագահի առջև, օրինակ՝ երբ նախագահը խորհրդակցելով Ազգային ժողովի նախագահի և խմբակցությունների ղեկավարների հետ՝ ազատում է վարչապետին ու ընդունում կառավարության հրաժարականը: Խորհրդարանը կարող է անվստահություն հայտնել կառավարությանը: Խորհրդարանում կառավարությանն ուղղած հարցերը, պատգամավորների դիմումները նախարարներին, խմբակցությունների հարցապնդումները հնարավորություն են տալիս ստանալ տեղեկություններ և գնահատել վերջիններիս գործունեությունը: Սահմանադրական իրավական պատասխանատվության տեսակներից է նաև հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու ինստիտուտը:[1]

§ 8. Պաշտպանունակությունը որպես պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունք

Պատմությունը պետություններին մշտապես մատուցում է հիմնախնդիրներ կապված նրանց գոյատևման և աշխարհում նրանց արժանի տեղ նվաճելու հետ: Այդ իսկ պատճառով յուրաքանչյուր պետություն հոգ է տանում իր անվտանգության և պաշտպանության մասին: Կոնկրետ պետության առանձնահատուկ պայմանները և նրան

---

[1] Ցավոք, անկախության հռչակմամբ պետական մարմինների, պաշտոնատար անձանց և պետական ապարատի ծառայողների պատասխանատվության հարցերն ամբողջությամբ դուրս են մնացել օրենսդիր մարմինների տեսադաշտից: Օրենքներից դուրս են մնացել ձևակերպումներն այն մասին, թե ո՞վ և ինչի՞ համար, ի՞նչ կարգով է պատասխանատվություն կրում: Այդ վիճակի սոցիալական հետևանքը այն է, որ կառավարման շղթայի յուրաքանչյուր օղակում (հայեցակարգ - քաղաքականություն - օրենսդրություն - իրական կենսագործում) անորոշության, բացթողումների, սխալների, բացահայտ խախտումների պատճառով ծագում են զանազան սպառնալիքներ, որոնց ահագնացումը կարող է անուղղելի վնաս հասցնել պետականությանը: Այդպիսի միտումը պետք է կանխվի, որի համար անհրաժեշտ է մշակել և ընդունել օրենք «Պետական մարմինների և պաշտոնատար անձանց պատասխանատվության մասին»: Այդ օրենքը պետք է կանոնակարգի պետական կառավարման բոլոր սուբյեկտների և, առաջին հերթին, գործադիր մարմինների ու պաշտոնատար անձանց, ներառյալ բարձրագույն, պատասխանատվության համակարգը: Օրենքով անհրաժեշտ է կատարել պատասխանատվության տեսակների համակարգում, սահմանել պատասխանատվության գնահատման և հիմքերի չափանիշները, ինչպես նաև այդ ինստիտուտը կիրառելու համար անհրաժեշտ ընթացակարգերը:

սպառնացող լրացուցիչ վտանգները բարձրացնում են նոր մարտահրավերներ, որոնց իմաստավորումը գիտության առաջնահերթ խնդիրներից է:

Պետական միասնական, ամբողջական համակարգի գործառութավորման և մշտական զարգացման վրա վճռապես ներգործող գործոններից է նաև արդի դարաշրջանում պետության հռչակման, դրա իրավաբանական ճանաչման առանձնահատկությունները, դրանով պայմանավորված պետության արտաքին քաղաքական կացությունը, ինչպես նաև պետության աշխարհաքաղաքական կացությունը: Այս վերջին երկու գործոններն էական նշանակություն ունեն, օրինակ՝ Արցախի Հանրապետության որպես պետության կառուցման և գործունեության համար: Պետության անխուսափելի ատրիբուտն ինքնիշխանությունն է: Արցախի՝ որպես պետության, ինքնիշխանությանը և տարածքային ամբողջականությանը սպառնացող վտանգը մշտապես առկա արտաքին քաղաքական գործոն է: Հետևաբար, Արցախի հանրության և պետության առջև կանգնած գլխավոր խնդիրը երկրի պաշտպանությունն է, նրա պաշտպանունակության մշտական ամրապնդումը: Սովորական պայմաններում, ցանկացած պետություն իրականացնում է երկրի պաշտպանության գործառույթ: Սակայն ԼՂՀ արտասովոր պայմանները և նրա առջև կանգնած գերխնդիրը մինչև անկախության և տարածքային ամբողջականության միջազգային իրավական երաշխիքների ստեղծումը, հրամայաբար թելադրում են պետական շինարարության հայեցակարգում կատարել էական վերադասավորում՝ չբավարարելով սովորական պաշտպանական գործառույթի իրականացմամբ: Ազգային անվտանգության և պաշտպանության հայեցակարգերն ամենից առաջ պետք է վերաբերեն պետությանը, ներառեն նրա գոյության արտաքին և ներքին սպառնալիքները:[1] Այստեղից էլ եզրակացություն՝ որ այդ սպառնալիքները ներազդում են նաև պետության կազմակերպման և գործունեության սկզբունքների համակարգի և դրանցից ամեն մեկի բովանդակության վրա: Այդպիսի տեսական վերադասավորման հետևանքով առաջարկվում է և՝ Հայաստանի Հանրապետության, և՝ Արցախի Հանրապե-

---

[1] Ազգային անվտանգությունը դա պետության և նրա ժողովրդի ընդունակությունն է ինքնուրույն կամ այլ բարեկամական երկրների ու ժողովուրդների հետ միասին չեզոքացնել և վերացնել նրա ինքնիշխանության, տարածքային ամբողջականության, սոցիալական և տնտեսական կացութաձևին ու զարգացմանը, նրա կենսագործունեությունը որոշող այլ սահմանադրական հիմունքների արտաքին ու ներքին սպառնալիքները: Ազգային անվտանգության ապահովումը համարվում է յուրաքանչյուր պետության ժողովրդի ազգային շահերի արմատական ցուցանիշը» (Международная безопасность обороноспособность государств (понятия, определения, термины), М., 1998):

տության պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունք ճանաչել պաշտպանունակությունը: Պաշտպանունակությունը պետական համակարգին բնորոշ որոշակի հատկություն է, ինքնապահպանման, ինքնավերարտադրման, ինքնակատարելագործման հատկություն, այլ ոչ թե մերկ պաշտպանվածություն: Խնդիրն այն է, որ այդ հատկությունը՝ արտակարգ, պատերազմական պայմաններում գործելու ունակությունը, դրվի սովորական իրադրությունների համար ստեղծված պետական մարմինների ու իրավական ինստիտուտների էության մեջ:

Պաշտպանունակության սկզբունքը պահանջում է այնպես կառուցել պետական ապարատը, որ այն ունակ լինի արտակարգ և պատերազմական պայմաններում իրականացնել իր առջև դրված խնդիրները, արժանի հակահարված տալ հակառակորդին: Այդ ունակությունը մեքենայական հատկություն չէ, այլ պետք է դրսևորվի հատուկ պետահիրավական ինստիտուտների հիմնադրմամբ և կայացմամբ, որոնք էլ արդյունքում պետք է ունակ դարձնեն Հանրապետությանը ռազմական վիճակում արագ, օպերատիվ և արդյունավետ կատարելու կառավարչական բոլոր խնդիրները: Այդպիսի համակարգի ներդրումը պետական ապարատին կօժտի կայունությամբ, այսինքն՝ ընդունակությամբ պահպանել իր հիմնական բնութագրերը և կատարել իր առջև դրված խնդիրները, չնայած տարբեր տեսակի քայքայիչ ներգործությունների:

Պաշտպանունակությունը ճանաչելով պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունք՝ չի նշանակում որ տեղի է ունեցել «պաշտպանական գործառույթ» տեսական կատեգորիայի սովորական վերանվանում: Դրանք էականորեն տարբերվում են: Պետության կամ պետական ապարատի գործառույթները նրա գործունեության հիմնական ուղղություններն են, որ ուղղված են հասարակության պետական կառավարման նպատակների ու խնդիրների իրագործմանը: Պաշտպանական գործառույթ իրականացնում է ցանկացած պետություն: Սակայն պաշտպանունակությունը որպես սկզբունք ղեկավար, ելակետային դրույթ է և պայմանավորում է պետական ապարատի կազմակերպումը և գործունեությունը, այլ սկզբունքների հետ միասին: Ընդ որում, այն համահունչ է պետական ապարատի կազմակերպման ու գործունեության այլ սկզբունքների՝ սահմանադրականության, օրինականության և այլնի հետ, որովհետև խոսքը գնում է ոչ թե ինչ-որ արտասովոր, արտակարգ երևույթի մասին, այլ ղեկավար գաղափարն իրավական միջոցներով օրենսդրութ-

յան մեջ կենսագործման մասին: Ընդ որում դա չի հակասում միջազգային իրավունքի նորմերին:[1]

Եթե պաշտպանունակության սկզբունքի տեսանկյունից քննարկենք և վերլուծենք օրենսդրությունը, ապա կտեսնենք, որ դրանք որոշակիորեն հաշվի են առել այս սկզբունքի պահանջները, այսինքն՝ սկզբունքն, այնուամենայնիվ, իրավական ամրագրում ունի որոշակի պետահիրավական ինստիտուտներում. օրինակ՝ Հանրապետության Նախագահի ռազմական ոլորտի լիազորություններում պատերազմ հայտարարելու և զինված ուժերի օգտագործման կարգում, Նախագահի և Ազգային ժողովի ընտրությունների, կառավարությանն անվստահություն հայտնելու ինստիտուտներում և այլն: Սակայն, մանրազնին հետազոտությունը ցույց է տալիս, որ այնուամենայնիվ, օրենսդրությունն ունի որոշակի հիմնախնդիրներ, որոնք սպասում են իրենց լուծմանը: Օրինակ՝ պատվիրակված օրենսդրության ինստիտուտի իսպառ բացակայությունը, որ կարելի էր պատերազմի պայմաններում վստահել նախագահին՝ որպես պետության գլխի: Սահմանադրությունը պետք է նախատեսեր նորմ, ըստ որի՝ Ազգային ժողովը պատերազմական պայմաններում կարող էր լիազորել նախագահին՝ ընդունել օրենքի ուժ ունեցող որոշումներ, որոնք գործելու էին մինչև պատերազմի ավարտը և չէին կարող հակասել Սահմանադրությանը:

Հետևաբար անհրաժեշտ է անցկացնել ողջ օրենսդրության մոնիտորինգ պաշտպանունակության տեսանկյունից, որի հիմնական չափանիշները պետք է հանդիսանան հետևյալները. ա) իշխանության համակարգն օպտիմալ և հստակ է այնքան, որ չի առաջացնում որևէ վակում ցանկացած իրավիճակում, այդ թվում նաև՝ պատերազմական. բ) իշխանական բոլոր կառույցները հստակ տիրապետում են և ընդունակ են գործելու պատերազմական պայմաններում ելնելով իրենց սոցիալ-իշխանական առաքելությունից. գ) պետական-իշխանական համակարգը տոգորված է հայրենիքի պաշտպանության ոգով ու պատրաստակամությամբ:

---

[1] Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության Եվրոպական կոնվենցիան (հոդ. 15) սահմանում է, որ .«պատերազմի կամ այլ արտակարգ դրության ժամանակ, որն սպառնում է ազգի կյանքին, ցանկացած բարձր պայմանավորվող կողմ կարող է կիրառել միջոցներ, որոնք նահանջում են սույն կոնվենցիայի պարտավորություններից միայն այն չափով, որքանով դա պահանջում է դրության սրությունը, պայմանով, որ այդպիսի միջոցները չեն համարվում անհամեմատելի՝ կողմի մյուս միջազգային պարտավորությունների հետ: Սակայն այդ դեպքում անհրաժեշտ է լրիվ ծավալով տեղեկացնել Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին նրա կողմից մտցված միջոցների և դրանց ընդունման պատճառների մասին»:

§ 9. Հումանիզմի (մարդասիրության) սկզբունքը

Այս սկզբունքը իրավաբանական գրականության մեջ բանաձևված է տարբեր կերպ: Օրինակ՝ որպես մարդու իրավունքների գերակայության սկզբունք կամ որպես մարդու իրավունքների առաջնայնության սկզբունք և այլն: Անկախ բանաձևի վերտառությունից, բոլոր հեղինակներն էլ միանշանակ ընդունում են, որ այն ենթադրում է մարդու՝ որպես անհատի, արժանիքների ճանաչում, պետական ապարատի գործունեության մեջ նրա շահերի գերակայության հաստատում: Հումանիզմի սկզբունքի բովանդակությունը վերլուծելու ընթացքում պետք է ուշադրություն դարձնել երկու հանգամանքի: Առաջին՝ անհատի շահերը պետք է պետության գործունեության մեջ լինեն գերակա: Երկրորդ՝ պետք է հաշվի առնել, առանձին վերցրած, յուրաքանչյուր մարդու կամ, ծայրահեղ դեպքում, բնակչության մեծամասնության սոցիալական շահերը: Մարդու իրավունքների գերակայության սկզբունքից բխում է, որ մարդու հիմնական իրավունքներն ու ազատություններն անօտարելի ու բարձրագույն արժեքներ են: Իսկ դա նշանակում է, որ հասարակական արժեքների սանդղակում գերակա են մարդու իրավունքները, որոնք նախորոշում են այլ արժեքների էությունը և առաքելությունը: Իրենց հերթին այլ արժեքները ծառայում են մարդու իրավունքներին, դրանց կենսագործմանը: Դա նշանակում է, որ մարդու իրավունքները չափանիշ են բոլոր հասարակական շահերի արժեքավորման, համամիասնական և ընթացիկ խնդիրների լուծման, ամեն տեսակի բարեփոխումների իրականացման համար: Եթե հասարակական հիմնախնդիրները լուծելիս կշեռքի նժարների վրա դրված են մի կողմից մարդը, նրա իրավունքները, իսկ մյուս կողմից՝ ինչ-որ տնտեսական, դրամական և այլ արժեքներ, ապա քաղաքացիական հասարակությունը և իրավական պետությունը պետք է նախընտրեն մարդուն և գերակա համարեն նրա իրավունքները: Օրինակ՝ չի կարելի տնտեսական խնայողության համար ոտնձգել, ոտնահարել մարդու իրավունքները: Այսպիսով, հումանիզմի սկզբունքը հիմնադիր նշանակություն ունի նաև պետության համար: Մարդու իրավունքների գերակայությունն արմատապես ներազդում է պետության բնույթի վրա: Դա նշանակում է, որ պետությունը հասարակական դաշինքի արդյունքում ստեղծված կազմակերպություն է, որի առաքելությունը մարդու իրավունքների անօտարելիության ու անքակտելիության երաշխավորումն է, հասարակական կարգուկանոնի ու խաղաղության հաստատումը: Պետությունն ինքնանպատակ չէ, և ոչ էլ մարդը՝ նրա խոնարհ ծառան, որ

պարտավոր է ապրել ու աշխատել պետության համար: Պետության նպատակը մարդն է ու նրա իրավունքները:

Պետության և անհատի փոխհարաբերությունների հարցում հիմք ընդունելով բնական իրավական, ազատական հայեցակարգը պետությունը պարտավոր է ապահովել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Պետությունը սահմանափակված է մարդու իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք: Պետության առջև դրված այդ առաքելությունից բխում են պետության հետևյալ պարտականությունները՝ ճանաչել, պահպանել, ապահովել, պաշտպանել մարդու և քաղաքացու իրավունքները:[1]

§ 10. ժողովրդավարության (ժողովրդաիշխանության) սկզբունքը

«Ժողովրդավարություն» հասկացությունը շատ ընդգրկուն է և բարդ: Գոյություն չունեն համընդհանուր ճանաչում գտած պատկերացումներ, որոնց հիման վրա հնարավոր կլիներ բնորոշել այն: Տարբեր մոտեցումներ շեշտադրում են ժողովրդավարության առանձին կողմերը և բաղադրատարրերը: Պետականագիտության տեսանկյունից ժողովրդավարական բնութագիրը, նախ և առաջ, վե-

---

[1] **Ճանաչել** մարդու իրավունքները նշանակում է, որ պետությունը ընդունում է բնական իրավունքից բխող մարդու անօտարելի իրավունքները և դրանք համապարտադիր դարձնելու նպատակով ամբողջ ծավալով ամրագրում է Սահմանադրությամբ և օրենքներով: **Պահպանել** մարդու իրավունքները նշանակում է, որ պետությունը պարտավոր է ձեռնպահ մնալ գործողություններից կատարումից, որոնք կարող են խախտել մարդու ազատությունը: Քանի որ իրավունքները տրված են մարդուն ի ծնե, ապա դրանք չեն կարող օտարվել, սահմանափակվել: Օրինակ՝ պետությունը ճանաչելով կյանքի իրավունքը, միաժամանակ պարտավոր է վերացնել մահապատիժը՝ որպես քրեական պատժատեսակ: **Ապահովել** մարդու իրավունքները նշանակում է, որ պետությունը, նրա մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են անհատին տրամադրել որոշակի բարիքներ: Պետությունը պարտավոր է ձեռնարկել դրական, ակտիվ գործողություններ իրավունքների ապահովման, դրանք իրական և երաշխավորված դարձնելու համար: **Պաշտպանել** մարդու իրավունքները նշանակում է, որ պետությունը, նրա օրենսդիր, գործադիր և դատական մարմիններն իրականացնում են գործունեություն՝ ուղղված մարդու խախտված իրավունքները վերականգնելուն, այդ խախտումները կասեցնելու, մարդու իրավունքները խախտած սուբյեկտներին պատասխանատվության ենթարկելու համար:

րագրվում է պետությանը կամ պետական կառավարմանը: Իդեալական վիճակում պետությունը պետք է ծառայի մարդուն և ժողովրդին: Սակայն իրականում մարդու, ժողովրդի և պետության միջև հարաբերությունները շատ բարդ են: Երբեմն նրանք օտարանում են միմյանցից: Որպեսզի նրանց հարաբերությունները ձեռք չբերեն հակասական բնույթ, անհրաժեշտ է, որ պետական կառավարումը լինի ժողովրդավարական: Ժողովրդավարական է այն կառավարման ձևը, որը կառուցվում ու գործում է ժողովրդաիշխանության սկզբունքով: Համաձայն այդ սկզբունքի՝ իշխանության տերը, աղբյուրը ժողովուրդն է: Պետական իշխանությունն ածանցված է ժողովրդի իշխանությունից, պայմանավորված է ժողովրդի կամքով ու պահանջմունքներով: Պետությունը իշխանությունն ստանում է ժողովրդից, հանուն ժողովրդի: ***«Ժողովուրդն ավելին է, քան իր պետությունը, իր իշխանությունը, անգամ իր կուլտուրան: Իր ոգու հայտնությունը դժվարացնող բազմազան արգելքների պատճառով նրան հաջողվում է իրականացնել իր կարողական ուժերի չնչին մասը միայն: Պետության - ճշմարիտ պետության, բանականության և մարդկայնության վրա կառուցված պետության դերը հենց այդ արգելքների աստիճանաբար վերացնելու մեջ է կայանում» (Գ. Նժդեհ):***

Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով: Ժողովրդաիշխանությունն արտահայտվում, իր դերը և նշանակությունը կատարում է որոշակի ձևերի և ինստիտուտների միջոցով, որոնք կազմում են ժողովրդավարության համակարգը: Ժողովուրդը հասարակական և պետական գործերի լուծմանը մասնակցում է բազմազան ձևերով: Կախված ժողովրդի կամքի արտահայտման ձևից՝ տարբերում են անմիջական և ներկայացուցչական ժողովրդաիշխանության ձևերը: Ժողովրդաիշխանության իրականացման ներկայացուցչական ձևն օբյեկտիվորեն անհրաժեշտ է, որովհետև ժողովուրդը չի կարող կառավարման բոլոր խնդիրները լուծել անմիջապես, ուստի նա իր իշխանությունն իրականացնում է Սահմանադրությամբ նախատեսված պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձնաց միջոցով, որոնք հաշվետու են ժողովրդի առջև: Իրենց հերթին ներկայացուցչական մարմինների առջև պատասխանատու են գործադիր մարմիններն ու պաշտոնատար անձինք:

Եթե ներկայացուցչական ժողովրդաիշխանության դեպքում որոշումներն ընդունում են պետական կառավարման և տեղական ինքնակառա-

վարման մարմինները, ապա ուղղակի ժողովրդաիշխանության ձևերի դեպքում որոշումներն ընդունում է ինքը՝ ժողովուրդը: Ժողովրդի կամքը՝ արտահայտված համապատասխան ձևերով, համարվում է հիմք պետության գործունեության համար: Ժողովրդաիշխանության այս ձևի սուբյեկտները քաղաքացիներն են, ովքեր որոշումներն ընդունում են համապատասխան ինստիտուտների միջոցով, որոնք իրավականորեն ձևակերպված, օրինականացված են: Իրավական ամրագրումը ժողովրդաիշխանության երաշխիք է: Արդի աշխարհում ընդունված են անմիջական ժողովրդաիշխանության հետևյալ ձևերը՝ հանրաքվե, ընտրություններ, ժողովրդական օրենսդրական նախաձեռնություն,[1] ժողովրդական հարցում, համաժողովրդական քննարկում, ընտրված անձին հետ կանչելը:[2]

Ժողովրդավարության սկզբունքի էությունը կայանում է հենց նրանում, որ ժողովուրդը ճանաչվում է իբրև պետական իշխանության աղբյուր, հարգվում է քաղաքական որոշումներ ընդունելու նրա իրավունքը՝ քաղաքացիական ազատությունների և իրավունքների լայն շրջանակների ընդգրկումով: Սակայն ժողովրդաիշխանության սկզբունքի հետագա զարգացման ճանապարհին խիստ անհրաժեշտ են անմիջական ժողովրդաիշխանության բոլոր հնարավոր ձևերի իրավական ամրագրումը և կիրառումը: Խոսքը հատկապես գնում է ժողովրդական օրենսդրական նախաձեռնության, ժողովրդական հարցման, համաժողովրդական քննարկման, ընտրված անձին հետ կանչելու ինստիտուտների մասին: Միայն այդ դեպքում ժողովրդավարությունը կդառնա իրական:

§ 11. Պետական ապարատում ծառայության մատչելիության և արհեստավարժության սկզբունքը

Քաղաքացիներն ունեն օրենքով սահմանված ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության ընդունվելու իրավունք: Հանրա-

---

[1] Ժողովրդաիշխանության այս ձևը գործում է, օրինակ, Շվեյցարիայում: Հայաստանում այն նախատեսված չէ:

[2] Որոշ դեպքերում ընտրողների կողմից ընտրված անձինք՝ խորհրդարանի պատգամավորները, տեղական ինքնակառավարման մարմինների անդամները, չեն արդարացնում իրենց ընտրողների վստահությունը, չեն կատարում նրանց պատվիրանները, դրսևորում են անբարոյական արարքներ: Այս դեպքերի համար մի շարք երկրների օրենքներ սահմանում են ընտրողների հնարավորությունը՝ վաղաժամկետ հետ կանչելու ընտրվածներին, եթե նրանք ընտրվել են մեծամասնական համակարգով, որևէ ընտրատարածքից: Հայաստանում նախատեսված չէ:

յին ծառայությունը սահմանադրությամբ և օրենքներով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված խնդիրների ու գործառույթների իրականացմանն ուղղված մասնագիտական գործունեություն է: Հանրային ծառայության տեսակներն են՝ **պետական ծառայությունը, ծառայությունը տեղական ինքնակառավարման համակարգում, քաղաքացիական աշխատանքը:**

Պետական ծառայությունը հանրային ծառայության հիմնական տեսակն է, որն իր հերթին լինում է քաղաքացիական ծառայություն (օրինակ՝ կառավարության աշխատակազմում), դատական ծառայություն, հատուկ ծառայություններ (զինված ուժեր, ոստիկանություն, մաքսային և այլն), դիվանագիտական ծառայություն և այլն: Քաղաքացիական աշխատանքը Սահմանադրությամբ և օրենքներով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված առանձին խնդիրների ու գործառույթների իրականացումն է վարձու աշխատողների միջոցով:

Իհարկե, դա չի նշանակում, որ հանրային ծառայության ընդունվելու իրավունքը գործում է ինքնաբերաբար: Յուրաքանչյուր քաղաքացի, իրավունք ունի ընդունվելու հանրային ծառայության, քաղաքացիական աշխատանքի, իր մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին համապատասխան: Այս պահանջն ուղղված է հանրային ծառայության պրոֆեսիոնալիզմի, արհեստավարժության ապահովմանը: Նախ և առաջ անձը պետք է ունենա հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնելու իրավունք: Օրինակ՝ քաղաքացիական ծառայության իրավունք ունի անձը, որը համապատասխանում է տվյալ պաշտոնի անձնագրին, տիրապետում է հայերենին և 18 տարեկան է: Այնուհետև քաղաքացին պետք է մասնակցի ծառայության պաշտոն զբաղեցնելու մրցույթին և անցնելու դեպքում նշանակվի պաշտոնի: Մրցույթը կոչված է ապահովելու մասնագիտական բանիմացությունը և արհեստավարժությունը:

Մասնագիտական գիտելիքների, աշխատանքային ունակությունների ու բանիմացության պահանջը կոչված է ապահովելու պետական կառավարման հարցերի բարձր մակարդակով, արդյունավետ, գիտական լուծումները: Այդպիսով պետական ապարատի կազմակերպման և գործունեության մեջ պրոֆեսիոնալիզմի սկզբունքն ամենից առաջ նշանակում է որակյալ աշխատուժ, որի համար կառավարչական գործունեությունը մասնագիտությունն է: Միայն պրոֆեսիոնալ հատկանիշներով և համապատասխան գիտելիքների տիրապետող անձինք կարող են ապահովել պետական ապարատի արդյունավետ, պատշաճ գործունեությունը:

§ 12. Կոլեգիալության և միանձնյա ղեկավարման զուգակցման սկզբունքը

Ըստ որոշումների ընդունման եղանակի պետական մարմինները լինում են կոլեգիալ և միանձնյա մարմիններ: Թե ինչ եղանակով պետք է իրականացվի որևէ մարմնի իրավասությունը կախված է նրա առջև դրված նպատակներով և խնդիրներով: Օրինակ, բանական է, որ դատական մարմինները լինեն կոլեգիալ, որը կապահովի դատական գործի օբյեկտիվ և բազմակողմանի քննությունը և լուծումը: Որպես կանոն գործադիր մարմինները նպատակահարմար է կազմակերպել միանձնյա կառավարման հիման վրա, ինչը օպերատիվ է դարձնում նրանց գործունեությունը: Օրինակ՝ Հայաստանում մարզերը կառավարվում են մարզպետների կողմից, ովքեր նշանակվում և ազատվում են կառավարության որոշմամբ: Կառավարության այդ որոշումները վավերացվում են Հանրապետության Նախագահի կողմից: Մարզպետը միանձնյա պատասխանատվություն է կրում մարզի տարածքում օրենքների, Նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի որոշումների և մյուս ակտերի կատարման համար: Սակայն նույնիսկ միանձնյա մարմիններին կից գործում են խորհրդակցական կոլեգիալ մարմիններ: Օրինակ՝ մարզպետարանին կից ստեղծվում է խորհրդակցական մարմին՝ մարզի խորհուրդ, որի կազմված է համայնքների ղեկավարներից ու մարզպետից: Մարզի խորհուրդը լսում և քննարկում է համայնքների ղեկավարների առաջարկություններն ու դիտողությունները մարզպետարանի, մարզային ենթակայության հիմնարկությունների, կազմակերպությունների գործունեության, սոցիալ-տնտեսական զարգացման տարեկան և երկարաժամկետ ծրագրերի մասին և այլ հարցերը:

● ԲԱՑԱՏՐԵ՛Ք ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԸ

Սկզբունք / ելակետային դրույթ / հիմնարա դրույթ / աշխարհաքաղաքականություն / օրինականություն / սահմանադրական հակակշիռ / սահմանադրական զսպիչ / տեղեկատվական մենաշնորհ / գերակայություն / արհեստավարժություն - պրոֆեսիանալիզմ:

? ՊԱՏԱՍԽԱՆԵ՛Ք ՀԱՐՑԵՐԻՆ

1. Ի՞նչ է «սկզբունքը»:
2. Որո՞նք են պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունքների հատկանիշները:
3. Ինչպե՞ս են բնորոշում պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունքները:
4. Ո՞րն է պետական ապարատի կազմակերպման և գործունեության
սկզբունքների դասակարգումը:
5. Որո՞նք են պետական ապարատի կազմակերպման և գործունեության ընդհանուր սկզբունքները:
6. Ո՞րն է իշխանության բաժանման գործառույթային առումը:
7. Ի՞նչ է օրենսդիր իշխանությունը:
8. Ի՞նչ է գործադիր իշխանությունը:
9. Ի՞նչ է դատական իշանությունը:
10. Ո՞րն է իշխանության բաժանման ինստիտուցիոնալ առումը:
11. Ո՞րն է իշխանության բաժանման անձնական առումը:
12. Ո՞րն է հակակշիռների ու զսպիչների դերը իշխանությունների բաժանման համակարգում:
13. Ո՞րն է իրավական օրինականության որպես պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունքի բովանդակությունը և նշանակությունը:
14. Ո՞րն է հրապարակայնության և թափանցիկության որպես պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունքի բովանդակությունը և նշանակությունը:
15. Ո՞րն է հասարակության առջև պետության հանրային-իրավական պատասխանատվության որպես պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունքի բովանդակությունը և նշանակությունը:
16. Ո՞րն է պաշտպանունակության որպես պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունքի բովանդակությունը և նշանակությունը:

17. Ո՞րն է պաշտպանունակության որպես պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունքի և պետության պաշտպանական գործառույթի տարբերությունը:
18. Ո՞րն է մարդասիրության որպես պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունքի բովանդակությունը և նշանակությունը:
19. Ո՞րն է ժողովրդավարության որպես պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունքի բովանդակությունը և նշանակությունը:
20. Ի՞նչ է հանրայի ծառայությունը և որոնք են նրա տեսակները:
21. Ո՞րն է պետական ծառայության մատչելության և արհեստավարժության որպես պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունքի բովանդակությունը և նշանակությունը:
22. Ո՞րն է կոլեգիալության և միանձնյա կառավարման զուգակցման որպես պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունքի բովանդակությունը և նշանակությունը:

Լատիներեն «principium»՝ նշանակում է ինչ-որ երևույթի (ուսմունք, կազմակերպություն, գործունեություն) հիմք, առաջնային ելակետ, ղեկավար գաղափար, ելակետային դրույթ:

«Սկզբունք»

հասկացությունը

Սկզբունքն ամենի կարևորագույն մասն է:

Principium est potissima pars cuiugue rei:

Պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունքների հատկանիշները

- **Դրույթը, որ հիմնական, ելակետային է և որոշում է պետական ապարատի բոլոր հարցերն ու պահերը:**
- **Դրույթը, որն ունի իրավական բնույթ, իրավունքի նորմի կարգավիճակ:**


Պետական ապարատի սկզբունքների համակարգը
Հիմնարար սկզբունքներ.
Ընդհանուր սկզբունքներ.
Ճյուղային սկզբունքներ.
Կոնկրետ սկզբունքներ.


Հիմնարար սկզբունքներ
Ընդհանուր սկզբունքներ
Պետության կոնկրետ մարմին
Ճյուղային սկզբունքներ
Կոնկրետ սկզբունքներ

Պետական ապարատի ընդհանուր սկզբունքների շրջանակի վրա ազդող գործոնները



ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ
1. ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ
2. ԿՈԼԵԳԻԱԼ և ՄԻԱՆՁՆՅԱ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁՈՒԳԱԿՑՈՒՄ
3. ՀԱՆՐԱՅԻՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ
4. ԻՐԱՎԱԿԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
5. ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄ
6. ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆ
7. ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼԻԶՄ
8. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
9. ՊԱՇՏՊԱՆՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Օրենսդիր
Պետական իշխանություն
Գործադիր
Դատական

Պետական իշխանության բաժանման առումները
գործառութային
ինստիտուցիոնալ
անձնական

Օրենսդիր

Գործադիր

Դատական

ԹԵՄԱ 11. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Թեմայի բովանդակությունը

- *Քաղաքացիական հասարակության հասկացությունը: Քաղաքացիական հասարակության հատկանիշները. ազատ մարդը քաղաքացիական հասարակության բարձրագույն արժեք, քաղաքացիական հասարակության ինքնակառավարման ներուժը, քաղաքացիական հասարակությունը որպես իրավական, ժողովրդավարական հասարակություն, քաղաքացիական հասարակությունը որպես պլյուրալիստական հասարակություն: Քաղաքացիական հասարակության կայացումը Հայաստանում:*
- *Քաղաքացիական հասարակության կառուցվածքը: Քաղաքացիական հասարակության սոցիալական, հոգևոր-մշակութային, տեղեկատվական, տնտեսական, համակարգերի բնութագիրը: Պետության դերը տնտեսության մեջ:*
- *Քաղաքացիական հասարակության քաղաքական համակարգը և նրա բաղադրատարրերը: Մրցակցային քաղաքական համակարգը: Պետությունը որպես հասարակության քաղաքական համակարգի սուբյեկտ:*
- *Հասարակական-քաղաքական կազմակերպությունները քաղաքացիական հասարակության քաղաքական համակարգում: Քաղաքական կազմակերպության հասկացությունը և նշանակությունը: Քաղաքական կազմակերպությունների գործառույթները: Լոբբիականություն:*
- *Եկեղեցին հասարակության քաղաքական համակարգում: Աստվածապետություն (թեոկրատական պետություն), կղերական (կրոնականացված) պետություն և աշխարհիկ պետություն:*

§ 1. Քաղաքացիական հասարակության հասկացությունը և հատկանիշները

Հասարակություն և քաղաքացիական հասարակություն: Ո՞րն է տարբերությունը: Ամենից առաջ պետք է իմանալ, որ ցանկացած հասարակություն իրենից ներկայացնում է սոցիալական, տնտեսական, քաղաքական, հոգևոր-մշակութային և այլ համակարգերի ամբողջություն: Ամեն մի դարաշրջանին և քաղաքակրթությանը բնորոշ են իրենց հասարակական համակարգերը: Հասարակությունը և նրա համապատասխան համակարգերը անցել են զարգացման բարդ և հակասական ճանապարհ: Այդ զարգացման ընթացքում հասարակությունը, ձեռք բերելով քաղաքակիրթ, ժողովրդավարական որակ-

ներ, դառնալով ինքնակառավարվող ամբողջական համակարգ, կարողանալով իրավական և ժողովրդավարական դարձնել նաև պետությանը, վերածվել է քաղաքացիական հասարակության:

Քաղաքացիական հասարակությունն իրավական, ազատական-ժողովրդավարական, ինքնակառավարվող պլյուրալիստական, բաց հասարակություն է՝ կազմված ազատ անհատներից, որոնք իրականացնում են իրենց շահերը բոլորի համար հավասար և ընդհանուր օրենքի շրջանակներում: Քաղաքացիական հասարակության հենասյուները և միաժամանակ հիմնարար արժեքներն են ընտանիքը, սեփականությունը, անհատականությունը, ազատությունը, բարոյականությունը, քաղաքացիականությունը, կարգուկանոնը, իրավական պետականությունը:

Քաղաքացիական հասարակությունն աչքի է ընկնում իր մի շարք հատկանիշներով, որոնցով և այն տարբերվում է ոչ քաղաքացիական հասարակությունից:

1. Ազատ մարդը քաղաքացիական հասարակության բարձրագույն արժեքն է: Քաղաքացիական հասարակության սկզբնական կառուցվածքային տարրը մարդն է իր բնական պահանջմունքներով ու շահերով, որոնք ճանաչվում են հասարակության և պետության կողմից: Ցանկացած հասարակություն և պետություն կարող է հավակնել կոչվելու ժողովրդավարական և իրավական միայն այն դեպքում, երբ դրանցում մարդը, նրա բնական իրավունքներն ու ազատությունները ճանաչվել են բարձրագույն արժեք և երաշխավորված են իրականում: Քաղաքացիական հասարակության անդամներն ազատ անհատներն են: Այդ հասարակությունում անհատի ազատությունը երաշխավորված է և՛ տնտեսական, և՛ քաղաքական, և՛ անձնական առումներով: **Տնտեսական** առումով քաղաքացիական հասարակությունում անձն ունի սեփականության իրավունք: Նա ազատ է սեփականության ձևի, աշխատանքի ընտրության հարցում: **Քաղաքական** առումով անհատի ազատությունը ենթադրում է նրա իրավունքը՝ լինելու որևէ հասարակական կազմակերպության անդամ, ունենալու սեփական կարծիքը պետական իշխանության համակարգի գործունեության վերաբերյալ: **Անձնական** առումով անհատի ազատությունը ենթադրում է նրա ինքնուրույն կենսագործունեությունը:

2. Քաղաքացիական հասարակությունն ունի ինքնակառավարման ներուժ: Արդյունքում հասարակությունը դառնում է պետությունից անկախ, որոշակիորեն ինքնավար և կարողանում է սահմանափակել պետական իշխանությունը, նվազագույնի հասցնել նրա միջամտությունը հասարակության գործերին: Առանց անկախ, ինքնա-

կարգավորվող, պլյուրարիստական քաղաքացիական հասարակության ժողովրդավարությունը, ազատությունը և հավասարությունը կվերածվեն դատարակ կարգախոսների: Սակայն առանց պետության հուսալի պաշտպանության, վերաբաշխման ու հակամարտությունների լուծման գործառույթների քաղաքացիական հասարակությունը կծնի անազատության և անհավասարության նոր ձևեր:

Պետությունը և քաղաքացիական հասարակությունը միմյանց ժողովրդավարականացման պայմաններ են: Պետական իշխանության ինստիտուտները միջոցներ են, որոնց օգնությամբ կենսագործվում են իրավական օրենքները, հռչակվում և իրականացվում է սոցիալ-տնտեսական քաղաքականությունը, սանձվում և իրավական շրջանակի մեջ են դրվում հասարակական հակամարտությունները: Պետությունը քաղաքացիական հասարակության գոյության ու գործունեության երաշխավորն է: Մյուս կողմից՝ քաղաքացիական հասարակությունը իր խայտաբղետ կազմակերպություններով վերահսկում է պետությանը և նրա պաշտոնյաներին, զսպում և հակակշռում է պետական իշխանությանը:

3. Քաղաքացիական հասարակությունը իրավական, ժողովրդավարական **հասարակություն** է: Այդ հասարակության մեջ մարդը և նրա իրավունքներն ու ազատությունները բարձրագույն արժեքներ են: Քաղաքացիական հասարակության մեջ ողջ, այդ թվում՝ իրավական գաղափարախոսության հիմքն այդ արժեքներն են: Այդ հանգամանքն իր հերթին պայմանավորում է քաղաքացիական հասարակությանը բնորոշ պետության էությունը և ձևը: Պետությունն այստեղ իր ձևով իրավական է, իսկ էությամբ՝ քաղաքացիական համերաշխության և ընդհանուր բարեկեցության միջոց: Քաղաքացիական հասարակության պետական իշխանությունը կոչված է երաշխավորելու հասարակության քաղաքակիրթ գոյությունը և զարգացումը:

Չնայած քաղաքացիական հասարակության մոդելի սահմանադրական ամրագրմանը՝ այն մեզանում դեռևս լրիվ չի ձևավորվել: Հայաստանում քաղաքացիական հասարակության կայացումը ռազմավարական խնդիր է, որի, լուծումը, սակայն երկար ժամանակ է պահանջում: Դրա համար անհրաժեշտ է և՛ հասարակության, և՛ պետական իշխանության քրտնաջան, խելամիտ, նպատակամղված գործունեություն: Բոլոր բարեփոխումները վերջին հաշվով տանում են քաղաքացիական հասարակության կայացմանը:

4. Քաղաքացիական հասարակությանը բնորոշ է բազմազանությունը՝ պլյուրալիզմը: Օրինակ՝ քաղաքական համակարգում, գործում են տարբեր քաղաքական կուսակցություններ, և դա բնական է: Ին-

չո՞ւ: Որովհետև դա հնարավորություն է տալիս արտահայտելու մարդ էակի բազմազան քաղաքական պահանջմունքներն ու շահերը: Մարդիկ ունեն տարբեր քաղաքական-հասարակական. դիրքորոշումներ ու շահեր: Եթե հասարակության քաղաքական համակարգը բազմազանություն չունի, ուրեմն այն չի կարող կոչվել քաղաքացիական, ժողովրդավարական հասարակություն: «Մտավոր բռնությունը բանական էակներին մտածողության մի որոշ ձև և ուղղություն պարտադրելով՝ խեղում է նրանց ոչ միայն մտապես, այլև՝ հոգեպես» (Գ. Նժդեհ):

§ 2. Քաղաքացիական հասարակության կառուցվածքը և նրա առանձին համակարգերի բնութագիրը

2.1. Քաղաքացիական հասարակության կառուցվածքը արտահայտում է հասարակության (մարդու) կենսագործունեության համապատասխան ոլորտները և իրենից ներկայացնում է որոշակի բաղադրատարրերի ու հարաբերությունների ամբողջություն: Օրինակ՝ քաղաքացիական հասարակության քաղաքական կյանքը կազմում է այդ հասարակության քաղաքական համակարգը, որն իրենից ներկայացնում է քաղաքական համակարգի բաղադրատարրերի ու նրանց միջև առաջացող հարաբերությունների ամբողջություն: Այդ համակարգի բաղադրատարրերն են պետությունը, քաղաքական կուսակցությունները, հասարակական-քաղաքական միավորումները:



2.2. Քաղաքացիական հասարակության սոցիալական համակարգը: Քաղաքացիական հասարակության սոցիալական համակարգն ընդգրկում է մարդկանց օբյեկտիվորեն գոյություն ունեցող ընդհանրությունները և հարաբերությունները նրանց միջև: Այս համակարգի բնական և հիմնական բաղադրատարրն ընտանիքն է: Ամուս-

նանալը և ընտանիք կազմելը մարդու բնական իրավունքներից է: Ընտանիքը հասարակության բնական և հիմնական բջիջն է: Հասարակության և պետության պարտականությունն է երաշխավորել մարդու ընտանեկան կյանքի պաշտպանությունը անօրինական միջամտություններից: Սոցիալական համակարգի բաղադրատարրերից են նաև մարդկանց առանձին խմբերը, խավերը, դասակարգերը, ազգերը և այլն, ինչպես նաև նրանց միջև առաջացող հարաբերությունները: Այս ոլորտում պետության առաքելությունն է հաստատել սոցիալական համերաշխություն ու խաղաղություն նշված բաղադրատարրերի միջև:

2.3. Քաղաքացիական հասարակության հոգևոր-մշակութային համակարգը: Քաղաքացիական հասարակության հոգևոր-մշակութային համակարգը ներառում է հոգևոր-մշակութային արժեքների շուրջ համապատասխան հաստատությունների ու մարդկանց միջև առաջացող հարաբերությունները: Այս համակարգի մեջ են մտնում գաղափարախոսական, կրթական, գիտական, մշակութային, բարոյական, կրոնական ոլորտները: Այս համակարգի հիմքում ևս ընկած է բազմազանությունը, այլընտրանքը, գաղափարական (աշխարհայացքի) և կրոնական (խղճի ու դավանանքի) ազատությունը, կրթական և դաստիարակչական ոչ պետական կառույցների առկայությունը:

Մտորե՛ք հետևյալ մտքի շուրջ. Պատմության նպատակն է ժողովուրդներին և մարդկային անհատներին վարել դեպի ներքին բարոյական ազատություն, առանց որի սակավարժեք է արտաքին ազատությունը (Գ. Նժդեհ)

2.4. Քաղաքացիական հասարակության տեղեկատվական համակարգը: Քաղաքացիական հասարակությունը բաց, տեղեկատվական հասարակություն է: Նրանում հռչակված և պետության կողմից երաշխավորված են խոսքի և քննադատության ազատությունը, հրապարակայնությունը: Այդպիսի հասարակության անդամը կարողանում է բավարարել տեղեկատվություն ստանալու իր իրավունքը: Այդ իրավունքն իրականացվում է քաղաքացիական հասարակության անդամների անմիջական հաղորդակցությամբ, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների (ԶԼՄ) օգնությամբ: Այս ոլորտում առաջացող հարաբերությունները կազմում են քաղաքացիական հասարակության տեղեկատվական համակարգը, որի բաղադրատարրերն են մարդու տեղեկատվական իրավունքները, պետությունից անկախ գործող հասարակական, մասնավոր կազմակերպությունները, ինչպես նաև ԶԼՄ-ները:

Տեղեկատվական համակարգի հարաբերությունների իրավական կարգավորման գործուն միջոցը օրենքն է, որը, ամրագրելով տեղեկատվական հասարակության ժողովրդավարական սկզբունքները և դրանց երաշխիքները, զսպում է կամայականությունն ինչպես պետության, այնպես էլ տեղեկատվական միջոցների կողմից: Արդի ժողովրդավարական հասարակություններում իշխանության և ԶԼՄ-ների միջև հարաբերությունների կարգավորման իրավական եղանակն անհատի տեղեկատվական իրավունքների ամրագրումն է և դրա ապահովումը: Տեղեկութային իրավունքների երաշխիքների շարքում մեծ է հաղորդակցության տեխնիկական միջոցների և համապատասխան կառույցների դերը: Եթե չկան ժողովրդավարական կառույցներ հաղորդակցության ոլորտներում, ապա չկան և երաշխիքներ տեղեկույթ ստանալու և տարածելու իրավունքի իրականացման համար: Ուստի և չկա ժողովրդավարություն:

Զարգացած ժողովրդավարական երկրներում ԶԼՄ-ների դերը հզոր է և կարող է էական ազդեցություն ունենալ այս կամ այն հարցում: Այստեղ զանգվածային լրատվության միջոցները պայմանականորեն համարվում են չորրորդ իշխանություն՝ իշխանության երեք ճյուղերի՝ օրենսդիրի, գործադիրի և դատականի հետ միասին: ԶԼՄ-ները մեծապես նպաստում են ժողովրդի քաղաքական գիտակցության և հասարակական կարծիքի ձևավորմանը, քաղաքացիական հասարակության կայացմանը: ԶԼՄ-ները՝ որպես քաղաքացիական հասարակության տեղեկատվական համակարգի տարրեր, էական դեր են խաղում պետությանը հակակշռելու, այն սահմանադրական, ժողովրդավարական, իրավական հունի մեջ դնելու գործում: Հենց դրանով է պայմանավորված ԶԼՄ-ներին չորրորդ իշխանության դեր վերագրելը:

2.5. Քաղաքացիական հասարակության տնտեսական համակարգը: Տնտեսությունը նյութական բարիքների արտադրության, փոխանակության և սպառման կապակցությամբ առաջացող հարաբերությունների ամբողջություն է: Տնտեսությունը կարող է լինել շուկայական և պլանային: Ազատ, ինքնակառավարվող քաղաքացիական հասարակության տնտեսական համակարգը շուկայական տնտեսությունն է: Խորհրդային իշխանության տարիներին մեր տնտեսական համակարգը եղել է պլանային: Այդ համակարգում արտադրության հիմնական միջոցները պետության սեփականությունն էին, և պետությունն էր որոշում, թե ինչ և ինչքան ապրանքներ էին արտադրվելու և ինչ գնով էին վաճառվելու: Տնտեսության այդպիսի համակարգը անվանում են վարչահրամայական: Ընդ որում՝ քաղաքացիները չունեին

մասնավոր սեփականության իրավունք, այսինքն՝ արտադրության միջոցների, օրինակ՝ հաստոցների սեփականության իրավունք: Սակայն, ինչպես խորհրդային հասարակության պատմությունը, այնպես էլ համաշխարհային փորձը վկայում են, որ երկրի տնտեսական բարգավաճման համար ամենից լավ պայմաններ ու հնարավորություններ ստեղծում են շուկայական համակարգը և ազատ տնտեսական մրցակցությունը:

Շուկայական տնտեսական համակարգի հիմունքներն են՝ տնտեսական բազմակացութաձևությունը (սեփականության ձևերի բազմազանությունը), տնտեսական գործունեության ազատությունը, ազատ տնտեսական մրցակցությունը: Այս հիմունքները նախադրյալ են ազատ քաղաքացիական հասարակության կայուն գոյության համար, մարդու ազատության տնտեսական հիմքն են:

2.6. Պետության դերը տնտեսության մեջ: Համաշխարհային փորձը ցույց է տվել, որ տնտեսության գոյություն ունեցած և գոյություն ունեցող բոլոր ձևերից ամենաարդյունավետը շուկայական տնտեսությունն է: Այստեղ ապրանքների և ծառայությունների գները որոշվում են ազատ արտադրողների առաջարկի և սպառողների պահանջարկի հիման վրա: Տնտեսական օրինաչափությունները պահանջում են, որ սեփականատերերը լինեն ազատ և ինքնուրույն, առանց պետական միջամտության որոշեն, թե ինչ են արտադրելու, ինչ քանակով և ինչ գներով են իրացնելու շուկայում: Սակայն շուկայական տնտեսությունը երբեմն կարող է վերածվել քաոսի: Այստեղ արդեն կարևորվում է պետության դերը, որը, պահպանելով շուկայական տնտեսության հիմունքները, ստանձնում է տնտեսության կարգավորման գործառույթը:

Ինչպե՞ս է դրսևորվում պետության կարգավորիչ դերը: Պետությունը սահմանում է տնտեսական կյանքը կարգավորող իրավական նորմերը՝ մի կողմից ամրագրելով և երաշխավորելով շուկայական տնտեսության համակարգի հիմունքները, իսկ մյուս կողմից՝ որոշելով «խաղի կանոնները» տնտեսավարող առանձին սուբյեկտների համար: Ընդ որում՝ այդ կանոնները կարող են սահմանափակել ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող սուբյեկտների ազատությունը: Այդ սահմանափակումը կարող է բխել տնտեսական աղետների, սոցիալական բախումների (սեփականատերերի և վարձու աշխատողների միջև) կանխման, սպառողների շահերի պաշտպանության անհրաժեշտությունից: Այդ նպատակով պետությունը կարող է վերահսկել աշխատավարձերի չափերը, արտադրանքի որակը, պայքարել շուկայում հնարավոր մենաշնորհների դեմ և այլն:

Պետությունը պաշտպանում է սպառողների շահերը, ընդունում օրենքներ, որոնք կանխում են հնարավոր չարաշահումները ձեռնարկությունների կողմից, իր ձեռքում է պահում մի շարք ծառայություններ ու արտադրություններ, որոնք կառավարության հովանավորության կարիքն ունեն:

Պետությունը համապատասխան մաքսային քաղաքականությամբ պաշտպանում է երկրի տնտեսական տարածությունը այլ երկրների ապրանք արտադրողներից, ինչպես նաև խթանում է սեփական ապրանք արտադրողների ելքը համաշխարհային շուկա:

Պետությունը դեռ հնուց եղել և մնում է դրամաշրջանառությունը կարգավորողը, ինչը պետության մենաշնորհներից է:

Ժամանակակից պայմաններում պետությունը սկսել է նաև միջամտել տնտեսական գործունեությանը մի շարք այլ ուղղություններով: Նախ՝ պետությունը կանխում է էկոլոգիական աղետը, որ կարող է առաջանալ անվերահսկելի տնտեսական գործունեության դեպքում: Երկրորդ՝ պետությունը պայքարում է տնտեսության «ստվերացման» և քրեականացման դեմ:

Պետությունը մշակում և իրագործում է հատուկ տնտեսական ծրագրեր, որոնք նպատակամղված են երկրի տնտեսության զարգացմանը, որոշակի ճյուղերի առաջնային զարգացմանը: Բացի այս ամենը, ժամանակակից պետությունը խոշոր սեփականատեր է, որը զբաղվում է ձեռնարկատիրությամբ, այսինքն՝ ապրանք արտադրելով և վաճառելով, ծառայություններ մատուցելով:

Այս ամենը նկատի ունենալով պետք է ասել, որ ժամանակակից քաղաքացիական հասարակության տնտեսությունը լրիվ շուկայական տնտեսություն չէ, այլ, այսպես կոչված, պետականորեն կարգավորվող կամ խառը տնտեսություն է:

§ 3. Քաղաքացիական հասարակության քաղաքական համակարգը և նրա բաղադրատարրերը

Քաղաքացիական հասարակության քաղաքական համակարգը քաղաքական կազմակերպությունների ամբողջություն է, որոնք իրավունքի (օրենքի) շրջանակներում և պետության միջոցով իրականացնում են քաղաքական իշխանությունը կամ պայքարում են դրա իրականացման համար:

Քաղաքական համակարգի սուբյեկտներ են համարվում պետությունը և քաղաքական կազմակերպությունները (կուսակցություն-

ներ, հասարակական-քաղաքական կազմակերպություններ և շարժումներ): Անձը քաղաքական համակարգում հանդես է գալիս որպես քաղաքական իրավունքներով օժտված քաղաքացի (օրինակ՝ ընտրող, որևէ կուսակցության անդամ, պատգամավորության թեկնածու, պատգամավոր, պետական պաշտոնյա և այլն):

Քաղաքական համակարգում կենտրոնական տեղ է զբաղեցնում պետությունը, որովհետև այն իր բնույթով հանրային իշխանություն է՝ օժտված ինքնիշխանությամբ: Ոչ մի այլ քաղաքական կազմակերպություն նման հատկություններով օժտված չէ:

Քաղաքացիական հասարակությանը բնորոշ է **մրցակցային քաղաքական համակարգը**: Քաղաքացիական հասարակության քաղաքական համակարգի կազմակերպման և գործունեության հիմնական հատկանիշներից է քաղաքական բազմազանությունը, այսինքն՝ բազմակուսակցական քաղաքական համակարգը: Ժողովրդավարական հասարակություններում պետք է անհրաժեշտ պայմաններ ստեղծվեն իշխանության ձգտող տարբեր քաղաքական կազմակերպությունների անարգել մրցակցության համար: Նման հիմքերով կազմակերպված քաղաքական համակարգը, ի տարբերություն միակուսակցական քաղաքական համակարգի, անվանում են «ժողովրդավարության մրցակցային համակարգ»:

§ 4. Պետությունը որպես հասարակության քաղաքական համակարգի սուբյեկտ

Պետական իշխանությունը հասարակությանը միավորող, կառավարող և հարկադրող միակ ուժն է:

Մտորե՛ք հետևյալ մտքի շուրջ. ***«Ո՛վ հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է» (Ե. Չարենց):***

Պետության հատուկ տեղը քաղաքական կազմակերպությունների համակարգում պայմանավորված է նրա ինքիշխանությամբ: Պետության ինքնիշխանությունը որպես նրա քաղաքական-իրավական հատկություն արտահայտվում է այլ քաղաքական կազմակերպությունների նկատմամբ նրա գերակայությամբ և լիիշխանությամբ: Դա պետության մենաշնորհային իրավունքն է իրականացնել օրենսդիր, կառավարական և իրավապահպան գործառույթներ երկրի ներսում, որոշելու իր խորհրդանիշերը (զինանշան, հիմն, դրոշ), հանդիսանալու ժողովրդի պաշտոնական ներկայացուցիչն է երկրի ներսում և մի-

ջազգային ոլորտում: Ինքնիշխանությամբ և դրանից բխող իրավունքներով քաղաքական համակարգի այլ սուբյեկտները օժտված չեն:

Պետությունը և հասարակական կազմակերպությունները քաղաքական համակարգի ինքնուրույն մասերն են: Դրանցից յուրաքանչյուրն ունի սեփական կառուցվածքը կազմակերպման և գործունեության իր սկզբունքները: Լինելով քաղաքական համակարգի համեմատաբար ինքնավար օղակներ՝ պետությունը և հասարակական կազմակերպությունները իրար հետ սերտորեն փոխգործակցում են: Հասարակության քաղաքական համակարգի գործունեությունը իրականացվում է իրավական նորմերի հիման վրա, այսինքն՝ պետությունը կատարում է քաղաքական կազմակերպությունների կազմավորման և գործունեության իրավական կարգավորում, կոորդինացնում և ղեկավարում է, ինչպես նաև վերահսկում է նրանց գործունեությունը: Օրինակ՝ Հայաստանում կուսակցությունները կազմավորվում են ազատորեն, նպաստում ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը: Նրանց գործունեությունը չի կարող հակասել Սահմանադրությանը և օրենքներին, իսկ գործելակերպը՝ ժողովրդավարության սկզբունքներին: Եթե կուսակցությունները խախտում են օրենքները, ապա Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, կառավարության դիմումի հիման վրա սահմանադրական դատարանը կարող է որոշում կայացնել կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու մասին: Կուսակցության գործունեությունը կասեցնելուց հետո, այդ կուսակցությունը պարտավոր է վերացնել օրենքի խախտումները: Արգելել կուսակցության գործունեությունը նշանակում է ընդհանրապես չթույլատրել նրա գործունեությունը:

§ 5. Հասարակական-քաղաքական կազմակերպությունները քաղաքացիական հասարակության քաղաքական համակարգում

1. Հասարակական կազմակերպություններ. հասկացությունը և տեսակները: Քաղաքացիական հասարակության անհատներն իրենց շահերն ու պահանջմունքներն ազատորեն արտահայտելու և դրանք իրականացնելու համար միավորումներ կազմելու իրավունք ունեն: Այդ իրավունքը ժողովրդավարության հենասյուներից մեկն է: Հետևաբար, այն երաշխավորված է օրենքներով, պահպանվում է պետության կողմից:

Քաղաքացիական հասարակության բնութագրական գծերից մեկն էլ բազմազան հասարակական կազմակերպությունների համա-

կարգի առկայությունն է (կուսակցություններ, շարժումներ, արհմիություններ, ստեղծագործական միություններ, սպառողների միություններ և այլն): Դրանք հնարավորություն են տալիս մարդկանց՝ միավորվելու ըստ իրենց նախասիրությունների և արտահայտելու իրենց զանազան պահանջմունքներն ու շահերը (քաղաքական, տնտեսական, հոգևոր-մշակութային և այլն):

Բոլոր հասարակական կազմակերպություններին բնութագրական է մեկ հատկանիշ՝ նրանք ոչ կառավարական, ոչ պետական կազմակերպություններ են, իրենցից ներկայացնում են ինքնակառավարվող քաղաքացիական հասարակության բաղադրատարրեր և թույլ են տալիս լուծել հանրային բնույթ ունեցող խնդիրներ: Հասարակական կազմակերպությունների դասակարգման չափանիշներից մեկն էլ դրանց դասակարգումն է ըստ քաղաքականությանն առնչվելու: Այս հիմքով բոլոր հասարակական կազմակերպությունները բաժանվում են երկու խմբի՝ **քաղաքական** և **ոչ քաղաքական**:[1]

2. Քաղաքական կազմակերպության հասկացությունը և նշանակությունը: Քաղաքական կազմակերպությունների բնութագրական գիծն ուղղակի կապն է քաղաքականության հետ, իսկ ստեղծման և գործունեության անմիջական խնդիրը որոշակի քաղաքական նպատակների հասնելն է: **Քաղաքական կազմակերպությունները ընդհանուր շահերի, գաղափարների և նպատակների հիման վրա ձևավորված ակտիվ ու կազմակերպված հասարակական միավորումներ են, որոնք ձգտում են տիրանալ պետական իշխանությանը կամ վճռական կերպով ազդել վերջինիս վրա իրենց ծրագրերն իրագործելու նպատակով**:

Քաղաքացիների ձայնը իշխանություններին լսելի դարձնելու համար թերևս ամենամեծ հնարավորությունը տալիս են քաղաքական կազմակերպությունները: Դրանք միջանկյալ օղակ են պետության ու հասարակության միջև և նպաստում են պետական իշխանության համար պայքարը քաղաքակիրթ դարձնելուն: Քաղաքական փորձ ունեցող ժողովրդավարական երկրներում կուսակցությունները նաև խթանում են ժողովրդի և իշխանության միջև քաղաքական հա-

---

[1] **Ոչ քաղաքական հասարակական կազմակերպությունը** անձանց՝ շահերի ընդհանրության հիման վրա հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջմունքներ բավարարելու նպատակով ստեղծված կամավոր միավորում է: Ոչ քաղաքական հասարակական կազմակերպություններն իրենց կանոնադրություններում չեն ամրագրում ուղղակի քաղաքական խնդիրներ: Բայց դա չի նշանակում, որ դրանք ընդհանրապես չեն մասնակցում քաղաքականությանը:

մածայնության կայացումը, հանդուրժողականության և փոխզիջողականության մթնոլորտի զարգացումը:

Քաղաքական կազմակերպությունները մարդկանց տեղեկացնում են քաղաքական կյանքի մասին և քաջալերում նրանց՝ ակտիվորեն ներգրավվել քաղաքականության մեջ: Նրանք կարող են ժողովրդի ուշադրությունը հրավիրել իշխանությունների այն գործունեության վրա, որը իրենց կարծիքով, չի բխում ժողովրդի շահերից, քննադատել որևէ այլ կուսակցության դիրքորոշում, առաջադրել իրենց քաղաքական ծրագիրը, ինչպես նաև իրենց թեկնածուներին՝ իշխանության տարբեր ատյաններում աշխատելու համար: Ի տարբերություն այլ հասարակական կազմակերպությունների՝ կուսակցություններ կարող են ստեղծել և կուսակցություններին կարող են անդամագրվել միայն քաղաքացիները:

3. Քաղաքական կազմակերպությունների գործառույթները.

❖ Նպաստում են առանձին քաղաքացիների, հասարակական խմբերի մասնավոր շահերը հավաքական քաղաքական շահերի մեջ միավորվելուն և արտահայտում են այդ շահերը՝ վերածելով դրանք կոնկրետ պահանջների և գործողությունների:

❖ Ձանում են ավելի ակտիվացնել ժողովրդի մասնակցությունը քաղաքական կյանքին՝ ակտիվորեն ներգործելով անհատների և հասարակական խմբերի քաղաքական գիտակցության վրա:

❖ Մասնակցում են ընտրություններին, որպեսզի գան իշխանության և իրագործեն իրենց ծրագրերը:

❖ Օգնում են քաղաքացիներին ավելի իրազեկ լինել քաղաքական անցուդարձին և հեշտությամբ կողմնորոշվել ընտրությունների ժամանակ:

❖ Լսում են ժողովրդի կարծիքներն ու առաջարկությունները և քննարկում դրանք:

❖ Առաջարկում են քաղաքական ծրագրեր, որոնք տարբերվում են իշխանության ծրագրերից:

§ 6. Լոբբիականություն

Ոչ քաղաքական հասարակական կազմակերպությունները քաղաքացիական հասարակությունում կարող են իրականացնել, այսպես կոչված, **«ճնշման խմբերի»** գործառույթ: Այսինքն՝ դրանք կարող են զանազան ձևերով ազդել պետական իշխանության մարմինների

գործունեության վրա, պահանջներ ներկայացնել դրանց, բողոքարկել դրանց անօրինական գործողություններն ու որոշումները:

Հասարակական ոչ քաղաքական կազմակերպությունները մասնակցում են քաղաքականությանը նաև «**լոբբիականության**» միջոցով: Այս դեպքում նրանք փորձում են ազդել օրենսդիր մարմնի, նրա տարբեր խմբակցությունների վրա՝ ներկայացնելով քննարկվող օրենքի նախագծերի վերաբերյալ իրենց առաջարկություններն ու դիտողությունները և փորձելով անցկացնել դրանք: Սփյուռքում հասարակական կազմակերպությունները վաղուց են նմանատիպ գործունեություն ծավալել: ԱՄՆ-ում հայկական կազմակերպությունները, գլխավորապես՝ Ամերիկայի հայկական համագումարը և Հայ Դատի հանձնախումբը, օգտակար աշխատանք են տանում կոնգրեսի ներկայացուցիչների հետ: Թերևս այս կազմակերպությունների գործունեության ամենաշոշափելի արդյունքն ամերիկյան կառավարության կողմից Հայաստանին տրամադրվող լայնածավալ օգնությունն է:

§ 7. Եկեղեցին հասարակության քաղաքական համակարգում

Եկեղեցին կրոնական կազմակերպություն է, որն իրականացնում է հոգևոր-կրոնական, դավանաբանական գործառույթ: Եկեղեցին հասարակության քաղաքական համակարգում տարբեր դարաշրջաններում ունեցել տարբեր դերակատարություն: Եղել են ժամանակներ, երբ եկեղեցին քաղաքական համակարգում կատարում էր լիիրավ սուբյեկտի դեր, երբ նրա կրոնադավանաբանական գործառույթը զուգակցվում էր քաղաքական գործառույթով: Քաղաքական համակարգում եկեղեցու դերակատարության, ինչպես նաև պետության որպես քաղաքական համակարգի հիմնական սուբյեկտի և եկեղեցու փոխհարաբերությունների տեսանկյունից տեսաբանները առանձնացնում են պատմական երեք տիպ. աստվածապետություն (թեոկրատական պետություն), կղերական (կրոնականացված) պետություն և աշխարհիկ պետություն:

Աստվածապետական համակարգում պետական (աշխարհիկ) և եկեղեցական (կրոնական) իշխանությունը միահյուսված են: Որպես կանոն այստեղ պետության գլուխը՝ միապետը նաև կրոնապետն է՝ գլխավոր քուրմը: Այդպիսին էին Հին Աշխարհի պետությունները: Այսօր այդպիսի պետականակերպ կազմակերպություն է Վատիկանը:

Կղերական քաղաքական համակարգում մեջ պետությունը և եկեղեցին կազմակերպականորեն ձուլված չեն: Աշխարհիկ իշանութ-

յունը և հոգևոր իշխանությունը մարմնավորում են առանձնացված կառույցները: Սակայն եկեղեցին համարվում է քաղաքական համակարգի բաղադրատար, և համապատասխան ինստիտուտների միջոցով որոշակի ազդեցություն է թողնում պետական քաղաքականության վրա: Օրինակ՝ Բյուզանդական Կայսրությունում սահմանված էր միապետի և պատրիարքի փոխհաստատման կարգը: Կղերական պետության իրավական համակարգում կրոնական կանոնները իրավակարգավորիչ նշանակություն ունեն: Այդպիսին են եղել Միջնադարյան Եվրոպայի բոլոր պետությունները: Կղերական պետության օրինակ են արդի մահմեդական որոշ պետություններ, մասնավորապես Սաուդյան Արաբիան, Իրանը:

Նոր դարաշրջանում առաջ եկան աշխարհիկ պետությունները, որոնցում հռչակվեց պետության և եկեղեցու առանձնացման սկզբունքը: Հավատը և դավանանքը աշխարհիկ պետության մեջ հռչակվեց մարդու մասնավոր իրավունք: Կրոնական խտրականությունն այստեղ արգելված է, իսկ պաշտոնական պետական կրոն հասկացությունը՝ վերացված: Դավանանքներից ոչ մեկը չի ճանաչվում պարտադիր կամ նախապատվելի:

© ԲԱՑԱՏՐԵ՛Ք ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԸ

Քաղաքացիական հասարակություն / իրավական հասարակություն / ինքնակառավարման ներուժ / քաղաքացիական համերաշխություն / պլյուրալիզմ / տնտեսություն / վարչահրամայական տնտեսություն / խառը տնտեսություն / սոցիալական բախում / շուկայական մենաշնորհ / տնտեսության «ստվերացում» և քրեականացում / մաքսային քաղաքականություն / հասարակական կազմակերպություն / քաղաքական և ոչ քաղաքական կազմակերպություններ / միակուսակցական քաղաքական համակարգ / լոբբիականություն / ճնշման խումբ:

ՊԱՏԱՍԽԱՆԵ՛Ք ՀԱՐՑԵՐԻՆ

1. Ի՞նչ է քաղաքացիական հասարակությունը:
2. Որո՞նք են քաղաքացիական հասարակության հիմնարար արժեքները:
3. Որոնք են քաղաքացիական հասարակության հատկանիշները:
4. Ո՞րն է քաղաքացիական հասարակության բարձրագույն արժեքը:
5. Ի՞նչ է քաղաքացիական հասարակության ինքնակառավարման ներուժը:
6. Որո՞նք են քաղաքացիական հասարակության որպես իրավական, ժողովրդավարական հասարակության բնութագրերը:
7. Ի՞նչ է նշանակում քաղաքացիական հասարակության պլյուրալիստական բնութագիրը:
8. Ինչպիսի՞ն է քաղաքացիական հասարակության և պետության փոխհարաբերությունը:
9. Կայացած է արդյո՞ք քաղաքացիական հասարակությունը Հայաստանում:
10. Ի՞նչ է քաղաքացիական հասարակության կառուցվածքը և որո՞նք են դրա բաղադրատարրերը:
11. Ի՞նչ է քաղաքացիական հասարակության սոցիալական համակարգը:
12. Ի՞նչ է քաղաքացիական հասարակության հոգևոր-մշակութային համակարգը:
13. Որո՞նք էին խորհրդային տնտեսության առանձնահատուկ գծերը:
14. Որո՞նք են շուկայական տնտեսության հիմունքները:
15. Ո՞րն է պետության դերը շուկայական տնտեսության մեջ:
16. Ի՞նչ է քաղաքացիական հասարակության տեղեկատվական համակարգը:
17. Ո՞րն է ԶԼՄ-ների դերն ուն նշանակությունը:

18. Ինչո՞ւ են ՁԼՄ-ներին անվանում չորրորդ իշխանություն:
19. Ի՞նչ է քաղաքական համակարգը և որո՞նք են դրա բաղադրատարրերը:
20. Ո՞րն է պետության տարբերությունը հասարակության քաղաքական համակարգի այլ սուբյեկտներից:
21. Ո՞րն է պետության դերը հասարակության քաղաքական համակարգում:
22. Ի՞նչ կապ կա քաղաքացիական հասարակության և հասարակական կազմակերպության միջև:
23. Հասարակական կազմակերպությունների ի՞նչ տեսակներ կան:
24. Ի՞նչ են քաղաքական հասարակական կազմակերպությունները:
25. Ո՞րն է քաղաքական հասարակական կազմակերպությունների դերը քաղաքական համակարգում:
26. Ի՞նչ գործառույթներ են կատարում քաղաքական կազմակերպությունները:
27. Ի՞նչ դեր է կատարում մրցակցությունը քաղաքական համակարգում:
28. Ի՞նչ է լոբբիականությունը:
29. Որո՞նք են եկեղեցու պատմական դերակատարության տիպերը հասարակության քաղաքական համակարգում:
30. Ինչ է աստվածապետությունը (թեոկրատական պետությունը):
31. Ինչ է կղերական (կրոնականացված) պետությունը:
32. Ինչ է աշխարհիկ պետությունը:

ԿԱՏԱՐԵ՛Ք ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Գրե՛ք փոքրիկ շարադրություն «Իմ երազած հասարակությունը» թեմայով:

2. Ձեռք բերե՛ք որևէ կուսակցության ծրագիր և պատրաստե՛ք զեկուցում դրա վերաբերյալ կամ օգտվելով հանրագիտարաններից պատրաստեք հաղորդագրություն լոբբիականության մասին:

3. Ձեր շրջապատի տարեց մարդկանց խնդրե՛ք, որպեսզի նրանք պատմեն խորհրդային քաղաքական համակարգի առանձնահատկությունների մասին: Պատմածը համառոտագրե՛ք և ամփոփե՛ք սեմինարի ժամանակ:

ԲԱՆԱՎԻՃԵ՛Ք

1. Հետխորհրդային բարեփոխումներն իրենց ներդրումն ունեցան ժողովրդավարական ազատությունների հաստատման

գործում: Բայց մյուս կողմից՝ այդ բարեփոխումների արդյունքում խստորեն կրճատվեցին սոցիալական երաշխիքները: Շատ տարածքներ և բնակչության խմբեր հայտնվեցին մարգինալ վիճակում՝ «մեկնարկային» պայմանների անհավասարության, աշխատատեղերի բացակայության պատճառով: Տնացող շուկայական բարեփոխումները չստեղծեցին իրական նախադրյալներ մարդկային զարգացման համար: Որո՞նք են դրա պատճառները: Ինչպի՞սի միջոցառումներ կառաջարկեիք սոցիալ-տնտեսական ոլորտում առկա հիմնախնդիրները լուծելու համար:

2. Քաղաքական համակարգերը լինում են միակուսակցական և բազմակուսակցական: Քաղաքական բազմազանությունը (բազմակուսակցական համակարգը) իսկապե՞ս անհրաժեշտ է: Արդյո՞ք չափից դուրս շատ քանակով կուսակցությունների գոյությունն արդարացված է, թե՝ ոչ: Բաժանվե՛ք միակուսակցության և բազմակուսակցության կողմնակիցների և բանավիճե՛ք:




Ազատ մարդը քաղաքացիական հասարակության բարձրագույն արժեքն է
Ազատության 3 առումները
ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԱՆՁՆԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆ
Անձն ունի սեփականության իրավունք: Նա ազատ է սեփականության ձևի, աշխատանքի ընտրության հարցում:
Ենթադրում է անհատի ինքնուրույն կենսագործունեությունը, անձի անձեռնմխելիությունը:
Ենթադրում է անհատի իրավունքը՝ լինելու որևէ հասարակական կազմակերպության անդամ, ունենալու սեփական կարծիքը պետական իշխանության համակարգի գործունեության վերաբերյալ:


Քաղաքական կազմակերպությունների տեսակները
ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՈՉ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Քաղաքական համակարգի կառուցվածքային բաղադրատարրերը

1. քաղաքական համակարգի սուբյեկտները
2. քաղաքական գիտակցությունը
3. քաղաքական կյանքը կարգավորող սոցիալ քաղաքական և իրավական նորմերը
4. քաղաքական հարաբերությունները
5. քաղաքական պրակտիկան՝ քաղաքական գործունեությունը և քաղաքական փորձը

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ



ՍՈՑԱԿՑԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ



Պետության և քաղաքական համակարգի այլ սուբյեկտների փոխկապվածությունը



Պետությունը որպես քաղաքական համակարգի հատուկ սուբյեկտ

1) ինքնիշխան քաղաքական կազմակերպություն է,

2) ունի կառավարման և հարկադրանքի հատուկ ապարատ,

3) որոշում է հասարակության զարգացման հիմնական ուղղությունները,

4) ժողովրդի միակ պաշտոնական ներկայացուցիչն է,

5) իրականացնում է իրավական կարգավորում, այդ թվում՝ սահմանում է քաղաքական կազմակերպությունների իրավական վիճակը, հսկում՝ նրանց գործունեությունը: